

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ՀԱՂՈՐԴՈՒՄ
2014թ.
ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՎԵԼՎԱԾ՝
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐՈՒՅԹՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
2014 թ. ԸՆԴՈՒՆԱԾ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



Հունվար - 2015թ., ք. Երևան

ՀՏԴ- 34.25 (479.25)
ԳՄԴ- 67.99 (2Հ) 01
Հ-189

Հաստատվել է ՀՀ սահմանադրական դատարանի
20 հունվարի 2015թ. ՍԴԱՌ- 5 աշխատակարգային որոշմամբ

Հ -189

«Հաղորդում ՀՀ ՍԴ 2014թ. ընդունած որոշումների
կատարման վիճակի վերաբերյալ»
Եր.: «ՀՀ ՍԴ աշխատակազմ», 2015, 280 էջ:

ԳՄԴ- 6799 (2Հ) 01

ISBN 978.99930.66-48-4

© «ՀՀ ՍԴ աշխատակազմ», 2015

**ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
20 ՀՈՒՆՎԱՐԻ 2015թ. ՄԳԱՈ - 5
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՄԲ**

**ԳԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ**

2014 թվականին ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրվել է սահմանադրաիրավական խնդիր բովանդակող 203 դիմում, ինչպես նաև ներկայացվել են 1986 էլեկտրոնային ու 852 խորհրդատվություն հայցող դիմում և տարբեր հարցերի առնչվող 191 նամակ:

Սահմանադրաիրավական խնդիր բովանդակող դիմումների փաստացի պատկերն այսպիսին է.

1. ՀՀ Նախագահ – 36 դիմում,
2. ՀՀ Ազգային ժողով – 0 դիմում,
3. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդ – 2 դիմում,
4. ՀՀ կառավարություն – 0 դիմում,
5. տեղական ինքնակառավարման մարմիններ – 0 դիմում,
6. ֆիզիկական անձինք – 148 դիմում,
7. իրավաբանական անձինք – 9 դիմում,
8. դատարաններ – 2 դիմում,
9. ՀՀ գլխավոր դատախազ – 0 դիմում,
10. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան – 6 դիմում,
11. Հանրապետության Նախագահի թեկնածուներ – 0 դիմում,
12. կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) և պատգամավորության թեկնածուներ – 0 դիմում:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց թվով 157 դիմումներից 115-ը չի համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 18, 32, 33 և 34-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին և աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմողներին:

Դատական կազմերի կողմից քննության է առնվել 41 անհատական դիմում: Դրանցից քննության է ընդունվել 19-ը, մերժվել՝ 22-ը:

2014 թվականին ՀՀ սահմանադրական դատարանը կայացրել է 54 որոշում, որից 17-ը՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով քննության արդյունքում, 37-ը՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հարցերով քննության արդյունքում:

2014 թվականին ՀՀ սահմանադրական դատարանը քննության է առել 12 իրավական ակտերի՝ 10 օրենքների (որոնցից 5-ը՝ օրենսգիրք), ՀՀ կառավարության 1 և ՀՀ վարչապետի 1 որոշումների (ամբողջությամբ) սահմանադրականության հարցեր:

ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով քննության է առել վիճարկվող 2 ակտի՝ ամբողջությամբ և վիճարկվող ակտերի 53 հոդվածների կամ դրանց առանձին դրույթների (ներառյալ՝ կոնկրետ գործերով վեճի առարկա դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված 5 դրույթները) սահմանադրականության հարցեր, որոնց արդյունքում՝

- վիճարկվող ակտերի 1 հոդված և 3 հոդվածների առանձին դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող (ՄԳՈ-1139, 1141, 1174),
- վիճարկվող ակտերի 7 հոդվածներ և 14 հոդվածների առանձին դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրափրավական կոնկրետ բովանդակությամբ (ՄԳՈ-1136, 1137, 1139, 1142, 1154, 1176),
- վիճարկվող ակտերի 1 հոդված և 11 հոդվածների առանձին դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր (ՄԳՈ-1137, 1142, 1148, 1153),
- վիճարկվող 2 ակտերի՝ ամբողջությամբ և վիճարկվող ակտերի 13 դրույթների մասով կայացրել է գործի վարույթը կարճելու որոշումներ (ՄԳՈ-1135, 1136, 1140, 1143, 1144, 1157, 1163),
- 1 որոշմամբ (ՄԳՈ-1142) սահմանել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված 9 իրավանորմների ուժը կորցնելու կոնկրետ վերջնաժամկետ,
- 1 որոշմամբ (ՄԳՈ-1142) հանձնարարել է իրավակիրառողին կատարել կոնկրետ գործողություն, այն է՝ վերահաշվարկել մինչև ՄԳՈ-1142 որոշումն ուժի մեջ մտնելը կատարված կուտակային վճարները,
- 1 դեպքում ձայների հավասարության հետևանքով ըստ էության

որոշում չի ընդունվել, և քաղաքացու դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով համարվում է մերժված:

**ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՅ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

**ՀՀ Նախագահի դիմումների հիման վրա ընդունված
ՍԳ որոշումները և դրանց կատարումը**

2014 թվականին ՀՀ Նախագահի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված բոլոր դիմումները վերաբերել են բացառապես միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը: 2014թ. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության են առնվել 37 միջազգային պայմանագրեր (որից 1-ը՝ 2013թ. ներկայացված դիմումի հիման վրա), այդ թվում՝ բազմակողմ (7 համընդգրկուն և 6 տարածաշրջանային) և 24 երկկողմ (7-ը՝ օտարերկրյա պետությունների և 17-ը՝ միջազգային կազմակերպությունների հետ): Քննության առարկա դարձած պայմանագրերից 13-ը միջպետական են, 24-ը՝ միջկառավարական:

ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության առնված 37 պայմանագրերից 19-ն արդեն վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից, թվով 18 պայմանագիր դեռևս չի ներկայացվել ՀՀ Ազգային ժողով՝ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետին համապատասխան, կամ դրանց վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովը, Սահմանադրության 62-րդ հոդվածի առաջին մասի համաձայն, դեռևս որոշում չի կայացրել:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման տեսանկյունից ուշադրության է արժանի ֆինանսավարկային պայմանագրերով ֆինանսավորվող ծրագրերի մանրամասնվածության հիմնավորվածության պատշաճ մակարդակի ապահովման հիմնախնդիրը: Անցած տարիների ընթացքում քննության առնված ֆինանսավարկային պայմանագրերում ներկայացված ֆինանսավորման ծրագրերի նկարագրությունը վկայում է, որ անհրաժեշտ չափով հստակեցված չեն տրամադրվող վարկային միջոցներով ֆինանսավորվող կոնկրետ ծախսերի ուղղությունները:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի հստակությամբ, այդ միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին, նշելով, որ նման համաձայնագրերով նախատեսված ծրագրերի ընդհանուր բնույթը պահանջում է համաձայնագրերի կատարման նկատմամբ հստակ մշտադիտարկում, որը թույլ կտա խուսափել վարկային նախորդ համաձայնագրերի իրագործման պրակտիկայում տեղ գտած թերություններից եւ բացթողումներից, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթների հնարավոր խախտումներից:

Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանն իր 27.05.2014 թվականի ՍԴՌ-1151 որոշման մեջ ևս անդրադարձել է նշված հիմնախնդրին՝ արտահայտելով հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Անդրադառնալով ՀՀ ճանապարհային ցանցի բարելավմանն ու պահպանմանն ուղղված միջազգային ներդրումային ծրագրերի իրականացման և այդ բնագավառում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման պրակտիկային՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2009 թվականի սեպտեմբերի 15-ին և 2011 թվականի մայիսի 30-ին կնքված ներդրումային ծրագրի Տրանշ 1-ի և Տրանշ 2-ի իրականացման վարկային համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, մասնավորապես՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրագործման շրջանակներում խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացի օրինականության ու արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ» ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի հունիսի 1-ի թիվ 11/1 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվությունը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա Պայմանագրի կատարման շրջանակներում հիշյալ փաստաթղթում ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բացահայտված թերությունների ու բացթողումների բացառումը, ինչպես նաև արված եզրակացությունների ու առաջարկությունների կենսագործումը վերոհիշյալ Պայմանագրով ստանձնած ՀՀ պարտավորությունների արդյունավետ կատարման, հետևաբար՝ նաև ՀՀ Սահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրների իրագործման երաշխիքներ են»:

Իր մեկ այլ՝ «2014 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված՝ «Կրթության բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՄԳՈ-1161 որոշմամբ և սահմանադրական դատարանն անդրադառնալով հիշյալ հիմնախնդրին՝ նշել է. «Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային (փոխառության) միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագիրը ևս պահանջում է լուրջ վերահսկողություն վարկային միջոցների օգտագործման և Ծրագրի իրականացման ու կառավարման առումով՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար»:

2014 թվականին ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության առնված գործերի համատեքստում կարևորվում է «2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացված ՄԳՈ-1175 որոշումը:

ՀՀ սահմանադրական դատարանն այս որոշմամբ արտահայտել է մի շարք հիմնարար իրավական դիրքորոշումներ, որոնց անհրաժեշտ է համարում անդրադառնալ տարեկան հաղորդման շրջանակներում: Սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրել է. «...միջազգային արդի զարգացումները, գլոբալացման գործընթացները, միջպետական ինտեգրման միտումները հանգեցրել են նրան, որ երկրները զնում են առավել խոր փոխշահավետ գործակցության՝ ի սպաս իրենց ժողովուրդների և քաղաքացիների բարօրության, համատեղ լուծելու տնտեսական, բնապահպանական, սոցիալական, մարդկանց անվտանգության ապահովման և համարժեք այլ խնդիրներ: 21-րդ դարի աշխարհակարգին բնորոշ են հատկապես տնտեսական ոլորտում անդրազգային կորպորացիաների գերիշխանությունը, գլոբալ աղետների դեմ պայքարի համաշխարհայնացումը, մարդու իրավունքների ոլորտում մի-

ասնական չափորոշիչների սահմանումը, արժեհամակարգային ինտեգրման խորացումը: Այս գործընթացները պահանջում են նաև գործակցության նոր ձևեր, որոնցից է միջազգային և տարածաշրջանային համագործակցության տարբեր ձևաչափերի ակտիվ զարգացումը:

Միջազգային տնտեսական զարգացումների ընդհանուր միտումն այն է, որ նոր որակով ներկա տնտեսական համագործակցության գլխավոր բնութագրիչը փոխհամաձայնեցված կամ միասնական քաղաքականության միջոցով ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովումն է: Նույնիսկ զարգացած երկրները ներառված են այս գործընթացներում, և նոր հազարամյակում այն այլընտրանք չունի»: Միաժամանակ սահմանադրական դատարանը շեշտել է, որ «Գլխավոր խնդիրն այն է, թե որքանով է ապահովվում նման ինտեգրման փոխշահավետությունը և ներդաշնակությունը երկրի սահմանադրական կարգի հիմունքներին: Ընդ որում, պետության մասնակցությունը միջազգային կազմավորումներին համարվում է իրավաչափ, եթե դա իրականացվում է միջազգային պայմանագրերին համապատասխան և չի հանգեցնում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակման և չի հակասում իր սահմանադրական կարգի հիմունքներին: Նման մոտեցումը բխում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից և ունի ունիվերսալ բնույթ»:

Սահմանադրական դատարանն այս որոշման շրջանակներում անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված «ինքնիշխան պետություն» եզրույթին և արձանագրել հետևյալը. «Սահմանադրաիրավական տեսանկյունից երկրի ինքնիշխանության հիմնական բնութագրիչներն են.

նախ՝ պետական ինքնիշխանությունը, որը ենթադրում է, որ.

ա/ պետական իշխանությունն ունի գերակայություն ու անկախություն երկրի ներսում և միջազգային հարաբերություններում,

բ/ միայն ինքնիշխան պետությունն ունի միջազգային իրավասուրյեկտի կարգավիճակ,

գ/ երկրի ներսում ինքնիշխան պետությունն ինքն է սահմանում և պահպանում իր երկրի իրավակարգը՝ անհրաժեշտության դեպքում գործադրելով պետական հարկադրանքի միջոցներ,

դ/ պետական ինքնիշխանությունը տարածվում է երկրի ամբողջ տարածքի վրա, բացառում է երկիշխանությունը, միակ լեզվախոս իշխանությունն է իրականացնում օրենսդիր, գործադիր և դատական գործառնությունները:

Միաժամանակ, պետական ինքնիշխանությունը չի ենթադրում իշխանության բացարձակ անսահմանափակություն: Իրավական պետությունում այն առաջին հերթին սահմանափակված է մարդու հիմնարար իրավունքներով ու ազատություններով, որոնք գործում են անմիջականորեն, ունեն ինչպես ներպետական, այնպես էլ վերպետական /միջազգային/ իրավական պաշտպանվածություն: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Երկրորդ՝ ժողովրդական ինքնիշխանությունը, որի էությունը ժողովրդի՝ իշխանության միակ կրողն ու աղբյուրը լինելը ճանաչելն է: ՀՀ Սահմանադրության 2-րդ անփոփոխելի հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին»:

Երրորդ՝ ազգային ինքնիշխանությունը, ինչն ազգի իրավունքն է ինքնուրույն և ազատորեն որոշել իր մշակութային, սոցիալ-տնտեսական և քաղաքական կեցությունը: Ազգային ինքնիշխանությունը ենթադրում է նաև ազգի քաղաքական ինքնորոշման իրավունքի ճանաչումը, որն իր սահմանադրաիրավական ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության նախաբանում:

Հայաստանի Հանրապետությունում պետական ինքնիշխանության երաշխավորման և իրացման կարևոր իրողություններից է այն, որ սահմանադրորեն երկրի օրենսդիր մարմնին է վերապահված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու իրավասությունը /հոդվ. 81, կետ 2/»:

Դատարանը նաև արձանագրել է, որ «...իրավական, ժողովրդավարական պետության կայացման միջազգայնորեն ճանաչված արժեհամակարգային հիմնարար սկզբունքներն են դառնում ազգային իրավական համակարգի հենքը: Միաժամանակ, դրանք բացարձակ չեն կարող լինել և պետք է ունենան տվյալ ազգի ու պետության հիմնարար շահերից բխող ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական չափորոշիչներ, որպիսիք են.

ա/ իրավական, ժողովրդավարական պետության սկզբունքներին հավատարիմ մնալը,

բ/ իրավունքի գերակայության երաշխավորումը,

գ/ ժողովրդի ինքնիշխանության ճանաչումն ու երաշխավորումը,

դ/ միջազգային ու տարածաշրջանային ինտեգրման գործընթացներին պետության ինքնակամ մասնակցության և դրանից իր ցանկությամբ

ու իր ժողովրդի շահերից ելնելով հրաժարվելու իրավունքի երաշխավորվածությունը:

Միջազգային իրավունքի կարևոր բաղադրիչներից են նաև.

ա/ իրավակարգավորումների շուրջ փոխշահավետ պայմանավորվածությունները,

բ/ դրանց իրացման ու վերահսկման կառուցակարգերի ստեղծումը,

գ/ առաջացած տարաձայնությունների հաղթահարման իրավական ընթացակարգերի փոխճանաչումը»: Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել նաև ընգծել, որ «...**նոր հազարամյակում մեզաէկոնոմիկան դարձել է օբյեկտիվ իրականություն և պետությունների գործակցության իր պահանջներն է առաջադրում**, առանց որի հաշվառման դժվար է հաջողություն ակնկալել:

Վերպետական կառույցները ձևավորվում են վերպետական հարթակի օբյեկտիվ իրավահարաբերություններից բխող խնդիրների փոխհամաձայնեցված լուծման համար: Դա արդեն վերպետական գործակցության բոլորովին այլ որակ է: Յուրաքանչյուր երկրի ինքնակամ մասնակցությամբ ձևավորված վերպետական մարմնի որոշումներում առկա է ազգային մասնակցության կամքի արտահայտությունն այն մանդատով, որը մասնակցին՝ իր իսկ ազգային շահերից ելնելով, վերապահվել է վավերացված միջազգային պայմանագրի ուժով: Ազգային կառույցներն իրենց գործառույթներն իրականացնում են ներպետական իրավական համակարգի անբաժանելի մաս հանդիսացող միջազգային պայմանագրերի իրավակարգավորումները հաշվի առնելով»:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև հետևյալը. «ՀՀ Սահմանադրության նախաբանում հավաստելով իր հավատարմությունը համամարդկային արժեքներին, սահմանադրական կարգի հիմունքներով արտաքին քաղաքականության իրականացման հիմքում դնելով միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը, իրավական, ժողովրդավարական պետության կայացման գործում գերակայություն վերապահելով միջազգային իրավունքին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում միջազգային ու տարածաշրջանային համագործակցության ու այն ապահովող կառույցների իրավաչափ գործունակության ապահովման հարցերում:

Սակայն դրա համար առկա են նաև սահմանադրական հստակ պահանջներ, որոնք բխում են ՀՀ Սահմանադրության թե՛ արժեքանությունից և թե՛ մի շարք կոնկրետ դրույթներից:

Դրանք են.

1/ պետական, ժողովրդական ու ազգային ինքնիշխանության երաշխավորումը,

2/ միջազգային հարաբերությունների իրավահավասարությունն ու փոխշահավետությունը,

3/ մարդու իրավունքների միայն այնպիսի հնարավոր սահմանափակումների նախատեսումը, որոնք համարժեք են միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին,

4/ Հայաստանի համար վերպետական մարմինների որոշումների գործողության հնարավորությունը միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության շրջանակներում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ որևէ վերպետական մարմնի կողմից ընդունված ցանկացած որոշում, որը չի համապատասխանում այդ պահանջներին, կիրառելի չէ Հայաստանի Հանրապետությունում: Իսկ այդ պահանջների պահպանման պարագայում Հայաստանի Հանրապետության կողմից այս կամ այն տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպության հետ գործակցությունը սահմանադրականության խնդիր չի կարող առաջացնել: Սա ամբողջությամբ վերաբերում է նաև քննության առարկա Պայմանագրին ու դրա շրջանակներում ստանձնվող միջազգային պարտավորություններին»:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները և դրանց կատարումը

2013 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները 16.12.2013 թվականին դիմել են սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանը գործն ընդունել է քննության, և դատաքննությունը նշանակվել է 28.03.2014թ., սահմանադրական դատարանի որոշումը կայացվել է 02.04.2014թ.:

2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների կողմից սահմանադրական դատարան ներկայացված երկու դիմումներից մեկը սահմանադրական դատարանում մուտքագրվել է 03.10.2014թ., ընդունվել է քննության և դատաքննությունը նշանակվել է 31.03.2015թ., իսկ մյուսը սահմանադրական դատարանում մուտքագրվել է 19.12.2014թ., ընդունվել է քննության և դատաքննությունը նշանակվել է 26.05.2015թ.:

16.12.2013 թվականին սահմանադրական դատարան ներկայացված դիմումի առնչությամբ /«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5, 7, 8, 37, 38, 45, 49 եւ 86-րդ հոդվածների սահմանադրականության վերաբերյալ» գործով/ սահմանադրական դատարանն իր 02.04.2014թ. ՄԴՈ-1142 որոշմամբ որոշել է.

«1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 1-ին եւ 11-րդ մասերի, դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ այն մասով, որով չեն ապահովում յուրաքանչյուր անձի հայեցողությամբ իր սեփականություն հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավունքը եւ հանգեցնում են մարդու կամաարտահայտությունից անկախ նրա սեփականության իրավունքի սահմանափակման, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31 եւ 43-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Իրավունքի գերակայության եւ իրավական որոշակիության սկզբունքների պահանջներին համարժեք իրավունքների պաշտպանության կոնկրետ երաշխիքներ չամրագրելու եւ տվյալ իրավահարաբերություններում գործադիր իշխանության հայեցողության սահմանները չհստակեցնելու հանգամանքից ելնելով՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի, 3-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող եւ անվավեր:

3. Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «...որի տնօրինման ... կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» դրույթը եւ 44-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող եւ անվավեր:

4. Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում են

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող եւ անվավեր:

5. Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքի արգելանքի միջոցով վարչական ակտի հիման վրա սեփականության իրավունքը սահմանափակող դրույթը՝ գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման սահմանափակման միջոցով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31 եւ 43-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր՝ հաշվի առնելով նաեւ, որ տվյալ դրույթին առնչվող իրավահարաբերությունները չեն վերաբերում քննության առարկա օրենքի իմաստով պարտադիր կուտակային վճար կատարողի /հարկային գործակալի/ անմիջական հարկային պարտավորությունների կատարմանը:

6. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-10-րդ մասերի, 8, 37, 38, 45-րդ հոդվածների, 49-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 86-րդ հոդվածի վեճի առարկա դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ այն սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ դրանցով նախատեսված իրավակարգավորումները **չեն կարող հիմքում ունենալ, մեկնաբանվել եւ կիրառվել մարդկանց հայեցողությունից անկախ նրանց սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող իրավակարգավորման համատեքստում, իսկ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների իրավունքները պետք է իրացվեն միայն համարժեք պարտավորություններով հավասարակշռման սկզբունքին համապատասխան:**

7. Հաշվի առնելով, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, մասնավորապես՝ սույն որոշման եզրափակիչ մասի 1-5 կետերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթները համակարգային առումով փոխկապակցված են Հայաստանի Հանրապետության շուրջ 50 օրենքներով եւ ութ տասնյակից ավելի այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված իրավակարգավորումների հետ, որոնց շատ դրույթներ սույն որոշման հիման վրա օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, ինչպես նաեւ նկատի ունենալով օրեն-

քի պահանջը՝ համակարգային առումով իրավական անվտանգությունը չխաթարելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2014 թվականի սեպտեմբերի 30-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին եւ Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

Սույն որոշման պահանջներից բխող նոր իրավակարգավորումներից ելնելով եւ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ վերահաշվարկման են ենթակա մինչ այդ կատարված կուտակային վճարները»:

Սահմանադրական դատարանը նախ հարկ է համարում արձանագրել, որ քննության առարկա գործի շրջանակներում դիմող կողմը միջնորդել էր «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով վեճի առարկա հոդվածների առնչությամբ կիրառել դիմումի ապահովման միջոց: Արդյունքում՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 24 հունվարի 2014 թվականի ՄԳԱՈ-3 որոշմամբ որոշել էր կասեցնել «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի եւ 86-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը մինչեւ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5, 7, 8, 37, 38, 45, 49 եւ 86-րդ հոդվածների սահմանադրականության վերաբերյալ» գործի դատաքննության ավարտը՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածն ամրագրում է, որ գործը քննության ընդունելուց հետո սահմանադրական դատարանը դիմող կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ մինչեւ գործի դատաքննության ավարտը կարող է կասեցնել այն իրավական ակտի գործողությունը, որի սահմանադրականությունը վիճարկվում է, եթե կասեցման մասին որոշում չընդունելը կարող է հանգեցնել անդառնալի կամ ծանր հետեւանքների դիմող կողմի կամ հանրության համար:

Սահմանադրական դատավարության միջազգային պրակտիկայում վեճի առարկա ակտի գործողության ժամանակավոր կասեցումն իրավա-
չափ է միայն իրավական անվտանգության ապահովման նկատառումնե-
րից ելնելով:

**Իրավական ակտի կիրառման հետեւանքների անդառնալի լինելը
կամ անվերականգնելիությունն այն չափանիշն է, որը որոշում է դատա-
րանի հայեցողության սահմանը՝ մինչեւ գործի դատաքննության ավար-
տը դիմումի ապահովման միջոցը կիրառելիս:**

Իրականացված վերլուծության հիման վրա ՀՀ սահմանադրական
դատարանը հանգել է այն հետևությանը, որ «Կուտակային կենսաթո-
շակների մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի, որը վերաբերում է պարտա-
դիր կուտակային վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու
համար պատասխանատվությանը, եւ 86-րդ հոդվածի 3-րդ մասի գործո-
ղությունը 2014թ. հունվարի 1-ից հանրության համար առաջացնում է
իրավունքի գերակայության սկզբունքին եւ իրավական պետության չա-
փորոշիչներին ոչ համարժեք հետեւանքներ, մասնավորապես՝ մարդ-
կանց համար անհնարին դարձնելով համակարգի ներդրման նախօրեին
փոփոխված կամ վերջին պահին ընդունված իրավական ակտերի իրա-
վակարգավորումները հաշվի առնելով կենսաթոշակային ֆոնդի եւ կեն-
սաթոշակային ֆոնդի կառավարչի ընտրության իրենց իրավունքի
լիիրավ իրացումը, ինչն օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի միանշանակ
պահանջի իրացման պարագայում վերականգնելի չէ:

Վերջինս հետագայում կարող է հանգեցնել նաեւ պարտադիր կուտա-
կային վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար պա-
տասխանատվության /հոդվ. 76/, որում ընդհուպ նախատեսվում է վար-
չական ակտով «...գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործ-
ման իրավունքի» սահմանափակում:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Սահմանադրական դատա-
րանի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով՝ ՀՀ սահմանադ-
րական դատարանը որոշել է մինչեւ «Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Կուտակա-
յին կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5, 7, 8, 37, 38, 45, 49 եւ 86-րդ
հոդվածների սահմանադրականության վերաբերյալ» գործի դատա-
քննության ավարտը կասեցնել «Կուտակային կենսաթոշակների մասին»
ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի եւ 86-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2 ապրիլի 2014 թվականի
ՍԳՈ-1142 որոշման շրջանակներում Հայաստանի Հանրապետության
սահմանադրական դատարանն արտահայտել է մի շարք հիմնարար

իրավական դիրքորոշումներ, որոնց հարկ է համարում անդրադառնալ ստորև:

Սահմանադրական դատարանը մասնավորապես արձանագրել է, որ միջազգային առումով հատկապես վերջին քսան տարիների ընթացքում հրատապ խնդիր է դարձել սոցիալական պաշտպանության ու հատկապես սոցիալական ապահովության ոլորտներում լուրջ բարեփոխումների իրականացումը: Դա պայմանավորված է բազմաթիվ օբյեկտիվ գործոններով, որոնց թվում, մասնավորապես, շեշտվում են բնակչության աստիճանական ծերացման, աշխատունակ բնակչության բաժնի նվազման, բնակչության վերարտադրողական ու ընդհանուր ժողովրդագրական պատկերի որակական փոփոխության հանգամանքները:

Սահմանադրական դատարանը նաև փաստել է, որ.

նախ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը», որից բխում է պետության հանրային-իրավական համարժեք պարտավորությունը:

Երկրորդ՝ այդ պարտավորության իրացման նախապայմանն այն է, որ համաձայն Սահմանադրության 31-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը»:

Երրորդ՝ սահմանադրական այդ իրավունքը չի կարող օրենքով սահմանափակվել, քանի որ դրա համար անհրաժեշտ հիմքեր նախատեսված չեն Սահմանադրության 31, 43 և 44-րդ հոդվածներով:

Չորրորդ՝ սահմանադրական նման իրավակարգավորումների պայմաններում քննության առարկա օրենքի առանձին հոդվածներ /մասնավորապես՝ 5, 7, 13, 76/ ուղղակի կամ անուղղակի նախատեսում են սեփականության իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածի պահանջներին և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին չհամապատասխանող սահմանափակումներ:

Հինգերորդ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 89-րդ հոդվածն իրավունք է վերապահում Հայաստանի Հանրապետության կառավարությանը կառավարելու **բացառապես պետական սեփականությունը**: Անձանց կամ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականության կառավարումը որպես գործառույթ օրենքով չի կարող ընդգրկվել այդ իրավունքի իրացման շրջանակներում:

Վեցերորդ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները, մի կողմից,

վկայում են դրանց հստակ ու հետևողական բնույթի մասին, որոնք հիմք են հանդիսացել նաև տարբեր իրավանորմեր Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու համար: Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ դրանք խորությամբ հաշվի չեն առնվել քննության առարկա օրենքի ընդունման ժամանակ: Դա այն դեպքում, երբ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին»: Բացի դրանից, օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխան լինելը սահմանադրաիրավական պահանջ է (Սահմ. 6-րդ հոդված, 2-րդ մաս):

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ միջազգային պրակտիկայում գործատուների և աշխատողների կողմից կատարվող սոցիալական ապահովության վճարների տոկոսային հարաբերակցությունն այնպիսին է, որ հիմնականում գործատուների հաշվին են ձևավորվում սոցիալական ապահովության ընդհանուր նպատակային վճարների կեսից մինչև երկու երրորդը: Անկախ թոշակային համակարգի առանձնահատկություններից, աշխարհի բազմաթիվ երկրների /Շվեդիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Սինգապուր, Լեհաստան, Հունգարիա, Սլովենիա, Խորվաթիա, Սլովակիա և այլն/ փորձը վկայում է, որ համեմատաբար ավելի մեծ հաջողություն են արձանագրում այն երկրները, որտեղ կենսաթոշակային ապահովման խնդրի լուծմանը մասնակցում են երեք հիմնական սուբյեկտներ՝ պետությունը, գործատուն և աշխատողը:

Բացի դրանից, շատ երկրներում ընդհուպ պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարների բեռը նույնպես բաշխվում է աշխատողի և գործատուի միջև: Ի տարբերություն դրա, մեր երկրում սոցիալական ապահովության ոլորտում ոչ պետական համակարգի գործատուների բեռը նույնպես պետությունն է ստանձնում /մասնավորապես՝ 5 տոկոս լրավճարների ձևով/:

Գործնականում Հայաստանը սոցիալական-իրավական պետության սահմանադրական սկզբունքն ամրագրած եզակի երկրներից է, որտեղ կենսաթոշակային ֆոնդի նպատակային անհատական վճարները չեն ձևավորվում սոցիալական ապահովության վճարներից, այլ կազմավորվում են աշխատավարձից լրացուցիչ պարտադիր մասհանումների ու հարկերի հաշվին:

Այլ մեթոդաբանություն որդեգրած բազմաթիվ երկրների կոնկրետ

օրինակներ կարելի է վկայակոչել: Ամենաթարմ օրինակը, թերևս, Ռուսաստանի Դաշնությունում «Կուտակային կենսաթոշակի մասին» 2013 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված թիվ 424-Փ3 դաշնային օրենքն է, որով մարդկանց հնարավորություն է տրվել ընտրություն կատարել ապահովագրական և կուտակային կենսաթոշակների ու դրանցում **սոցիալական ապահովագրության շրջանակներում** մասնակցության չափի միջև: Իսկ, օրինակ, Շվեդիայում, որտեղ կենսաթոշակը հասցվել է աշխատավարձի 60-80 տոկոսին, սոցիալական ապահովության վճարը կազմում է 18.5 տոկոս, ինչը հավասարապես բաշխվում է գործատուի և վարձու աշխատողի միջև: Ընդ որում, ընդհանուր վճարից 16 տոկոսը հատկացվում է բաշխողական, 2.5 տոկոսը՝ կուտակային համակարգին:

Սահմանադրական դատարանը կարևորել է նաև այն հանգամանքը, որ սոցիալական ապահովության վճարը հարկով փոխարինելը՝ դրա օգտագործման հարցում էապես ընդլայնում է իշխանության հայեցողության սահմանները: Սոցիալական ապահովության վճարները ոչ միայն ունեն նպատակային հասցեագրում, այլև ընդհուպ գործատուի կողմից կատարվում են անհատականացման սկզբունքով՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար: Ուշադրության է արժանի, որ Աշխատանքի միջազգային բյուրոյի /Աշխատանքի միջազգային կազմակերպության Ժնևի մշտական քարտուղարության/ «Աշխարհում սոցիալական ապահովության վիճակի վերաբերյալ» 2010 թվականի նոյեմբերի 16-ին հրապարակված առաջին գեկույցում հատուկ ուշադրություն հրավիրվեց այն հարցին, որ հատկապես տնտեսական ճգնաժամով պայմանավորված, ինչպես նաև պետական պարտքը կամ բյուջեի դեֆիցիտը կրճատելու համար պետությունները գնում են սոցիալական ապահովության միջոցների կրճատման ճանապարհով: Նման վտանգը մեզանում ավելի է մեծանում, երբ սոցիալական ապահովության միջոցները նպատակային մուտքերից չեն ձևավորվում, այլ փոխարինվել են հարկով:

Սահմանադրական դատարանը կարևորել է նաև կուտակային ֆոնդեր կատարվող վճարումների տոկոսադրույքի ընտրության խնդիրը, ինչն ինքնանպատակ չի կարող լինել: Այն առաջին հերթին պետք է համապատասխանի իրավական համաչափության սկզբունքին: Տվյալ պարագայում խնդիրը հանգում է **անձի ընթացիկ և հեռանկարային կենսաապահովման միջև խելամիտ հարաբերակցության սահմանմանը**: Որպես դրա հավասարակշռման կարևոր գործոն կարող է հանդես գալ գործատուի համարժեք մասնակցությունը: Ուստի, դարձյալ միջազգային փորձը վկայում է, առավել հավասարակշռված լուծում կարող է գտնվել աշխատողի, պետություն գործատուի և ոչ պետական ձեռնարկություն-կազմա-

կերպություն գործատուների համատեղ մասնակցությամբ սոցիալական ապահովության այնպիսի հնարավորությունների ստեղծման ճանապարհով, երբ, մի կողմից, կենսաթոշակային, այդ թվում՝ կուտակային, ֆոնդերի ձևավորման հարցում աշխատողը մասնակցում է սոցիալական ապահովության այնպիսի վճարներով, ինչը ներդաշնակեցված է թե՛ ժամանակի մեջ իր կենսաապահովման և թե՛ հարկային ծանրաբեռնվածության հետ, մյուս կողմից՝ ոչ թե պետական բյուջեն, այլ բոլոր գործատուներն են հանդես գալիս համարժեք ֆոնդերի ձևավորման մասնակիցն ու դրանց նպատակային օգտագործման երաշխավորը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իրավասու չէ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանը կենսաթոշակային ֆոնդերի ձևավորման քանակական հարաբերակցության կոնկրետ լուծումներ առաջարկել, ինչը նրանց հայեցողության սահմաններում է: Սակայն միջազգային փորձը և մեր երկրի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և այլ առանձնահատկությունները վկայում են, որ հնարավոր է սոցիալական ապահովության համակարգի բարեփոխումների գործընթացին օրենքով սահմանված կարգով ու շրջանակներում մասնակից դարձնելով բոլոր գործատուներին՝ գտնել այդ հարաբերակցությունը՝ թեթևացնելով աշխատողների անհատական մասնակցության բեռը:

Այնուհետև սահմանադրական դատարանն արձանագրել է. «Պարտադիր կուտակային բաղադրիչի մասով առկա օրենսդրական կարգավորումները հստակ չեն լուծում առանցքային կարևորության այն խնդիրը, թե ինչպես վարվել նվազագույն աշխատավարձ ստացողների պարագայում, ինչը կարևոր սահմանադրական խնդիր է: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նախատեսված է Սահմանադրության 32-րդ հոդվածով, օրենքով սահմանվում է նվազագույն աշխատավարձի չափը: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով՝ ամսական հարկվող եկամտի չափը մինչև 120000 դրամ լինելու դեպքում, եկամտային հարկի գումարը կազմում է դրա 24.4 տոկոսը: Որևէ ներքին սահման առանձնացված չէ: «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել է 45000 դրամ: Նույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված է, որ «Նվազագույն ամսական աշխատավարձի չափի մեջ չեն ներառվում աշխատավարձից վճարվող հարկերը, հավելումները, հավելավճարները,

պարզևատրումները և խրախուսման այլ վճարները»: Նման ձևակերպումը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Մի կողմից, հարկերը չեն ներառվում նվազագույն ամսական աշխատավարձի չափի մեջ, մյուս կողմից՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, առանց ներքին սահման դնելու, նախատեսված է, որ մինչև 120000 դրամ եկամտի դեպքում հարկի գումարը կազմում է 24.4 տոկոս: Դրանից միայն կարելի է ենթադրել, որ նշված բոլոր վճարները կատարվում են գործատուի հաշվին կամ նման հարկեր չեն գանձվում: Սակայն օրենքը ցանկացած պարտավորություն պետք է հստակ սահմանի և բացառի հայեցողական մոտեցում այս հարցում:

Սահմանադրական դատարանը գտել է, որ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ նվազագույն աշխատավարձի դեպքում պարտադիր կուտակային կենսաթոշակի վճարման խնդիրն օրենսդրական համարժեք լուծում չի ստացել: Հաշվի չի առնվել նաև «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, որի 4-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի սահմանումը նպատակ ունի, մասնավորապես, հիմնավորել սահմանվող նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերը, որոշել **չհարկվող եկամտի չափը**: Սակայն վերջինս, ինչպես փաստվեց, համաձայն «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ այլևս գոյություն չունի:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված **նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունք**: «Նվազագույն աշխատավարձ» սահմանադրական եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է, որ **աշխատողի փաստացի աշխատավարձն օրենքով նախատեսված նվազագույնից պակաս լինել չի կարող**, որովհետև դա պետք է կենսական նվազագույն որոշակի խնդիրների լուծում ապահովի: «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանադրաիրավական այս մոտեցումը չի դրել տվյալ հիմնախնդրի օրենսդրական կանոնակարգման հիմքում և փաստացի իրավակարգավորումը ներդաշնակ չէ Սահմանադրության 32-րդ հոդվածի պահանջներին»:

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև. «Նկատի ունենալով կենսաթոշակային ոլորտի համակարգային բարդությունները և ժամանակի գործոնի ազդեցությունը, գրեթե բոլոր **երկրներում բարեփոխումների հաջողության գրավական է դիտվել հանրային վստահությունն այդ համակարգի ու իրականացվող քայլերի նկատմամբ**: Այդ վստահությունը վերացական լինել չի կարող: **Այն ձևավորվում է համակարգի գործառույթային ու կառուցակարգային գործունակության երաշխիքներով, վերահսկողական համակարգի հուսալիությամբ, թափանցիկությամբ, մարդկանց սպասելիքների կանխատեսելիության աստիճանով**: Առաջին հերթին օրենսդրական կանոնակարգումը պետք է նման երաշխիքներ ամրագրի և այս հարցում նախատեսի նաև խորհրդարանական ու այլ վերահսկողական լծակների արդյունավետ գործադրում:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել այս հիմնախնդրին նույնպես անդրադառնալ սահմանադրական պահանջների և դրանց հետևողական իրացման անհրաժեշտության տեսանկյունից՝ երաշխավորելու համար Սահմանադրության գերակայությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը: Հստակ է, որ սահմանադրական տվյալ դրույթը վերաբերում է անձանց բոլոր իրավունքներին: Դրա հետ մեկտեղ, ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սահմանադրական կարգի հիմունքների 8-րդ հոդվածում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Նկատի ունենալով, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սեփականության իրավունքն օրենքով չսահմանափակվող իրավունք է, ուստի **առավել ևս դրա պաշտպանության պայմաններն ու կարգը միմիայն օրենքով կարող են սահմանվել**:

Քննության առարկա օրենքով պահպանված չէ այս տրամաբանությունը: Մասնավորապես, օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով կենսաթոշակային ֆոնդերի փայերը համարվում են մասնակցի անձնական սեփականությունը: Դրա պաշտպանության հիմնական երաշխիքը համարժեք ֆոնդի տնօրինման կարգով ու պայմաններով է պայմանավորված: Առկա է անձանց իրավունքների իրականացման ու պաշտպանության պայմանների ու կարգի սահմանման խնդիր: Սահմանադրա-

կան պահանջ է, որ այն պետք է դառնա օրենքի կանոնակարգման առարկա: Այնինչ քննության առարկա օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 44-րդ հոդվածով այդ իրավասությունը՝ քանակային և արժույթային սահմանափակումների սահմանման շրջանակներում, ինչպես նաև երաշխիքային ֆոնդի տնօրինման և կառավարման կարգի ու պայմանների սահմանման մասով վերապահվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Այստեղ ուշադրության է արժանի և այն, որ կառավարությունը սահմանում է նաև այդ ֆոնդի **տնօրինման** պայմանները: Տնօրինումը ենթադրում է նաև իրավական կարգավիճակի կամ գույքի ճակատագրի որոշման իրավունք: Ֆոնդի միջոցները քաղաքացիների սեփականություն է ճանաչվել օրենքով, սակայն սեփականության տնօրինման պայմանները ոչ թե օրենքով են սահմանվում, այլ սահմանում է կառավարությունը: Նման կանոնակարգումը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի և 89-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից: ...

Համակարգի հուսալիության կարևորագույն երաշխիքներից մեկն էլ ռիսկերի կառավարումն է: Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ֆոնդի ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները ևս օրենքով չեն սահմանվել, այլ վերապահվել են բացառապես Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հայեցողությանը: ...

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013թ. դեկտեմբերի 27-ի թիվ 324-Ն որոշմամբ սահմանվել է «Ներդրումային ֆոնդի կառավարչի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի նկատմամբ նվազագույն պահանջները» /կանոնակարգ 10/16/: Անկախ այն հանգամանքից, որ օրենքով նախատեսված **«պահանջները»** ենթաօրենսդրական ակտով սահմանափակվել են **«նվազագույն պահանջների»** շրջանակով, բովանդակային առումով նույնպես փաստաթուղթը հեռու է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, մասնավորապես՝ դրա 45-րդ հոդվածի պահանջներից, կառուցված է «պետք է», «անհրաժեշտ է» դարձվածքներից բխող ցանկությունների վրա և համակարգի հուսալիության ապահովման կոնկրետ երաշխիքներ չի բովանդակում:

Ի դեպ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի **հիմնական խնդիրը** Հայաստանի Հանրապետությունում **զների կայունության ապահովումն է:** Ավելին, «Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահ-

մանված է, որ «Եթե Կենտրոնական բանկի մյուս խնդիրները հակասում են իր հիմնական խնդրին, Կենտրոնական բանկն առաջնություն է տալիս հիմնական խնդրին և ղեկավարվում է դրա իրագործման անհրաժեշտությամբ»: Առավել ևս նման իրավակարգավորման պայմաններում կարևորվում է կենսաթոշակային ֆոնդերի ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջների, հիմնական սկզբունքների, ինչպես նաև կուտակային ֆոնդի ակտիվների ներդրման սահմանափակումների հիմնական շրջանակի օրենքով կանոնակարգումը:

Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին վերապահելով նորմաստեղծ, վերահսկողական և կազմակերպական լայն լիազորություններ, չի նախատեսել համակարգի բնականոն գործունեության երաշխավորման համար կենտրոնական բանկի համարժեք հանրային-իրավական պատասխանատվության որևէ միջոց:

Օրենքով հստակեցված չեն նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի այն գործառույթի իրականացման կարգն ու պայմանները, համաձայն որի վերջինս՝ «...մշակում և ապահովում է կուտակային կենսաթոշակային բաղադրիչի միասնական քաղաքականությունը» /հոդվ. 17, մաս 1, կետ 3/»:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, մասնավորապես՝ սույն որոշման եզրափակիչ մասի 1-5 կետերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթները համակարգային առումով փոխկապակցված են Հայաստանի Հանրապետության շուրջ 50 օրենքներով եւ ութ տասնյակից ավելի այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված իրավակարգավորումների հետ, որոնց շատ դրույթներ սույն որոշման հիման վրա օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, ինչպես նաև նկատի ունենալով օրենքի պահանջը՝ համակարգային առումով իրավական անվտանգությունը չխաթարելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու վերջնաժամկետ էր

սահմանել 2014 թվականի սեպտեմբերի 30-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին եւ Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

ՀՀ Ազգային ժողովը, սահմանադրական դատարանի 02.04.2014 թվականի ՄԳՈ-1142 որոշումն ընդունելուց հետո, 21.06.2014թ. ընդունել է «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքը: 2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների կողմից սահմանադրական դատարան ներկայացված՝ վերը նշված դիմումներից մեկը վերաբերում է հենց այդ օրենքի սահմանադրականությանը, և, ինչպես վերը նշվեց, դիմումն ընդունվել է քննության և դատաքննությունը նշանակվել է 31.03.2015թ.:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ քննության ենթակա գործի առնչությամբ կանխակալ դիրքորոշումներ չարտահայտելու նպատակով սահմանադրական դատարանը սույն հաղորդման շրջանակներում չի անդրադառնում ՄԳՈ-1142 որոշման կատարման արդյունքների գնահատմանը և 21.06.2014թ. ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի սահմանադրականության հարցին կանդրադառնա նշված գործի քննության շրջանակներում:

**Անհատական (ֆիզիկական և իրավաբանական անձանց)
դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումներն
ու դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված անհատական դիմումների մոտ 88 տոկոսը սահմանադրական դատարանի կողմից չի ընդունվել, քանի որ դրանք չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21 և 22-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին, ճանաչվել են որպես ակնհայտ անհիմն կամ վիճարկվող նորմը դատարանի կողմից դիմողի նկատմամբ չի կիրառվել: Հիմնականում անհատական դիմումները վերաբերում են

օրենքների կիրառմանն առնչվող հարցերին կամ ընդհանուր իրավասության ու մասնագիտացված դատարանների իրավագործությանը վերաբերող այլ հարցերի:

Սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունված 10 գործերով որոշումները կայացվելու են 2015թ. հունվար-ապրիլ ամիսներին:

2014 թվականի ընթացքում քննության առնված ինն անհատական դիմումներից /դրանք ներառում են նաև 4 անհատական դիմումները, որոնք սահմանադրական դատարանում մուտքագրվել են 2013 թվականի հունիս-նոյեմբեր ամիսներին, սակայն դրանց հիման վրա գործերը քննության են առնվել 2014 թվականին/ 1-ը, որով օրենքի վիճարկվող դրույթները **ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր**, վերաբերում է հետևյալին.

1. «Քաղաքացի Գետրգ Սլոյանի դիմումի հիման վրա՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18.04.2014թ. ՄԳՈ-1148 որոշմամբ որոշել է.

«1. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասը՝ այն մասով ու մեկնաբանությամբ, որով արգելափակվում է ավելի բարձր աստիճանի մասնագիտական համարժեք որակավորում ունեցող անձի՝ փաստաբանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 43-րդ /2-րդ մաս/ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասում՝ ընդհուպ անհրաժեշտ կրեդիտների առկայության պարագայում, իրավակիրառ պրակտիկայի կողմից տրվող մեկնաբանությամբ, գործնականում արգելափակվում էր ավելի բարձր աստիճանի մասնագիտական որակավորում ունեցող անձի /մագիստրոսի/՝ փաստաբանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը: Նման իրավիճակը հիմնականում պայմանավորված էր բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում առկա իրավական թերի ու համակարգային առումով անկատար լուծումներով: Արդյունքում, մի կողմից, անձն իրավաչափ ակնկալիքներով հանձնում է սահմանված քննությունները, ուսանում է մագիստրատուրայում, ստանում է պետական նմուշի դիպլոմ, սակայն հետագայում պարզվում է, որ տարբեր իրավական ակտերով նախատեսված սահմանափակում-

ներով ինքը տվյալ մասնագիտությամբ աշխատել չի կարող, մյուս կողմից՝ նա մեկ կամ երկու տարում կարող է մագիստրատուրայի բարձրագույն մասնագիտական ծրագրով այլ մասնագիտություն ձեռք բերել, ստանալ պետության կողմից սահմանված մնուշի համապատասխան դիպլոմ՝ առանց անհրաժեշտ կրեդիտների կուտակման:

Տվյալ գործով ընդունված որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Բոլոնյան գործընթացի արդյունքում ներդրված կրեդիտային համակարգը որոշակի կրթական ծրագրով համապատասխան մասնագիտական որակավորում ստանալու համար պահանջում է համապատասխան քանակությամբ կրեդիտների կուտակում: Ուստի եւ մագիստրոսի որակավորման աստիճանը պետք է համարել տվյալ մասնագիտությամբ առավել բարձր կրթական աստիճան միայն այն պարագայում, երբ առկա է այդ մասնագիտության համար նախատեսված անհրաժեշտ կրեդիտների կուտակումը: Միայն տվյալ պարագայում անձը կարող է համարվել համապատասխան կրթական ծրագրով ***տվյալ մասնագիտությամբ երկրորդ աստիճանի՝ մագիստրոսի որակավորման կրող:***

Միևնույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է ՀՀ օրենսդրությամբ վերը նշված հիմնախնդիրների կանոնակարգման անհստակությունը, ինչը լայն հայեցողական մոտեցումների եւ մարդկանց իրավունքների խախտման մեծ ռիսկ է բովանդակում: Մասնավորապես՝ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունից բխում է, որ «Բարձրագույն կրթության տարբեր աստիճանների կրթական ծրագրերով առաջին անգամ կրթություն ստանալը չի դիտվում որպես երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն»: Մյուս կողմից՝ հիշյալ օրենքներում եւ տարբեր ենթաօրենսդրական ակտերում /հատկապես կրթության ընդհանուր չափորոշիչների հաստատման, կրեդիտային համակարգի ներդրման, կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու վերաբերյալ ՀՀ կառավարության՝ համապատասխանաբար 2001թ. հունվարի 16-ի թիվ 24, 2005թ. դեկտեմբերի 22-ի թիվ 2307-Ն, 2011թ. մարտի 31-ի թիվ 332-Ն որոշումներում, ինչպես նաեւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարի կողմից ընդունված համապատասխան գերատեսչական ակտերում/ առկա չէ հստակ մոտեցում կրթության տարբեր աստիճանների իրավական բովանդակության, կրթության շարունակականության, կրեդիտային կուտակային համակարգի և համարժեք որակավորման ներդաշնակման, այս ոլորտում միասնական չափորոշիչների հաստատման վերաբերյալ:

Նման պայմաններում մագիստրոսական կրթություն իրականացնող տարբեր հաստատություններում յուրովի մեկնաբանելով ՀՀ օրենսդրությունը՝ իրենց իսկ շահերից ու նպատակներից ելնելով, տարատեսակ կարգեր են սահմանվել թե՛ մագիստրատուրայի ընդունելության եւ թե՛ մագիստրոսների որակավորման հարցերում: Նման պայմաններում անձն ընդհուպ պետական կրթական հաստատություններում նաեւ վճարովի կրթություն ստանալուց հետո անգամ տվյալ մասնագիտությամբ աշխատելու, ինչպես նաեւ հետագա մասնագիտական ուսուցման իրավունք չի ստանում:

Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասը պարունակում է նաև օրենսդրին և այլ իրավաստեղծ մարմիններին **առաջադրված խնդիր** առ այն, որ հարկ է վերը նշված հիմնախնդիրը հստակ կանոնակարգել:

Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն ընդունել է ի գիտություն ՀՀ կրթության եւ գիտության նախարար Ա. Աշոտյանի պարզաբանումն այն մասին, որ մինչեւ 2014թ. վերջը վերոհիշյալ հարցերի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները կհստակեցվեն եւ կնախաձեռնվեն համապատասխան իրավական կարգավորումներ: Սակայն 2014 թվականին ՀՀ կառավարությունը, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.2014 թվականի ՄԴՈ-1148 որոշման ընդունումից հետո, նշյալ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ չեն կատարել և համապատասխան նախաձեռնությամբ հանդես չեն եկել:

«Քաղաքացի Սերգեյ Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի և 96-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով (02.12.2014թ. ՄԴՈ-1176) սահմանադրական դատարանն օրենքի վիճարկվող նորմը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման պատճառաբանական կամ եզրավակիչ մասերում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ տվյալ որոշմամբ արձանագրելով իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը, կամ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ արտահայտելով համապատասխան դիրքորոշումներ:

Սահմանադրական դատարանը կրկին անգամ կարևորում է այն, որ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմին-

ներն անհրաժեշտ ուշադրություն դարձնեն նաև այդ հանգամանքին: **Առավել ևս, որ, ինչպես նշված է Սահմանադրական դատարանի 2013 թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ, ՀՀ սահմանադրական դատարանն իր 25.02.2011թ. ՍԳՈ-943 որոշման 11-րդ կետում արձանագրել է, որ օբյեկտիվ իրավունքի պաշտպանության տեսանկյունից որևէ իրավանորմ չի կարող մեկնաբանվել ու կիրառվել՝ շրջանցելով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները:** Դատարանը նշված որոշումների պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում նաև արտահայտել է որոշակի իրավական դիրքորոշումներ և միայն դրանց շրջանակներում է իրավական ակտի վիճարկվող նորմը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Սահմանադրական դատարանը կարևոր է համարում, որ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց գործունեության մեջ ելնեն իրավանորմերի այնպիսի ընկալումից, ինչպիսին ներկայացված է սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներում:

Մասնավորապես, «Քաղաքացի Սերգեյ Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի և 96-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով ՀՀ մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, իր՝ 02.12.2014թ. ՍԳՈ-1176 որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետում արձանագրել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ, 2.1-րդ և 3-րդ մասերի համադրված վերլուծությունից պարզ չի դառնում հայտարարատուին վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով մերժման եզրակացության տրամադրման, և մինչև վերջնական որոշում ընդունելը հայտարարատուին գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքների վերաբերյալ գրավոր տեղեկացման հերթականության և հոդվածի համապատասխան մասերում գործածվող «մերժման եզրակացություն» և «վերջնական որոշում» հասկացությունների փոխհարաբերակցության հարցը: Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2.1-րդ մասում առկա կանոնակարգումը, այն է՝ մինչև վերջնական որոշում ընդունելը գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքների վերաբերյալ հայտարարատուին տեղեկացնելը և վերջինիս լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տե-

ղեկություններ գրավոր ներկայացնելու առաջարկը պետք է նախորդեն հողվածի 2-րդ մասում սահմանված մերժման եզրակացության կայացմանը:

Նույն կետում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածում «**վերջնական որոշում**», «**որոշում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ**» և «**մերժման եզրակացություն**» հասկացությունների գործող օրենսդրական կանոնակարգումներից պարզ չի դառնում, թե տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ձևով և բովանդակությամբ միևնույն, թե տարբեր ակտերին:

Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ վերադատության կամ դատական կարգով պետք է բողոքարկելի լինեն և «**մերժման եզրակացությունը**» (նման դատական բողոքարկման հնարավորություն նախատեսված է օրենսգրքի քննարկվող հոդվածի 3-րդ մասում), և «**վերջնական որոշումը**» կամ «**մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ որոշումը**»:

Նույն կետում սահմանադրական դատարանը միաժամանակ փաստել է, որ մաքսային մարմինը, հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ կապված անհամաձայնության դեպքում, պարտավոր է օրենսգրքով սահմանված ժամկետներում դրա վերաբերյալ կայացնել պատճառաբանված եզրակացություն և/կամ որոշում, **և անկախ հայտարարատուի գրավոր կամ բանավոր պահանջից՝** պետք է հայտարարատուին տրամադրի նշյալ եզրակացությունը և/կամ որոշումը՝ վերջինիս կողմից Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքների պաշտպանության ուղղությամբ համարժեք միջոցներ ձեռնարկելու համար: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանը գտել է, որ իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի սահմանադրաիրավական առումով իրավաչափ նման մոտեցմամբ:

Տվյալ գործով խնդիրը կարևորվում է նրանով, որ իրավակիրառական պրակտիկայում ապրանքի մաքսային արժեքի որոշման՝ օրենքով նախատեսված հիմնական կանոնը փաստացի դարձել էր բացառություն, իսկ բացառությունը՝ հիմնական կանոն այն դեպքում, երբ ՀՀ օրենսդրության տրամաբանությամբ՝ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդն **ընդհանուր կանոն է**, իսկ մաքսային արժեքի որոշման մյուս այլ մեթոդները՝ **բացառություն ընդհանուր կանոնից**:

Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանի որոշման

պատճառաբանական մասը պարունակում է նաև իրավակիրառողին ուղղված հանձնարարություն առ այն, որ մաքսային արժեքի որոշման ընդհանուր կանոնին համապատասխան՝ գործարքի գնի մեթոդի կիրառման ժամանակ անհրաժեշտ է ղեկավարվել այն տրամաբանությամբ, որ այդ գործարքի իրականացման ժամանակ վճարային փաստաթղթերով ներկայացված տեղեկությունները հավաստի են ու արժանահավատ, եթե մաքսային մարմինը չի ապացուցել դրանց անարժանահավատ կամ ոչ հավաստի լինելը:

Երկու անհատական դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանը թեև կարճել է գործերի վարույթը, սակայն տվյալ գործերով ընդունված որոշումներով նույնպես արձանագրել է իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը, կամ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ արտահայտել է համապատասխան դիրքորոշումներ: Այսպես,

ա/ «Քաղաքացիներ Հովհաննես Սահակյանի եւ Ռուբեն Այվազյանի դիմումի հիման վրա՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14.01.2014թ. ՄԳՈ-1135 որոշմամբ որոշել է գործի վարույթը կարճել:

Տվյալ գործով կայացված որոշման 7-րդ կետում արձանագրելով, մի կողմից՝ սահմանադրական, քրեական եւ վարչական դատավարություններում դատական ներկայացուցչության, մյուս կողմից՝ քաղաքացիական դատավարությունում դատական ներկայացուցչության իրականացման համար սահմանված նորմերի տարբերությունը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածով անուղղակիորեն սահմանված է փաստաբան լինելու իմպերատիվ պահանջ), արձանագրելով ՀՀ օրենսդրության մեջ դատական ներկայացուցչության ոլորտի կարգավորման համադրված քաղաքականության, ինչպես նաեւ նշված ոլորտը կարգավորող դրույթների, հասկացությունների հստակության բացակայությունը, ինչն առիթ է հանդիսացել, որպեսզի փորձ արվի հարցը կարգավորել ՀՀ դատարանների նախագահների խորհրդի մակարդակով, սահմանադրական դատարանը կարեւորել է դատավարական օրենսդրության մեջ դատական ներկայացուցչության ինստիտուտի համարժեք կանոնակարգման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվա-

ծի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու ինչպես իր ներկայացուցչի կամ պաշտպանի միջոցով, **այնպես էլ անձամբ:**

Չնայած օրենսդրին և այլ իրավաստեղծ մարմիններին **առաջադրված խնդրին** առ այն, որ հարկ է ՀՀ օրենսդրության մեջ դատական ներկայացուցչության ոլորտի կարգավորման համադրված միասնական քաղաքականություն իրականացնել, հատկապես հաշվի առնելով նշված ոլորտը կարգավորող դրույթների, հասկացությունների և մոտեցումների հստակության բացակայությունը, 2014 թվականին ՀՀ Ազգային ժողովը, ինչպես նաև ՀՀ կառավարությունը, ՀՀ սահմանադրական դատարանի 14.01.2014թ. ՄԳՈ-1135 որոշման ընդունումից հետո, **նշյալ իրավական ակտերում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չեն անդրադարձել:**

բ/ «Քաղաքացի Գրիգորի Վահանյանի դիմումի հիման վրա՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 25.02.2014թ. ՄԳՈ-1140 որոշմամբ որոշել է գործի վարույթը կարճել:

Տվյալ գործով կայացված որոշման 5-րդ կետում ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ կտակների հետ կապված իրավահարաբերությունների առնչությամբ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի փաստացի կիրառումը և այդ երևույթի նկատմամբ դատական պրակտիկայում առկա մոտեցումները, ինչպես նաև նույն օրենքի 56-րդ հոդվածի իրավակարգավորումների ոչ հստակությունը կարող են մարդկանց իրավունքների խախտման լուրջ պատճառ դառնալ: Ըստ սահմանադրական դատարանի՝ խնդիրը ոչ միայն իրավակիրառական պրակտիկային է առնչվում, այլև օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն է ենթադրում, ինչպես նաև պահանջում է կառուցակարգային համարժեք լուծումներ՝ կտակների միասնական շտեմարանի գործուն համակարգ ներդնելու առումով:

Սակայն 2014 թվականին ՀՀ Ազգային ժողովը, ինչպես նաև ՀՀ կառավարությունը, ՀՀ սահմանադրական դատարանի 25.02.2014թ. ՄԳՈ-1140 որոշման ընդունումից հետո, չեն անդրադարձել «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու հարցին և համապատասխան նախաձեռնությամբ հանդես չեն եկել: Ստեղծված իրավիճակը սահմանադրական դատարանի կողմից գնահատվում է անընդունելի և իրավական պետության սահմանադրաիրա-

վական պահանջներին ոչ հարիր, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանի կողմից հստակ արձանագրվել էր, որ գործող օրենսդրական կարգավորումների անհատակությունը կարող է մարդկանց իրավունքների խախտման լուրջ պատճառ դառնալ:

ՀՀ դատարանների դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները և դրանց կատարումը

ՀՀ դատարանների կողմից ներկայացված երկու դիմումներից մեկի վարույթը սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ կարճվել է, իսկ մյուսի դատաքննությունը նշանակված է 10.02.2015 թվականին:

Միևնույն ժամանակ, ՀՀ դատարանների կողմից 2013 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ներկայացված երկու դիմումների հիման վրա գործերով սահմանադրական դատարանը որոշումներ է կայացրել 2014 թվականի փետրվարին եւ հունիսին: Այսպես.

ա/ «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 04.02.2014թ. ՄԳՈ-1137 որոշմամբ որոշել է.

« ... **2.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի՝ «...կամ իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը չի համապատասխանում դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին» դրույթը, այնքանով, որքանով այն կիրառվում է առանց օրենքով սահմանված դատական կամ արտադատական կարգով տվյալ ակտի անվավեր ճանաչման, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 5-րդ, 91-րդ եւ 108.1-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ իրավակիրառական պրակտիկայում ձևավորվել է մի վիճակ, որի պայմաններում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելիս վարչական մարմինն ստուգում և գնահատում էր ոչ միայն վարչական ակտի առ ոչինչ, այլև՝

անվավեր լինելու հանգամանքն այն դեպքում, երբ, վարչական մարմնի ակտերի իրավաչափությունը, համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, կարող է ստուգվել եւ գնահատվել **բացառապես դատական կարգով**: Ստացվում էր, որ պետական գրանցման իրավունք կամ սահմանափակում կիրառող անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտի բացակայության պայմաններում օրենքի ուժով Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն ոչ միայն չէր կատարում դեռեւս իրավաբանական ուժ ունեցող վարչական ակտի պահանջը, այլև իրեն վերապահելով դատական գործառույթ՝ ստուգում և գնահատում էր վարչական ակտի անվավեր լինելու հանգամանքը:

Այդ կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշման 9-րդ կետում սահմանադրական դատարանը հայտնել է իրավական դիրքորոշում առ այն, որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մերժումը չի կարող վերաբերել գույքի նկատմամբ իրավունքների եւ սահմանափակումների պետական գրանցման մերժման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այնպիսի հիմքերին, որոնք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնի համար առաջացնում են իրավունք կամ իրավունքի սահմանափակում կիրառող անհատական իրավական ակտերի օրինականության ստուգման եւ գնահատման հնարավորություն ու անհրաժեշտություն:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետում օգտագործված էր «իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը» բառակապակցությունն այն դեպքում, երբ սահմանադրական մակարդակում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքը կամ իրավունքի սահմանափակումը /խոսքը չի վերաբերում ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի հիմքով իրավունքի ժամանակավորապես սահմանափակմանը/ կարող է նախատեսված լինել կամ Սահմանադրությամբ, կամ օրենքով, կամ միջազգային պայմանագրով, այլ ոչ թե այլ իրավական ակտով, սահմանադրական դատարանը գտել է, որ այլ նորմատիվ, ինչպես նաև անհատական իրավական ակտերով չեն կարող ամրագրվել կամ սահմանվել իրավունքներ կամ իրավունքի սահմանափակումներ, իսկ անհատական իրավական ակտերով, որպես իրավունքի կիրառման ակտեր, կարող են ընդամենը **կիրառվել** իրավունքի սահմանափակումները:

Այդ կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասը պարունակում է նաև օրենսդրին առաջադրված խնդիրը առ այն, որ օրենսդրական կարգավորման մակարդակում այս հասկացությունները պետք է հստակ և ճշգրիտ ձևով ամրագրվեն՝ չաղավաղելով իրավակարգավորման բովանդակությունը՝ նկատի ունենալով, որ տվյալ գործով քննության առարկա օրենքի իրավակարգավորման շրջանակներում կարգավորման առարկան ոչ թե իրավունքի սահմանումը կամ սահմանափակումն է, այլ օրենքով նախատեսված սահմանափակման կիրառումը:

Սահմանադրական դատարանի՝ 04.02.2014 թվականի ՄԳՈ-1137 որոշման կարարումն ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում մշակվել է շրջանառության մեջ է դրվել Պ-562-03.07.2014-ՊԻ-010/0 օրենսդրական նախաձեռնությունը՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի նշյալ հոդվածում փոփոխություններ կարարելու վերաբերյալ,

բ/ «ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 03.06.2014թ. ՄԳՈ-1153 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածներին հակասող է և անվավեր»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ իրավակիառական պրակտիկայում ձևավորվել է մի վիճակ, որի պայմաններում օրենքը թույլ էր տալիս իրավակիրառողին վերցնել տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով՝ ապրանքներ՝ անկախ այդ ապրանքների սեփականության պատկանելությունից, առանց հաշվի առնելու, որ իրավախախտման փաստը պայմանավորված է մեկ այլ սուբյեկտի վարքագծով, որը տվյալ ապրանքի սեփականատերը չէ:

Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասը պարունակում է նաև օրենսդրին առաջադրված խնդիրը առ այն, որ անձի սեփականության իրավունքին միջամտությունը պետք է բխի տվյալ անձի կողմից տուգանքի եւ մաքսային վճարի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից, պետք է լինի բավարարելու անհրաժեշտ այդ նպատակին հասնելու համար, իրավասու մարմնի լիազորությունը եւ այդ լիազորության ընթացակարգը պետք է որոշակի-

որեն ամրագրված լինեն օրենսդրական մակարդակում՝ հաշվի առնելով տվյալ գործով ընդունված որոշման մեջ արտացոլված՝ սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներ ամրագրելու անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանի՝ 03.06.2014 թվականի ՄԳՌ-1153 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

Ստեղծված իրավիճակը սահմանադրական դատարանի կողմից գնահատվում է անընդունելի և իրավական պետության սահմանադրաիրավական պահանջներին ոչ հարիր, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանի կողմից հստակ արձանագրվել էր, որ գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում անձն իր սեփականության իրավունքին միջամտության գործընթացում զրկվում է իր իրավունքն արդյունավետ պաշտպանելու հնարավորությունից, իրավասու մարմնի լիազորությունը և այդ լիազորության ընթացակարգը որոշակիորեն ամրագրված չեն օրենսդրական մակարդակում, ինչպես նաև խախտվում են իրավական պատասխանատվության ինստիտուտի կիրառման հանրային-իրավական սկզբունքները (մեղքի առկայություն, անհատականացում և այլն):

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները և դրանց կատարումը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված հինգ դիմումներից մեկը վերջինիս կողմից հետ է վերցվել, երկուսի հիման վրա գործերով դատաքննությունները նշանակված են համապատասխանաբար 07.04.2015 թվականին և 28.04.2015 թվականին:

Միևնույն ժամանակ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2013 թվականի մայիս, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ներկայացված հինգ դիմումների հիման վրա չորս գործերով /երկու դիմումների հիման վրա գործերը միավորվել են/ սահմանադրական դատարանը որոշումներ է կայացրել 2014 թվականի հունվար-ապրիլ ամիսներին:

2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի յոթ դիմումներից /ներառյալ հինգ դիմումները, որոնք սահմանադրական դատարանում մուտքագրվել են 2013 թվականի մայիս, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին, սակայն դրանց հիման վրա գործերը քննության են

առնվել 2014 թվականին/ 1-ը, որով օրենքի վիճարկվող դրույթները **ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր**, վերաբերում է հետևյալին. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14.10.2014թ. ՄԴՈ-1167 որոշմամբ որոշել է.

«1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության՝ «եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19 եւ 31-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող իրավադրույթն անտեսում էր ոչ միայն ժառանգության ընդունման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված եղանակները, հնարավորություն չտալով ժառանգին փաստացի տիրապետման ուժով ստանալ նաեւ կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը, այլ նաեւ նախատեսում էր սեփականության իրավունքի իրականացման ժամկետային սահմանափակում, որը հակասում էր ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ժամկետներին:

Տվյալ գործով սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը, համաձայն որի՝ «Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին», ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ «Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին», գտել է, որ վիճարկվող իրավադրույթը կարող է կիրառվել այնքանով, որքանով այն չի հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումներին:

Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասը պարունակում է նաև օրենսդրին առաջադրված խնդիր առ այն, որ անհրաժեշտ է ապահովել ներդաշնակություն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում ժառանգության

հետ կապված հարաբերությունների և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումների միջև՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումները:

Սահմանադրական դատարանի՝ 14.10.2014 թվականի ՍԳՈ-1167 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենքում փոփոխություն չի կատարել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մի շարք դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանը թեև կարճել է գործերի վարույթը կամ վիճարկվող իրավանորմերը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ գործերով ընդունված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, սակայն տվյալ գործերով ընդունված որոշումներում արձանագրել է իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը, կամ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ արտահայտել է համապատասխան դիրքորոշումներ: Այսպես.

ա/ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, 15-րդ հոդվածի 1-ին մասի եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 14-րդ հոդվածի 5-րդ մասի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 24.01.2014թ. ՍԳՈ-1136 որոշման պատճառաբանական մասում ամրագրել է հետևյալը. «ՀՀ սահմանադրական դատարանը կիսում է դիմողի մտահոգությունն այն մասին, որ վեճի առարկա օրենքներում ձեւակերպումներն առավել մեծ չափով կարող էին համապատասխանել իրավական որոշակիության սկզբունքին եւ երկիմաստություն չառաջացնեին: Սակայն այդ երկիմաստությունը դեռևս փորձ չի արվել հաղթահարել օրենքի միատեսակ կիրառման շրջանակներում, իսկ մեկնաբանությունները հայեցողական բնույթ ունեն: Այդուհանդերձ, օրենքի նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ դիմողի մտահոգության շրջանակներում, օրենսդրական բարեփոխումների խնդրի առկայությամբ հանդերձ, առկա չէ սահմանադրականության խնդիր»,

բ/ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1703-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18.02.2014թ. ՍԳՈ-1139 որոշման պատճառաբանական մասում ամրագրել է հետևյալը. «Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ չնայած սույն գործով վեճի առարկա նորմերն ինքնին անմիջական սահմանադրականության խնդիր չեն հարուցում, այնուամենայնիվ, հիմնավոր է դիմողի դիրքորոշումն առ այն, որ քննության առարկա իրավական ակտերում պատասխանատվության միջոցներ սահմանելիս **օրենսդիրը պետք է առավել հստակ իրավակարգավորումներ նախատեսի՝ բացառելու համար հարկային եւ վարչական պատասխանատվության ենթակա որեւէ իրավասուբյեկտի՝ իր իրավական կարգավիճակով պայմանավորված հանգամանքներով կրկնակի պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը: Ներկա իրավակարգավորումների շրջանակներում նույնպես այս մոտեցումը պետք է դրվի իրավակիրառական պրակտիկայի հիմքում»:** Նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության բացառման սահմանադրական սկզբունքի պահանջները հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանի որոշումը պարունակել է նաև օրենսդրին առաջադրված խնդիր առ այն, որ անհրաժեշտ է հստակ իրավակարգավորումներ նախատեսել՝ բացառելու համար հարկային եւ վարչական պատասխանատվության ենթակա որեւէ իրավասուբյեկտի՝ իր իրավական կարգավիճակով պայմանավորված հանգամանքներով կրկնակի պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը:

Սահմանադրական դատարանի՝ 18.02.2014թ. ՍԳՈ-1139 որոշմանը ընդունումից հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել և ՀՀ Ազգային ժողովը նշյալ իրավական ակտերում փոփոխություն չի կատարել,

գ/ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Ձինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության եւ Հայաստանի Հանրապետության վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն

իր՝ 10.06.2014թ. ՄԳՈ-1154 որոշման պատճառաբանական մասում ամրագրել է հետևյալը. «Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ օրենսդիր մարմինը, օրենքով սահմանելով կենսաթոշակների ծավալներն ու ձեւերը, միաժամանակ ՀՀ կառավարությանն է պատվիրակել սահմանելու զինծառայողին կենսաթոշակ նշանակելիս նրա դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդունվող պաշտոնային դրույքաչափերը, դրամական բավարարման մեջ հաշվառվող վճարումների տեսակների ցանկը: Հետևաբար, գործող օրենսդրությամբ հիշյալ դրույքաչափերի հետ կապված հարցերը պետք է կարգավորվեն առնվազն ՀՀ կառավարության, այլ ոչ թե ՀՀ վարչապետի որոշմամբ»:

Այսինքն՝ սահմանադրական դատարանի որոշումը պարունակել է գործադիրին ուղղված հանձնարարություն առ այն, որ անհրաժեշտ է ՀՀ վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշմամբ սահմանված դրույքաչափերի հետ կապված հարցերը կարգավորել ՀՀ կառավարության որոշմամբ:

ՀՀ կառավարությունը, սահմանադրական դատարանի՝ 10.06.2014թ. ՄԳՈ-1154 որոշումն ընդունելուց հետո, ՀՀ վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման մեջ փոփոխություն կատարելու հարցին դեռևս չի անդրադարձել, ինչը սահմանադրական դատարանի կողմից գնահատվում է անընդունելի և իրավական պետության սահմանադրաիրավական պահանջներին ոչ հարիր:

**ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻՆ
ԸՆԳՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

2014 թվականին սահմանադրական դատարանի տվյալ և նախորդ տարիներին ընդունված որոշումների կատարումը՝ իրավական դիրքորոշումների իրացման տեսանկյունից, շարունակում է խնդրահարույց մնալ: Միևնույն ժամանակ, 2014թ. ընթացքում, ի կատարումն ՀՀ սահմանադրական դատարանի 2013թ. ընդունված որոշումների, նախապատրաստվել

են առանձին օրինագծեր: Մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարության կողմից նախապատրաստվել են ՀՀ կառավարության թվով երեք օրենսդրական նախաձեռնություններ.

1) 2013 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԳՈ-1119 որոշման կապակցությամբ 14.09.2012 թվականին ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, որը 19.05.2014 թվականին ընդգրկվել է Ազգային ժողովի նիստերի օրակարգ,

2) 2013 թվականի նոյեմբերի 5-ի ՍԳՈ-1121 որոշման կապակցությամբ 23.04.2014 թվականին ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը 12.05.2014 թվականին ընդգրկվել է Ազգային ժողովի նիստերի օրակարգ, իսկ 19.05.2014 թվականին ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ,

3) 2013 թվականի դեկտեմբերի 10-ի ՍԳՈ-1127 որոշման կապակցությամբ 16.07.2013 թվականին ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը 30.09.2013 թվականին ընդգրկվել է Ազգային ժողովի նիստերի օրակարգ, իսկ 05.12.2013 թվականին ընդունվել է երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:

ԸՆԳՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գատական սահմանադրական վերահսկողության բնագավառում տարվա արդյունքների ամփոփումից հետևում է.

1. Արմատապես հաղթահարման եւ օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն ունի դատական պրակտիկայում սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման խնդիրը: Սահմանադրական դատարանը բազմիցս է անդրադարձել այս հարցին եւ ավելորդ է համարում դարձյալ կոնկրետ օրինակների շարադրումը: Խնդիրը պայմանավորված չէ միայն համարժեք իրավական մշակույթով ու իրավագիտակցությամբ, ակնհայտ է նաեւ օրենսդրական կանոնակարգման անկատարությունը: ՀՀ սահմանադրական դատարանը նախորդ տարեկան հաղորդումների մեջ մանրամասն այս հարցին նույնպես անդրա-

դարձ կատարել է՝ վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ ՀՀ սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի նկատմամբ ՀՀ օրենսդրության մեջ անհամարժեք մոտեցման դրսևորումները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավիճակում հիմնախնդիրը կարող է լուծելի լինել, եթե ՀՀ Սահմանադրության մակարդակում երաշխավորվի սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը՝ ամրագրելով համարժեք սահմանադրաիրավական նախադրյալներ: Առանց դրա Սահմանադրության գերակայության երաշխավորումը կշարունակի մնալ որպես բարի ցանկություն:

Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ դատարանի տարեկան հաղորդումների քննարկումը եւ դրանցում բարձրացված հարցերի վերաբերյալ պետական իշխանության մարմինների կողմից պարտադիր արձագանքը պետք է օրենքով հստակեցված նորմատիվ պահանջ դառնա: Սահմանադրաիրավական ներկա մտայնության պայմաններում սահմանադրական դատարանի տարեկան հաղորդումների վերաբերյալ իշխանության մարմինների վերաբերմունքը չի կարող բացառապես հայեցողական բնույթ կրել, որի արդյունքում իշխանության հանրային վարքագծի սահմանադրականացման ներուժն արդյունավետ չի օգտագործվում:

2. Սահմանադրականության հաստատման տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորումը, ինչին ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումների շրջանակներում:

Իրավունքի գերակայությունը հանդես գալով ողջ իրավական համակարգի անկյունաքարը՝ պետք է լինի ինչպես յուրաքանչյուր անհատի սոցիալական վարքագծի, այնպես էլ պետական իշխանության և քաղաքական համակարգի հենքը:

Հիշյալ համատեքստում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովման նպատակով դատարանի որոշումների հիման վրա իրավական համակարգում կատարվող փոփոխությունները պետք է ոչ թե դրվագային բնույթ կրեն, այլ ընդգրկեն վերաբերելի իրավական հարաբերությունները կարգավորող և փոխկապակցված իրավակարգավորումների ողջ շղթան: Այլ կերպ՝ ցանկացած համակարգում իրականացվող փոփոխություն պետք է համակարգային բնույթ կրի և շրջադարձ լինի համակարգային մոտեցումներում:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ «Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության, վճարելի դատարանի, մարդու իրավունքների պաշտպանի, գլխավոր դատախազի ներկայացուցիչները, որոնք ցանկանում են մասնակցել սահմանադրական դատարանի նիստին, կարող են դիմել սահմանադրական դատարան եւ նախապես ստանալ քննվող գործին առնչվող նյութերը, իսկ դատաքննության ընթացքում կարող են հրավիրյալների կարգավիճակով պարզաբանումներ տալ սահմանադրական դատարանի հարցերին»: Ներկայացուցիչների նման ինստիտուտը սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում ունի կարելիոր դերակատարություն եւ արդյունավետ գործելու դեպքում մեծապես նպաստում է հասարակական հարաբերությունների սահմանադրականացմանը, սահմանադրական վերահսկողության գործունակության ամրապնդմանը: Մեզանում վիճակի դրական տեղաշարժ այդպես էլ չի գրանցվում: Ընդհանրապես հետետղական որեւէ գործունեություն չեն իրականացնում ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ գլխավոր դատախազի ներկայացուցիչները:

3. Իրավունքի գերակայության սկզբունքն իր դրսևորումն է ստանում ոչ միայն օրենքի որակի սահմաններում, այլ նաև իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականության միջոցով: Այլ կերպ՝ օրենքի արդյունավետությունը՝ որպես իրավական նորմերի գործողության արդյունքի եւ դրանց ընդունման նպատակի հարաբերակցություն, պահանջում է ոչ միայն իրավական օրենքի ընդունում, այլև իրավակիրառման արդյունավետություն:

Սահմանադրական դատարանում քննության առնված գործերը վկայում են, որ մի շարք դեպքերում իրավունքների խախտումը պայմանավորված է լինում ոչ թե այս կամ այն իրավական նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու փաստով, այլև ձևավորված հակասահմանադրական իրավակիրառ պրակտիկայով: Բացառություն չեն նաև 2014 թվականին սահմանադրական դատարանում քննության առնված գործերը (օրինակ՝ ՍԳՌ-1137, ՍԳՌ-1176):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ երկրում սահմանադրականության հաստատման տեսանկյունից նշված խնդիրն ունի բացառիկ կարևորություն, հետևաբար՝ նաև հրատապ հաղթահարման անհրաժեշտություն:

4. Իրավունքի գերակայության սկզբունքից աներկբա բխում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների՝ օրենսդրության մեջ արտացոլվելու անհրաժեշտությունը բոլոր այն դեպքերում, երբ սահմանադրական դատարանը վիճարկվող նորմը ճանաչում է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ իր որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում, և այդ իրավական դիրքորոշումները պարունակում են օրենսդիր մարմնի իրավագործությունից բխող օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտություն: Նման դեպքերում համապատասխան նորմի ու իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականությունն անմիջականորեն պայմանավորվում են այդ օրենսդրական փոփոխությունների առկայությամբ, ուստիև համապատասխան օրենսդրության բացակայության պայմաններում փաստորեն, մի կողմից, չի կատարվում սահմանադրական դատարանի որոշումը, մյուս կողմից՝ շարունակում է պահպանվել համապատասխան նորմի՝ հակասահմանադրական բովանդակությամբ կիրառվելու ռիսկը:

2014 թվականին սահմանադրական դատարանի կողմից ընդունված նման որոշումներից կարելի է մատնանշել ՍԴՈ-1139 որոշումը, որով սահմանադրական դատարանը քննության է առել հարկային և վարչական իրավահարաբերությունների փոխկապվածության համատեքստում անձին կրկնակի պատասխանատվության ենթարկելու արգելքի հիմնահարցը: Համապատասխան ոլորտում որոշակիություն ապահովելուն ուղղված օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումը մինչ օրս չի ստացել համապատասխան արձագանք:

Սահմանադրական դատարանն իր որոշումներից բխող օրենսդրական փոփոխությունների կատարման հիմնահարցի վերաբերյալ մտահոգություն է արտահայտել նաև նախորդ տարվա տարեկան հաղորդման շրջանակներում և մեկ անգամ ևս անհրաժեշտ է համարում շեշտել, որ ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ կառավարության համար պարտադիր իրավական պահանջ պետք է լինի ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա համարժեք իրավաստեղծ գործունեության իրականացումը:

5. Սահմանադրական դատարանի որոշումներում արտացոլված իրավական դիրքորոշումներից բխող օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության առնչությամբ սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում անդրադառնալ նաև այն իրավիճակներին,

երբ դատարանը կարճում է գործով վարույթը՝ այն պատճառաբանությամբ, որ դիմողի կողմից բարձրացված հիմնախնդիրը պայմանավորված է ոչ թե վիճարկվող կոնկրետ նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգամանքով, այլ օրենսդրության մեջ այս կամ այն կանոնակարգման բացակայությամբ, և արձանագրում է, որ իրավունքների հնարավոր խախտումը բացառելու համար անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման դեպքերում նույնպես օրենսդրական փոփոխություն ենթադրող իրավական դիրքորոշումը պետք է արտացոլվի ու կատարվի օրենսդրության շրջանակներում, ինչից ևս հետևում է Ազգային ժողովի և կառավարության համապատասխան իրավագործությունների իրացման իմպերատիվ պահանջը:

Այս համատեքստում սահմանադրական դատարանը հարկ է համարում մատնանշել ՄԳՈ-1143 որոշումը, որով արտահայտվել է իրավական դիրքորոշում առ այն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում «տևող» և «շարունակվող» իրավախախտումների հասկացությունների բնորոշումների սահմանումը գտնվում է Ազգային ժողովի իրավասության շրջանակներում՝ մինչև նույն ժամանակ արձանագրելով նման բնորոշումների բացակայությամբ պայմանավորված իրավունքների խախտման հնարավոր ռիսկը: ՄԳՈ-1143 որոշման մեջ արտահայտված և օրենսդրական փոփոխություն ենթադրող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման կատարման առումով իրավասու մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից որևէ միջոցառում չի ձեռնարկվել:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ իրավունքի գերակայության սկզբունքից բխող կամայականության սկզբունքի արգելքը պահանջում է նաև իրավունքի սահմանափակման եռատարր թեսթի, այսինքն՝ սահմանափակման իրավաչափ նպատակի, սահմանափակման նպատակի և միջոցի համաչափության և օրենքով սահմանված կարգի պահպանման անհրաժեշտությունը: Սահմանադրական դատարանում 2014 թվականին քննության առնված գործերը վկայում են ՀՀ օրենսդրության մեջ այս պահանջից շեղումների որոշ դեպքերի մասին (օրինակ՝ ՄԳՈ-1153, ՄԳՈ-1167 որոշումներ):

Սահմանադրական դատարանն իր ՄԳՈ-1153 որոշման մեջ քննության առնելով ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթի սահմանադրականության հարցը՝ 224-րդ հոդվածում տեղ գտած՝ տուգանքների վճարումն ապա-

հովելույն ուղղված ապրանքները վերցնելու ինստիտուտի վերաբերյալ արձանագրել է հետևյալը. «Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող կանոնակարգումն ամրագրված է «Վերցված ապրանքները վերադարձնելու ժամկետը» վերտառությամբ հողվածում, արձանագրում է, որ այս հողվածի ենթադրյալ նպատակը պետք է ուղղված լիներ ապահովելու Մաքսային օրենսգրքով նախատեսված ապրանքների վերցման ինստիտուտի իրացման տրամաբանական զարգացումը՝ ապրանքները վերադարձնելու ժամկետներ սահմանելու միջոցով», «... քննարկվող հողվածի շրջանակներում տեղ են գտել ոչ միայն Մաքսային օրենսգրքի 212-րդ հողվածով նախատեսված կանոնակարգման կիրառման արդյունքում ապրանքներ վերցնելու պարագայում դրանց վերադարձման ժամկետները, այլ նաև մեկ այլ ինստիտուտ՝ **տուգանքների, մաքսային վճարների կատարման ապահովման համար ապրանքների վերցման ինստիտուտը**, մինչդեռ որեւէ այլ նորմ Մաքսային օրենսգրքում չի կանոնակարգում ո՛չ մաքսային մարմնի համապատասխան լիազորությունը, ո՛չ էլ այդ լիազորության իրացման ընթացակարգը: Արդյունքում՝ որոշակի կոնկրետ իրավահարաբերության կանոնակարգմանը մվիրված ընթացակարգային նորմ պարունակող հողվածում տեղ է գտել մեկ այլ իրավահարաբերության կարգավորման ընթացակարգային նորմ՝ համապատասխան իրավահարաբերության նյութաիրավական կանոնակարգման բացակայության պայմաններում, ինչի հետևանքով, մի կողմից, առաջ է եկել անձի սեփականության իրավունքին միջամտության իրավիճակ՝ առանց մաքսային մարմնի համապատասխան լիազորության, մյուս կողմից՝ այն իրացվում է անհրաժեշտ կառուցակարգերի բացակայության պայմաններում: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում անձն իր սեփականության իրավունքին միջամտության գործընթացում զրկվում է իր իրավունքն արդյունավետ պաշտպանելու հնարավորությունից»: Փաստորեն, սահմանադրական դատարանն արձանագրել է համապատասխան ոլորտում մի շարք օրենսդրական բացթողումների առկայությունը, որոնք, սակայն, դեռևս չեն լրացվել վերաբերելի ՀՀ օրենսդրության շրջանակներում: Իսկ ՍԳՈ-1167 որոշմամբ արձանագրվել է, որ «...վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված տասներկու ամսվա ժամկետային սահմանափակումը չի պայմանավորվում հանրային արժեքների պահպանման պահանջով և արդյունքում նպատակաուղղված չէ սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովմանը»:

7. Իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է նաև իրավաստեղծ գործունեության ոլորտում իշխանության մարմինների լիազորությունների հստակ տարանջատում՝ պահպանելով ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջները: ՄԴՈ-1137 որոշմամբ սահմանադրական դատարանն արձանագրել է. «... այլ նորմատիվ, ինչպես նաև անհատական իրավական ակտերով չեն կարող ամրագրվել կամ սահմանվել իրավունքներ կամ իրավունքի սահմանափակումներ, իսկ անհատական իրավական ակտերով, որպես իրավունքի կիրառման ակտեր, կարող են ընդամենը **կիրառվել** իրավունքի սահմանափակումները: Օրենսդրական կարգավորման մակարդակում այս հասկացությունները պետք է հստակ եւ ճշգրիտ ձեւով ամրագրվեն՝ չաղավաղելով իրավակարգավորման բովանդակությունը»:

8. Իրավունքի գերակայության ապահովման համար անհրաժեշտ է նաև բացառել իշխանությունների տարանջատման սկզբունքից բխող պետական իշխանության այս կամ այն մարմնի իրավասությունից բխող լիազորությունների՝ մեկ այլ մարմնի կողմից իրացնելու հնարավորություն նախատեսող նորմերի առկայությունը ՀՀ օրենսդրության մեջ: Նման հիմնախնդիր սահմանադրական դատարանի կողմից փաստվել է ՄԴՈ-1167 որոշման շրջանակներում:

9. Իրավական որոշակիության եւ կանխատեսելիության ապահովման տեսանկյունից խնդրահարույց է օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների բարձր հաճախականությունը: Օրենքի բովանդակության հաճախակի փոփոխությունները խճճում են իրավակիրառին, խոչընդոտում են միասնական պրակտիկայի ձեւավորմանը, անձինք չեն հասցնում ծանոթանալ փոփոխություններին եւ արդյունքում նույն հարաբերության կարգավորման վերաբերյալ ծագում են իրարամերժ կարծիքներ:

Ուսումնասիրությունները վկայում են, որ միայն 2014 թվականին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է 200-ից ավելի օրենք: Առավել հաճախակի փոփոխվող օրենքներից են հատկապես մաքսային եւ հարկային իրավահարաբերությունները կարգավորող օրենքները: Այսպես, օրինակ, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը 1998 թվականի հուլիսի 6-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 5-ը փոփոխվել է/կամ լրացվել է 43 անգամ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը 1997 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 2014 թվականի հունիսի 21-ը՝ 70 անգամ, ՀՀ մաքսային օրենսգիրքը 2000 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2014

թվականի հունիսի 21-ը փոփոխվել է լրացվել է 40 անգամ: Միաժամանակ հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը 1993 թվականի օգոստոսի 18-ից մինչև 2014 թվականի սեպտեմբերի 20-ը փոփոխվել է/կամ լրացվել է 168 անգամ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը 1998 թվականի հունիսի 19-ից մինչև 2014 թվականի հունիսի 21-ը՝ 152 անգամ, իսկ ՀՀ քրեական օրենսգիրքը 2003 թվականի հոկտեմբերի 5-ից մինչև 2014 թվականի հունիսի 21-ը՝ 83 անգամ:

«Օրենսդրական գործընթացի գնահատումը Հայաստանի Հանրապետությունում» ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված զեկույցում արձանագրվել է, որ Հայաստանում օրենսդրական գործընթացը միջինում տեսում է 6-7 ամիս, իսկ համեմատության համար Միացյալ Թագավորությունում կամ Շվեյցարիայում նույն գործընթացի տևողությունը տատանվում է 18 ամսից մինչև 3 տարի:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրությունը ստատիկ երեսույթ չէ, այն կարող է եւ պետք է ենթարկվի դինամիկ փոփոխության՝ մշտապես կատարելագործվելով՝ տնտեսական զարգացմանը, տեղի ունեցող միջազգային ինտեգրման գործընթացներին, հասարակական հարաբերությունների վերափոխմանն ու մի շարք այլ գործոններին համահունչ: Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանը կարևորում է օրենսդրական փոփոխությունների գործընթացի կայունությունն ու ներդաշնակությունը, օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը:

Նման հաճախականությամբ օրենսդրության փոփոխությունները գրեթե անհնարին են դարձնում նշյալ պայմանների պահպանումը, եւ համապատասխան օրենքներում 168 կամ 152 անգամ փոփոխություններ կատարելն անխուսափելիորեն հանգեցնում է օրենքում ներքին հակասությունների եւ օրենքի ընդհանուր տրամաբանությունից շեղվելուն:

Սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք որոշումներում դիրքորոշում է արտահայտվել այն մասին, որ. «որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն ձեւակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Օրենսդրության անկայունությունը գործնականում կարող է արգելափակել իրավունքի սուբյեկտի իրավաչափ հնարավորությունն իր վարքագիծը համապատասխանեցնելու նման հաճախականությամբ փոփոխվող օրենսդրական նորմերին: Միաժամանակ, նման իրավիճակն իրավակիրառ մարմինների կողմից լայն հայեցողական մոտեցումների, սուբյեկ-

տիվիզիոնի դրսևորման եւ մարդկանց իրավունքների խախտման մեծ ռիսկ է պարունակում:

10. Հայաստանի Հանրապետությունում շարունակում են խնդրահարույց մնալ իշխանությունների հայեցողության սահմանների խիստ անհստակությունը եւ իրավունքով իշխանության սահմանափակման՝ Սահմանադրությամբ երաշխավորված սկզբունքի ոչ պատշաճ իրացումը: 2014 թվականին սահմանադրական դատարան ներկայացված դիմումների մեծ մասը վերաբերել է նորմերի իրավական որոշակիության, կանխատեսելիության սկզբունքի, ինչպես նաեւ իրավակարգավորումներում բացերի առկայության հիմնախնդիրներին: Սահմանադրական դատարանը թե՛ 2014 թվականին եւ թե՛ նախորդ տարիներին ընդունած որոշումներում հստակ արձանագրել է, որ կոնկրետ իրավակարգավորման բացերը պետք է հաղթահարվեն ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում, սակայն ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարումը շարունակում է մնալ ՀՀ կառավարության եւ առանձին պատգամավորների հայեցողական մոտեցման արդյունքում հնարավոր օրենսդրական նախաձեռնության դրսևորման հույսին: ՀՀ Ազգային ժողովում բացակայում է իրավական ձեւակերպում ստացած հստակ ընթացակարգ՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ օրենսդրական համարժեք զարգացումներ ապահովելու հարցում:

Հարկ է նշել, որ հիշյալ խնդիրները հանգեցնում են իրավակիրառ պրակտիկայում հայեցողության սահմանների անհստակության, ինչի հետեւանք են դառնում մարդկանց իրավունքների խախտման բարձր ռիսկայնությունը և իրավունքների պաշտպանության արգելափակումը:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված խնդիրներն ունեն առաջնահերթ հաղթահարման անհրաժեշտություն:

11. Վերոնշյալների հետ մեկտեղ, մեր երկրի համար սահմանադրա-իրավական լուծումների ու սահմանադրական օրինականության տեսանկյունից առաջնային ու անհետաձգելի են նաեւ, մասնավորապես, հետեւյալ հիմնախնդիրները, որոնց ՀՀ սահմանադրական դատարանը նախկինում նույնպես անդրադարձել է իր տարեկան հաղորդումներում.

- երաշխավորված ու ապահովված չէ մարդու սահմանադրորեն անբազրված հիմնական իրավունքների անմիջական գործողությունը,
- իրավունքի գերակայության սկզբունքը չի դարձել մարդկանց սո-

ցիալական վարքագծի, քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի եւ իշխանությունների հանրային վարքագծի հենքը,

- հսկայական բացեր կան օրենսդրական մակարդակում իրավունքների երաշխավորման ու ապահովման հարցերում: Մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու արդյունավետ պաշտպանության հարցերում լուրջ խնդիրներ են առաջացնում հատկապես օրենսդրական բացերն ու իրավակարգավորումների անհամապատասխանությունն իրավական որոշակիության սկզբունքին, օրենսդրական լուծումների անկայունությունն ու հստակ հայեցակարգերի բացակայությունը,
- խիստ անհստակ են իշխանությունների հայեցողության սահմանները, արդյունավետ չի գործում իրավունքով իշխանության սահմանափակման սկզբունքը,
- կան իրավական ամբողջ ինստիտուտներ, որոնք, որպես կանոն, արդյունավետ չեն գործում, ինչպես, օրինակ, նոր հանգամանքների հիմքով գործի նորոգման արդարադատական ինստիտուտը,
- մեծ խզում է առաջացել սահմանադրական արժեքանության եւ հասարակական պրակտիկայի միջեւ, հստակ ու հանրայնորեն ընկալելի չեն սահմանադրական բարոյականության չափորոշիչները,
- քաղաքական, տնտեսական և վարչական ներուժի սերտաճումն ընդհուպ երկրի ազգային անվտանգության սպառնալիք է դարձել՝ դրանով պայմանավորված բոլոր հետեւանքներով հանդերձ:

Այս ամենն իրավական պետության կայացման ու կայուն առաջընթացի գլխավոր խոչընդոտներից է և առաջնահերթ սահմանադրաիրավական ու կառուցակարգային լուծում է պահանջում:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ 2014Թ. ԸՆԴՈՒՆԱԾ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՂՈՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հաստատել եւ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի՝ հրապարակել «ՀՀ սահմանադրական դատարանի 2014թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումը» (Հաղորդումը կցվում է):

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի՝ Հաղորդումն ուղարկել պետական եւ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**20 հունվարի 2015 թվականի
ՍԳԱՈ-5**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՎ
ՌՈՒԲԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ
ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 հունվարի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (գեկուցող),

մասնակցությամբ /գրավոր ընթացակարգի շրջանակներում/

դիմողներ Հ. Սահակյանի եւ Ռ. Այվազյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Հովհաննես Սահակյանի եւ Ռուբեն Այվազյանի դիմումի հիման վրա՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Հ. Սահակյանի եւ Ռ. Այվազյանի՝ 23.08.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Չ Ե Ց.**

1. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքն ընդունել է ՀՀ Ազգային ժողովը՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահն ստորագրել է 2005 թվականի հունվարի 13-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունվարի 22-ից:

Օրենքի՝ դիմողների կողմից վիճարկվող դրույթները «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում լրացվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունված, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից 2011 թվականի դեկտեմբերի 29-ին ստորագրված եւ 2012 թվականի հունվարի 19-ից ուժի մեջ մտած՝ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-339-Ն ՀՀ օրենքով:

Սույն գործով վիճարկվող օրենքի՝ «Փաստաբանական գործունեությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«Սույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ՝

1) մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաեւ ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի.

2) մերձավոր ազգականին (ազգականներին) կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելու դեպքերի»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Հովհաննես Սահակյանը դիմում է ներկայացրել Երեսան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական

շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ սեփական սնանկությունը ճանաչելու պահանջի մասին:

Դատարանն իր 25.02.2013թ. արձանագրային որոշմամբ Ռուբեն Այվազյանին թույլ չի տվել ներկայացնելու Հովհաննես Սահակյանի շահերը, իսկ իր 21.03.2013թ. թիվ ԵԱԶԳ/0013/04/13 վճռով մերժել է Հովհաննես Սահակյանի՝ սեփական սնանկությունը ճանաչելու պահանջի մասին դիմումը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր 07.06.2013թ. որոշմամբ մերժել է Հովհաննես Սահակյանի վերաքննիչ բողոքը՝ Երեւան քաղաքի Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.03.2013թ. վճիռը թողնելով անփոփոխ՝ օրինական ուժի մեջ: Նույն որոշմամբ, անդրադառնալով Հովհաննես Սահակյանի այն փաստարկներին, որ առաջին ատյանի դատարանը գրկել է իրեն դատարանում անվճար ներկայացուցիչ ունենալու սահմանադրական իրավունքից եւ որ չի ստուգել իր եւ Ռուբեն Այվազյանի ազգակցական կապը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, մասնավորապես, նշել է հետեւյալը. «սույն գործի նյութերում առկա չէ որեւէ ապացույց առ այն, որ Ռուբեն Այվազյանը հանդիսանում է դիմումատու Հովհաննես Սահակյանի մերձավոր ազգականը, ում համար ինքն իրականացնում է անվճար ներկայացուցչություն: ... Ընդհանուր իրավասության դատարանն իրավամբ չի թույլատրել, որպեսզի Ռուբեն Այվազյանը դատարանում իրականացնի բողոքաբերի շահերի ներկայացուցչությունը, արձանագրելով, որ վերջինս չի հանդիսանում ՀՀ Փաստաբանների պալատի փաստաբան, հետեւաբար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն չի կարող ներկայացնել Հովհաննես Սահակյանի շահերը դատարանում: Բացի այդ, Հովհաննես Սահակյանը չի ներկայացրել որեւէ ապացույց, ինչը հիմք կտար հետետություն անել, որ Ռուբեն Այվազյանի հետ հանդիսանում են մորաքրոջ որդիներ»:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 31.07.2013թ. որոշմամբ վերադարձրել է Հովհաննես Սահակյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը:

3. Դիմողները գտնում են, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 18, 19, 20 եւ 42-րդ հոդվածներին:

Իրենց դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողները, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության հիշյալ հոդվածները, կարծիք են հայտնում, որ դրանցում ամրագրված դրույթները չեն գործում, քանի որ փոփոխվել

են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթները, ինչի հետևանքով անհնարին է դարձել նույնիսկ այդ հոդվածի ցանկում ներառված անձանց շահերի պաշտպանությունը ՀՀ դատական համակարգում, քանի որ դատական նիստի օրը հնարավոր է, որ ներկայացուցիչը չկարողանա ապացուցել իր ազգակցական կապը, ինչի հետևանքով քաղաքացին կզրկվի դատական պաշտպանության իրավունքից:

Դիմողները, արձանագրելով, որ դատարանը չի ստուգել իրենց միջև առկա ազգակցական կապը եւ անտեսել է իրենց՝ ազգականներ լինելու հանգամանքը, արձանագրում են նաեւ, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը չի սահմանում, թե նույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտներից բացի ովքեր կարող են հանդիսանալ մերձավոր ազգականներ, իսկ ՀՀ օրենսդրության մեջ չկա որեւէ դրույթ, որը կարող է սահմանել, որ մորաքրոջ որդիներ հանդիսացողները չեն կարող դիտվել մերձավոր ազգականներ: Նման հետեւությունների արդյունքում դիմողները գտնում են, որ դատարանը խախտել է դատավարական իրավունքի նորմը, քանի որ Ռուբեն Այվազյանին զրկել է իր մերձավոր ազգական Հովհաննես Սահակյանի շահերը պաշտպանելու հնարավորությունից:

Վերլուծելով օրենքի վիճարկվող նորմը՝ դիմողները գալիս են այն եզրահանգման, որ ընդհանուր իրավասության դատարանի 25.02.2013թ. արձանագրային որոշմամբ Հովհաննես Սահակյանը զրկվել է ներկայացուցիչ ունենալու հնարավորությունից, եւ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը չի բխում օրենքից եւ հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներին, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 20-րդ եւ 42-րդ հոդվածներին:

Անդրադառնալով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հակասելու վերաբերյալ դիմողների դիրքորոշումներին, պատասխանող կողմը դրանք հիմնավոր չի համարում այն պատճառաբանությամբ, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներն առավելապես վերաբերում են դատական համակարգի կազմակերպմանը, անկախությանը, գործի՝ ողջամիտ ժամկետում օբյեկտիվ քննությունն ապահովող դատավարա-

կան ընթացակարգեր նախատեսելուն, իսկ դատական ներկայացուցչության ինստիտուտը «... եւս առնչվում է սահմանադրական այս դրույթների հետ, սակայն ըստ էության այն միտված է կարգավորելու իրավունքը խախտված անձի եւ մասնավոր սուբյեկտի՝ փաստաբանի հարաբերությունները ... եւ այն չի ընդգրկվում արդարադատության մատչելիության գաղափարի՝ դատական իշխանության կազմակերպագործառութային կարգավորման ասպեկտում»:

Անդրադառնալով նաեւ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթի՝ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ դիմողների դիրքորոշումներին՝ պատասխանող կողմը դրանք եւս հիմնավոր չի համարում այն պատճառաբանությամբ, որ իրավաբանական օգնությունը չի սահմանափակվում միայն դատական ներկայացուցչությամբ, իսկ իրավաբանական օգնության մյուս տեսակների համար օրենքն իմպերատիվ կերպով սահմանափակումներ չի նախատեսել: Ըստ պատասխանող կողմի՝ դատական ներկայացուցչությունը հանդիսանում է իրավունքների պաշտպանության առավել բարդ ընթացակարգ ենթադրող կառուցակարգ, որը կարող է իրականացնել միայն փաստաբանը, քանի որ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքը չպետք է կրի հոչակագրային բնույթ, այն իրական եւ նպատակային դարձնելու համար օրենսդրության հետագա կարգավորումների միջոցով ստեղծվում է այն իրավական հենքը, որի շնորհիվ մատուցվող իրավաբանական օգնությունը կլինի որակյալ եւ կտրամադրվի մասնագիտական որոշակի հմտություններ տիրապետող անձանց կողմից:

Մատնանշելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթի՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ դիմողների դիրքորոշումները՝ պատասխանող կողմը, հղում կատարելով ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2013թ. հունվարի 29-ի թիվ 130 որոշմանը, արձանագրելով, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթն սպառնիչ կերպով սահմանում է մերձավոր ազգականների շրջանակը, եւ որ դիմողները չեն կատարել իրենց ազգակցական կապը հաստատող փաստաթղթերը ներկայացնելու դատավարական պարտականությունը, գտնում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթը չի առնչվում անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին, եւ հարկ չի առաջանում քննարկելու դրա հետադարձ ուժի կամ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածին համապատասխանության մասին հարցը:

5. Դիմումի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

ա/ դիմումով բարձրացված հարցը ոչ թե սահմանադրականության խնդիր է բովանդակում, այլ առնչվում է դատական ակտի իրավաչափությանը եւ օրենքի միատեսակ կիրառման ապահովմանը: Դիմողները, ձեւա-կանորեն վիճարկելով օրենքի նորմի սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում են օրենքի վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարց: Ընդ որում, դիմողները նույնպես ընդգծում են նշված հանգամանքը՝ արձանագրելով, որ դատարանը խախտել է դատավարական իրավունքի նորմը եւ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը չի բխում օրենքից եւ հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներին, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին: Այսինքն՝ դիմողները, իրենց իրավունքների ենթադրյալ խախտումը ձեւականորեն կապելով ՀՀ Սահմանադրության նորմերի հետ, փորձում են այն բարձրացնել սահմանադրաիրավական վեճի մակարդակի,

բ/ դիմողների իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված է ոչ թե օրենքի վիճարկվող նորմի սահմանադրականությամբ, այլ հանդիսանում է հենց իրենց՝ դիմողների ոչ համարժեք գործողությունների հետեւանք: Մասնավորապես, դիմողներից Հովհաննես Սահակյանի վերաբերյալ գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր 07.06.2013թ. որոշման մեջ նշել է, որ «... Հովհաննես Սահակյանը չի ներկայացրել որեւէ ապացույց, ինչը հիմք կտար հետետություն անել, որ Ռուբեն Այվազյանի հետ հանդիսանում են մորաքրոջ որդիներ»:

6. Հաշվի առնելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ այլ կլիներ խնդիրը, եթե ՀՀ դատարանները մեկնաբանեին օրենքի վիճարկվող նորմը՝ դրա միասնական կիրառումը երաշխավորելու նպատակով, մինչդեռ դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից երեւում է, որ ՀՀ դատարանները չեն մեկնաբանել օրենքի վիճարկվող նորմը, իսկ սույն գործով դիմողները ՀՀ դատարաններում չեն ներկայացրել մորաքրոջ որդիներ հանդիսանալու վերաբերյալ ապացույցներ՝ չօգտվելով ՀՀ օրենսդրությամբ իրենց ընձեռված դատավարական հնարավորություններից:

Այդ կապակցությամբ, վերահաստատելով իր՝ 17.03.2009թ. ՍԴԱՌ-21 որոշման 8-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշումները, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը դիմումը համարում է սահմանադրական դատարանի քննությանը ոչ ենթակա հարց:

7. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև հետևյալը.

ա/ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանադրական դատարանում դատական ներկայացուցչություն իրականացնելու համար սահմանված չէ փաստաբան լինելու իմպերատիվ պահանջ («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մաս),

բ/ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2013թ. հունվարի 29-ի թիվ 130 որոշման պատճառաբանական մասի 6-րդ պարբերության համաձայն՝ «Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը հանդիսանում է դատավարական նորմ եւ պետք է համապատասխանի դատավարական օրենսգրքերին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերում դատական ներկայացուցչության այլ կարգ է նախատեսված, քան Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, մինչևի համապատասխան դատավարական օրենսգրքերում փոփոխություններ կատարելը, քրեական եւ վարչական դատավարությունների ընթացքում դատական ներկայացուցչության վրա չի տարածվում Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումը»:

Նույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ «դատական ներկայացուցչությունը կարող է իրականացնել միայն փաստաբանը՝ բացառությամբ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի», իսկ «բ» ենթակետի համաձայն՝ «դատական ներկայացուցչության կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի»:

Նույն որոշման եզրափակիչ մասի 9-րդ կետի համաձայն՝ «Քրեական եւ վարչական դատավարությունների ընթացքում ներկայացուցչության վրա չի տարածվում Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումը»:

Վերոգրյալից ուղղակիորեն բխում է, որ ի տարբերություն սահմանադրական, քրեական եւ վարչական դատավարություններում դատական ներկայացուցչության, որի իրականացման համար «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված չէ փաստաբան լինելու իմպերատիվ պահանջ, քաղաքացիական դատավարությունում դատական ներկայացուցչության իրականացման համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (40-րդ հոդված) սահմանված է փաստաբան լինելու իմպերատիվ պա-

հանջը: Ընդ որում, այդ պահանջը սահմանված է անուղղակիորեն, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածը, իր հերթին, հղում է կատարում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածին: Բացի դրանից, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարելի է դատավարական օրենսդրության մեջ դատական ներկայացուցչության ինստիտուտի համարժեք կանոնակարգման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու ինչպես իր ներկայացուցչի կամ պաշտպանի միջոցով, **այնպես էլ անձամբ**: Այսինքն՝ ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ դատական ներկայացուցչության ոլորտի կարգավորման համադրված քաղաքականություն, ինչպես նաև նշված ոլորտը կարգավորող դրույթների, հասկացությունների հստակություն, ինչն առիթ է հանդիսացել, որպեսզի փորձ արվի հարցը կարգավորել ՀՀ դատարանների նախագահների խորհրդի մակարդակով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32, 60, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացիներ Հովհաննես Սահակյանի եւ Ռուբեն Այվազյանի դիմումի հիման վրա՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**14 հունվարի 2014 թվականի
ՍԳՈ-1135**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ, 15-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ «ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 6-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԳ ԿԵՏԻ, 14-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 597-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

24 հունվարի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Ա. Վարդեանյանի, նույն վարչության աշխատակիցներ Ս. Յուզբաշյանի եւ Ա. Մարգարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ կառավարության պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Ա. Աշոտյանի, ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության

100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, 15-րդ հոդվածի 1-ին մասի եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 14-րդ հոդվածի 5-րդ մասի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 18.05.2013թ. եւ 25.10.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Սահմանադրական դատարանի 05.11.2013թ. ՍԳԱՌ-87 աշխատակարգային որոշմամբ որոշվել է սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունված՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը եւ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, 15-րդ հոդվածի 1-ին մասի եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 14-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը միավորել եւ քննել դատարանի նույն նիստում՝ բանավոր ընթացակարգով, որպես պատասխանող կողմ դատավարությանը նաեւ ներգրավելով «Կրթության մասին» եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներն ընդունած մարմնին՝ ՀՀ Ազգային ժողովին:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի բացատրությունները, հետազոտելով «Կրթության մասին» եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Կրթության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1999 թվականի ապրիլի 14-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1999 թվականի մայիսի 8-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի մայիսի 14-ին:

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2005 թվականի հունվարի 18-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի մարտի 2-ին:

«Հայաստանի Հանրապետության պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 686-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 597-Ն որոշումը ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2012 թվականի ապրիլի 26-ին, ՀՀ վարչապետի կողմից ստորագրվել՝ 2012 թվականի մայիսի 16-ին եւ ուժի մեջ է մտել 2012 թվականի մայիսի 24-ին:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ «Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները» վերտառությամբ 5-րդ հոդվածը սահմանում է. «Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

1) կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ եւ համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության եւ բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը.

2) կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը եւ համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ.

3) կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը.

4) միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը.

5) սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանն աջակցելը.

6) ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը.

7) ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը.

8) պետական եւ ոչ պետական ուսումնական հաստատություններում

քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը.

9) ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը»:

Նույն օրենքի՝ «Ուսումնական հաստատության ընդունելությանը ներկայացվող ընդհանուր պահանջները» վերտառությամբ 15-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Սույն օրենքին համապատասխան՝ նախադպրոցական, հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ընդունելության պահանջները սահմանում է հիմնադիրը՝ հաշվի առնելով ուսումնական հաստատության առանձնահատկությունները, իսկ պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ «Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությունը, իրավասությունը եւ ակադեմիական ազատությունները» վերտառությամբ 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է. «Բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ ... ինքնուրույն է ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների եւ սովորողների ընթացիկ ատեստավորման ձեւերի, կարգի եւ պարբերականության ընտրության հարցերում»:

Նույն օրենքի՝ «Ընդունելությունը բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում» վերտառությամբ 14-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը, ըստ բակալավրի կրթական ծրագրի, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

ՀՀ կառավարության վիճարկվող որոշումը սահմանում է հետեւյալը.

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասին եւ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի «Պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 238-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 686-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից»:

ՀՀ կառավարության վիճարկվող որոշման հավելվածով սահմանվում է ՀՀ պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը՝ հետեւյալ գլուխներով. I. Ընդհանուր դրույթներ, II. Միասնական, կենտրոնացված քննությունների հայտագրումը, III. Ընդունելության դիմում-հայտերի եւ փաստաթղթերի ընդունումը, IV. Մասնագիտությունների հայտագրումը, V. Ընդունելության դիմում-հայտերն ուղղելը եւ փաստաթղթերը հետ վերցնելը, VI. Ընդունելության դիմում-հայտերի հաստատագրումը, VII. Կենտրոնացված եւ ներբուհական քննության՝ կորցրած քննական թերթիկի վերականգնումը, VIII. Միասնական քննությունների կազմակերպումը, անցկացումը եւ բողոքարկումը, IX. Կենտրոնացված ընդունելության քննությունների (բանավոր եւ գրավոր) կազմակերպումը, անցկացումը եւ բողոքարկումը, X. Ներբուհական ընդունելության քննությունների կազմակերպումը, անցկացումը եւ գնահատականի բողոքարկումը, XI. Ներբուհական եւ կենտրոնացված քննությանը չներկայացած դիմորդների՝ լրացուցիչ քննությունների կազմակերպումը, XII. Բուհերի ընդունելության մրցույթի անցկացումը, XIII. Ընդունելության քննությունների հանրապետական ընդունող հանձնաժողովը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թեպետ դիմողը վիճարկել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածն ամբողջությամբ, այդուհանդերձ, նրա հիմնավորումները վերաբերում են բացառապես նշված հոդվածի 7-րդ կետի դրույթին: Բացի դրանից, ՀՀ կառավարության վերը նշված որոշման առնչությամբ դիմողն ըստ էության վիճարկում է միայն նշված որոշման հավելվածով սահմանված կարգի 6-րդ կետի սահմանադրականությունը: Համաձայն նշված կետի՝ «Ընդունելության քննությունները միասնական, կենտրոնացված եւ ներբուհական քննություններն են: Ընդունելության քննությունները կազմակերպում եւ անցկացնում է «Գնահատման եւ թեստավորման կենտրոն» պետական ոչ առետրային կազմակերպությունը (այսուհետ՝ գնահատման եւ թեստավորման կենտրոն)»:

2. Վիճարկվող օրենքների առնչությամբ դիմողի դիրքորոշումները հանգում են հետևյալին. «Կրթության մասին» եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով սահմանվում են բուհերի ինքնավարության սկզբունքները, սակայն դրանք ձեւակերպված չեն բավարար հատկությամբ եւ պարզ չեն դրանց սահմանները: ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածն ինքնին երաշխավորում է ուսումնական հաստատությունների ինքնավարությունը, եւ սահմանադիրն այդ հաստատությունների ինքնավարության սկզբունքների սահմանումը թողել է օրենսդրի հայեցողությանը: Նման նորմ նախատեսելը նաեւ բացառում է հետագայում այնպիսի իրավիճակ, որտեղ բուհերը կարող են զրկվել ինքնավարության սկզբունքներից:

Վկայակոչելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետով որպէս սկզբունք ամրագրված՝ ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը, դիմողն արձանագրում է, որ «ողջամտություն» եզրույթով օրենսդիրը չի խախտել սահմանադրական երաշխիքը, սակայն փաստում է, որ նշված հոդվածով օրենսդրական որեւէ սահման հստակ ամրագրված չէ, ուստի այն տարաբնույթ մեկնաբանությունների շիւս է պարունակում: Հետեւաբար, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Սանդի Թայմսն» ընդդէմ Սիւացյալ Թագավորության գործով 26.04.1979թ. վճիռը, ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-753 որոշումը, դիմողը գտնում է, որ այն առաջացնում է իրավական որոշակիության սկզբունքի հետ անհամապատասխանության խնդիր:

Ըստ դիմողի՝ իրավական որոշակիության խնդիր են առաջացնում նաեւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի կարգավորումները: Դիմողը գտնում է, որ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված «ուսումնական գործընթացի կազմակերպում» հասկացությունը նույնպէս անորոշ է եւ, առաջին հերթին, կարող է ենթադրել բուհի ինքնավարությունն ընդունելության, ուսուցման եւ ավարտական գործընթացների կազմակերպման բնագավառում: Ըստ դիմողի՝ ուսումնական գործընթացն սկսվում է ուսանողին ընդունելուց, ինչը բուհի ինքնուրույնությունը եւ անկախությունը երաշխավորող հիմնական ինստիտուտն է, եւ այն ընդունված է մի շարք երկրներում (Ֆինլանդիա, Չեխիա, Էստոնիա եւ այլն):

Ինչ վերաբերում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի վիճարկվող դրույթ-

ներին, ապա, դիմողի կարծիքով, դրանց առնչությամբ խնդիր է առաջանում այնքանով, որքանով դրանք հնարավորություն են նախատեսել Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքը սահմանափակել կառավարության որոշմամբ: Նշված կարծիքը դիմողը հիմնավորում է՝ հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետին, համաձայն որի՝ բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները:

ՀՀ կառավարության վիճարկվող որոշման առնչությամբ դիմողը գտնում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության 39-րդ, 83.5-րդ եւ 85-րդ հոդվածների պահանջներին:

Իր տեսակետը հիմնավորելու համար, հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերին, որոնք, համապատասխանաբար, ամրագրում են, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքները որոշվում են օրենքով եւ ուսումնական հաստատությունների ստեղծման եւ գործունեության կարգը սահմանվում է օրենքով, դիմողն արձանագրում է, որ բուհերն իրենց ինքնավարությունն իրականացնում են ինքնակառավարման եւ կոլեգիալության սկզբունքների հիման վրա: Դիմողն արձանագրում է նաեւ, որ ըստ օրենսդրության՝ բուհերն ինքնուրույն են որոշելու ինչպես ուսումնական գործունեությանը, այնպես էլ ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող հարցերը եւ եզրահանգում, որ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի համատեքստում որեւէ օրենքով նախատեսված չէ բուհի՝ որպես իրավաբանական անձի իրավունքների մասն սահմանափակում, եւ որ կառավարության որոշումներն ընդունվում են ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրերի կամ ՀՀ Նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա եւ դրանց կատարումն ապահովելու նպատակով:

Հղում կատարելով «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, որը սահմանում է, որ «Բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ ... ինքնուրույն է ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների եւ սովորողների ընթացիկ ատեստավորման ձեւերի, կարգի եւ պարբերականության ընտրության հարցերում», դիմողը գտնում է, որ դրանում օգտագործված՝ «ուսումնական գործընթացի կազմակերպում» հասկացությունը, առաջին հերթին, ենթադրում է բուհերի ինքնավարությունն ընդունելության, ուսուցման եւ ավարտական գործընթացների կազմակերպման բնագավառներում: Ըստ դիմողի՝ ուսումնական գործընթացն սկսվում է ուսանողին ընդունելուց, ինչը բուհերի

ինքնուրույնությունը եւ անկախությունը երաշխավորող հիմնական ինստիտուտն է, եւ այն ընդունված է մի շարք երկրներում: Ընդունելության կազմակերպումը՝ որպես բուհերի կարեւորագույն իրավասություններից մեկը, հստակ սահմանված է «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում, որտեղ, մասնավորապես, նշվում է, որ «Բարձրագույն ուսումնական հաստատության իրավասությունն է՝ ... ըստ կրթական ծրագրերի՝ դիմորդների, ներառյալ՝ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց ընդունելության, ուսումնական գործընթացի կազմակերպումը ...»:

Անդրադառնալով միջազգային փորձին եւ, մասնավորապես, հղում կատարելով Բերգենի հռչակագրին եւ «Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական ասոցիացիայի» (ENQA) զեկույցին (ENQA report on “Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area”, Third Edition, 2009, Helsinki, p.11.), նշելով, որ բուհերի ինքնավարության սկզբունքը Բոլոնիայի գործընթացի եւ կրթության բնագավառի միջազգային իրավական սկզբունքներից մեկն է, դիմողը վերոգրյալի հիման վրա գտնում է, որ ՀՀ կառավարության վիճարկվող որոշմամբ միայն «Գնահատման եւ թեստավորման կենտրոնի» համար նման լիազորություն նախատեսելը եւ գործնականում բուհերին ընդունելության քննությունների կազմակերպման իրավասությունից զրկելը կարող է առաջացնել Սահմանադրությամբ ամրագրված եւ միջազգային իրավունքում ընդունված՝ ինքնավարության սկզբունքից բխող՝ բուհերի ինքնակառավարման եւ կոլեգիալության սկզբունքների ոչ իրավաչափ սահմանափակման իրական ռիսկ:

3. Գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչը, սույն գործով վիճարկվող օրենքների դրույթների առնչությամբ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ դիմողը վիճարկում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետում տեղ գտած «ողջամիտ» եզրույթի՝ ՀՀ Սահմանադրության հետ համապատասխանության հարցը՝ իրավական որոշակիության սկզբունքին հակասելու հիմնավորմամբ, որի կապակցությամբ պատասխանողն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նշված եզրույթի էությանը, դրա որոշակիության աստիճանին եւ ըստ այդմ՝ հարակից համապատասխան իրավակարգավորումների կանխատեսելի լինելու հնարավորությանը: Ըստ պատասխանողի՝ վերը հիշատակված «ողջամիտ» եզրույթը եւ «պատշաճ», «բարեխիղճ» եզրույթները լինելով գնահատողական հասկացու-

թյուններ, որոշակիության իրենց աստիճանն են ստանում յուրաքանչյուր օրենքի կարգավորման համատեքստում: Այսինքն՝ եթե օրենքի ընդհանուր բովանդակությունից, այլ հողվածներում տեղ գտած ձեռնարկումներից հնարավոր է որոշել, սահմանել եւ կանխատեսել նշված եզրույթներից յուրաքանչյուրի բովանդակային առանձնահատկությունը՝ տվյալ օրենքի իրավական կարգավորման տիրույթում գտնվող հասարակական հարաբերությունների առնչությամբ, ապա դրանց առկայությունն օրենքում ամենեւին հակասության մեջ չի մտնում իրավական օրենքի եւ իրավական պետության հայեցակարգի հետ: Նման եզրույթների առկայությունը, ըստ պատասխանողի, ընդամենը հնարավորություն է տալիս օրենքի կամ երբեմն ենթաօրենսդրական ակտի միջոցով ապահովել առավել ճկուն իրավակարգավորումներ: Ակնհայտ է, որ, ըստ դիմողի, դիմումատուն ՀՀ կառավարության թիվ-597-Ն որոշման՝ ՀՀ Սահմանադրության հետ համապատասխանության հարցը բարձրացնելիս դրսեւորել է այնպիսի մոտեցում, որով կասկածի տակ անգամ չի դրվել ներկայումս վիճարկվող նորմերի եւ, մասնավորապես, «ողջամիտ» եզրույթի ՀՀ Սահմանադրությունից բխելու փաստը: Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող ակտում հիշատակված «ողջամիտ» եզրույթի առկայությունը որեւէ խնդիր չի առաջացնում որոշակիության տեսանկյունից: Անդրադառնալով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասին՝ պատասխանողն արտահայտում է այն դիրքորոշումը, համաձայն որի՝ վերջինս սահմանում է այն պետական իրավասու մարմինը, որը կարող է սահմանել ընդունելությանը ներկայացվող պահանջները՝ պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների համար. դա ՀՀ կառավարությունն է: Այսինքն՝ տվյալ նորմի կարգավորման շրջանակը սովորողների ընդունելության կազմակերպման նպատակով որոշակի գործառույթների վերապահումն է համապատասխան մարմնին: «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հողվածներն առավել մանրամասնում են բուհերում սովորողների ընդունելության հետ կապված հարաբերությունների իրավակարգավորումը: Այսպես, վերոնշյալ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն ամրագրում է բուհին վերապահված ինքնավարության շրջանակներն ուսումնական գործընթացի կազմակերպման ոլորտում, իսկ 14-րդ հոդվածի 5-րդ մասը դարձյալ նշում է այն իրավասու մարմնին, որը պետք է սահմանի բուհերի ընդունելության կարգը: Ավելին՝ պատասխանողը գտնում է, որ բարձրացնելով «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի հետ համապատասխանության մասին հարցը, դիմողը չի ներկա-

յացրել այնպիսի հիմնավորում, որը կվկայեր տվյալ վիճարկվող նորմի եւ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածով ամրագրված՝ բուհերի ինքնավարության սկզբունքի միջեւ ծագող հակասությունը: Ըստ դիմողի՝ բոլոր կատարված շեշտադրումները միտված են «ուսումնական գործընթաց» հասկացության բացահայտմանը եւ դրանում ընդունելության քննությունների կազմակերպման փուլի ընդգրկվածության հարցի քննարկմանը: Բուհերում ընդունելության կարգի սահմանումը կամ սովորողների ընդունելությանը ներկայացվող պահանջների սահմանումը ՀՀ կառավարությանը վերապահելը որեւէ կերպ չի հանդիսանում բուհերի իրավունքների սահմանափակում, այն պարզապես ենթադրում է որոշակի գործառնությունների իրականացում ընթացակարգային հարցերի լուծման կամ համապատասխան չափորոշիչների որոշման միջոցով:

Գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ կառավարության պաշտոնական ներկայացուցիչը սույն գործով վիճարկվող որոշման մասով առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ ՀՀ կառավարության վիճարկվող որոշումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 39-րդ, 83.5-րդ եւ 85-րդ հոդվածներին եւ միջազգային իրավունքի համապատասխան նորմերին:

Իր տեսակետը հիմնավորելու համար պատասխանողն արձանագրում է, որ ՀՀ կառավարության վիճարկվող որոշումն ընդունվել է ՀՀ կառավարության իրավասության տիրույթում՝ հիմք ընդունելով «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի եւ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որոնցով ՀՀ կառավարությանն իրավասություն է վերապահված սահմանելու պետական բուհերի ընդունելության կարգը եւ պետական եւ ոչ պետական բուհերում ընդունելության պահանջները:

Անդրադառնալով դիմողի այն փաստարկին, համաձայն որի՝ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում օգտագործված՝ «ուսումնական գործընթացի կազմակերպում» հասկացությունը, առաջին հերթին, ենթադրում է բուհերի ինքնավարությունն ընդունելության, ուսուցման եւ ավարտական գործընթացների կազմակերպման բնագավառներում, պատասխանողը, վկայակոչելով «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը, ՀՀ կառավարության վիճարկվող որոշմամբ հաստատված կարգի 1-ին, 6-րդ, 14-րդ

կետերը, գտնում է, որ ընդունելությունն ուսումնական գործընթացի մաս չի կազմում եւ «ընդունելության կազմակերպում» եւ «ընդունելության քննությունների կազմակերպում» հասկացությունները տարբեր հասկացություններ են:

Վերոգրյալի հիման վրա պատասխանողը գտնում է, որ բուհերն ընդունելության քննությունների կազմակերպում չեն իրականացնում, բացառությամբ ՀՀ կառավարության վիճարկվող որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով սահմանված դեպքերի, որոնք վերաբերում են ներբուհական քննություններին:

Անդրադառնալով դիմողի մատնանշած միջազգային փորձին եւ արձանագրելով, որ ՀՀ օրենսդրությամբ լիարժեք բացահայտված չեն «բուհական ինքնավարություն» եւ «ակադեմիական ազատություն» հասկացությունների բովանդակությունները, եւ որ բուհական ինքնավարությունն այն սկզբունքներից է, որը տարբեր կերպ է ընկալվում, իսկ անգամ շատ հաճախ՝ հակասական՝ պայմանավորված տարբեր երկրներում կրթական ոլորտում եղած ավանդույթներով, ներկայացնելով ԵՄ շրջանակներում գործող ընդունելության քննությունների կազմակերպման 3 համակարգերը, որոնք ներառում են ընդունելության չափանիշների սահմանումը ոչ միայն բուհի կողմից կամ բուհի մասնակցությամբ, այլ նաեւ արտաքին մարմնի կողմից, պատասխանողը գտնում է, որ նշված 3 համակարգերն էլ ներկայումս դիտարկվում են բուհական ինքնավարության շրջանակներում՝ կախված տվյալ պետության՝ համապատասխան ոլորտում իրականացվող քաղաքականության առանձնահատկություններից:

4. Սույն գործով վիճարկվող օրենքների դրույթների վերաբերյալ դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջի առկայության պայմաններում, սահմանադրական դատարան դիմում է ներկայացվել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների՝ ըստ էության ոչ այնքան ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին, որքան ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխանության հարցով, ինչը դուրս է գալիս դիմողի իրավասության շրջանակներից:

Առաջադրված հարցերի հիմնական մասն իր լուծումը կարող էր գտնել օրենքի միատեսակ կիրառման սահմանադրական իրավասության շրջանակներում՝ ձեւավորելով նաեւ համարժեք իրավակիրառական պրակտիկա:

Միաժամանակ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի վարույթը ենթակա է կարճման ՀՀ կառավարության՝ սույն գործով վիճարկվող թիվ 597-Ն որոշման մասով, այն պատճառաբանությամբ, որ այդ մասով դիմողն առաջադրում է սահմանադրական դատարանի իրավասությանը ոչ ենթակա հարց, այն է՝ ըստ էության առաջադրվում է ՀՀ կառավարության որոշման՝ ՀՀ օրենքներին համապատասխանության, օրինականության խնդիր: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ուժով դիմողը կարող էր ՀՀ կառավարության՝ սույն գործով վիճարկվող թիվ 597-Ն որոշումն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան հայց ներկայացնել, ինչը, թերևս, կարող էր հանդիսանալ բուհերի իրավունքների հնարավոր պաշտպանության միջոց:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածը սահմանում է, որ. «Վարչական դատարանին ընդդատյա են պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետեւյալ գործերը.

Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաեւ համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը»:

Նույն օրենսգրքի 192-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ. «Սույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել նաեւ Մարդու իրավունքների պաշտպանը ...»:

Ակնհայտ է, որ նման պարագայում սահմանադրական դատարանը պետք է առաջնորդվի ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջով եւ հաշվի առնի, որ ՀՀ կառավարության որոշման օրինականության հարցը վարչական արդարադատության շրջանակներում նախ պետք է դառնա համապատասխան իրավասու դատարանում վիճարկման առարկա:

5. Անդրադառնալով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներին, սույն գործով դիմումների, դրանցով վիճարկվող իրավական նորմերի, դիմումներին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը սահմանադրական դատարանի առջեւ ըստ էության բարձրացնում է այն հարցը, թե ինչու՞ է ինքնավար բուհերի փոխարեն ընդունելության քննությունները կազմակերպում եւ անցկացնում «Գնահատման եւ թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Գիմողի կողմից բարձրացված՝ վերը նշված հարցադրման կապակցությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը. **նախ՝** ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի 4-րդ մասը նախ եւ առաջ ուղղված է նույն հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ կրթության իրավունքի արդյունավետ եւ լիարժեք իրացմանը, **երկրորդ՝** ՀՀ Սահմանադրությունը որեւէ ձեւով չի կանխորոշել բուհերի ինքնավարության սահմանները եւ Սահմանադրության 39-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով դրա բովանդակության բացահայտումը եւ սահմանների ամրագրումը վերապահվել է օրենսդրի հայեցողությանը, **երրորդ՝** ցանկացած իրավական սկզբունք իր բովանդակությամբ տարբերվում է կոնկրետ կարգավորիչ նշանակություն ունեցող նորմերից եւ դրա բովանդակությունը բացահայտվում է վերջիններիս միջոցով, **չորրորդ՝** կարելի էր հասարակության զարգացման գործում կրթության իրավունքը եւ այն երաշխավորելով սահմանադրական մակարդակով՝ պետությունն ստանձնում է որակյալ կրթություն ապահովելու պարտականություն, ինչը նաեւ կանխորոշում է միաժամանակ եւ՝ պետության, եւ՝ բուհի կողմից կրթության բնագավառում գործունեություն ծավալելու հնարավորությունը եւ անհրաժեշտությունը, **հինգերորդ՝** որակյալ կրթություն ապահովելու՝ պետության պարտականությունից բխում է կրթական քաղաքականության իրականացումը՝ ներառյալ կրթության որակի նվազագույն շեմի ապահովումը, **վեցերորդ՝** «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածն ամրագրում է կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները՝ բուհերի ինքնավարության առնչությամբ ամրագրելով «ողջամիտ» եզրույթը, դրանով փորձ է արվել բացահայտել պետության եւ բուհի՝ կրթության բնագավառում ծավալված գործունեության շրջանակները, **յոթերորդ՝** օրենսդիրը, սահմանելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում «Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները», դրանք դիտել է որպես մեկ միասնական փոխ-

կապակցված համակարգ, որոնք ամբողջական են դառնում միայն իրենց միասնության մեջ, եւ որոնցից ոչ մեկը չի կարող կրել բացարձակ բնույթ եւ յուրաքանչյուրը կոչված է փոխընդհանուր մյուսներին՝ ստեղծելով ներդաշնակ ամբողջություն: Գործնականում, սակայն, «Կրթության մասին» եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով օրենսդիրը փորձել է ոչ հստակ կանոնակարգվածությամբ ուրվագծել բուհերի վարչական, ֆինանսական, կազմակերպչական եւ ակադեմիական ազատությունների սահմանները:

Սահմանադրական դատարանը համամիտ է այն մոտեցմանը, որ բուհերի ողջամիտ ինքնավարությունը չի ենթադրում բուհերի բացարձակ անկախություն: Բուհերի ողջամիտ ինքնավարության շրջանակները պայմանավորված են որակյալ կրթություն ապահովելու նպատակով կրթության բնագավառում պետության՝ օրենքի հիման վրա իրականացվող քաղաքականության շրջանակներով: Ուստի սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներում առկա է իրավական անորոշություն: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը կիսում է դիմողի մտահոգությունն այն մասին, որ վեճի առարկա օրենքներում ձեւակերպումներն առավել մեծ չափով կարող էին համապատասխանել իրավական որոշակիության սկզբունքին եւ երկիմաստություն չառաջացնելին: Սակայն այդ երկիմաստությունը դեռեւս փորձ չի արվել հաղթահարել օրենքի միատեսակ կիրառման շրջանակներում, իսկ մեկնաբանությունները հայեցողական բնույթ ունեն: Այդուհանդերձ, օրենքի նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ դիմողի մտահոգության շրջանակներում, օրենսդրական բարեփոխումների խնդրի առկայությամբ հանդերձ, առկա չէ սահմանադրականության խնդիր:

Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված՝ «ուսումնական գործընթացի կազմակերպում» հասկացության իրավական անորոշության վերաբերյալ դիմողի փաստարկներն այն պատճառաբանությամբ, որ նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում բուհերի դիմորդների ընդունելությունը տարանջատված է ուսումնական գործընթացի կազմակերպումից:

Բացի նշվածից, սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ «ընդունելության կազմակերպում» եւ «ընդունելության քննությունների կազմակերպում» արտահայտությունները չեն կարող ունենալ միեւնույն բովանդակությունը, իսկ միասնական, կենտրոնացված եւ ներբուհական ընդունելության քննությունների կազմակեր-

պումը եւ անցկացումն այլ կառույցների կողմից՝ կոչված է սոսկ նախատեսելու թե՛ պետական, թե՛ ոչ պետական բուհերում ըստ բակալավրի կրթական ծրագրով ընդունելության քննությունների կազմակերպման, անցկացման ներդաշնակ չափանիշներ՝ սահմանելով որակի այն նվազագույն շեմը, որից ցած հնարավոր չէ երաշխավորել համապատասխան մասնագիտություններով բարձրագույն կրթություն տրամադրելու անհրաժեշտ նախադրյալները: «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները բուհերի համար չեն առաջացնում ընդունելության համար հավելյալ չափանիշներ կամ պահանջներ սահմանելու որեւիցե խոչընդոտ՝ դրանով իսկ երաշխավորելով համապատասխան բուհի ինքնավարության անքակտելիությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման մասով գործի վարույթը կարճել:

2. «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**24 հունվարի 2014 թվականի
ՍԳՈ-1136**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՅՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 30-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ
1-ԻՆ ՄԱՍԻ 5-ՐԳ ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 փետրվարի 2014 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով՝ Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեանյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 71-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ

պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետագոտելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց** .

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՕ-295 օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1999 թվականի ապրիլի 14-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1999 թվականի ապրիլի 30-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի մայիսի 6-ից:

Դիմողի կողմից վիճարկվող դրույթը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում լրացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2011 թվականի հունիսի 23-ին ընդունված, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից 2011 թվականի հուլիսի 19-ին ստորագրված եւ 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-247-Ն օրենքով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետը սահմանում է. «1. Պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պարտավոր է մերժել իրավունքի պետական գրանցումը, եթե՝ ... 5) իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը կայացվել է դրա ընդունման լիազորությունը չունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, կամ իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը չի համապատասխանում դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին»:

2. Քննության առարկա գործի նախապատմությունը հանգում է հետեւյալին. Իջեւանի համայնքի ավագանու 2003 թվականի հունիսի 21-ի, 2007 թվականի ապրիլի 12-ի եւ 2007 թվականի հուլիսի 18-ի՝ «Քաղաքաշինական նպատակներով տարածքներ հատկացնելու մասին» որոշումների հիման վրա 2008 թվականի մարտի 10-ին կայացվել է քաղաքաշինական նպատակներով կառուցապատման իրավունքով հողամասերի տրամադրման մրցույթ, որում քաղաքացի Սուրեն Սարգսյանը ճանաչվել է հաղթող:

2008 թվականի մարտի 10-ին ընդունված թիվ 38 որոշմամբ Իջեւանի քաղաքապետը հաստատել է մրցույթի եզրափակիչ արձանագրությունները՝ համաձայն աղյուսակի, ըստ որի՝ Իջեւան քաղաքի Օհանյան 78 հասցեում գտնվող 800 քմ մակերեսով հողամասը կառու-

ցապատման իրավունքով 99 տարի ժամկետով հանձնվել է Սուրեն Սարգսյանին:

Սույն հողամասի նկատմամբ Իջեւանի քաղաքապետի 2008 թվականի մարտի 10-ի թիվ 38 որոշումից ծագող իրավունքների գրանցում կատարելու խնդրանքով Սուրեն Սարգսյանը 2013 թվականի հունվարի 23-ին դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (այսուհետեւ՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե), որտեղից ստացել է մերժում:

Սուրեն Սարգսյանը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին գրանցել Իջեւան քաղաքի Օհանյան 78 հասցեում գտնվող 800 քմ մակերեսով հողամասի նկատմամբ հասարակական կառուցապատման իր իրավունքը:

ՀՀ վարչական դատարանի 2013 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վարչական դատարանն իր՝ 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ թիվ ՎԳ/1238/05/13 գործի վարույթը կասեցրել է եւ դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 5-րդ եւ 91-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու համար:

3. Դիմողը գտնում է, որ ոչ վեճի առարկա օրենքով եւ ոչ էլ որեւէ այլ օրենքով սահմանված չեն մեկ այլ վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտի իրավաչափությունն ստուգելու եւ գնահատելու՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնատար անձի լիազորությունները, այն իրականացնելու կարգը եւ պայմանները:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը նշում է, որ օրենքի 2-րդ հոդվածում տրված է «անշարժ գույքի պետական միասնական կադաստր» հասկացությունը, իսկ ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 442 որոշման համաձայն՝ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումն ընդգրկում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, անշարժ գույքի հաշվառումը, գնահատումը եւ տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումը, ինչպես նաեւ կադաստրային քարտեզագրումը:

Ըստ դիմողի՝ իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտի՝ դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին համապատասխանությունն ստուգելու եւ անհամապատասխանությունը հաստատելու՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնատար

անձանց գործողությունները չեն բխում ՀՀ Սահմանադրության 1-ին, 5-րդ եւ 91-րդ հոդվածների պահանջներից:

ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի իրավանորմերը համադրելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ եւ 65-րդ հոդվածների հետ՝ դիմողը հանգել է այն եզրակացությանը, որ վարչական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից ընդունված վարչական ակտի իրավաչափությունը ենթակա է գնահատման բացառապես դատական կարգով, իսկ քանի դեռ անհատական իրավական ակտը վարչական կամ դատական կարգով անվավեր չի ճանաչվել, իրավական որոշակիության սկզբունքի հաշվառմամբ յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ այդ անհատական ակտն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված լիազորությունների շրջանակում, ուստի պետք է եզրահանգել, որ այդ անհատական ակտն իրավաչափ է, եւ որեւէ անձ, այդ թվում՝ նաեւ պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել նշված ակտի իրավաչափությունը:

Դիմողը եզրակացնում է, որ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի կիրառելիության պարագայում Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, ըստ էության, ոչ միայն կասկածի տակ է դնում վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից ընդունված վարչական ակտի իրավաչափությունը, այլ նաեւ հաստատում է դրա անհամապատասխանությունն օրենքին՝ փաստացի իրականացնելով դատարանի լիազորություններ, որպիսի իրավունք Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համատեքստում չի կարող վերապահվել, քանի որ այն համարվում է գործադիր իշխանության մարմին, իսկ ելնելով իշխանությունների տարանջատման սկզբունքից՝ գործադիր իշխանության գործառույթն օրենքների կենսագործումն ու կիրառումն է:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանող կողմն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը, ամրագրելով իշխանությունների տարանջատման սկզբունքը, միաժամանակ սահմանում է, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Դիմողի այն մտահոգությունը, ըստ որի՝ վիճարկվող նորմի առկայությունը վարչական մարմնին օժտում է արդարադատություն

իրականացնելու իրավագործությամբ եւ խախտում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, պատասխանողի կարծիքով՝ արդարացված չէ, քանի որ ինչպես նշվում է Սահմանադրության մեկնաբանություններում. «...այլ մարմինների եւ կազմակերպությունների կողմից իրենց իրավասությունների սահմաններում իրավական հարցերի լուծումը արդարադատության իրականացում չի համարվում»:

Ըստ պատասխանողի՝ գործնականում իրավասու մարմինը, առաջնորդվելով իրեն վերապահված լիազորություններով, ուսումնասիրել է գրանցման համար ներկայացված փաստաթղթերը, բացահայտել է գրանցման մերժման հիմքերը եւ դրսեւորել է լիովին իրավաչափ վարքագիծ: Նման իրավիճակում իրավասու մարմինը չի կարող դիմել վարչական դատարանին՝ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի իրավաչափությունը պարզելու պահանջով, այլ ՀՀ օրենսդրության հետագա խախտումներից զերծ մնալու նպատակով առավելագույնը, որ կարող է անել, համապատասխան գործողության իրականացման մերժումն է:

Պատասխանողի կարծիքով, գործող իրավակարգավորումների պարագայում, երբ իրավասու մարմինը, կասեցնելով գրանցման գործընթացը, չի կարող դատական կարգով վիճարկել այլ վարչական մարմնի կողմից ընդունված իրավական ակտի իրավաչափությունը, իսկ համապատասխան սուբյեկտը, որի օգտին կայացված է տվյալ իրավունքը նախատեսող անհատական իրավական ակտը, շահագրգռված չէ վերջինիս իրավաչափությունը դատական կամ վարչական կարգով վիճարկելու հարցում, ակնհայտորեն առնչվում է օրենսդրական բացի հետ:

Ըստ պատասխանողի, այդուհանդերձ, համապատասխան կառուցակարգերի բացակայությունը եւ ոչ լիարժեք օրենսդրական կարգավորումները չեն կարող հանգեցնել վիճարկվող նորմի հակասահմանադրականությանը:

5. Վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշված հարցը դիտարկել.

ա) իրավունք կամ իրավունքի սահմանափակում սահմանող իրավական ակտերի տեսակների համատեքստում՝ նկատի ունենալով օրենքի վիճարկվող դրույթում՝ «իրավունքը կամ սահմանափակումը սահմանող» բառակապակցության բովանդակության սահմանադրականության գնահատման անհրաժեշտությունը,

բ) իրավական պետության բաղադրատարր հանդիսացող՝ օրինականության սկզբունքի համատեքստում՝ նկատի ունենալով իրավա-

բանական ուժի մեջ գտնվող իրավական ակտերի պահանջների կատարման պարտադիրությունը,

զ) իրավական պետության սկզբունքից բխող իրավական որոշակիության սկզբունքի բաղադրատարր հանդիսացող՝ վարչական ակտերի իրավաչափության կանխավարկածի համատեքստում,

դ) իրավական պետության բաղադրատարր հանդիսացող՝ արտագերատեսչական վերահսկողության գործառույթներով չօժտված մարմնի կողմից համարժեք կամ բարձր իշխանական կարգավիճակ ունեցող մարմնի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու անթույլատրելիության սկզբունքի համատեքստում,

ե) սահմանադրական կարգավորումներով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության եւ անկախության սկզբունքների համատեքստում:

Ընդ որում, օրենքի վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը իրավունք կամ սահմանափակում սահմանող իրավական ակտերի տեսակների համատեքստում դիտարկելու շրջանակներում սահմանադրական դատարանն արձանագրում է հետեւյալը.

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությամբ **ամրագրված** մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները չեն բացառում օրենքներով եւ միջազգային պայմանագրերով **սահմանված** այլ իրավունքներ եւ ազատություններ:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով **ամրագրված** հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով **սահմանված** շրջանակները:

ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են **սահմանվում** ֆի-

զիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները:

ՀՀ Սահմանադրության՝ վերը նշված դրույթների ուսումնասիրությունից բխում է, որ բոլոր դեպքերում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքը կամ իրավունքի սահմանափակումը /խոսքը չի վերաբերում ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի հիմքով իրավունքի ժամանակավորապես սահմանափակմանը/ կարող է նախատեսված լինել կամ Սահմանադրությամբ, կամ օրենքով, կամ միջազգային պայմանագրով, այլ ոչ թե այլ իրավական ակտով:

Վերը նշվածի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այլ նորմատիվ, ինչպես նաեւ անհատական իրավական ակտերով չեն կարող ամրագրվել կամ սահմանվել իրավունքներ կամ իրավունքի սահմանափակումներ, իսկ անհատական իրավական ակտերով, որպես իրավունքի կիրառման ակտեր, կարող են ընդամենը **կիրառվել** իրավունքի սահմանափակումները:

Օրենսդրական կարգավորման մակարդակում այս հասկացությունները պետք է հստակ եւ ճշգրիտ ձեւով ամրագրվեն՝ չաղավաղելով իրավակարգավորման բովանդակությունը: Սահմանադրական դատարանը նկատի է առնում, որ քննության առարկա օրենքի իրավակարգավորման շրջանակներում կարգավորման առարկան ոչ թե իրավունքի սահմանումը կամ սահմանափակումն է, այլ օրենքով նախատեսված սահմանափակման կիրառումը:

6. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաեւ գույքի նկատմամբ իրավունք կամ սահմանափակում կիրառող վարչական ակտերի եւ դրանց բողոքարկման կարգի եւ հետեւանքների վերաբերյալ գործող իրավակարգավորման ուղղվածությանն ու տրամաբանությանը:

Այսպես. «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը սահմանում է. «Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետեւյալ ակնառու կոպիտ սխալները. ... ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից իրավաբանական ուժ չունի եւ ենթակա չէ կատարման կամ կիրառման»:

Նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը սահմանում է, որ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետեւանքով: Իսկ նույն հոդվածի

2-րդ մասով նախատեսվում է, որ **ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:**

Ընդ որում, քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի ուժով, տվյալ ակտն ընդունած վարչական մարմինն իրավասու է ճանաչել այդ ակտն անվավեր կամ առ ոչինչ կամ ընդունել նոր վարչական ակտ:

ՀՀ վարչական դատավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը:

Նույն օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով վարչական դատարանն իրավասու է կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին, իսկ նույն մասի 4-րդ կետի ուժով՝ իրավահարաբերությունների առկայության կամ բացակայության կամ վարչական ակտի՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն առ ոչինչ լինելու մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված դրույթների տրամաբանությունից բխում է, որ.

ա) ոչ իրավաչափ վարչական ակտի, ներառյալ՝ իրավունք կամ սահմանափակում կիրառող անհատական իրավական ակտի հետեւանքը դրա անվավերությունն է կամ առ ոչինչ լինելը,

բ) ի տարբերություն վարչական ակտի անվավերության, վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքը պայմանավորված է ակնառու կոպիտ սխալներով, որոնք ի հայտ են գալիս առանց տվյալ վարչական ակտի իրավաչափությունը հատուկ ընթացակարգով ստուգելու եւ գնահատելու անհրաժեշտության եւ բացառում են տվյալ ակտի առ ոչինչ լինելու վերաբերյալ հնարավոր վեճերը,

գ) վարչական ակտի, ներառյալ՝ իրավունք կամ սահմանափակում կիրառող անհատական իրավական ակտի իրավաչափությունը կարող է վիճարկվել թե՛ դատական, թե՛ արտադատական կարգով, ընդ որում, վարչական վարույթի շրջանակներում՝ ինչպես դատական մարմինները, այնպես էլ ակտն ընդունող կամ վերադաս վարչական մարմիններն իրավասու են կայացնելու վարչական ակտն անվավեր կամ առոչինչ ճանաչելու մասին որոշումներ,

դ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով թեեւ նախատեսված է վարչական ակտը դատական կարգով առ

ոչինչ ճանաչելու հնարավորություն, սակայն այդ հնարավորությունը նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի ուժով նախատեսված է միայն շահագրգիռ անձանց համար, որպիսին չի հանդիսանում այն անձը, որի իրավունքի պետական գրանցումը մերժվել է,

ե) ի տարբերություն առ ոչինչ չհանդիսացող մյուս ոչ իրավաչափ վարչական ակտերի, առ ոչինչ վարչական ակտերն այդպիսին են հանդիսանում հենց օրենքի ուժով, ինչն իրավունքի սուբյեկտին չի պարտադրում բողոքարկել նման վարչական ակտերը եւ դրա արդյունքում ունենալ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքի հաստատման վերաբերյալ իրավասու մարմինների կողմից կայացված որոշում, հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով առ ոչինչ վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող դրույթները նախատեսում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու երկու առանձին հիմքեր.

ա) իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը կայացվել է դրա ընդունման լիազորությունը չունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, ինչը հանդիսանում է տվյալ վարչական ակտն առ ոչինչ համարելու հիմք,

բ) իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը չի համապատասխանում դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին, ինչը հանդիսանում է տվյալ վարչական ակտի անվավերության հիմք:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գործընթացում Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից պետական գրանցման ենթակա իրավունք կամ սահմանափակում կիրառող վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքի ստուգումը եւ գնահատումը ոչ միայն իրավաչափ է, այլ նաեւ անհրաժեշտ եւ պարտադիր՝ պայմանավորված այլոց իրավունքներով եւ ազատություններով, ինչպես նաեւ առ ոչինչ վարչական ակտի կատարման կամ կիրառման համար օրենքով սահմանված պատասխանատվության չենթարկվելու հանգամանքով:

7. Անդրադառնալով դիմողի փաստարկներին՝ գրանցման ենթակա իրավունք կամ սահմանափակում կիրառող վարչական ակտի անվավե-

րության հիմքերի՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ստուգման եւ գնահատման մասով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական լիազոր մարմինը, մերժելով գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը, օրենքի վիճարկվող դրույթների ուժով՝ չի կատարել վարչական ակտի պահանջը՝ անտեսելով այն հանգամանքը, որ ոչ մի իրավասու սուբյեկտ չի վիճարկել պետական գրանցման ենթակա իրավունք կիրառող վարչական ակտը, եւ այն գտնվում է իրավաբանական ուժի մեջ:

Վերը նշվածի կապակցությամբ, հաշվի առնելով շարադրված փաստարկները, սահմանադրական դատարանը գտնում է, որ պետական գրանցման ենթակա իրավունք կամ սահմանափակում կիրառող վարչական ակտի՝ դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին չհամապատասխանելու հիմքով իրավունքի պետական գրանցման մերժումը կարող է համարվել իրավաչափ միայն այն դեպքում, երբ սահմանված դատական կամ արտադատական կարգով վերացվել է պետական գրանցման իրավունք կամ սահմանափակում կիրառող անհատական իրավական ակտը, այսինքն՝ երբ դադարեցվել է վարչական ակտի իրավաբանական ուժը: Հակառակ պարագայում ստացվում է, որ օրենքի ուժով Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն չի կատարել դեռեւս իրավաբանական ուժ ունեցող վարչական ակտի պահանջը:

Նման դիրքորոշման հիմքում ընկած հիմնավորումների վերաբերյալ սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

ա) Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված իրավական պետության կարեւորագույն տարրերից է օրինականության սկզբունքը, որը ենթադրում է նաեւ, որ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության պահանջներին եւ գործողության մեջ դրվեն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում՝ իրավունքի բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց կողմից այդ ակտերի պահանջների պարտադիր կատարման պայմանով,

բ) Սահմանադրության 11.2-րդ հոդվածի եւ 105-րդ հոդվածի 1-ին մասի համադրված վերլուծությունը վկայում է, որ երաշխավորելով տեղական ինքնակառավարումը, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում համայնքի սեփականությունն ինքնուրույնաբար կառավարելուն ու տնօրինելուն ուղղված որոշակի գործողությունների կատարման եւ կամահայտնության դրսևորումների միջոցով, պետությունը, միաժամանակ,

ստանձնում է համարժեք պարտականություն՝ Սահմանադրության 108.1-րդ հոդվածով ամրագրված՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունն ապահովելու նպատակով օրենքով սահմանված կարգով իրականացվող իրավական հսկողության իրավակարգավորման շրջանակում: Այսինքն՝ տեղական ինքնակառավարման համակարգում սահմանադրական օրինականության սկզբունքի իրացումն ուղղված է պետության կողմից ոչ միայն տեղական ինքնակառավարման երաշխավորմանը, այլև այդ համակարգում օրինականության պահպանմանը:

Տեղական ինքնակառավարման ինքնուրույնության եւ անկախության երաշխավորմանն է ուղղված նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված լիազորությունը՝ օրենքով սահմանված կարգով որոշել նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը: Տվյալ լիազորությունը կոչված է երաշխավորելու տեղական ինքնակառավարման մարմինների իրավաստեղծ գործունեության սահմանադրականությունը եւ կանխարգելելու պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմինների իրավաստեղծ գործունեությանն անհարկի միջամտությունը: Առավել եւս՝ նման իրավակարգավորումների պարագայում տեղական ինքնակառավարման մարմինների ակտերի օրինականության հարցը կարող է քննության առարկա լինել բացառապես դատական կարգով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգերի շրջանակներում:

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաեւ դիմողի այն փաստարկին, որ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն օրենսդրորեն օժտված չլինելով արտագերատեսչական վերահսկողության գործառնություններով՝ վերահսկողություն է իրականացրել կառուցվածքային առումով իր ստորադասը չհանդիսացող հանրային իշխանության այլ մարմնի՝ տեղական ինքնակառավարման մարմնի նկատմամբ՝ պետական գրանցման ենթակա իրավունք կիրառող վարչական ակտն անուղղակիորեն ճանաչելով ոչ իրավաչափ:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է վարչական ակտի իրավաչափության (սակայն ոչ առոչնչության)՝ դատական կամ վերադատության կարգով՝ վարչական հատուկ ընթացակարգով, ստուգման եւ գնահատման հնարավորությունը: Միաժամանակ, որպես գրանցման ենթակա իրավունք կամ սահմանափակում կիրառող վարչական ակտ ընդունող մարմին կարող է

հանդիսանալ տեղական ինքնակառավարման մարմինը, որի, որպես վարչական մարմնի, ակտերի իրավաչափությունը, համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, կարող է ստուգվել եւ գնահատվել **բացառապես դատական կարգով**: Դա նաեւ ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի պահանջն է: Մինչդեռ օրենքի վիճարկվող դրույթով նախատեսված է այլ կարգ, ընդ որում՝ առանց հատուկ ընթացակարգի սահմանման եւ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն չի կարող հանդիսանալ տեղական ինքնակառավարման մարմնի վերադասը:

Միաժամանակ, ՀՀ հողային օրենսգրքի 41-րդ հոդվածի եւ «Հողերի օգտագործման եւ պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համակարգային առումով վերլուծությունից, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի եւ մարզպետների հողային պետական տեսչական իրավասությունների սահմանազատելու մասին» N1149 որոշման բովանդակությունից հետեւում է, որ հողերի օգտագործման եւ պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված է նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:

Սահմանադրական կարգավորումների շրջանակում եւ ի կատարումն ՀՀ Սահմանադրության 108.1-րդ հոդվածի պահանջների՝ «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Երեսան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների համապատասխանաբար՝ 7.1-րդ եւ 7-րդ գլուխներով իրավական հսկողություն իրականացնող մարմինների ցանկում չի ներառվել Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, ինչը ենթադրում է ՀՀ հողային օրենսգրքում եւ «Հողերի օգտագործման եւ պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման համակարգում «հսկողություն» եւ «վերահսկողություն» եզրույթների բովանդակության ու սահմանների հստակեցմանն ուղղված համապատասխան օրենսդրական կարգավորումների անհրաժեշտություն: Դրանց առանցքը պետք է լինի այն, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ պետական հսկողությունը, դրա իրականացման ձեւերը, մեխանիզմները, կարգը չեն կարող խախտել տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը եւ դրա մարմինների անկախությունը:

9. Սույն գործի շրջանակում Սահմանադրական դատարանը հարկ է համարում օրենքի վիճարկվող դրույթները դիտարկել նաև դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետով ամրագրված՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու հիմք հանդիսացած իրավակարգավորումների շրջանակներում՝ վերլուծելով նաև տվյալ հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի՝ ՀՀ հողային և քաղաքացիական օրենսգրքերում ամրագրված համապատասխան դրույթները:

Մասնավորապես, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետը սահմանում է, որ՝ պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պարտավոր է մերժել իրավունքի պետական գրանցումը, եթե առկա են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդպիսի հիմքեր կարող են հանդիսանալ, օրինակ, հողերի նպատակային և գործառնական նշանակությունն ինքնակամ փոփոխելը կամ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը և այլն:

Մասնավորապես, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենքներով և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ հողերի նպատակային և գործառնական նշանակությունն ինքնակամ փոփոխելը հիմք է հանդիսանում ոչ միայն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը, ինչպես նաև դրանց հիման վրա հողամասերի առնչությամբ կնքված գործարքները դատական կարգով անվավեր ճանաչելու համար, այլև հողի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու համար:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրության շրջանակներում տարբեր իրավական ակտերով կարող են սահմանվել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մերժման տարատեսակ հիմքեր և հաշվի առնելով սույն որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետում՝ «պարտավոր է մերժել» բառակապակցությունը չի կարող վերաբերել գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման մերժման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այնպիսի հիմքերին, որոնք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիա-

գոր մարմնի համար առաջացնում են իրավունք կամ իրավունքի սահմանափակում կիրառող անհատական իրավական ակտերի օրինականության ստուգման եւ գնահատման հնարավորություն ու անհրաժեշտություն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետում ամրագրված՝ «իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը կայացվել է դրա ընդունման լիազորությունը չունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի՝ «...կամ իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը չի համապատասխանում դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին» դրույթը, այնքանով, որքանով այն կիրառվում է առանց օրենքով սահմանված դատական կամ արտադատական կարգով տվյալ ակտի անվավեր ճանաչման, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 5-րդ, 91-րդ եւ 108.1-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**4 փետրվարի 2014 թվականի
ՍԳՈ-1137**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 23-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 170³-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 փետրվարի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Ա. Վարդեանյանի եւ նույն վարչության մասնագետ Ս. Տերզիկյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրա-

վունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170³-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 07.10.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, ինչպես նաեւ «Հարկերի մասին» ՀՀ օրենքն ու Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997 թվականի ապրիլի 14-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997 թվականի մայիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 1997 թվականի մայիսի 30-ից:

Վերոհիշյալ օրենքի վիճարկվող 23-րդ հոդվածը սահմանում է.

«Հոդված 23. Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են, եթե հարկային օրենսդրությամբ ավելի նվազ չափ սահմանված չէ:

Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում նաեւ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար»:

Վերոհիշյալ հոդվածը գործող խմբագրությամբ շարադրվել է 21.10.1997թ. ՀՕ-153, 28.12.1998թ. ՀՕ-273 եւ 26.12.2000թ. ՀՕ-129 օրենքների համաձայն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Հարկերը ժամանակին չվճարելը» վերտառությամբ 170³-րդ հոդվածը սահմանում է.

«Հարկերը սահմանված ժամկետներում չվճարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով»:

Նշված հոդվածը գործող խմբագրությամբ շարադրվել է 11.05.1992թ., 02.09.1993թ. ՀՕ-79, 23.06.1997թ. ՀՕ-133, 26.12.2002թ. ՀՕ-499-Ն, 24.10.2007թ. ՀՕ-241-Ն, ինչպես նաև՝ 22.12.2010թ. ՀՕ-264-Ն օրենքների համաձայն:

2. Դիմող կողմը գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170³-րդ հոդվածի վերոհիշյալ դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը հետևյալ հիմնավորումներով:

«Օրենսդիրը, որպես պատասխանատվություն առաջացնող արարք դիտարկել է հարկային պարտավորությունների ոլորտում անձանց կողմից հարկերի սահմանված ժամկետներում չվճարելը: Խնդրահարույց հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս պնդելու, որ երկու դեպքում էլ նախատեսված պատասխանատվությունը կրում է պատժիչ բնույթ, այլ ոչ կանխարգելիչ կամ վերականգնող եւ ըստ էության ոչ թե լրացնում են միմյանց, այլ՝ կրկնում»:

Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածը, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթեր ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան՝ կապված կրկին անգամ դատվելու կամ քրեական դատավարության կարգով պատժվելու արգելքի իրավական սկզբունքի հետ, դիմողը եզրակացնում է, որ իր կողմից վիճարկվող նորմերով իրավական հիմք է նախատեսված «նույն արարքի համար անձանց կրկին անգամ պատասխանատվության ենթարկելու համար», այսինքն՝ «գործնականում բազմաթիվ են դեպքերը, երբ հարկային մարմինները, ղեկավարվելով օրենսգրքի եւ օրենքի դրույթներով, նույն արարքի համար միաժամանակ երկու առանձին սանկցիա են կիրառում անձանց նկատմամբ: Այսինքն, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգավորումների եւ ձեւավորված պրակտիկայի արդյունքում առաջանում է իրական ռիսկ անձանց՝ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածով ամրագրված իրավունքի խախտման համար»: Բացի դրանից, դիմողը նաև կարծիք է հայտնում, որ նման դեպքերում ՀՀ-ում իրավախախտ սուբյեկտների տարանջատում օրենսդրորեն նախատեսված չէ: Հստա-

կեցված չէ, թե որ սուբյեկտի նկատմամբ է կիրառվում հարկային պատասխանատվությունը եւ որի նկատմամբ՝ վարչական պատասխանատվությունը: Այդպիսի կարգավորման բացակայությունն առիթ է հանդիսանում տարաբնույթ մեկնաբանությունների, որի հետեւանքով անձինք կարող են ենթարկվել կրկնակի պատասխանատվության: Այսինքն, ըստ դիմողի՝ «մեկ իրավախախտման դեպքում կարող է կիրառվել վարչական, մեկ այլ դեպքում՝ հարկային պատասխանատվություն, որոնց չափերը տարբեր են, ինչի արդյունքում խախտվում են օրենքի առջեւ հավասարության, ինչպես նաեւ օրինականության սկզբունքները»:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող նորմերի առկայությունը ՀՀ օրենսդրության մեջ չի առնչվում նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու սահմանադրական սկզբունքին, այլ կոչված է ապահովելու համաչափ պատասխանատվություն բյուջե վճարման ենթակա միջոցների հաշվին ապօրինի օգուտ ստանալու փորձ կատարող տնտեսավարող սուբյեկտների համար: Ըստ պատասխանողի՝ կրկին անգամ պատասխանատվության չենթարկվելու սկզբունքը ֆորմալ առումով չի կարելի բացարձակ կիրառելի համարել ցանկացած իրավախախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցների եւ տեսակների որոշման ժամանակ: Ընդ որում, կրկին անգամ չդատվելու սկզբունքն առավելապես բնորոշ է քրեական պատասխանատվության ոլորտին եւ հիմքում ընկած է նույն արարքի համար անձի կրկին անգամ ֆիզիկական զրկանքների չենթարկվելու գաղափարը, մինչդեռ վիճարկվող նորմերը նյութական պատասխանատվություն նախատեսելով ֆինանսական ոլորտի պարտականությունները չկատարելու համար՝ նպատակ ունեն ապահովել պատժի արդյունավետությունն ու նպատակայնությունը, բացառելու այն իրավիճակը, «երբ խախտում կատարել եւ պատասխանատվություն կրելը ավելի պակաս ֆինանսական զրկանքներ կպատճառի իրավախախտող սուբյեկտին, քան այն ապօրինի օգուտն է, որը վերջինս կարող է ձեռք բերել տվյալ պարտականության կատարումից խուսափելու արդյունքում»: Ուստի, ինչպես եզրակացնում է պատասխանող կողմը, «հաշվի առնելով պատժի եւ նյութական պատասխանատվության իրավական ինստիտուտների հիմքում դրված առաջնահերթությունների տարբերությունը, կրկին անգամ չդատվելու սկզբունքը կարող է կիրառելի լինել ավելի լայն շրջանակի հարաբերությունների նկատմամբ»: Ինչպես նաեւ եզրակացություն է արվում, որ «նույն արարքի համար կրկին անգամ պատասխանատվության չենթարկվելու սկզբունքը ֆորմալ առումով չի կարելի բացարձակ

կիրառելի համարել ցանկացած իրավախախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցների եւ տեսակների որոշման ժամանակ»:

4. Սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականությունը ՀՀ սահմանադրական դատարանն առաջին հերթին անհրաժեշտ է համարում գնահատել.

- իրավական, ժողովրդավարական պետության սահմանադրորեն ամրագրված սկզբունքների եւ դրանց գործադրումն ապահովող իրավական համաչափ պատասխանատվություն երաշխավորելու տեսանկյունից,

- նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու սահմանադրական եւ միջազգային իրավական սկզբունքին դրանց համադրելիությունը որոշելու տեսանկյունից:

Ելնելով դիմող կողմի հարցադրումներից եւ արված եզրահանգումներից՝ սահմանադրական դատարանը կարելու է համարում վիճարկվող նորմերով նախատեսված իրավակարգավորումների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտել նաեւ «Հարկերի մասին» ՀՀ օրենքում եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում այդ նորմերի հետ համակարգային առումով փոխկապակցված, ինչպես նաեւ օրենսդրության այլ ակտերում ամրագրված նորմերի համադրված վերլուծության արդյունքում:

5. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը: Այն իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն է ապահովում անձանց (տնտեսավարող սուբյեկտների) համար՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքը օրենքով չարգելված տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Միաժամանակ, այդ ազատության սկզբունքը բացարձակ չէ եւ ինչպես պետության, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների առջեւ դնում է կոնկրետ պարտականություններ: Այսպես, պետության հիմնական գործառույթն է ապահովել այդ ազատության երաշխավորման անհրաժեշտ իրավական եւ տնտեսական պայմաններ: Սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմի բովանդակությունից ուղղակիորեն բխում է նաեւ, որ Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտաբար պետք է ստեղծվեն տնտեսական ողջ համակարգի կենսագործունեության

առավել բարենպաստ պայմաններ՝ հիմնված ազատ շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտների կազմակերպման ու գործունեության ազատության, իրավահավասարության, այդ գործընթացում պետության դերի առավելագույնս հստակեցման սկզբունքների վրա: Մյուս կողմից, տնտեսավարող սուբյեկտների պարտականությունն է իրենց գործունեությունը ծավալել օրենսդրությամբ սահմանված կարգով ու շրջանակներում, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով ու չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Այն սահմանադրաիրավական պարտականություն է (ՀՀ Սահմ. 45-րդ հոդված), որը պայմանավորված է հասարակության ու պետության համար դրա կենսական կարևորությամբ ու նշանակությամբ: Այդ պարտականության պատշաճ կատարման ապահովմանն է անմիջականորեն ուղղված ՀՀ հարկային օրենսդրությունը եւ, մասնավորապես՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, որի կարգավորման առարկան է նաեւ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվություն սահմանելը: Մասնավորապես, հիշյալ օրենքի 21-րդ եւ 22-րդ հոդվածներով սահմանված է, որ հարկային օրենսդրության խախտումն (այսինքն՝ հարկերը ճիշտ չհաշվարկելը, ժամանակին չվճարելը եւ հարկային օրենսդրության մյուս պահանջները չպահպանելը) առաջացնում է պատասխանատվություն, որը կրում են հարկ վճարողները եւ դրանց (ձեռնարկությունների, հիմնարկների եւ կազմակերպությունների)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

Հասարակության եւ պետության համար իրենց ոչ բարենպաստ հետեւանքներ առաջացնելու ծանրությամբ, պահպանվող հասարակական հարաբերություններին պատճառվելիք վնասով է պայմանավորված նաեւ այն հանգամանքը, որ հարկային իրավախախտումներ սահմանող նորմերն իրենց ամրագրումն են գտել ոչ միայն հարկային օրենսդրության մեջ, այլեւ վարչական իրավախախտումների վերաբերյալ, ինչպես նաեւ քրեական օրենսգրքերում: Բացի վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմերով նախատեսված վարչական պատասխանատվությունից, ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ, 205-րդ եւ 328-րդ հոդվածներով նախատեսված են կոնկրետ հանցակազմեր եւ համապատասխան պատժամիջոցներ՝ հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերում: Այսպիսով, նպատակ ունենալով երաշխավորել հարկեր եւ տուրքեր վճարելու՝ անձանց սահմանադրական պարտականության կատարումը, օրենսդիրը նախատեսել է իրավական պատասխանատվության կոնկրետ տեսակներ (հարկային, վար-

չական, քրեական), որոնց խստությունը, կիրառման իրավական հետևանքներն անմիջականորեն պայմանավորված են հարկային այս կամ այն պարտավորության չկատարման (ոչ պատշաճ կատարման) հասարակական վտանգավորության աստիճանով: Մասնավորապես, եթե «Հարկերի մասին» ՀՀ օրենքով կամ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով հարկային պարտավորության չկատարումը (ոչ պատշաճ կատարումը) առաջացնում է նյութական պատասխանատվություն (համապատասխանաբար՝ հարկային եւ վարչական պատասխանատվություն), ապա նույն արարքը, ըստ սուբյեկտիվ հատկանիշի, քրեորեն պատժելի է չարամտության դրսեւորման կամ ծանրացուցիչ այլ հանգամանքների առկայության դեպքերում: Հետեւաբար, իր բնույթով ու բովանդակությամբ հարկային պարտավորությունից խուսափելն անհարիր է ոչ միայն ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածում, այլ, նախ եւ առաջ՝ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ այլ հոդվածներում ամրագրված իրավական, ժողովրդավարական պետության սկզբունքներին, ուստի այդ արարքի՝ օրենքով նախատեսված պատժելիությունը հետապնդում է իրավաչափ նպատակ:

6. Անդրադառնալով վիճարկվող նորմերի սահմանադրաիրավական բովանդակության գնահատման խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ՝ հարցը դիտարկել արարքի նորմատիվ նկարագրի եւ իրավական պատասխանատվության համապատասխան տեսակի ընտրության անհրաժեշտության տեսանկյունից: Անհրաժեշտ է պարզել, թե որքանով է արդարացված հարկային պարտավորության չկատարման (ոչ պատշաճ կատարման) հատկանիշներ պարունակող արարքի որակման իրավական տարբեր բնութագրիչների առկայությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքում եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, ինչպես նաեւ այն հանգամանքը, թե իրավական-նկարագրական իմաստով որքանով են դրանք նույնական՝ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակության հետ համադրման տեսանկյունից:

Օրենսդրության վերոհիշյալ ակտերի ինչպես վիճարկվող, այնպես էլ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված նորմերի համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է.

ա/ հարկային պարտավորությունների չկատարման (ոչ պատշաճ կատարման) բնութագրիչներ պարունակող արարքի որակման եւ իրա-

վագնահատման հարցում (եթե բացակայում են հանցակազմի հատկանիշները) օրենսդիրն ըստ էության **տարանջատել է վարչական եւ հարկային պատասխանատվության տեսակները**, նկատի ունենալով, որ.

- «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, ի թիվս այլնի, սահմանում է ՀՀ հարկային օրենսդրության եւ հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվությունը (օրենքի 1-ին հոդված): Ըստ նույն օրենքի 2-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորվում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաեւ առանձին հարկատեսակների մասին օրենքներով, ՀՀ կառավարության, ինչպես նաեւ հարկային եւ պետական կառավարման այլ մարմինների որոշումներով, այսինքն՝ հարկային պատասխանատվության հետ կապված բոլոր հարաբերությունների օրենքով կարգավորման խնդիրները բացառապես լուծվում են վերոթվարկյալ նորմատիվ ակտերով,
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը (ըստ վերջինիս 9-րդ հոդվածի) կարգավորում է «պետական եւ հասարակական կարգի ... սեփականության, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ)» այնպիսի գործողության կամ անգործության դեպքում անձանց պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարաբերությունները, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն, եւ «եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում»,
- վարչական պատասխանատվության նպատակը ոչ թե խախտված իրավունքների վերականգնումն է, այլ «վարչական իրավախախտում կատարած անձին դաստիարակել ... օրենքները պահպանելու, ... համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաեւ կանխել ինչպես իր իսկ՝ իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը» (օրենսգրքի 22-րդ հոդված),
- հարկային պատասխանատվության նպատակը պետությանը եւ հասարակությանը հասցված գույքային վնասի հատուցումն է, այն գույքային (ֆինանսական) բնույթի իրավական պատասխանատվություն է, որը պայմանավորված է հարկ վճարող սուբյեկտի եւ պե-

տության միջև առկա հարաբերությունների (հարկային հարաբերությունների) գույքային բնույթով: Բացի դրանից, հարկային պարտավորությունները չկատարած (ոչ պատշաճ կատարած) անձը ցանկության դեպքում կարող է կամովին վերականգնել իր գործողությունների (անգործության) հետեւանքով հասցրած վնասը՝ մինչև դրա հարկադիր (դատական կարգով) կատարումն ապահովելը: Այդ վնասը ենթակա է լրիվ հատուցման՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ հարկատուն ենթակա^o է, արդյոք, վարչական կամ քրեական պատասխանատվության, թե՛ ոչ («Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20, 26, 29 եւ 30-րդ հոդվածներ), ավելին, պատասխանատվության որեւէ միջոցի ենթարկվելը հարկ վճարողին չի ազատում օրենքով սահմանված հարկային պարտավորությունների կատարումից («Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված),

- վարչական պատասխանատվության բնագավառում գույքային վնասի հետ կապված հարաբերությունները, որպես կանոն, լուծվում են քաղաքացիական դատավարության կարգով (օրենսգրքի 39-րդ հոդված),
- վարչական պատասխանատվության բնագավառում նախատեսված են իրավական այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են պատասխանատվությունը մեղմացնող եւ ծանրացնող հանգամանքները, վարչական տույժի ենթարկված համարվելու վաղեմության ժամկետը, ծայրահեղ անհրաժեշտությունը, անհրաժեշտ պաշտպանությունը, ինչպես նաեւ անմեղսունակությունը (օրենսգրքի 33, 34 եւ 38-րդ հոդվածներ),

բ/ օրենսդիրը **տարանջատել է նաեւ հարկադրանքի (պատասխանատվության) միջոցները**՝ տույժը եւ տուգանքը, նկատի ունենալով, որ.

- վարչական տույժ կիրառվում է վարչական իրավախախտման (զանցանքի) դեպքում (օրենսգրքի 9 եւ 22-րդ հոդվածներ) եւ իր իրավական բովանդակությամբ վարչական ներգործության միջոցների ամբողջություն է, որպիսիք թվարկված են վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 3-րդ գլխում, մինչդեռ «տուգանքը» վարչական տույժի (պատասխանատվության) կոնկրետ միջոց է (օրենսգրքի 23-րդ, 40.1-րդ, 40.2-րդ, 40.3-րդ, 40.4-րդ, 40.6-րդ, 40.7-րդ եւ այլ հոդվածներ), որը կիրառվում է վարչական կոնկրետ զանցանքների դեպքում,
- այլ է «տույժի» եւ «տուգանքի» իրավական բովանդակությունը հարկային պատասխանատվության բնագավառում, դրանք պա-

տասխանատվության կոնկրետ եւ համակցված տեսակներ են, նախատեսված են հարկային որոշակի պարտավորությունների խախտման դեպքերում, ներառված են հարկային միասնական պարտավորություններում, որպես դրանց բաղկացուցիչ մաս, արտահայտվում են պետբյուջե վճարման ենթակա կոնկրետ գումարներով («Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ, 16-րդ, 16.1-րդ, 16.2-րդ, 17-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 25.1-րդ, 25.2-րդ, 26-րդ եւ այլ հոդվածներ),

զ/ տարբերակված է հարկային եւ վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների կազմը, նկատի ունենալով, որ.

- վարչական պատասխանատվության ենթակա անձինք են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք, ընդ որում, վարչական պատասխանատվության որոշ առանձնահատկություններ պայմանավորված են ֆիզիկական անձանց վարչական իրավունակությամբ ու գործունակությամբ: Իրավաբանական անձանց նկատմամբ կարող են կիրառվել պատասխանատվության սահմանափակ միջոցներ: Ընդ որում, **հստակ չէ բացառապես իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտների նկատմամբ կիրառվող վարչական տույժերի սպառիչ ցանկը:** Ֆիզիկական անձանց եւ նրանց առանձին խմբերի պատասխանատվության առանձնահատկությունները նախատեսված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 12-16-րդ հոդվածներով (անչափահասներ, պաշտոնատար անձինք, զինծառայողներ եւ այլն), ըստ այդմ, տարբերակված են այս կամ այն խումբ անձանց նկատմամբ կիրառման ենթակա վարչական տույժի միջոցները, օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմի իմաստով վարչական պատասխանատվության ենթակա են 18 տարին լրացած ֆիզիկական անձինք եւ պաշտոնատար անձինք,
- հարկային պատասխանատվության ենթակա անձանց շրջանակը նախատեսված է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3, 5, 6, 6.1-րդ հոդվածներում: Ընդ որում, նույն օրենքի՝ սույն գործով վիճարկվող նորմի իմաստով հարկային պատասխանատվության ենթակա են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտները, հարկային գործակալը (որպես անհատ ձեռներեց կամ նոտար հանդես գալու դեպքերում), ներդրումային ֆոնդի կառավարիչը, համատեղ գործունեության գործերը վարող անձը, համատեղ գործունեության մասնակիցների կողմից գրավոր լիազորված անձը:

Այդպիսով, վարչական իրավահարաբերության սուբյեկտներից «Հարկերի մասին» ՀՀ օրենքով տարանջատված են հանրային-ֆինանսական (հարկային) հարաբերության մասնակիցները, որոնք պետության եւ հասարակության առջեւ կրում են առանձնահատուկ սահմանադրաիրավական պարտականություններ, հետեւաբար, ենթակա են պատասխանատվության ոչ թե ընդհանուր հիմունքներով, այլ խիստ որոշակի բնույթի իրավախախտում թույլ տալու դեպքերում:

Ելնելով վերոշարադրյալից՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, առաջնորդվելով իր հայեցողական լիազորություններով, տարանջատել է հարկային եւ վարչական պատասխանատվության բնագավառները՝ նկատի ունենալով հարկային հարաբերությունների կարգավորման սահմանադրաիրավական առանձնահատուկ կարեւորությունն ու անհրաժեշտությունը՝ սահմանադրական կարգի ու օրինականության պահպանման համատեքստում: Այդ տարանջատումն ինքնին հետապնդում է իրավական որոշակի նպատակ եւ սահմանադրականության խնդիր չի հարուցում:

Ինչ վերաբերում է վիճարկվող իրավակարգավորումներով նախատեսված արարքների («հարկերը ժամանակին չվճարելը» եւ «հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելը») օբյեկտիվ կողմի հատկանիշների համեմատական գնահատմանը, ապա չնայած ձեւական առումով դրանք կարող են մեկնաբանվել որպես նույնաբնույթ, այնուհանդերձ, այդ արարքները, ինչպես եւ սահմանված պատասխանատվության միջոցներն ըստ առկա իրավակարգավորումների իրավաբանորեն տարբեր են թե՛ նպատակի եւ թե՛ հատկանիշների առումներով: Եթե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170³-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հարկերը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում՝ փաստի ուժով դիտարկելով այն որպես **ավարտված գանգանք**, ապա «Հարկերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմի նկարագրական մասում նկատի է առնվում հարկի վճարման ուշացման փաստը, որը **շարունակական** բնույթ է կրում՝ նախատեսելով ժամկետանց յուրաքանչյուր օրվա դիմաց տույժի վճարում՝ մինչեւ հարկային պարտավորության լիարժեք կատարման ավարտը:

Դրանով իսկ փորձ է արվել օրենսդրորեն լուծել իրավակարգավորման հետեւյալ խնդիրները. նախ կանխել նման իրավախախտումները, ապահովել հարկերի վճարման ուշացման հետեւանքով պետական բյուջեին հասցված նյութական վնասի հատուցումը, ինչպես նաեւ պարտադրել իրավախախտ սուբյեկտին անհապաղ միջոցներ ձեռնարկել կատարելու հարկային պարտավորությունը:

7. Անդրադառնալով «նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու» (non bis in idem) սահմանադրական եւ միջազգային իրավական սկզբունքին սույն գործով վիճարկվող նորմերի համադրելիության խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ՝

ա/ բացահայտել այդ սկզբունքի իրավական բովանդակությունն ու հարկային եւ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունում դրա կիրառելիության թույլատրելի շրջանակները,

բ/ գնահատել վիճարկվող եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի համադրելիությունը ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներին:

Կրկին դատվելու անթույլատրելիության պահանջը (սկզբունքը), որը նախատեսված է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասում, սահմանված է մի շարք միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածով: Այդ սկզբունքն իր բովանդակությամբ (մեկնաբանմամբ) ենթադրում է պետության պարտականությունը՝ նույն արարքի համար անձին կրկին անգամ պատժելը, դատելը եւ քրեական հետապնդման ենթարկելը բացառելը: Իր սահմանադրաիրավական բովանդակությամբ՝ այդ սկզբունքի հիմքում (քրեաիրավական իմաստով) դրված է այն գաղափարը, որ ոչ ոք չի կարող նույն արարքի համար կրկին դատվել: Այդ սկզբունքը նաեւ բացառում է միեւնույն հանցագործության որակումը քրեական օրենսգրքի մեկից ավելի հոդվածներով, արգելում է նաեւ միեւնույն հանցամանքը հաշվի առնել ինչպես հանցանքը որակելիս, այնպես էլ պատժի տեսակն ու չափն ընտրելիս (ՀՀ քր.օր.-ի 10, 63, 104-րդ հոդվածներ): Այսպիսով, նախկինում հանցանք կատարած լինելու փաստը, եթե անձը դրա համար արդեն դատվել է, չի կարող նրա հետագա վարքագծի քրեաիրավական գնահատականի հիմք հանդիսանալ, «բացառությամբ այն դեպքերի», ինչպես վճռել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել արդյունքի վրա» (Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի գործով 2004թ. հուլիսի 20-ի վճռի 45-րդ կետ, զանգատ թիվ 50178/99):

Վերոհիշյալ սկզբունքի եւ սույն գործով վիճարկվող նորմերի իրավական բովանդակության համադրված վերլուծությունը, ինչպես նաեւ դիմող կողմի հարցադրումները վկայում են, որ, այնուամենայնիվ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ դեռեւս գործող օրենս-

գրքի նորմատիվ համապատասխան կարգավորումները թույլ չեն տալիս միանշանակ (թեկուզ՝ տեսականորեն) բացառել հարկային պարտավորությունների բնագավառում միեւնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության (հարկային եւ վարչական) ենթարկվելու հնարավորությունը (հատկապես անհատ ձեռնարկատեր հանդիսացող սուբյեկտի օրինակով), չնայած այն հանգամանքին, որ դիմող կողմը չի ներկայացրել դիմումում բերված իրավական ակտերում ու դատական պրակտիկայում ամրագրված չափանիշներով կրկնակի պատասխանատվության որեւէ փաստ եւ իր հիմնավորումները կառուցել է հնարավոր «ռիսկերի» շրջանակներում: Դիմումում բերված այն փաստարկը, ըստ որի՝ պատասխանատվության ենթակա սուբյեկտների տարանջատման հարցը «առհասարակ հստակեցված չէ թե՛ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով եւ թե՛ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով», հիմնավորված է այն նկատառումներից ելնելով, որ տվյալ օրենսգրքի ողջ իրավական հայեցակարգը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում առկա սոցիալական, տնտեսական եւ օրենսդրության զարգացումների ընդհանուր տրամաբանությանը, ինչը փաստվել է նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՌ-1059 որոշմամբ: Բացի դրանից, եթե մի կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սպառիչ տրված են պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակները, ապա մյուս կողմից **հստակեցված չեն իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու առանձնահատկությունները՝** կապված հարկային կամ վարչաիրավական այս կամ այն իրավախախտման հատկանիշներ պարունակող որեւէ արարքի գնահատման հետ: Պետք է նկատի ունենալ նաեւ այն հանգամանքը, որ չնայած իրենց իրավակարգավորման առարկայով հարկային եւ վարչական պատասխանատվության բնագավառներն օրենքով օբյեկտիվորեն տարբերակված են (թե՛ նպատակի եւ թե՛ իրավակարգավորման մեթոդների առումներով), այնուհանդերձ, դրանք հարկային իրավախախտումների կանխարգելման (բյուջետային կարգապահության հաստատման), կիրառվող պատասխանատվության միջոցների իրավական հետեւանքների տեսանկյունից գտնվում են փոխադարձ սերտ կապի մեջ:

Մահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային, ինչպես նաեւ վարչաիրավական հարաբերություններում իրավասու սուբյեկտները, ելնելով այդ հարաբերությունների բովանդակությունից ու առանձնահատկություններից, անհրաժեշտաբար (օբյեկտիվորեն) կարող են հանդես գալ իրավական մի քանի կարգավիճակներով՝ միաժամանակ հան-

դես գալով թե՛ որպես հարկային եւ թե՛ վարչաիրավական հարաբերության սուբյեկտներ, եւ որոնց նկատմամբ միաժամանակ հարկային եւ վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը կարող է մեկնաբանվել որպես միեւնույն արարքի համար իրավական կրկնակի պատասխանատվություն: Մասնավորապես, եթե անհատ ձեռնարկատերն իր գործունեությունից բխող հարկերը հաշվարկելու եւ պետքուջե փոխանցելու իր պարտականությունն օրենսդրությամբ նախատեսված կարգով պատվիրակել է պատասխանատու այլ անձի, ապա այդ ձեռնարկատերը վարչական պատասխանատվություն կարող է կրել միայն որպես իրավաբանական անձին հավասարեցված իրավունքի սուբյեկտ, մինչդեռ այլ իրավական կարգավորում է նախատեսված այն դեպքերում, երբ անհատ ձեռնարկատերը միաժամանակ ստանձնել է իր գործունեությամբ պայմանավորված հարկերը հաշվարկելու եւ վճարելու պարտականությունը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170³-րդ հոդվածի իմաստով պատասխանատվության ենթակա սուբյեկտ կարող է լինել միայն այն անհատ ձեռնարկատերը, որն օրենքով սահմանված կարգով անձամբ է իրականացնում հարկերը հաշվարկելու եւ փոխանցելու պարտականություն, հակառակ դեպքում, երբ այդ պարտականությունը վերապահված է այլ անձի, պատասխանատվություն կկրի միայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի հիման վրա:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ չնայած սույն գործով վեճի առարկա նորմերն ինքնին անմիջական սահմանադրականության խնդիր չեն հարուցում, այնուամենայնիվ, հիմնավոր է դիմողի դիրքորոշումն առ այն, որ քննության առարկա իրավական ակտերում պատասխանատվության միջոցներ սահմանելիս օրենսդիրը պետք է առավել հստակ իրավակարգավորումներ նախատեսի՝ բացառելու համար հարկային եւ վարչական պատասխանատվության ենթակա որեւէ իրավասուբյեկտի՝ իր իրավական կարգավիճակով պայմանավորված հանգամանքներով կրկնակի պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը: Ներկա իրավակարգավորումների շրջանակներում նույնպես այս մոտեցումը պետք է դրվի իրավակիրառական պրակտիկայի հիմքում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 170³-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 փետրվարի 2014 թվականի
ՍԳՈ-1139**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 67-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ
ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ
ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղ. Երևան

25 փետրվարի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
ղիմող Գ. Վահանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գրիգորի Վահանյանի ղիմումի հիման վրա՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Վահանյանի՝ 27.06.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ օրենսդրության այլ ակտեր, ինչպես նաեւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2001թ. դեկտեմբերի 27-ին եւ ուժի մեջ է մտել 2002թ. մարտի 1-ից:

Սույն գործով վիճարկվող նորմերը սահմանում են.

«Հոդված 67. Փաստաթղթերի վրա եղած ստորագրությունների իսկության վավերացումը

1. Նոտարը վավերացնում է այն բոլոր փաստաթղթերի վրա եղած ֆիզիկական անձանց ստորագրությունների իսկությունը, որոնք չունեն գործարքի բնույթ:

2. Նոտարը, վավերացնելով ֆիզիկական անձի ստորագրության իսկությունը, չի հավաստում կամ հաստատում փաստաթղթում շարադրված փաստերը, այլ սոսկ հաստատում է, որ ստորագրությունը կատարել է որոշակի անձ»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Ըստ գործում առկա նյութերի՝ դիմողի հայրը 06.11.1992թ. կազմված կտակի համաձայն իր ողջ գույքը՝ ներառյալ նաեւ բնակարանը, կտակել է դիմողին: 06.07.2004թ. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի կողմից դիմողին տրվել է ժառանգության իրավունքի վկայական այն մասին, որ, ի թիվս այլ գույքի, նա հանդիսանում է կտակարարի բնակարանի նկատմամբ ժառանգորդ, որի հիման վրա 09.07.2004թ. Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից դիմողին է տրվել վերոհիշյալ բնակարանի նկատմամբ նրա սեփականատեր հանդիսանալու վերաբերյալ վկայական: Գործում առկա մեկ այլ փաստաթղթի համաձայն դիմողի հայրը 20.10.2003թ. դիմելով Երեւանի Էրեբունու նոտարական տարածքի նոտարին՝ խնդրել է անվավեր ճանաչել իր՝ 06.11.1992թ. կազմված կտակը: Վկայակոչելով «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասը՝ հիշյալ դիմումի վրա նոտարը կատարել է գրառում, ըստ որի՝ հաստատել է որոշակի անձի կողմից կատարված ստորագրության իս-

կուսությունը, այլ ոչ թե փաստաթղթում շարադրված փաստերը: Գիմողը վիճարկել է նաև այդ փաստաթղթի իսկությունը՝ մատնանշելով, որ այն կազմված է օրենքի պահանջների խախտմամբ:

Գիմողը դիմել է Երևան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով, ի թիվս այլնի, առոչինչ ճանաչել կտակն անվավեր ճանաչելու մասին 20.10.2003թ. Երևան քաղաքի «Էրեբունի» նոտարական տարածքի նոտարական գրասենյակ հանձնված փաստաթուղթը, որի վրա եղած ստորագրության իսկությունը վավերացվել է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն: Նոտարը 20.10.2003թ. փաստաթղթում շարադրված փաստերը չի հաստատել, այլ սուսկ հաստատել է, որ ստորագրությունը կատարվել է որոշակի անձի կողմից:

Երևան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 25.09.2012թ. թիվ ԵԿԳ/1923/02/2011 վճռով մերժել է դիմողի հայցը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 25.12.2012թ. թիվ ԵԿԳ/1923/02/11 որոշմամբ մերժել է քաղաքացի Գ. Վահանյանի վերաքննիչ բողոքը եւ Երևան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը թողել է ուժի մեջ: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 20.02.2013թ. թիվ ԵԿԳ/1923/02/11 որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

3. Գիմող կողմը վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ բերում է հետևյալ հիմնավորումները.

«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի բովանդակությունն իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանվել է կիրառվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ՝ այն նույնականացնելով այլ իրավանորմերի դրույթների հետ, մասնավորապես, «կտակի վերացում» եզրույթը մեկնաբանվել է որպես «կտակն անվավեր ճանաչել» եզրույթ՝ այն դեպքում, երբ նոտարն իրավասու չէ անվավեր ճանաչել կտակը, քանի որ նման իրավասությունը վերապահված է դատարանին, ինչպես նաև գործարքի բնույթ ունեցող փաստաթղթի դեպքում «ստորագրության վավերացում» եզրույթը նույնացվել է գործարքի բնույթ չունեցող փաստաթղթի տակ եղած «ստորագրության իսկության վավերացում» եզրույթի հետ:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերի պահանջներին, իրավանորմի կառուցվածքը կուռ չէ՝ տրամաբա-

նորեն միասնական, հաջորդական ու համակարգված, լիակատար ու ավարտված չէ եւ լիովին չի կարգավորում «իրավանորմերով նախատեսված իրավահարաբերությունների բոլոր առանձնահատկությունները»: «Իրավանորմն անհիմն բաժանվել է երկու մասի եւ պարունակում է խիստ կոռուպցիոն ռիսկեր»:

Դիմողը պնդում է, որ «վիճարկվող դրույթների նենգափոխված բովանդակության առկայությունն ու դրանց կամայական մեկնաբանությունը» հակասում են նաեւ միջազգային իրավունքին, Հաագայի կոնվենցիայի՝ «Կտակային հանձնարարությունների ձեւին վերաբերող իրավունքների հակասությունների մասին» դրույթներին՝ դրանով իսկ հակասելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածին:

Փաստարկելով, որ վիճարկվող դրույթների իրավական անորոշությունը, դրանց ներքին եւ արտաքին հակասությունը ոչ միայն խախտում են ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ արդար դատաքննության իր իրավունքները, դիմողը գտնում է, որ դրանք հակասում են նաեւ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքին եւ 14.1-րդ հոդվածով սահմանված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության եւ խտրականության արգելման սկզբունքներին:

Ըստ դիմողի՝ իրավական անորոշությունն իրավակիրառողին տալիս է սուբյեկտիվ մեկնաբանության լայն հնարավորություն, առաջացնելով իրավունքի գերակայության եւ իրավական պետության սկզբունքների պահանջների խախտում՝ դրանով իսկ սահմանափակելով մարդու իրավունքները: Իրավակիրառ պրակտիկայում ստեղծված իրավական անորոշության պայմաններում նոտարները հնարավորություն են ստացել կտակարարի մահից հետո ժառանգներին եւ դատարաններին ոչ հավաստի ու ըստ էության հայեցողական տեղեկություններ տրամադրել կտակի եւ իրավական հետեւանքների ու կտակարարի իրական կամահայտնության մասին: Ստեղծված վիճակը Սահմանադրության սկզբունքների լուրջ խախտման հիմք է, ինչպես նաեւ լի է կոռուպցիոն ռիսկերով, կամայական ու չհիմնավորված դատական ակտեր ընդունելու վտանգով, եւ այդ առումով ձեւավորվել է այնպիսի պրակտիկա, ինչի վերաբերյալ ահազանգել է նաեւ ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղարությունը՝ ՀՀ կառավարություն 02.04.2013թ. ներկայացված թիվ ԱԽ-1/259 գրությամբ:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 8-րդ, 14.1-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին՝ այն հիմնավորմամբ, որ վիճարկվող նորմն իրավական որոշակիության տեսակետից որեւէ իրավական խնդիր չի հարուցում, քանի որ հստակ եւ միանշանակ կերպով, առանց հայեցողական լիազորություններ վերապահելու սահմանում է այն փաստաթղթերի որոշակի շրջանակը, որոնց վրա եղած ստորագրությունների իսկությունը ենթակա է նոտարական վավերացման, դրանք են՝ գործարքի բնույթ չկրող փաստաթղթերը:

Ըստ պատասխանող կողմի՝ վիճարկվող նորմի հետագա շարադրանքն ընդգծում է նոտարական գործողության իմաստը, դերը եւ ապացուցողական նշանակության աստիճանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման փաստաթղթերը գործարքի բնույթ չունեն, հետեւաբար՝ իրավունքներ եւ պարտականություններ առաջացնելուն, փոփոխելուն եւ դադարեցնելուն ուղղված չեն, ուստի նոտարը, փաստաթղթի բովանդակային կողմին չանդրադառնալով, պարզապես հավաստում է հանգամանքն առ այն, որ տվյալ փաստաթուղթն ստորագրված է կոնկրետ անձի կողմից:

Պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ ՀՀ Սահմանադրության այլ դրույթների, մասնավորապես՝ 3-րդ, 8-րդ, 14.1-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածների հետ եւս վիճարկվող դրույթը որեւէ հակասություն չի առաջացնում, քանի որ այն, ըստ էության, չի ենթադրում մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակումներ այն պարզ պատճառով, որ դրանում ամրագրված կարգավորումները վերաբերում են ոչ թե սուբյեկտային որեւէ խմբի, այլ պարզապես առնչվում են փաստաթղթի կոնկրետ տեսակների, որոնք կարող են ներկայացվել ցանկացած ֆիզիկական անձի կողմից, այդպիսով այն նաեւ չի ենթադրում որեւէ խտրականություն կամ խտրական վերաբերմունք, չի խախտում օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը, չի սահմանափակում դատական ատյաններում խախտված իրավունքները վերականգնելու անձի հնարավորությունները:

Պատասխանողը, վերլուծելով վեճի առարկա օրենքի 36, 56 եւ 67-րդ հոդվածների եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289, 290, 1192-րդ հոդվածների իրավակարգավորումների ընդհանուր տրամաբանությունը՝ արձանագրում է, որ «...ինչպես կտակն, այնպես էլ կտակի վերացման մասին գրությունը, եւ ոչ թե գրության վրա առկա ստորագրության իսկությունը, ենթակա է նոտարական վավերացման»: Նշվում է նաեւ, որ «...թե-

րեսս որոշ խնդիրներ են ծագել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի եւ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի դրույթների իրավակիրառական պրակտիկայի ընթացքում»:

Ըստ պատասխանողի՝ «կտակի վերացման ընթացակարգի իրականացման օրենսդրորեն ամրագրված տրամաբանական-իրավական շղթայից տեղի ունեցած ենթադրյալ շեղումներն», որոնք առիթ են տվել դիմումատուին անդրադառնալու վիճարկվող նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու մասին հարցին, սակայն «իրականում իրավակիրառ պրակտիկայում տեղ գտած թերությունները չեն կարող հանգեցնել վիճարկվող դրույթների հակասահմանադրականությանը, եթե դրանք իրենց նորմատիվ բովանդակությամբ եւ պատշաճ կիրառության պարագայում ՀՀ Սահմանադրության հետ հակասություն չունենան»:

5. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասով, 14.1-րդ, 18-րդ, 19-րդ եւ 31-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված է օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքով սեփականության իրավունքի պաշտպանությունն ամեն տեսակ ոտնձգություններից (այդ թվում՝ արդար, արդյունավետ եւ մատչելի դատական պաշտպանության միջոցով), ինչպես նաեւ սեփականատիրոջ անօտարելի իրավունքը՝ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իրեն պատկանող գույքը: Միաժամանակ, որպես սահմանադրաիրավական երաշխիք, դատարանին է վերապահված՝ օրենքով նախատեսված հիմքերով անձին սեփականությունից զրկելու բացառիկ իրավասությունը:

Օրենսդրության խնդիրն է նորմատիվ իրավական կարգավորումներով ապահովել սեփականության եւ, մասնավորապես, կտակի (ժառանգման) իրավունքի իրացման հետ կապված՝ Սահմանադրության վերոհիշյալ նորմերում ամրագրված դրույթների երաշխավորված կիրառումը: Այդ խնդրի անմիջական լուծմանն են կոչված, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի եւ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի համապատասխան նորմերը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71-րդ գլխի նորմերով կարգավորվում են ըստ կտակի ժառանգության հետ կապված հարաբերությունները. սահմանվում են կտակի հասկացությունը եւ այն կազմելու սկզբունքները, կտակը վերացնելու, փոփոխելու եւ լրացնելու, ինչպես նաեւ կտակված գույքն ըստ ժառանգների բաժանելու կարգն ու պայմանները: Օրենսգրքի 1192-րդ հոդվածի համաձայն՝ կտակ է համարվում քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման

վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը: Ըստ նույն հոդվածի՝ կտակը միակողմանի **գործարք է**: Այն քաղաքացու ազատ կամաարտահայտության արդյունք է (օրենսգրքի 1193-րդ հոդված):

Կտակի, **որպես գործարքի**, իրավական բովանդակությունը բացահայտելի է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ, 290-292-րդ հոդվածներից, որոնց ընդհանուր իմաստից հետևում է, որ.

- այն ուղղված է քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն,
- կտակ կնքելու համար անհրաժեշտ եւ բավարար է մեկ կողմի (կտակարարի) կամաարտահայտությունը,
- պարտականություններ է ստեղծում այն կնքած անձի համար,
- կտակի նկատմամբ համապատասխանաբար կիրառվում են պարտավորությունների եւ պայմանագրերի մասին ընդհանուր դրույթները՝ այնքանով, որքանով չեն հակասում օրենքին, այդ գործարքի միակողմանի բնույթին ու էությանը:

Վերոհիշյալ օրենսգրքի 71-րդ գլխի մի շարք նորմերի (1202-րդ, 1203-րդ, 1205-րդ, 1211-րդ հոդվածներ) իրավական ընդհանուր բովանդակությունից հետևում է նաև, որ.

- կտակը պետք է կազմվի գրավոր ձևով, որի չպահպանելը հանգեցնում է կտակի անվավերության, ընդ որում, կտակն անվավեր ճանաչելու բացառիկ իրավասությունը պատկանում է դատարանին,
- **կտակը՝ որպես գործարք, ենթակա է նոտարական վավերացման՝** նոտարիատի մասին օրենքով սահմանված կարգով,
- կտակարարն իրավունք ունի կտակ կազմելուց հետո ցանկացած ժամանակ վերացնել, փոփոխել կամ լրացնել իր կտակը:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի՝ կտակի հետ կապված եւ սույն գործով դիմումի առարկային առնչվող հարաբերությունները կարգավորող նորմերի (5-րդ, 56-րդ, 63-րդ հոդվածներ) իրավական ընդհանուր բովանդակությունից հետևում է, որ.

- կտակի կամ նրա բովանդակության վերաբերյալ տեղեկություններ կարող են հրապարակվել միայն կտակարարի մահից հետո,
- վավերացման են ենթակա գործունակ անձանց կտակները,
- կտակը կարող է վերացվել կամ փոփոխվել կտակարարի կողմից համապատասխան դիմում տալու կամ նոր կտակ կազմելու ձևով,
- ըստ կտակի ժառանգության իրավունքը հավաստվում է համապատասխան վկայագրով:

Կարելու է հանգամանք է նաև արձանագրել, որ կտակի հետ կապված հարաբերությունների՝ Հայաստանի Հանրապետության անունից

հանդես եկող իրավասուբյեկտը, նուտարը (կամ՝ նրա կարգավիճակին հավասարեցված անձը) իր գործունեությունը (հանրային ծառայությունները) իրականացնում է անկախության եւ միայն օրենքին ենթարկվելու սկզբունքով («Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 3-րդ եւ 4-րդ հոդվածներ):

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածն իր հերթին տարանջատում է **գործարքների, այդ թվում՝ կտակի**, վավերացման գործառույթը /մաս 1-ին, կետ 1-ին/ փաստաթղթերի վրա եղած ստորագրությունը վավերացնելու գործառույթից /մաս 1-ին, կետ 6-րդ/:

Այսպիսով, կտակի հետ կապված հարաբերությունները կարգավորող վերոհիշյալ իրավանորմերի իրավաբանական կապին ընդհանուր վերլուծությունը փաստում է, որ օրենսդրությամբ նախատեսված են իրավակարգավորման համապատասխան սկզբունքներ, ընթացակարգեր, միջոցներ ու ձեւեր, որոնք կոչված են ապահովելու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի եւ, մասնավորապես, սեփականատիրոջ՝ իր գույքը կտակելու իրավունքի պաշտպանությունը:

Կտակը վերացնելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածով (4-րդ եւ 5-րդ մասեր) եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածով, որոնց համաձայն՝ կտակարարն իրավունք ունի կտակ կազմելուց հետո ցանկացած ժամանակ վերացնել իր կտակը: Այդպիսի մտադրությունը կտակարարը, ըստ հիշյալ նորմերի, իրացնում է.

ա/ նոտարին **դիմում** («Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մաս), **հայտարարություն** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածի 6-րդ մաս) տալու կամ,

բ/ նոր կտակ կազմելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածում (6-րդ մաս) ամրագրված է նորմատիվ պահանջ, համաձայն որի՝ կտակը վերացնելու մասին դիմումը պետք է տրվի (հայտարարությունն արվի) կտակ կազմելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձեւով, այսինքն՝ օրենսգրքի 1203-րդ հոդվածի կանոններին համապատասխան, այն է՝ **կազմվի գրավոր, նշվի հայտարարություն անելու (դիմումը տալու) վայրը եւ ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի եւ վավերացվի նոտարի կողմից:** Այսինքն՝ նորմատիվ այսպիսի պահանջների առկայությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ օրենսդիրը կարելուք իրավական նշանակություն է հաղորդել կտակը վերացնելու վերաբերյալ դիմումին (հայտարարությանը)՝ անձի սահմանադրական (նաեւ՝ քա-

ղաքացիական) իրավունքների իրացման երաշխավորման առումով, դիտարկելով այն որպես **իրավաբանական փաստ**՝ իրավակիրառական պրակտիկայում այդ իրավունքների ծագման կամ դադարման պահն օրենսդրությամբ սահմանված կարգով ամրագրելու համար:

Կտակը վերացնելու վերաբերյալ դիմումի (հայտարարության) իրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից կարելու է նաեւ այն հանգամանքը, որ այդ դիմումը, ինչպես եւ կտակը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1192-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված նորմատիվ սկզբունքին համապատասխան ունի **միակողմ գործարքի հատկանիշներ**, քանի որ միակողմ կամաարտահայտմամբ ուղղված է քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների դադարմանը, իսկ տվյալ դեպքում՝ նախկին կտակով ժառանգման ենթակա գույքը որպես սեփականություն ձեռք բերելու **իրավունքից զրկելուն**: Այլ կերպ, եթե կտակով կոնկրետացված են ժառանգման ենթակա գույքը եւ դրա նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պայմանները եւ ժառանգորդը (ժառանգորդները), ապա կտակը վերացնելու վերաբերյալ դիմումով (հայտարարությամբ) կտակի առարկա հանդիսացող գույքի ժառանգորդի (ժառանգորդների) սեփականության իրավունքը, որը կառաջանար կտակարարի մահվանից հետո, դադարում է: Հետեւաբար, կտակը վերացնելու վերաբերյալ դիմումը (հայտարարությունը) որպես քաղաքացիաիրավական ինստիտուտ, կարելու է երաշխիք է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքի իրացման համար, եւ իրավակիրառական պրակտիկայում այդ ինստիտուտը պետք է մեկնաբանվի ու կիրառվի իր՝ սահմանադրաիրավական վերոհիշյալ բովանդակությանը համապատասխան: Այն միանշանակ որոշակի կերպով է երաշխավորում սեփականատիրոջ՝ իր գույքը հայեցողաբար (ազատ կամաարտահայտմամբ) կտակելու իրավունքը, քանի որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով եւ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կտակի եւ դրա հետ կապված քաղաքացիաիրավական մյուս գործողությունների (կտակը վերացնելու, փոփոխելու եւ այլն) օրինականության նկատմամբ իրականացվող նոտարական հսկողությունը կոչված է լրացուցիչ երաշխիք հանդիսանալու ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ հոդվածում ամրագրված իրավունքն օրենքով սահմանված կարգով իրացնելու համար: Նման եզրահանգման հիմք է նաեւ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի իրավադրույթն այն մասին, համաձայն որի. «... Կտակի վերացումը ... **վավերացնում է** հիմնական կտակը վավերացրած նոտարը»: Ընդ որում, հիշյալ նորմը

կտակը վերացնելու մասին դիմումի (հայտարարության) այլ վավերապայմաններ չի նախատեսում:

Այսպիսով, սահմանադրական դատարանը գտնում է, որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի՝ սույն գործով վիճարկվող 67-րդ հոդվածի նորմերը տվյալ իրավահարաբերությունների կարգավորման շրջանակներում ինքնին սահմանադրականության խնդիր չեն առաջացնում եւ չեն առնչվում գործարքի բնույթ ունեցող իրավահարաբերություններին: Կտակի հետ կապված գործարքների առնչությամբ այն չի կարող կիրառվել նոտարների կողմից, քանի որ օրենքով հստակ ամրագրված է, որ հիշյալ հոդվածը վերաբերում է այն փաստաթղթերի վրա եղած ստորագրության իսկության վավերացմանը, **որոնք չունեն գործարքի բնույթ**: Օրենքի կիրառման համատեքստում այս հանգամանքը կարելուք նշանակություն ունի:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, մի կողմից, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան դիմողի նկատմամբ վերջնական դատական ակտով վեճի առարկա նորմն անմիջականորեն չի կիրառվել, մյուս կողմից՝ նույն դատական ակտում գործնականում անտեսվել է նոտարի կողմից գործարքի բնույթ ունեցող իրավահարաբերություններում օրենքի 67-րդ հոդվածի կիրառման փաստը:

Կտակի եւ դրա վերացման ինստիտուտի կիրառման միջազգային իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ միայն անձանց ստորագրության իսկության նոտարական վավերացման կարգ նախատեսված է այն դեպքերում, երբ **փաստաթղթում շարադրվածը գործարքի բնույթ չի կրում**: Միեւնույն ժամանակ, խնդիր է դրվում նոտարի առջեւ ստուգել փաստաթղթի բովանդակության համապատասխանությունն օրենսդրության պահանջներին (Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Լատվիա, Ղազախստան, Կոսովո, Վրաստան, Գերմանիա եւ այլն):

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ կտակների հետ կապված իրավահարաբերությունների առնչությամբ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի փաստացի կիրառումը եւ այդ երեւույթի նկատմամբ դատական պրակտիկայում առկա մոտեցումները, ինչպես նաեւ նույն օրենքի 56-րդ հոդվածի իրավակարգավորումների ոչ հստակությունը կարող են մարդկանց իրավունքների խախտման լուրջ պատճառ դառնալ: Խնդիրը ոչ միայն իրավակիրառական պրակտիկային է առնչվում, այլեւ օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն է

ենթադրում, ինչպես նաև պահանջում է կառուցակարգային համարժեք լուծումներ՝ կտակների միասնական շտեմարանի գործուն համակարգ ներդնելու առումով:

ՀՀ սահմանադրական դատարանը գործի հանգամանքների ի պաշտոնե պարզման դատավարական սկզբունքի շրջանակներում հիշյալ հիմնախնդրին կարող էր համակարգային ամբողջականության մեջ անդրադառնալ վերացական ընթացակարգով գործի քննության շրջանակներում: Սակայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական դատարանն անհատական դիմումները կարող է դատաքննության առարկա դարձնել միայն տվյալ նորմերով սահմանված իրավակարգավորումների շրջանակներում: Գործի քննությունը հանգեցրեց այն հետետությանը, որ դիմողի նկատմամբ վերջնական դատական ակտով «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի՝ վեճի առարկա 67-րդ հոդվածն անմիջականորեն չի կիրառվել:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով, 60-րդ եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացի Գրիգորի Վահանյանի դիմումի հիման վրա՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**25 փետրվարի 2014 թվականի
ՍԳՈ-1140**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 75-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 մարտի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Ա. Վարդեանյանի, նույն վարչության մասնագետ Ս. Տերզիկյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 04.11.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ քրեական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2003 թվականի ապրիլի 18-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի ապրիլի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ից:

Օրենսգրքի՝ «Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետեւանքով» վերտառությամբ 75-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Վաղեմության ժամկետի կիրառման հարցն այն անձի նկատմամբ, ով ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանք է կատարել, լուծում է դատարանը: Եթե դատարանը հնարավոր չի գտնում վաղեմության ժամկետն անցնելու հետեւանքով անձին ազատել քրեական պատասխանատվությունից, ապա ցմահ ազատազրկում չի կիրառվում»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասը փոփոխության չի ենթարկվել:

2. Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար վկայակոչելով իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-753 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, իրավական որոշակիության եւ դատական ակտերի պատճառաբանվածության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված համապատասխան իրավական դիրքորոշումները՝ դիմողը ներկայացնում է, մասնավորապես, հետեւյալ փաստարկները. «Օրենսդիրը, սահմանելով, որ վաղեմության ժամկետի կիրառման հարցն այն անձի նկատմամբ, ով ցմահ ազատազրկմամբ հանցանք է կատարել, լուծում է դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի, ինչպես նաեւ այլ դրույթների կարգավորումների շրջանակներում չի սահմանել հստակ եւ կանխատեսելի չափանիշներ, որոնցով դատարանը պետք է առաջնորդվի կամ այն հանգամանք-

ները, որոնք դատարանը պետք է հաշվի առնի որոշում կայացնելուց: Նախատեսելով այդպիսի որոշում կայացնելու լիազորություն եւ չսահմանելով որոշումը կայացնելու հստակ չափանիշներ՝ օրենքի վիճարկվող նորմը բացարձակ հայեցողություն է տվել դատարաններին»:

Նշվում է նաեւ, որ «Քրեական օրենսգիրքը նախատեսում է բազմաթիվ հարցեր, որոնց լուծումը թողնված է դատարանին, սակայն յուրաքանչյուր դեպքում, երբ որեւէ այլընտրանքային որոշման կայացումը օրենքով թողնվում է դատարանին, նույն օրենքը միաժամանակ սահմանում է այն չափանիշները եւ/կամ պայմանները, որոնցով պետք է առաջնորդվի դատարանը՝ իր հայեցողական լիզորությունները կիրառելիս: Մինչդեռ չափանիշների բացակայության դեպքում դատական հայեցողությունը կարող է հանգեցնել ոչ պատճառաբանված որոշումների կայացմանը:

... ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգավորումը, համաձայն որի վաղեմության ժամկետի կիրառման հարցն այն անձի նկատմամբ, ով ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանք է կատարել, *լուծում է դատարանը՝* առաջացնում է իրավական որոշակիության սկզբունքի հետ անհամապատասխանության ակնհայտ ռիսկ եւ որոշակի պարտադիր չափանիշների եւ/կամ հանգամանքների բացակայությունը (որոնց վրա կհիմնվեր դատարանի որոշումը) արգելափակում է անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը»:

Դիմողը ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառման շրջանակներում որպէս ոչ պատճառաբանված դատական ակտի կայացման օրինակ է ներկայացնում ԵԱՆԳ 0017/01/11 քրեական գործը, որի շրջանակներում Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, ուսումնասիրելով ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառման վերաբերյալ միջնորդությունը, նշել է. «Դատարանը, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված կարգով՝ վաղեմության ժամկետն անցնելու հետեւանքով քրեական պատասխանատվությունից ազատելու հարցին, հնարավոր չգտավ վաղեմության ժամկետն անցնելու հետեւանքով ամբաստանյալին ազատել քրեական պատասխանատվությունից եւ գտավ, որ նրա նկատմամբ պետք է նշանակվի ազատազրկման ձեռով պատիժ, հաշվի առնելով նրա կատարած հանցագործության բնույթը եւ վտանգավորության աստիճանը»:

Այս կապակցությամբ դիմողը փաստարկում է, որ դատարանի՝ որպէս հիմնավորում նշված՝ «հանցագործության բնույթ» եւ «վտանգավորության աստիճան» եզրույթները չեն կարող համարվել պատշաճ հիմ-

նավորում այն պարզ տրամաբանությամբ, որ վիճարկվող դրույթի կարգավորման ներքո գտնվող բոլոր արարքները հանդիսանում են առանձնապես ծանր հանցագործություններ, ուստի դրանց բնույթը եւ վտանգավորության աստիճանն ակնհայտ են:

3. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը նշում է, որ դիմողի մատնանշած իրավական անորոշությունը բացահայտելու համար հարկ է օրենսգրքի վիճարկվող դրույթը դիտարկել օրենսգրքի մյուս դրույթների հետ համադրված: Այս կապակցությամբ պատասխանողը նշում է, որ այնպես, ինչպես հանցանք կատարած անձի նկատմամբ տասը կամ ավելի տարի ժամկետով ազատազրկում նշանակելու եւ ցմահ ազատազրկում նշանակելու հնարավոր հիմնական պատիժներից մեկի ընտրության ժամանակ դատարանը կաշկանդված է ՀՀ քրեական օրենսգրքի 60 եւ 63-րդ հոդվածների պահանջներով, այնպես էլ օրենսգրքի վիճարկվող նորմի կիրառման ժամանակ դատարանը պետք է առաջնորդվի ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածներով, ինքնին հանրային բարձր վտանգավորություն ունեցող արարքի կատարման, իրագործման առանձնահատկություններով եւ այն կատարող անձին բնութագրող հատկանիշներով՝ այդ ամենը դիտարկելով ծագած բացասական հետեւանքների ծավալի եւ բնույթի լույսի ներքո:

Պատասխանողի կարծիքով՝ «Դիմողն անդրադառնալով վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցին հաշվի չի առել օրենսգրքի այլ հոդվածներում առկա կարգավորումները, օրենսգրքի ընդհանուր եւ հատուկ մասերի միջեւ գոյություն ունեցող կուռ իրավական փոխկապվածությունը»: Եվ՝ «... եթե բարձրացվում է վիճարկվող նորմի ոչ որոշակի լինելու խնդիրը, կամ դատարանին վերապահված լիազորությունը՝ կայացնելու վաղեմության ժամկետների կիրառելիության վերաբերյալ համապատասխան որոշում, դիտարկվում է բացառապես վիճարկվող նորմի համատեքստում՝ այն ընկալելով որպես առանձին, քրեական օրենսգրքի ընդհանուր կարգավորման հայեցակարգից ու սկզբունքներից դուրս դրույթ, ապա կարող է առաջանալ թյուր ընկալում դատարանին վերապահված հայեցողական լիազորությունների «բացառիկության» վերաբերյալ եւ կարող է ծագել ոչ ճիշտ պատկերացում, որը տարբեր է քրեական օրենսդրության կարգավորման համակարգային խնդիրներից ու առաջնահերթություններից»:

Պատասխանողը նշում է նաև, որ օրենսգրքի վիճարկվող նորմում օրենսգրքի 63-րդ հոդվածով արդեն իսկ ամրագրված ծանրացնող հանգամանքները չարտացոլելը չի կարող առիթ հանդիսանալ այն իրավական որոշակիությունից զուրկ համարելու կամ դատարանին վերապահված հայեցողական լիազորության սահմաններն անտեսելու համար:

Անդրադառնալով, որպես վիճարկվող դրույթի կիրառման հետեւանքով ոչ պատճառաբանված դատական ակտերի կայացման օրինակ, դիմողի կողմից ներկայացված ԵԱՆԳ- 0017/01/11 քրեական գործով Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2012 թվականի ապրիլի 23-ի դատավճռին՝ պատասխանողը գտնում է, որ հարկ է տարբերակել դատական ակտի պատճառաբանվածությունը դատական ակտի հիմնավորվածությունից:

Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը, 394 եւ 419-րդ հոդվածների 1-ին մասերը՝ պատասխանողը գտնում է, որ դատական ակտի պատճառաբանվածությունը կարելի է սակայն գործի ճիշտ հանգուցալուծման համար երկրորդական պահանջ է եւ չի հանգեցնում դատական ակտի բեկանման: Հետեւաբար, ըստ պատասխանողի՝ դիտարկվող դատավճռում բավարար պատճառաբանական տեքստի բացակայությունը չի ենթադրում կիրառված նորմի հակասություն ՀՀ Սահմանադրության հետ:

4. Դիմումում բարձրացվող իրավական որոշակիության խնդիրը դիմողը պայմանավորում է վեճի առարկա դրույթի շրջանակներում դատարանին վերապահված հնարավոր «բացարձակ» հայեցողության առկայությամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա իրավահարաբերություններում դատական հայեցողությունը պետք է դիտարկել ոչ թե որպես սուբյեկտիվ կամքի դրսևորում, այլ օրինական տարբերակներից մեկի իրավաչափ ընտրության հնարավորություն: Դատարանը, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասի՝ վեճի առարկա դրույթի, **նախ**՝ գործ ունի անձի հետ, ով ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանք է կատարել: Օրենսգրքի բազմաթիվ հոդվածներով կանոնակարգվում են ցմահ ազատազրկման հետ կապված իրավահարաբերությունները /հոդվածներ՝ 19/5, 49/10, 50/1, 60, 66/4, 67/6, 76/5,7, 81/4, 104/2, 305, 387 եւ այլն/: **Երկրորդ**՝ օրենսգրքի այլ հոդվածների հետ համադրված վերլուծության արդյունքում, գործի փաստական հանգամանքները քննության առնելու հիման վրա դատարանին

տրվում է օրենքով նախատեսված երկու հնարավորություններից մեկի ընտրության իրավասություն՝ հնարավոր գտնել վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով անձին ազատ արձակելը կամ, եթե դատարանը դա հնարավոր չի գտնում, ապա չկիրառել ցմահ ազատազրկում: Սա ոչ թե դատավորի սուբյեկտիվ կամքի արտահայտություն է, այլ օրենքով նախատեսված արդարադատական օբյեկտիվ գործընթացի արդյունք: Նույն տրամաբանությունից է բխում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումը: Նկատի ունենալով, որ ցմահ ազատազրկման հիմքերը կարող են տարբեր լինել, ապա տվյալ իրավակարգավորումների պայմաններում դատարանին հնարավորություն է տրվում օրենքով նախատեսված իրավաչափ տարբերակների միջև ընտրություն կատարել՝ գործի փաստական հանգամանքների դատաքննության հիման վրա:

ՀՀ սահմանադրական դատարանն անհիմն է համարում վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությամբ պայմանավորված՝ ոչ պատճառաբանված դատական ակտի կայացման վերաբերյալ փաստարկները, քանի որ ոչ պատճառաբանված դատական ակտի կայացումը պայմանավորված է ոչ թե վիճարկվող նորմի հնարավոր հակասահմանադրականությամբ, այլ տվյալ նորմի՝ դատարանի կողմից կիրառման իրավաչափությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ կողմերի միջնորդությունների եւ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պահանջների վերաբերյալ ընդունված որոշումները պետք է լինեն պատճառաբանված: Սա դատավարական գործընթացի հստակ պահանջ է եւ դատարանին որեւէ հայեցողությամբ չի օժտում:

Ինչ վերաբերում է դիմողի այն փաստարկին, որ վիճարկվող նորմը չի սահմանել հստակ եւ կանխատեսելի չափանիշներ, որոնցով դատարանը պետք է առաջնորդվի, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե վիճարկվող նորմն ընկալվում է որպես առանձին, քրեական օրենսգրքի ընդհանուր կարգավորման տրամաբանությունից դուրս դրույթ, ապա կարող է առաջանալ թյուր ընկալում դատարաններին վերապահած «բացարձակ» հայեցողական լիազորությունների վերաբերյալ: Այնինչ, ճիշտ այնպես, ինչպես հանցանք կատարած անձի նկատմամբ տասը կամ ավելի տարի, կամ ցմահ ազատազրկման ժամկետով պատիժ նշանակելու ժամանակ, դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր սկզբունքներով եւ, մասնավորապես, 60-63-րդ հոդվածների պահանջներով: Բացի դրանից, վեճի առարկա դրույթը լուծում է կարելու մի խնդիր եւս, անկախ այն բանից, որ անձը

ցմահ ազատագրկմամբ պատժվող հանցանք է կատարել եւ դատարանը հնարավոր չի գտնում վաղեմության ժամկետն անցնելուց հետո անձին ազատ արձակել, ապա, ըստ վեճի առարկա դրույթի եւ օրենսգրքի 81-րդ հոդվածի 5-րդ մասի՝ չի կարող նաեւ ցմահ ազատագրկում կիրառել: Այսպիսի կարգավորումն իրավունքների պաշտպանության օրենսդրական մոտեցում է:

Կարելու է նաեւ նկատի ունենալ, որ նման մոտեցումը կամ տարբեր հանցանքների առնչությամբ վաղեմության ժամկետի սահմանումը, ինչպես նաեւ դրա բացառումը, օրենսդրի իրավասության հարցն է: Դատարանին գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով եւ համապատասխան արդարադատական ընթացակարգով տրվում է միայն օրենքով նախատեսված տարբերակներից ընտրություն կատարելու հնարավորություն:

5. Վիճարկվող դրույթի կիրառման հետեւանքով հնարավոր ոչ պատճառաբանված դատական ակտերի կայացման՝ դիմողի կողմից բերված օրինակի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, **նախ**՝ իրավանորմի հնարավոր ոչ իրավաչափ կիրառումը ՀՀ գործող օրենսդրությամբ ինքնին սահմանադրական արդարադատության առարկա լինել չի կարող: **Երկրորդ**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից կամ դատից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից: Ընդ որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասը տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից՝ քսան տարի, եւ վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ»: Գործում առկա նյութերի ուսումնասիրությունից բխում է, որ նախաքննության մարմնի 2000 թվականի հունվարի 23-ի որոշմամբ թիվ 17203890 քրեական գործով վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով կասեցվել է՝ Ա. Մելքոնյանի գտնվելու վայրը պարզված չլինելու պատճառաբանությամբ: Ա.Մելքոնյանը հայտնաբերվել է 2010 թվականի նոյեմբերի 18-ին եւ նույն օրը թիվ 17203890 քրեական գործի վարույթը վերսկսվել է: Այսուհանդերձ, այս հանգամանքները նույնպես վեճի առարկա նորմի սահմանադրականությանը չեն առնչվում: Դրանք միայն քրեական գործի լուծման իրավաչափությունը վիճարկելու հիմք կարող են հանդիսանալ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 մարտի 2014 թվականի
ՍԳՈ-1141**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 5, 7, 8, 37, 38, 45, 49 ԵՎ 86-ՐԳ
ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ներկայացուցիչներ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ա. Մինասյանի, իրավաբան Ա. Չեյնալյանի եւ փաստաբան Մ. Խաչատրյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հ. Հակոբյանի, Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

դատաքննությանը հրավիրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ներկայացուցիչներ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար

Ա. Ասատրյանի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Թամազյանի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Կ. Հակոբյանի,

դատաքննությանը հրավիրված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական ներկայացուցիչներ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կարգավորման վարչության պետ Մ. Աբրահամյանի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կարգավորման վարչության արժեթղթերի կարգավորման բաժնի մասնագետ Վ. Շահնազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5, 7, 8, 37, 38, 45, 49 եւ 86-րդ հոդվածների սահմանադրականության վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի թվով 36 պատգամավորների՝ 2013 թվականի դեկտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով սույն գործով զեկուցողների համատեղ զեկույցը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական ներկայացուցիչների պարզաբանումները, ինչպես նաեւ հետազոտելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքներն ու նորմատիվ իրավական ակտերը, կենսաթոշակային բարեփոխումների միջազգային փորձը, գործում առկա փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության

Ազգային ժողովի կողմից՝ 2010 թվականի դեկտեմբերի 22-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2010 թվականի դեկտեմբերի 30-ին եւ ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 9-ին՝ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան:

Օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ նույն օրենքով սահմանված պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտավորությանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտել 2014 թվականի հունվարի 1-ից:

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ «Պարտադիր կուտակային բաղադրիչի պարտադիր մասնակիցները» վերտառությամբ **5-րդ հոդվածը սահմանում է.**

«1. Պարտադիր կուտակային բաղադրիչին պարտադիր կարգով մասնակցում են 1974 թվականի հունվարի 1-ին եւ դրանից հետո ծնված՝

ա) վարձու աշխատողները,

բ) նոտարները,

գ) անհատ ձեռնարկատերերը:

Ընդ որում, սույն մասում նշված անձինք պարտավոր են կուտակային վճարներ կատարել նաեւ պայմանագրային եկամուտներից՝ սույն օրենքով սահմանված դրույքաչափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասը տարածվում է նաեւ 1974 թվականի հունվարի 1-ին եւ դրանից հետո ծնված այն օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց վրա, ովքեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում են բազային եկամուտ, կամ սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի առաջին պարբերության համաձայն՝ իրականացնում են «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության որեւէ տեսակ»:

Օրենքի 5-րդ հոդվածը փոփոխությունների է ենթարկվել 12.11.2012թ. ընդունված՝ ՀՕ-207-Ն եւ 10.06.2013թ. ընդունված՝ ՀՕ-67-Ն Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Օրենքի՝ «Պարտադիր կուտակային վճարի դրույքաչափերը» վերտառությամբ **7-րդ հոդվածը սահմանում է.**

«1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված մասնակիցների համար, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի առաջին պարբերությունում նշված անձանց, կուտակային վճարները կատարվում են բազային եկամտի 10% դրույքաչափով հետեւյալ կերպ.

1) մասնակից հանդիսացող վարձու աշխատողը, օտարերկրացին ու քաղաքացիություն չունեցող անձը, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում է բազային եկամուտ, եւ որի բազային եկամուտը ամսական կտրվածքով չի գերազանցում 500000 դրամը, պարտավոր է կատարել ամսական կուտակային վճար իր բազային եկամտի 5%-ի չափով, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած 5%-ը մասնակցի համար (օգտին) վճարվում է պետական բյուջեից.

2) մասնակից հանդիսացող վարձու աշխատողի, օտարերկրացու ու քաղաքացիություն չունեցող անձի համար (օգտին) (որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում է բազային եկամուտ, եւ որի բազային եկամուտը ամսական կտրվածքով գերազանցում է 500000 դրամը) պետական բյուջեից մասնակցի համար (օգտին) կատարվող ամսական վճարը կազմում է 25000 դրամ, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած գումարը ամսական վճարում է մասնակիցը.

3) «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող մասնակիցը պարտավոր է ամսական կատարել կուտակային վճար 5000 դրամի չափով, որը համարվում է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակներից ստացվող եկամուտներից հաշվարկված կուտակային վճարի գծով վերջնական պարտավորություն, իսկ ամսական 5000 դրամի չափով մասնակցի համար (օգտին) վճարվում է պետական բյուջեից:

Սույն կետի առաջին պարբերությունում չներառված անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող մասնակիցը, որի բազային եկա-

մուտը տարեկան կտրվածքով չի գերազանցում 6000000 դրամը, պարտավոր է տարեկան կատարել կուտակային վճար իր բազային եկամտի 5%-ի չափով, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած 5%-ը մասնակցի համար (օգտին) վճարվում է պետական բյուջեից.

4) անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող մասնակցի համար (օգտին) (որի բազային եկամուտը տարեկան կտրվածքով գերազանցում է 6000000 դրամը), պետական բյուջեից կատարվող տարեկան վճարը կազմում է 300000 դրամ, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած գումարը տարեկան վճարում է մասնակիցը:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված մասնակիցների պայմանագրային եկամուտներից, ինչպես նաև որպես ինքնազբաղված անձ՝ ստացված եկամուտներից վճարվող կուտակային վճարը կատարվում է 5% դրույքաչափով՝ առանց պետական բյուջեից հավելյալ վճար կատարելու: Ընդ որում, մասնակիցը, որպես ինքնազբաղված անձ, ստացված եկամուտներից կուտակային վճար կատարում է կամավորության սկզբունքով:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած մասնակիցը կուտակային վճարներ է կատարում բազային եկամտի եւ պայմանագրային եկամուտների, ինչպես նաև որպես ինքնազբաղված անձ՝ ստացված եկամուտների 5%-ի չափով: Նրա համար (օգտին) պետական բյուջեից հավելյալ վճար չի կատարվում: Ընդ որում, մասնակիցը, որպես ինքնազբաղված անձ, ստացված եկամուտներից կուտակային վճար կատարում է կամավորության սկզբունքով:

3.1. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած մասնակիցը պարտավոր է ամսական կատարել կուտակային վճար 5000 դրամի չափով, որը համարվում է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառու-

թյան հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակներից ստացվող եկամուտներից հաշվարկված կուտակային վճարի գծով վերջնական պարտավորություն:

4. Եթե 1974 թվականից հետո ծնված եւ պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած պայմանագրային եկամուտ ստացողները եւ ինքնազբաղված անձինք դառնում են վարձու աշխատող, նոտար կամ անհատ ձեռնարկատեր, ապա նրանք կուտակային վճարը կատարում են սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված կարգով: Եթե պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից վարձու աշխատողը, նոտարը կամ անհատ ձեռնարկատերը դառնում են ինքնազբաղված անձ կամ պայմանագրային եկամուտ ստացող, ապա նրանք պայմանագրային եկամուտներից եւ, որպես ինքնազբաղված անձինք, ստացված եկամուտներից կուտակային վճարը կատարում են սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

5. Մասնակցի՝ սույն օրենքով սահմանված բազային եկամուտ մի քանի աղբյուրներից միաժամանակ ստանալու դեպքում կուտակային վճարները կատարելու պարտավորությունը եւ կուտակային վճարի դրույքաչափը կիրառվում են յուրաքանչյուր առանձին դեպքում՝ սույն օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված եւ մի քանի աղբյուրներից միաժամանակ բազային եկամուտ ստացող մասնակիցների համար (օգտին) պետության կողմից կատարվող ընդհանուր վճարները չեն կարող գերազանցել սույն հոդվածի 1-ին մասով պետության վճարների համար սահմանված չափերը: Մի քանի աղբյուրներից միաժամանակ բազային եկամուտ ստացող մասնակիցը պարտավոր է յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտից հետո մինչեւ հաջորդ տարվա մայիսի 31-ը լրավճարել իր համար կուտակային վճար՝ իր տարեկան բազային եկամտի 10 տոկոսի, այդ բազային եկամտից հարկային գործակալների կողմից արդեն պահված կուտակային վճարների եւ պետության կատարած համապատասխան վճարների տարբերության չափով:

Սույն մասում նշված մասնակիցը լրավճարման ենթակա կուտակային վճարի գումարը կարող է վճարել յուրաքանչյուր ամիս՝ իր ամսական բազային եկամտի 10 տոկոսի եւ այդ բազային եկամտից հարկային գործակալների կողմից արդեն պահված կուտակային վճարների, ինչպես նաեւ տվյալ ամսվա համար պետության կատարած համապատասխան վճարի տարբերության չափով:

6. Կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո մասնակիցը շարու-

նակում է կատարել կուտակային վճարներ՝ մինչև սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դիմում ներկայացնելը:

7. Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակիցը դադարում է կուտակային վճար կատարելը, եթե՝

1) հարկային մարմին է ներկայացնում դիմում կուտակային վճար կատարելը դադարեցնելու վերաբերյալ, կամ

2) մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնում է դիմում կուտակային կենսաթոշակ ստանալու վերաբերյալ:

8. Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից կուտակային վճար կատարելը դադարեցնելու վերաբերյալ դիմումը հարկային մարմին ներկայացնելու կարգը, դիմումի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Վարձու աշխատողը եւ պայմանագրային եկամուտ ստացող անձը դիմումը հարկային մարմին են ներկայացնում գործատուի միջոցով:

9. Մասնակիցների ռեեստրը վարողը մասնակցի կողմից կուտակային կենսաթոշակ ստանալու դիմում ներկայացնելու մասին տեղեկացնում է հարկային մարմնին, իսկ հարկային մարմինը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ գործատուին:

10. Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակիցը կուտակային վճար կատարելը դադարեցնում է՝

1) աշխատավարձից ու դրան հավասարեցված այլ վճարումներից եւ պայմանագրային եկամուտներից՝ դիմումը հարկային մարմին ներկայացնելու նպատակով գործատուին ներկայացնելու կամ մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

2) ձեռնարկատիրական եւ նոտարական գործունեությունից, ինչպես նաեւ որպես ինքնագրադրված՝ ստացված եկամուտներից՝ դիմումը հարկային մարմին ներկայացնելու նպատակով գործատուին ներկայացնելու կամ մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնելու տարվա հունվարի 1-ից:

11. Մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կուտակային վճարի դրույքաչափը սահմանվում է բազային եկամտի 5 %-ի չափով, իսկ մասնակցի համար (օգտին) պետական բյուջեից կուտակային վճարումներ չեն կատարվում»:

Օրենքի 7-րդ հոդվածը փոփոխությունների է ենթարկվել 12.11.2012թ. ընդունված՝ ՀՕ-207-Ն, 10.06.2013թ. ընդունված՝ ՀՕ-67-Ն եւ 12.12.2013թ. ընդունված՝ ՀՕ-132-Ն Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Օրենքի՝ «Պարտադիր կուտակային վճարներ կատարելը» վերտառությամբ 8-րդ հոդվածը սահմանում է.

«1. Վարձու աշխատող եւ պայմանագրային եկամուտ ստացող մասնակիցների համար (անունից) կուտակային վճարները հաշվարկելու եւ փոխանցելու պարտականությունը կրում են գործատուները՝ որպես հարկային գործակալ:

2. Գործատուները օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով էլեկտրոնային եղանակով հարկային մարմնում գրանցում են իրենց հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողներին եւ պայմանագրային եկամուտ ստացողներին, ինչպես նաեւ, որպես հարկային գործակալ, «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եկամտային հարկը հաշվարկելու եւ վճարելու համար սահմանված ժամկետներում, սույն օրենքով սահմանված դրույքաչափով հաշվարկում եւ փոխանցում են մասնակից հանդիսացող վարձու աշխատողների եւ պայմանագրային եկամուտ ստացողների կուտակային վճարները:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարկային գործակալ հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհամարվող կազմակերպությունները գործատուի համար սույն կետով սահմանված ժամկետում սույն օրենքով սահմանված դրույքաչափով հաշվարկում եւ փոխանցում են մասնակից հանդիսացող վարձու աշխատողների եւ պայմանագրային եկամուտ ստացողների կուտակային վճարները: Այս դեպքում հարկային գործակալը «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում պարտադիր կուտակային վճարի տարեկան անձնավորված հաշվարկ:

3. Գործատուները «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով հարկային մարմին են ներկայացնում անձնավորված հաշվարկ:

4. Նոտարները, անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղված անձինք, ինչպես նաեւ պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակից հանդիսացող վարձու աշխատողները եւ պայմանագրային եկամուտ ստացողները՝ որպես ինքնազբաղված անձինք ստացման ենթակա եկամուտներից ինքնուրույն հաշվարկում եւ փոխանցում են կուտակային վճարները տարեկան կտրվածքով՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում:

Եթե գործատուն ազատված է հարկային գործակալի պարտականություններից, ապա պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադր

րիչի մասնակից հանդիսացող վարձու աշխատողը եւ պայմանագրային եկամուտ ստացողը կուտակային վճարը հաշվարկում եւ փոխանցում են ինքնուրույն՝ գործատուի համար սահմանված ժամկետներում:

5. Նոտարները, անհատ ձեռնարկատերերը եւ ինքնագրադրված անձինք «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով հարկային մարմին են ներկայացնում անձնավորված հաշվարկ:

Սույն հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում նշված վարձու աշխատողները եւ պայմանագրային եկամուտ ստացողները յուրաքանչ-յուր ամսվա համար գործատուի համար սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով հարկային մարմին են ներկայացնում անձնավորված պարզեցված հաշվարկ:

6. Վարձու աշխատողների, պայմանագրային եկամուտ ստացողների գրանցման, անձնավորված հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Եկամտային հարկի եւ պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

7. Գործատուները եւ սույն հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում նշված վարձու աշխատողները եւ պայմանագրային եկամուտ ստացողները նախորդ հաշվետու ժամանակահատվածների համար ներկայացված պարտադիր կուտակային վճարի հաշվարկներում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կարող են բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել ճշտված հաշվարկներ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակահատվածների համար պարտադիր կուտակային վճարների պարտավորությունների վերահաշվարկ:

8. Նոտարները, անհատ ձեռնարկատերերը եւ ինքնագրադրվածները հաշվետու ժամանակահատվածի համար տարեկան պարտադիր կուտակային վճարի մասին հաշվարկը ներկայացնելուց հետո իրավունք ունեն ճշգրտումներ մտցնելու դրանցում արտացոլված տվյալներում:

9. Հարկային մարմնի կողմից պարտադիր կուտակային վճար կատարողների (գործատուների) մոտ իրականացվող ստուգումների ընթացքում կամ ստուգումների ավարտից հետո հարկային մարմին ներկայացված ստուգվող կամ արդեն ստուգված ժամանակահատվածներին վերաբերող պարտադիր կուտակային վճարների հաշվարկների ճշտում չի իրականացվում»:

Օրենքի 8-րդ հոդվածը փոփոխությունների է ենթարկվել 12.11.2012թ. ընդունված՝ ՀՕ-207-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով:

Օրենքի՝ «Մասնակիցների կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդ ընտրելու պարտականությունը» վերտառությամբ **37-րդ հոդվածը սահմանում է.**

«1. Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցները պարտավոր են ընտրել որեւէ կենսաթոշակային ֆոնդ: Ընդ որում, յուրաքանչյուր դեպքում մասնակիցը կարող է ընտրել միայն մեկ ֆոնդ: Նույն ժամանակահատվածում մասնակցի համար (օգտին) կատարվող յուրաքանչյուր կուտակային վճար (վճարներ) չի (չեն) կարող միաժամանակ ուղղվել մեկից ավելի կենսաթոշակային ֆոնդերի:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների եւ նրանց կենսաթոշակային ֆոնդերի մասին ամբողջական եւ թարմացված տեղեկատվությունը պետք է մշտապես առկա լինի մասնակիցների ռեեստրը վարողի (այդ թվում՝ համացանցային կայքում) եւ հաշվի օպերատորի մոտ»:

Օրենքի 37-րդ հոդվածն ընդունումից ի վեր փոփոխությունների չի ենթարկվել:

Օրենքի՝ «Կենսաթոշակային ֆոնդի ընտրությունը» վերտառությամբ **38-րդ հոդվածը սահմանում է.**

«1. Մասնակիցը պարտադիր կենսաթոշակային ֆոնդ ընտրելու համար պարտավոր է մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնել կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմում՝ սույն օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությունում նշված միջոցներով կամ հաշվի օպերատորի միջոցով: Դիմումի ձեւը եւ ներկայացման կարգը սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դիմումը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները.

1) մասնակցի անունը եւ ազգանունը, անձնագրի սերիան եւ համարը, ծննդյան տարեթիվը եւ ամսաթիվը,

2) հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը,

3) մասնակցի կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), բնակության վայրը եւ այլն),

4) մասնակցի՝ մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն (կենսաթոշակային հաշվի քաղվածք, նամակ, էլեկտրոնային հաղորդագրություն եւ այլն) ստանալու նախընտրելի միջոցը,

5) ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անվանումը եւ կենսաթոշակային ֆոնդը,

6) հավաստում՝ ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կառավարման վճարների եւ ֆոնդի կանոնների հետ համաձայն լինելու մասին,

7) հավաստում, որ տեղյակ է կուտակային վճարներ կատարելու իր պարտականության մասին,

8) դիմումը ներկայացնելու տարին, ամիսը եւ ամսաթիվը,

9) մասնակցի (մասնակցի լիազոր ներկայացուցչի) ստորագրությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը ներկայացվել է էլեկտրոնային եղանակով, որն ապահովում է անձի նույնականացումը:

3. Մասնակիցները պարտավոր են մասնակիցների ռեեստրը վարողի սահմանած կարգով մասնակիցների ռեեստրը վարողին տեղեկացնել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումում նշված անձնական տվյալների փոփոխության մասին»:

Օրենքի 38-րդ հոդվածը փոփոխությունների է ենթարկվել 12.11.2012թ. ընդունված՝ ՀՕ-207-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով:

Օրենքի՝ «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակցի հաշվին կատարվող վճարները եւ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվներից գանձվող վճարները եւ կատարվող ծախսերը» վերտառությամբ **45-րդ հոդվածը սահմանում է.**

«1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման համար պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվներից գանձում է վճար (կառավարչի պարգեւավճար)՝ սույն օրենքի 47-րդ հոդվածում նշված չափով:

Բացի սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված պարգեւավճարից, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կարող է կատարել նաեւ տվյալ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված ծախսերը, որոնց կազմը եւ առավելագույն չափը սահմանում է Կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի հետ:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվներից, բացի սույն օրենքով սահմանված վճարներից եւ ծախսերից, այլ նվազեցումներն արգելված են:

2. Կենսաթոշակային ֆոնդի կանոններով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի, կարող է սահմանվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման վճար, որը չի կարող գերազանցել մարվող փայերի հաշվարկային արժեքի մեկ տոկոսը:

3. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման վճար չի գանձվում սույն օրենքով սահմանված կարգով կենսաթոշակի անցնելիս կուտակված միջոցները անուիտետի, ծրագրային վճարի կամ միանվագ վճարի տեսքով ստանալու, ինչպես նաև հետեւյալ դեպքերում.

1) մասնակցի կողմից իր կենսաթոշակային ֆոնդի փայերը նույն կառավարչի այլ կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում.

2) սույն օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքերով կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման դեպքում.

3) մասնակցի կողմից տվյալ կենսաթոշակային ֆոնդի փայերը 12 ամսվա ընթացքում առաջին անգամ այլ կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում, բացառությամբ այն ֆոնդի փայերի փոխանակման դեպքերի, որի փայերը (դրանց մի մասը) ձեռք են բերվել վերջին 12 ամիսների ընթացքում տեղի ունեցած փայերի փոխանակման արդյունքում: Ընդ որում, սույն կետի իմաստով`

ա. առաջին անգամ փոխանակում է համարվում նաև տվյալ կենսաթոշակային ֆոնդի փայերը 12 ամսվա ընթացքում մեկից ավելի կենսաթոշակային ֆոնդերի փայերով փոխանակումը, եթե այդ փոխանակման գործարքների համար սույն օրենքով նախատեսված փոխանակման դիմումը (դիմումները) մասնակիցների ռեեստրը վարողին են ներկայացվել նույն օրվա ընթացքում,

բ. կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման հաշվարկում չեն ներառվում միեւնույն կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերի փայերի փոխանակման գործարքները.

4) սույն օրենքի համաձայն` անձի համար կենսաթոշակային հաշիվ բացելուց հետո սույն օրենքի 38-րդ կամ 39-րդ հոդվածով սահմանված կարգով մասնակցի (մասնակցի համար) առաջին անգամ ընտրած կենսաթոշակային ֆոնդի փայերի առաջին անգամ փոխանակման դեպքում.

5) ժառանգի կողմից սույն օրենքի 12-րդ գլխի համաձայն ժառանգված փայերի առաջին փոխանակման գործարքի դեպքում.

6) կենսաթոշակային ֆոնդի դադարեցման դեպքում մասնակցի ակտիվների հաշվին այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերելիս»:

Օրենքի 45-րդ հոդվածը փոփոխությունների է ենթարկվել 12.11.2012թ. ընդունված՝ ՀՕ-207-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով:

Օրենքի՝ «Մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների վերադարձելիության երաշխավորումը» վերտառությամբ 49-րդ հոդվածը սահմանում է.

«1. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների ամբողջ գումարի՝ ճշգրտված տարեկան գնաճով, վերադարձելիությունը երաշխավորվում է: Սույն մասով նախատեսված կուտակային վճարների գումարի՝ տարեկան գնաճով ճշգրտման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գումարի վերադարձելիությունը գումարի 20 տոկոսով երաշխավորում է սույն օրենքի հիման վրա ստեղծված Երաշխիքային ֆոնդը, իսկ մնացած 80 տոկոսով՝ Հայաստանի Հանրապետությունը»:

Օրենքի 49-րդ հոդվածը փոփոխությունների է ենթարկվել 12.11.2012թ. ընդունված՝ ՀՕ-207-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով:

Օրենքի՝ «Եզրափակիչ դրույթներ» վերտառությամբ 86-րդ հոդվածը սահմանում է.

«1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքով սահմանված պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտավորության:

2. Սույն օրենքով սահմանված պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտավորությանը վերաբերող դրույթները ուժի մեջ են մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

3. Պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցները մինչև 2014 թվականի հունվարի 1-ը պետք է սույն օրենքով նախատեսված կարգով կատարեն կենսաթոշակային ֆոնդի եւ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ընտրություն, այլապես ընտրությունը կատարվում է սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով եւ 39-րդ հոդվածով սահմանված կարգով»:

Օրենքի 86-րդ հոդվածն ընդունումից ի վեր փոփոխությունների չի ենթարկվել:

2. Վիճարկելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5, 7, 8, 37, 38, 45, 49 եւ 86-րդ հոդվածների սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ դրանք հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3, 6, 8, 14, 14.1, 31, 34, 36, 37, 42, 45, 48 եւ 117-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար հղում կատարելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ՄԳՈ-649 որոշմամբ արտահայտված այն դիրքորոշմանը, որ աշխատավարձը քաղաքացու սեփականությունն է, եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածի մեկնաբանության հիման վրա պնդելով, որ պարտադիր կուտակային վճարը որեւէ առնչություն չունի գերակա հանրային շահի հետ, եւ որ Սահմանադրությամբ նշված հիմքերից դուրս որեւէ սահմանափակում չի կարող լինել իրավական, դիմողը փաստարկում է, որ «Սահմանելով անձի չհարկված աշխատավարձից պարտադիր կուտակային 5-10 տոկոս վճար, Օրենքի 7-րդ եւ դրա հետ թղթակցվող 45-րդ հոդվածներով խախտվում է Սահմանադրությամբ պաշտպանվող անձի սեփականության իրավունքը»:

Օրենքի 8-րդ հոդվածը դիտարկելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի տեսանկյունից՝ դիմողը, հղում կատարելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ՄԳՈ-753 որոշման մեջ արտահայտված այն դիրքորոշմանը, որ պարտադիր վճարները կրում են հանրային-իրավական բնույթ եւ նախատեսված են պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվելու համար, գտնում է, որ «... Օրենքով նախատեսված պարտադիր կուտակային վճարի սահմանումը, գանձումն ու փոխանցումը մասնավոր կենսաթոշակային հիմնադրամներին հակասում է Սահմանադրության 45-րդ հոդվածի պահանջներին»: Միաժամանակ, դիմողը հայտնում է իր մտահոգությունն այն մասին, որ «... եթե այն Սահմանադրության հիշյալ հոդվածի կարգավորումից դուրս պահանջ է, ապա պարզ չէ, թե Սահմանադրության որ նորմով է պարտադրվում կատարել կուտակային վճար»:

Օրենքի՝ պարտադիր կուտակային վճար կատարողների շրջանակը սահմանող նորմերի սահմանադրականության առնչությամբ դիմողը գտնում է, որ այդ նորմերը հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ, 14.1-րդ եւ 42-րդ հոդվածներին: Նշված դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը նշում է հետեւյալը. «... պարտադրող նորմի գործադրումը կապելով տարիքի եւ գույքային վիճակի հետ, անձը պարտավոր է հաճախ կատարել իր կամահայտնությանը չհամապատասխանող գործողություններ: Մեր համոզմամբ նման նորմի

սահմանումը նաեւ գործող աշխատանքային հարաբերություններում անհարկի եւ ոչ իրավաչափ միջամտության դրսեւորում է, ինչն արգելված է Սահմանադրության 42-րդ հոդվածով, որի համաձայն անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները եւ այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»:

Օրենքի՝ պարտադիր կուտակային բաղադրիչը սահմանող նորմերի սահմանադրականության առնչությամբ դիմողը, վկայակոչելով «Կենսաապահովման նվազագույն գամբյուղի եւ կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» եւ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, գտնում է, որ այդ նորմերը հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված սոցիալական պետության գաղափարին, Սահմանադրության 34, 37, 48 եւ 117-րդ հոդվածներին, քանի որ սոցիալական ոլորտում պետության՝ Սահմանադրության 48-րդ հոդվածով սահմանված «...պարտավորության պատշաճ կատարումը ենթադրում է ոչ միայն կենսապայմանների բարելավման համար ակտիվ գործողություններ ձեռնարկելը, այլ նաեւ քաղաքացիների կենսամակարդակը նվազեցնող գործողություններից ձեռնպահ մնալու պահանջ: Մինչդեռ, չհարկված աշխատավարձի նկատմամբ կիրառվող 5-10 տոկոս պարտադիր վճարի գանձումը ոչ միայն անհամաչափ է, քանի որ հարկված աշխատավարձի նկատմամբ կազմում է 6.61-13 տոկոսը, այլ նաեւ խտրական է եւ էականորեն նվազեցնելով անձի կողմից տնօրինվող եկամուտը փաստացի սահմանափակում է սեփական կենսապայմանները բարելավելու անձի սահմանադրական իրավունքը: ...Բացի այդ, նվազագույն աշխատավարձ ստացող անձանց դեպքում՝ պարտադիր կուտակային վճարի գանձումը կհանգեցնի նաեւ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված նվազագույն աշխատավարձի մեծությունից անձի կողմից ավելի փոքր եկամուտ ստանալուն, քանի որ պարտադիր կուտակային վճարը ըստ նշված օրենքի 4-րդ հոդվածի դերակատար չէ նվազագույն աշխատավարձը սահմանելիս:

Ընդ որում, Սահմանադրության 117-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի համաձայն, Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո ... Սահմանադրությամբ սահմանված սոցիալական իրավունքները գործում են համապատասխան օրենքներով սահմանված ծավալով»:

Դիմողը գտնում է նաեւ, որ օրենքով նախատեսված պարտադիր կուտակային բաղադրիչում կենսաթոշակների բաշխողական կամ սե-

րունդների համերաշխության համակարգից պարտադիր անցում է կատարվում անհատական կամ «ինքնաֆինանսավորվող» կուտակային համակարգին, որը, ըստ դիմողի, հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 36-րդ հոդվածին, քանի որ վերջինս, հիմք ընդունելով Սահմանադրության նախաբանը, «...պաշտպանում է յուրաքանչյուր ընտանիքում եւ քաղաքացիական հասարակությունում սերունդների համերաշխության գաղափարը, որը կենսաթոշակային ապահովության ոլորտում, որպես անաշխատունակ անձանց սոցիալական պաշտպանության համակարգ կիրառվում է որպես սերունդների համերաշխության սկզբունքի հիման վրա ձեւավորված բաշխողական համակարգ»:

Բացի դրանից, արձանագրելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1487-Ն որոշմամբ սահմանված պայմանները վերացվեցին Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 1491-Ն որոշմամբ, դիմողը գտնում է, որ «... ներկա կենսաթոշակառուներին չապահովելով արժանապատիվ կենսաթոշակով, կուտակային պարտադիր բաղադրիչը չի երաշխավորում դրա գործադրման դեպքում նաեւ ապագա սերունդների արժանապատիվ կենսաթոշակ ստանալու հնարավորությունը»:

Դիմողը գտնում է նաեւ, որ օրենքի 49-րդ հոդվածը, որը երաշխավորում է Հայաստանի Հանրապետության կողմից կուտակային վճարների ամբողջ գումարի վերադարձելիությունը 80 տոկոսով, հակասում է «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածին, որը սահմանում է, որ տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը: Ըստ այդմ, դիմողը մտահոգություն է արտահայտում, որ պարզագույն հաշվարկներն անգամ վկայում են այն մասին, որ կուտակվող միջոցները մի քանի անգամ գերազանցելու են օրենքով նախատեսված սահմանափակումը:

Անդրադառնալով պարտադիր կուտակային բաղադրիչի ներդրմանը սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական, տեղեկատվական եւ ենթակառուցվածքային համապատասխանության հիմնախնդիրների տեսանկյունից եւ արձանագրելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1487-Ն որոշմամբ հաստատված ծրագրով նախատեսված մի շարք գործողությունների ժամանակին ձեռնարկված չլինելու փաստը, դիմողը փորձել է հիմնավորել, որ

օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով մինչև 2014 թվականի հունվարի 1-ը կենսաթոշակային ֆոնդի եւ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ընտրություն կատարելու պարտականությունը կատարված չէ, մինչդեռ, ըստ դիմողի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է, կամ որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն»:

3. Պատասխանողը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ վեճի առարկա նորմերը չեն հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Անդրադառնալով կենսաթոշակային բարեփոխումների կարելությունն ու անհրաժեշտությանը, ներկայացնելով տարբեր մոտեցումների եւ տարբերակների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների ու քննարկումների հիմնական հետեւությունները, պատասխանողը շեշտում է, որ հիմնական խնդիրն է օրենքի ուժով պարտադրել անձանց իրականացնել խնայողություններ՝ կենսաթոշակային տարիքում լրացուցիչ եկամուտներով ապահովվելու համար:

Պատասխանողը նշում է, որ պետության եւ անհատի միջեւ փոխադարձ պատասխանատվության սկզբունքն իր ամրագրումն է գտել նաեւ ՀՀ Սահմանադրության մեջ, որի առանձին դրույթների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ պետության եւ անհատի միջեւ փոխադարձ պատասխանատվության սկզբունքի ամրագրումն ինքնանպատակ չէ եւ միտված է պետության առջեւ դրված սոցիալական խնդիրների լիարժեք ու ժամանակին ապահովմանը: Այլ կերպ՝ նշված փոխհարաբերություններում պետությունը կրում է ոչ միայն պարտականություններ, այլեւ օժտված է որոշակի իրավունքներով՝ այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են հետապնդվող նպատակի, այդ թվում՝ տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակի երաշխավորման համար: Պատասխանողը գտնում է, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն անհրաժեշտ է ամենից առաջ դիտարկել հենց այս տեսանկյունից:

Ի հակադրումն դիմողի փաստարկների՝ պատասխանողը, քննության առարկա օրենքի իրավակարգավորումների տեսանկյունից յուրովի ներկայացնելով նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի հունվարի 30-ի ՍԴՈ-1073 որոշմամբ հայտնած իրավական դիրքորոշումները, հետեւություն է անում, որ.

- գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը հանդիսանում է երաշխավորված, սակայն ոչ բացարձակ իրավունք,
- թույլատրելի է սեփականության իրավունքի սահմանափակումը, եթե այն նախատեսված է օրենքով, հետապնդում է սահմանադրորեն արդարացված նպատակ, այսինքն՝ կոչված է ապահովելու սեփականատիրոջ եւ այլոց իրավունքների ու հանրային շահերի միջեւ ողջամիտ հավասարակշռություն, եւ որեւէ կերպ չի գերազանցում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակները:

Պատասխանողը կարելի է, որ պարտադիր կուտակային վճար կատարելով, միեւնույն է, անձը պահպանում է սեփականության իրավունքն այդ միջոցների նկատմամբ, իսկ պետությունը երաշխավորում է անձի կատարած կուտակային վճարների վերադարձնելիությունը՝ ճշտված գնաճով:

Պատասխանողը, վկայակոչելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներ, հետեւություն է անում, որ. «... սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է դիտարկել հետեւյալ հարցադրումների համատեքստում.

1. որքանով է այդ սահմանափակումը հետապնդում իրավաչափ նպատակ (այդ թվում՝ անհրաժեշտ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ պետության պարտականությունները կատարելու համար),

2. որքանով է այդ սահմանափակումների ծավալը համարժեք հետապնդող նպատակներին»:

Վերոնշյալի հիման վրա պատասխանողը եզրակացնում է՝ առավել քան ակնհայտ է, որ կենսաթոշակային բարեփոխումների հիմքում ընկած է հանրային շահը, իսկ անձի սեփականության (աշխատավարձի մի մասի) նկատմամբ օրենքով սահմանված սահմանափակումն անհրաժեշտ է տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակն ապահովելու համար:

Ինչ վերաբերում է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով ամրագրված սահմանափակումների համաչափությանը (կամ կուտակային վճարի դրույքաչափին), ապա պատասխանողը նկատում է, որ «...տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակ» կամ այլ կերպ ասած՝ «արդյունավետ կենսաթոշակ» արտահայտությունը չափի իմաստով չի կրում վերացական բնույթ»: Կենսաթոշակային համակար-

գլի արդյունավետության գնահատման հիմնական չափանիշը, ըստ պատասխանողի, փոխհատուցման գործակիցն է՝ անձի աշխատանքային եկամուտների /աշխատավարձի/ եւ կենսաթոշակի չափի հարաբերակցությունը:

Անդրադառնալով տարիքային խտրականության առումով դիմողի մոտեցումներին՝ պատասխանողը, հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, գտնում է, որ «Տվյալ դեպքում օրենսդիրը, Օրենքով որպես պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից նախատեսելով միայն 1974թ. հունվարի 1-ին եւ դրանից հետո ծնված անձանց, հիմք է ընդունել պետության կողմից կենսաթոշակային ապահովման փաստացի հնարավորությունը: Այդ հանգամանքը նկատի ունենալով էլ Օրենքով ամրագրվել է տարիքային տարանջատման օբյեկտիվ չափանիշ՝ հիմնվելով իրական հնարավորության վրա»: Միաժամանակ շեշտվում է, որ «...սոցիալական պետության հիմնական բաղադրատարր հանդիսացող սոցիալական ապահովության ծավալն ու ձեւերը որոշելու իրավասությունը Սահմանադրությամբ վերապահված է օրենսդրի հայեցողությանը»:

Պատասխանողն իրավաչափ է համարում նաեւ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված գործառույթները՝ գտնելով, որ դրանք «... չեն կարող դիտարկվել որպես ՀՀ կառավարության կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումներ կամ վերջիններիս նկատմամբ պարտականության սահմանում»: Ըստ պատասխանողի՝ նշված պարտականությունները, ըստ էության, սահմանված են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, իսկ ՀՀ կառավարությանը վերապահված է օրենքով նախանշված նպատակներին հասնելու ընթացակարգեր սահմանելու լիազորություն:

Ըստ պատասխանողի՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը համանման ընթացակարգային հարցեր կարգավորելու լիազորություններ սահմանել է նաեւ ՀՀ կենտրոնական բանկի համար՝ կենսաթոշակային ֆոնդի կանոնները գրանցելու, կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից մասնակիցներին (կամավոր կենսաթոշակային ֆոնդերի դեպքում) ներկայացվող, ինչպես նաեւ հրապարակվող հաշվետվությունների ձեւը, ներկայացնելու կարգը սահմանելու, հաշվի օպերատորների գործունեության կարգը սահմանելու եւ այլն:

Անդրադառնալով կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին դիմողի փաստարկներին՝ պատասխանողը գտնում է, որ «...Հայաստա-

նի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձը նվազագույն սպառողական զամբյուղից բարձր է, հետեւաբար, նվազագույն աշխատավարձից կատարվելիք կուտակային վճարները չեն կարող ներագրել Սահմանադրությամբ երաշխավորված նվազագույն սպառողական զամբյուղին համարժեք նվազագույն աշխատավարձ սահմանելու պահանջի վրա»:

Պատասխանողը կուտակային կենսաթոշակի պարտադիր բաղադրիչը սեփականության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական չափանիշների շրջանակներում դիտարկում է իրավաչափ՝ այն համեմատելով եւ ընդհանրություններ անցկացնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցի ապահովման ինստիտուտի, ինչպես նաեւ օրենսդրությամբ նախատեսված արգելանքի ինստիտուտի հետ:

4. Սույն գործով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ իր սահմանադրական լիազորությունների շրջանակներում եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, կարեւորում է վեճի առարկա իրավանորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը՝ հատկապես հաշվի առնելով.

ա/ Սահմանադրության հիմնարար արժեքների ու սկզբունքների հիման վրա պետության գործառույթների արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը,

բ/ սեփականության իրավունքի եւ դրա պաշտպանության սահմանադրական դրույթները, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները,

գ/ սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման, ապահովման ու պաշտպանության վերաբերյալ սահմանադրական մոտեցումները,

դ/ իրավական ակտերին եւ դրանցով նախատեսված իրավակարգավորման շրջանակներին, ինչպես նաեւ իշխանության հայեցողության սահմաններին ներկայացվող սահմանադրաիրավական պահանջները,

ե/ իրավունքի գերակայության ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ իրավական որոշակիության եւ համաչափության սկզբունքների հետեւողական իրացման պահանջները:

5. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միջազգային առումով հատկապես վերջին քսան տարիների ընթացքում հրատապ խնդիր է դարձել սոցիալական պաշտպանության ու հատկապես սոցիալական ապահովության ոլորտներում լուրջ բարեփոխումների իրականացումը: Դա պայմանավորված է բազմաթիվ օբյեկտիվ գործոններով, որոնց թվում, մասնավորապես, շեշտվում են բնակչության աստիճանական ծերացման, աշխատունակ բնակչության բաժնի նվազման, բնակչության վերարտադրողական ու ընդհանուր ժողովրդագրական պատկերի որակական փոփոխության հանգամանքները: Օրինակ, երբ 1889 թվականին առաջին անգամ Գերմանիայում Օտտո ֆոն Բիսմարկը 70 տարին բոլորածների համար ներդրեց պետական թոշակի ինստիտուտը, երկրում կյանքի միջին տևողությունը կազմում էր 45 տարի: Այսօր շատ երկրներում այն հասել է 80 տարվա սահմանը: Կարելի է գործոն է համարվում նաև այն հանգամանքը, որ վերջին տասնամյակներին աստիճանաբար նոր որակ են ստանում ավանդական սոցիալական հարաբերությունները:

Հաշվի առնելով նաև բնակչության տարբեր շերտերի սոցիալական ապահովվածության աստիճանների միջև մեծ շեղումն ու դրա խորացման միտումը, գործազրկության աճը, թոշակային տարիքի հասած փաստացի աշխատող բնակչության թվի էական կրճատումները, բազմաթիվ երկրներ խնդիր դրեցին որակապես բարեփոխել հասարակության խոցելի խավերի սոցիալական ապահովության համակարգը: Մասնավորապես, եվրոպական երկրները կենսաթոշակային բարեփոխումների բնագավառում նախկինում գործող բաշխողական համակարգի հետ մեկտեղ ներդրեցին նաև կուտակային համակարգ, առանց որի անհնարին էր այդ ոլորտում դրական որեւէ արդյունք ակնկալել:

Հիսունից ավելի երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման շնորհիվ թոշակային տարիքում անձի կենսաապահովումն առավել երաշխավորված ու կայուն բնույթ է ստանում, քանի որ այն անմիջական կախվածության մեջ չի դրվում ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական եւ իրավիճակային այլ փոփոխություններից: Ընդ որում, այդ կայունությունն անհամեմատ մեծ է բաշխողական թոշակային համակարգի համեմատությամբ: Բացի դրանից, բնակչության սոցիալական ապահովության հարցում առավել դրական արդյունքներ են արձանագրել այն երկրները, որտեղ կարողացել են առավել ճիշտ ձեռով համադրել պետական-բաշխողական, պարտադիր կուտակային եւ կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգերը:

Կուտակային կենսաթոշակների համակարգի ներդրումը կարելի է չհամարել հանդերձ, դրա ձեռքի եւ ներդրման մեթոդների ընտրության հարցում նույնիսկ Եվրոպական միության անդամ երկրները որդեգրեցին տարբեր ուղիներ:

Միջազգային փորձի համադրված ուսումնասիրությունը վկայում է, որ.

ա/ գրեթե չկա որեւէ երկիր, որը բնակչության սոցիալական ապահովության, ապահովագրության եւ օգնության բնագավառներում վերջին տասնամյակների ընթացքում բարեփոխումներ չի նախաձեռնել,

բ/ տարբեր երկրների փորձը վկայում է, որ միգրացիոն գործընթացները, բնակչության ծնելիության անկումը, կյանքի միջին տեւողության աճը, ծերացման միտումները, գործազրկության մակարդակը, աղքատության բարձր աստիճանը եւ բազմաթիվ այլ գործոններ մոտ հեռանկարում շատ ավելի վատթար վիճակ են ստեղծելու բնակչության խոցելի խավերի կենսանվազագույնի կայուն երաշխավորման հարցում,

գ/ Հայաստանից շատ ավելի բարվոք սոցիալական պայմաններում գտնվող երկրներ ժամանակին նախաձեռնելով այս ոլորտում բարեփոխումներ, կուտակել են որոշակի փորձ, ինչը կարող է մեզանում օգտակար լինել: Միաժամանակ, ցանկացած փորձ արժեքավոր է, եթե խելամիտ է գուզակցվում կոնկրետ երկրի սոցիալական առանձնահատուկ իրողությունների հետ եւ չի ենթադրում մեխանիկական փոխառում, առավել եւս, երբ գրեթե բոլոր երկրներում տարիների ընթացքում էական շտկումներ են կատարվել իրենց իսկ թոշակային համակարգերի բարեփոխումներում,

դ/ Հայաստանի Հանրապետությունը նույնպես պարտավոր է այս հիմնախնդրին լուծում տալ, քանի որ ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության պարտքն է ոչ միայն ներկա աշխատունակ բնակչության, այլեւ սերունդների ընդհանուր բարեկեցության եւ քաղաքացիական համերաշխության ապահովման նախադրյալների ստեղծումը: Դա Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված նորմ-նպատակ է, ինչը, սակայն, պահանջում է վերջինիս երաշխավորման համար պետության գործառույթների նպատակային, հետետողական ու արդյունավետ իրականացում՝ հիմքում ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հիմնարար արժեքներն ու սկզբունքները, խորությամբ հաշվի առնելով երկրում առկա իրավական, տնտեսական, սոցիալական, ընդհանուր ժողովրդագրական կոնկրետ առանձնահատկությունները: Միայն այս ճանապարհով է հնարավոր տասնամյակների ընդգրկումով երաշխավորել նաեւ մարդկանց սոցիալական ապահովության իրավունքի արդյունավետ իրացումը:

6. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2006թ. հոկտեմբերի 4-ի ՄԳՈ-649 որոշմամբ արձանագրել է, որ «Վավերացնելով Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է դրա Նախարանի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից»: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են»: «Բարձրագույն արժեք» հասկացությունն այստեղ վերացական չէ եւ ունի որոշակի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որեւէ այլ արժեք, այդ թվում եւ պետական, եւ հանրային խնդիրների լուծմանը կոչված որեւէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել: Սրանից էլ բխում է Սահմանադրության նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմը. «Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Նման իրավական դիրքորոշում արտահայտվել է կենսաթոշակային հիմնախնդրի առնչությամբ, ուստի նույն որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է նաեւ, որ «Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձեւ է՝ նաեւ ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (տես՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործը)»:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով նույնպես վեճի առարկա իրավադրույթներն առաջին հերթին քննության առարկա պետք է դառնան սեփականության իրավունքի ճանաչման, երաշխավորման ու պաշտպանության սահմանադրական մոտեցումների տեսանկյունից:

Սեփականության իրավունքի պաշտպանության հիմնախնդրին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն անդրադարձել է իր բազմաթիվ որոշումներում: Մասնավորապես, 2006թ. ապրիլի 18-ի ՄԳՈ-630 որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը պահանջում է, որպեսզի օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցը որոշելիս սահմանադրական դատարանը, ի

թիվս այլ հանգամանքների, հաշվի առնի մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց թույլատրելի սահմանափակումների շրջանակները եւ հիմքերը, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

Շեշտվել է նաեւ, որ «Համաձայն Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը»: Սահմանադրության 43 հոդվածը սեփականության իրավունքը չի դիտարկում որպէս այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այն կարող է, նախ՝ իրականացվել օրենքով նախատեսված դեպքերում բացառապէս դատական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպէս պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Երկրորդ՝ «սեփականության օտարման» միջոցով, որը «սեփականության զրկումից» էապէս տարբեր այլ ինստիտուտ է եւ պետք է իրականացվի Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի հիմքերով»:

2008թ. մարտի 18-ի ՍԴՈ-741 որոշման մեջ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

2010թ. հուլիսի 13-ի ՍԴՈ-903 որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է սեփականության իրավունքի **իրականացման սահմանափակման** միմյանցից տարանջատվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով պայմանավորված (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականագրկում (31-րդ հոդվ. 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության եւ պետության կարիքների համար (31-րդ հոդվ. 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Ինչպես հետեւում է նշված ա) ենթակետի բովանդակությունից, սեփականության **իրավունքի իրականացումը** սահմանադիրը պայմանավորում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու պահանջով: Դրանք են. շրջակա միջավայրը, **այլ անձանց**, հանրության եւ պետության իրավունքները եւ օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ եւ այլոց իրավունքների ու հանրային շահերի միջեւ ողջամիտ հավասարակշռություն...»: Տվյալ համատեքստում սահմանադրորեն ամրագրվում է ոչ թե կոնկրետ իրավունքի սահմանափակման, այլ դրա իրացման գործընթացի վերաբերյալ որոշակի իրավաչափ պայմաններ առաջադրելու պահանջ:

Նկատի ունենալով վեճի առարկա հիմնախնդրի անմիջական կապը սեփականության իրավունքի հետ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում նաեւ 2012թ. փետրվարի 24-ի ՍԳՈ-1009 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իրավագործությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով **սեփականատիրոջ հայեցողությունը**: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձեւակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, եւ սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության եւ պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն եւ գույքային ինքնուրույնություն**»:

Նույն որոշման մեջ սահմանադրական դատարանը նաեւ արձանագրել է, որ գույքի տնօրինման իրավունքի բովանդակությունը բացահայտված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում: Դրանում, մասնավորապես, շեշտվում է, որ «...տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է»: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «...սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող եւ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման եւ տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով»:

Կարելի է նաեւ այն հանգամանքը, որ «**Տնօրինման իրավագործությունը ենթադրում է սեփականատիրոջ կողմից օրենքով նախատեսված շրջանակներում ու կարգով գույքի նկատմամբ գործողություններ կատարելու կամ վերջինից ձեռնպահ մնալու միջոցով իր գույքի իրավական եւ փաստացի ճակատագիրը որոշելու իրավունք**: Դա ոչ այլ ինչ է, քան **հայեցողություն** կամ, այլ կերպ՝ գույքի ճակատագրի հանդեպ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածի առաջին մասում նախանշված շրջանակներում եւ օրենքով սահմանված պայմաններում ու կարգով **ինքնավար կամք դրսևորելու իրավունք**»: Շեշտելով, որ «Այդ **հայեցողությունն** ունի սուբյեկտիվ բնույթ, պետք է դրսևորվի տվյալ անձի կամաարտահայտմամբ», սահմանադրական դատարանը հետևություն է արել, որ «Սեփականության իրավունքի իրացման այլ պայման նախատեսելը, քան նախատեսված է Սահմանադրության 31-րդ հոդվածում, անխուսափելիորեն կհանգեցնի այդ իրավունքի արգելափակման»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրել է նաեւ, որ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները» (հոդվ. 43): Այս առնչությամբ ուշադրության է արժանի Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք»:

Հանրագումարի բերելով ասվածը եւ սույն հարցի շրջանակներում գնահատելով դատաքննության մասնակիցների բացատրություններն ու պարզաբանումները՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը փաստում է.

նախ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը», որից բխում է պետության հանրային-իրավական համարժեք պարտավորությունը:

Երկրորդ՝ այդ պարտավորության իրացման նախապայմանն այն է, որ համաձայն Սահմանադրության 31-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը»:

Երրորդ՝ սահմանադրական այդ իրավունքը չի կարող օրենքով սահմանափակվել, քանի որ դրա համար անհրաժեշտ հիմքեր նախատեսված չեն Սահմանադրության 31, 43 եւ 44-րդ հոդվածներով:

Չորրորդ՝ սահմանադրական նման իրավակարգավորումների պայմաններում քննության առարկա օրենքի առանձին հոդվածներ /մասնավորապես՝ 5, 7, 13, 76/ ուղղակի կամ անուղղակի նախատեսում են սեփականության իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածի պահանջներին եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին չհամապատասխանող սահմանափակումներ:

Հինգերորդ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 89-րդ հոդվածն իրավունք է վերապահում Հայաստանի Հանրապետության կառավարությանը կառավարելու **բացառապես պետական սեփականությունը**: Անձանց կամ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականության կառավարումը որպես գործառույթ օրենքով չի կարող ընդգրկվել այդ իրավունքի իրացման շրջանակներում:

Վեցերորդ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները, մի կողմից, վկայում են դրանց հստակ ու հետետողական բնույթի մասին, որոնք հիմք են հանդիսացել նաեւ տարբեր իրավանորմեր Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու համար: Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ դրանք խորությամբ հաշվի չեն առնվել քննության առարկա օրենքի ընդունման ժամանակ: Դա այն դեպքում, երբ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ

չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին»: Բացի դրանից, օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխան լինելը սահմանադրաիրավական պահանջ է (Սահմ. 6-րդ հոդված, 2-րդ մաս):

7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ «կենսաթոշակ» հասկացությունը որեւէ ձեւով ամրագրված չէ: Սակայն «սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես պետության սոցիալական բնույթի բնութագրիչ /հոդվ. 1/, խտրականությունը բացառող հանգամանք /հոդվ. 14.1/, աշխատողի շահի դրսեւորում /հոդվ. 32/, սոցիալական ապահովության իրավունքի բնութագրիչ /հոդվ. 37/, պետության հիմնական խնդիրների սահմանները բնորոշող ոլորտ /հոդվ. 48/, կառավարության կողմից իրականացվող քաղաքականության բնագավառ /հոդվ. 89/: Բոլոր դեպքերում էականն այն է, որ իրեն նաեւ սոցիալական հոշակած պետությունը սահմանադրորեն որդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ: Դրանց թվում՝ սոցիալական ապահովության իրավունքը ճանաչվել է որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական իրավունքներից մեկը եւ Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաեւ այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագիրը, նաեւ դրա 9-րդ հոդվածով է միջազգային պարտավորություն ստանձնել ճանաչելու յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը:

Այդ իրավունքի երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ սահմանադրական դրույթի հիման վրա /հոդվ. 37/ սոցիալական ապահովության ծավալն ու ձեւերը սահմանվում են օրենքով: Սահմանադրական իրավակարգավորումից հստակ է, որ օրենսդրի հայեցողությանն է թողնված ինչպես սոցիալական ապահովության ծավալի՝ քանակական որոշակիության, այնպես էլ ձեւերի ընտրության խնդիրը: **Տվյալ ոլորտում, համաչափության եւ համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով:**

Վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից էական է, թե ինչպես են վերոնշյալ հանգամանքները հաշվի առնվել մեր երկրում կենսաթոշակային բարեփոխումների գործընթացում:

Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ներկա համակարգի ձեւավորման հիմքերը դրվեցին 2005 թվականին, երբ նույն թվականի ապրիլի 28-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունեց թիվ 666-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումների հայեցակարգային մոտեցումները հաստատելու մասին: Արձանագրվեց, որ կենսաթոշակային գործող համակարգի նման ձեւով պահպանելը ոչ միայն խոր համակարգային ճգնաժամի կարող է հանգեցնել, այլև խոչընդոտել երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Ռազմավարական հիմնախնդիր համարվեց՝ «ստեղծել կենսաթոշակային ապահովության այնպիսի համակարգ, որը համարժեք կլինի տնտեսական ոլորտում իրականացվող վերափոխումներին»: Նման ապագա համակարգի հիմքում դրվեց այն սկզբունքը, որ «Պետությունը պետք է պայմաններ ստեղծի հասարակության բոլոր անդամների համար, որպեսզի նրանք կարողանան «վաստակել» իրենց կենսաթոշակը»: Պետության խնդիրը համարվեց նաև՝ «...հոգ տանել միայն նրանց մասին, ովքեր չեն կարողացել «վաստակել» իրենց կենսաթոշակը»: Մեթոդաբանական այս մոտեցման շրջանակներում խնդիր դրվեց, միջազգային փորձը հաշվի առնելով, անցում կատարել տարբեր աղբյուրներից սնվող բազմաշերտ կենսաթոշակային համակարգի, որի էական բաղադրատարրերից համարվեց նաև պարտադիր կուտակային կենսաթոշակային ապահովագրությունը: Նախատեսվեց նաև, որ վերջինիս իմաստը հանգում է նրան, որ մասնակիցը «...ունենում է իր անհատական հաշիվը եւ կենսաթոշակ ստանում՝ այդ հաշվում մինչև կենսաթոշակի տարիքը կուտակած իր սոցիալական պարտադիր վճարների եւ կյանքի միջին տեւողության հաշվարկից ելնելով»: Կառավարության այս որոշման կարեւոր շեշտադրումներից էր ոչ միայն այն, որ պարտադիր կուտակային բաղադրիչը, ինչպես բազմաթիվ այլ երկրներում, պետք է ձեւավորվեր **սոցիալական պարտադիր վճարների հաշվին**, այլև շեշտվում էր «կոշտ վերահսկողության» անհրաժեշտությունը եւ խնդիր էր դրվում նոր համակարգին անցնել համակողմանի նախապատրաստված, սահուն ձեւով՝ ընդհուպ նախատեսելով «հասարակական քննարկումների կազմակերպում՝ կլոր-սեղաններ, սեմինար-խորհրդակցություններ, հեռուստաբանավեճեր եւ այլն»:

Մեկ տարի հետո՝ 2006 թվականի մայիսի 26-ին, Հայաստանի Հան-

րապետության կառավարությունն ընդունում է թիվ 796-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումների հայեցակարգը հաստատելու մասին: Գործնականում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրապարակեց իր մոտեցումներն ապագա կենսաթոշակային համակարգի վերաբերյալ եւ ներկայացրեց այն գործողությունների հաջորդականությունը, որը կապահովեր այդ համակարգի ներդրումը: Հատուկ շեշտվեց, որ մոտեցումները մշակվել են հանրային լայն քննարկումների եւ միջազգային կառույցների հետ խորհրդակցությունների արդյունքում: Այս փաստաթղթում, սակայն, պարտադիր կուտակային կենսաթոշակի կազմավորման մեթոդաբանական մոտեցման հարցում անհատականություն դրսևորվեց: Մասնավորապես, հիշյալ հայեցակարգի «Եկամտահարկը եւ սոցիալական վճարները» հատվածի 7-րդ պարբերության մեջ ամրագրվեց, որ «Ամեն դեպքում նոր համակարգին անցած քաղաքացիները գործատուների միջոցով իրենց աշխատավարձից կվճարեն նաեւ ներկայիս 3 տոկոսը եւ լրացուցիչ 7 տոկոսի չափով սոցիալական վճար /ընդհանուրը 10 տոկոս/, որը կփոխանցվի քաղաքացիների կողմից ընտրված կենսաթոշակային հիմնադրամներում բացված անձնական հաշիվներին»: Այս ձեւակերպման մեջ հատուկ ուշադրության է արժանի «**սոցիալական վճար**» եզրույթը: Այն ունի հստակ իրավական բովանդակություն եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի իրավակարգավորումների շրջանակներում կարգավորվող հարաբերություններին է առնչվում:

Սակայն կառավարության տվյալ հայեցակարգում առաջ է քաշվում «եկամտահարկի եւ սոցիալական վճարների համակարգի ինտեգրման» գաղափարը, ինչը, սահմանադրական դատարանի գնահատմամբ, տարասեռ երեւոյթների մեխանիկական միակցում է ենթադրում, եւ հետագայում այսպիսի ելակետն է դրվել կենսաթոշակային համակարգի բարեփոխման հիմքում: Ավելին, նույն որոշման «Պարտադիր կուտակային կենսաթոշակ» բաժնում, առանց սոցիալական վճարների մասին հիշատակման, շեշտվում է, որ «Նոր համակարգին անդամագրվածներն իրենց աշխատավարձի 10 տոկոսի չափով գումար յուրաքանչյուր ամիս պարտադիր կերպով փոխանցում են իրենց կողմից ընտրված կենսաթոշակային հիմնադրամի իրենց անհատական հաշիվներին»: Այստեղ ոչ միայն խոսք չկա սոցիալական վճարների մասին, այլեւ ոչինչ չի ասվում պետության կողմից կուտակային վճարների 5 տոկոսի բեռը կրելու վերաբերյալ: Ընդ որում, այդ որոշմամբ նախատեսվել էր, որ «Նոր համակարգի ներդրումը կսկսվի 2008 թվականի հունվարի 1-ից»:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 796-Ն որոշմամբ, որը Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից վավերացվել է 2006թ. հունիսի 17-ին, հիմք դրվեց կուտակային կենսաթոշակային ներկա համակարգի գաղափարախոսությանը: Այն իր զարգացումն ստացավ Հայաստանի Հանրապետության կառավարության հետագա որոշումներում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1487-Ն որոշման մեջ, որով հաստատվեց կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը, սահմանվեց, որ «Այն անձանց համար, ովքեր 2014 թվականի հունվարի 1-ից պարտադիր կուտակային համակարգի մասնակից են դարձել պարտադրության սկզբունքով, կուտակային վճարների դրույքաչափը սահմանվում է աշխատավարձի եւ դրան հավասարեցված եկամուտների 10 տոկոսի չափով, որի կեսը կամ աշխատավարձի եւ դրան հավասարեցված եկամուտների 5 տոկոսը, բայց ոչ ավելի, քան 25000 դրամը, վճարում է պետությունը»: Հետագայում ամբողջությամբ հայեցակարգային այս մոտեցումը դրվեց 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիմքում:

Գործնականում 2006-2010 թվականներին սոցիալական վճարի միջոցով սոցիալական ապահովության խնդրի լուծման միջազգայնորեն համընդհանուր ճանաչում ստացած հայեցակարգն աստիճանաբար փոխարինվեց աշխատավարձից լրացուցիչ մասհանումների միջոցով կենսաթոշակի պարտադիր կուտակային բաղադրիչ ձեւավորելու հայեցակարգով: Արդյունքում՝ գործատուն, որպես իր իսկ աշխատողների սոցիալական ապահովության խնդիրների լուծման անմիջական մասնակից, դուրս մղվեց այս իրավահարաբերություններից, պետությունը հարկատուների հաշվին ստանձնեց լրացուցիչ պարտավորություններ, անհատություն մտցվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման եւ 45-րդ հոդվածով նախատեսված՝ այդ իրավունքի իրացման նախադրյալների ու երաշխիքների ապահովման սահմանադրաիրավական մոտեցումները կյանքի կոչելու հարցերում:

Այդ վիճակը հետագայում նաեւ տեղափոխվեց օրենսդրական քաղաքականության հարթություն: 2010թ. դեկտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց օրենք «Եկամտային հարկի մասին»: Այս օրենքի եզրափակիչ դրույթների 28-րդ հոդվածի 2-րդ մասով օրենքի գործողության մեջ մտնելու պահից /2013թ. հունվա-

րի 1-ից/ ուժը կորցրած ճանաչվեցին «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997թ. դեկտեմբերի 27-ի ՀՕ-183 եւ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997թ. դեկտեմբերի 26-ի ՀՕ-179 օրենքները:

Խնդիրը միայն այն չէ, որ «եկամտահարկ» եզրույթը փոխարինվեց «եկամտային հարկով»: Էականն այն է, որ դադարեց գոյություն ունենալ «պարտադիր սոցիալական ապահովության վճար» հասկացությունը, այն դուրս բերվեց տվյալ հարաբերությունների իրավակարգավորման շրջանակներից՝ **սոցիալական ապահովության պարտադիր վճարը փոխարինելով հարկով:**

Ուսումնասիրությունները վկայում են, որ նման փորձը, մասնավորապես՝ համաեվրոպական իրավական տարածքում, գրեթե եզակի է:

Սակայն խնդիրը չսահմանափակվեց միայն տեխնիկական լուծումներով՝ երկու վճարը մեկով փոխարինելու ճանապարհով, անկախ դրանց բովանդակային անհամադրելիության հանգամանքից: Առավել բնորոշ է այն, որ, բյուջետային ոլորտից զատ, գործատուն, ինչպես նշվեց, գործնականում դուրս մղվեց այդ իրավահարաբերություններից: Արդյունքում՝ սոցիալական ապահովության վճարների չափով պակասեցին բյուջետային մուտքերը, իսկ աշխատողների հարկային ծանրաբեռնվածությունն ավելացավ: Բյուջետային ոլորտի աշխատողների համար 2012թ. նոյեմբերի 12-ին ընդունված «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» եւ «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու ճանապարհով հարկային բեռի ավելացումը փոխհատուցվեց աշխատավարձի համարժեք բարձրացումով: Միաժամանակ, «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվեց, որ «... գործատուն իր միջոցների հաշվին կրում է վարձու աշխատողներին սույն օրենքն ուժի մեջ մտնելու տարվա յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված աշխատավարձից պահված եւ վճարված եկամտային հարկի ամբողջ գումարի չափով լրացուցիչ պարտավորություն, եթե սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարձու աշխատողից եկամտային հարկի պահումը հանգեցրել է մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը տվյալ վարձու աշխատողին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշվող մեծության նվազման»:

Նման իրավակարգավորման պայմաններում սոցիալական ապահովության վճարների ինստիտուտը դեռևս շարունակում է պահպանվել Հայաստանի Հանրապետության տարբեր այլ օրենքներում: Մասնավորապես՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի համաձայն հարկատուի համար համախառն եկամտից ծախսերի գծով նվազեցումներ իրականացնելիս կամավոր կուտակային կենսաթոշակների գծով կատարված կուտակային վճարների հետ մեկտեղ հաշվի են առնվում նաև **սոցիալական ապահովության վճարները**, ինչը, ինչպես նշվեց, այլևս գոյություն չունի:

8. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միջազգային պրակտիկայում գործատուների եւ աշխատողների կողմից կատարվող սոցիալական ապահովության վճարների տոկոսային հարաբերակցությունն այնպիսին է, որ հիմնականում գործատուների հաշվին են ձեւավորվում սոցիալական ապահովության ընդհանուր նպատակային վճարների կեսից մինչեւ երկու երրորդը: Անկախ թոշակային համակարգի առանձնահատկություններից, աշխարհի բազմաթիվ երկրների /Շվեդիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Սինգապուր, Լեհաստան, Հունգարիա, Սլովենիա, Խորվաթիա, Սլովակիա եւ այլն/ փորձը վկայում է, որ համեմատաբար ավելի մեծ հաջողություն են արձանագրում այն երկրները, որտեղ կենսաթոշակային ապահովման խնդրի լուծմանը մասնակցում են երեք հիմնական սուբյեկտներ՝ պետությունը, գործատուն եւ աշխատողը:

Բացի դրանից, շատ երկրներում ընդհուպ պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարների բեռը նույնպես բաշխվում է աշխատողի եւ գործատուի միջեւ: Ի տարբերություն դրա, մեր երկրում սոցիալական ապահովության ոլորտում ոչ պետական համակարգի գործատուների բեռը նույնպես պետությունն է ստանձնում /մասնավորապես՝ 5 տոկոս լրավճարների ձեւով/:

Գործնականում Հայաստանը սոցիալական-իրավական պետության սահմանադրական սկզբունքն ամրագրած եզակի երկրներից է, որտեղ կենսաթոշակային ֆոնդի նպատակային անհատական վճարները չեն ձեւավորվում սոցիալական ապահովության վճարներից, այլ կազմավորվում են աշխատավարձից լրացուցիչ պարտադիր մասհանումների ու հարկերի հաշվին:

Այլ մեթոդաբանություն որդեգրած բազմաթիվ երկրների կոնկրետ օրինակներ կարելի է վկայակոչել: Ամենաթարմ օրինակը, թերեւս, Ռուսաստանի Դաշնությունում «Կուտակային կենսաթոշակի մասին» 2013

թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված թիվ 424-ՓՅ դաշնային օրենքն է, որով մարդկանց հնարավորություն է տրվել ընտրություն կատարել ապահովագրական եւ կուտակային կենսաթոշակների ու դրանցում **սոցիալական ապահովագրության շրջանակներում** մասնակցության չափի միջեւ: Իսկ, օրինակ, Շվեդիայում, որտեղ կենսաթոշակը հասցվել է աշխատավարձի 60-80 տոկոսին, սոցիալական ապահովության վճարը կազմում է 18.5 տոկոս, ինչը հավասարապես բաշխվում է գործատուի եւ վարձու աշխատողի միջեւ: Ընդ որում, ընդհանուր վճարից 16 տոկոսը հատկացվում է բաշխողական, 2.5 տոկոսը՝ կուտակային համակարգին:

Սահմանադրական դատարանը կարելուորում է նաեւ այն հանգամանքը, որ սոցիալական ապահովության վճարը հարկով փոխարինելը՝ դրա օգտագործման հարցում էապես ընդլայնում է իշխանության հայեցողության սահմանները: Սոցիալական ապահովության վճարները ոչ միայն ունեն նպատակային հասցեագրում, այլեւ ընդհուպ գործատուի կողմից կատարվում են անհատականացման սկզբունքով՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար: Ուշադրության է արժանի, որ Աշխատանքի միջազգային բյուրոյի /Աշխատանքի միջազգային կազմակերպության Ժնեւի մշտական քարտուղարության/ «Աշխարհում սոցիալական ապահովության վիճակի վերաբերյալ» 2010 թվականի նոյեմբերի 16-ին հրապարակված առաջին զեկույցում հատուկ ուշադրություն հրավիրվեց այն հարցին, որ հատկապես տնտեսական ճգնաժամով պայմանավորված, ինչպես նաեւ պետական պարտքը կամ բյուջեի դեֆիցիտը կրճատելու համար պետությունները գնում են սոցիալական ապահովության միջոցների կրճատման ճանապարհով: Նման վտանգը մեզանում ավելի է մեծանում, երբ սոցիալական ապահովության միջոցները նպատակային մուտքերից չեն ձեւավորվում, այլ փոխարինվել են հարկով:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավական պրակտիկայում հստակ չէ նաեւ պատկերացումը «սոցիալական ապահովություն» սահմանադրական եզրույթի առնչությամբ: **Սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ է**, քանի որ ուղղված է հասարակության այն խավերի կենսագոյի ապահովմանը, ովքեր իրենցից անկախ պատճառներով դա անել չեն կարող: Առավել լայն հասկացություն է սոցիալական պաշտպանությունը, որը ներառում է ոչ միայն սոցիալական ապահովությունը, այլեւ սոցիալական ապահովագրությունը եւ պետության ու հասարակության կողմից իրականացվող սոցիալական օգնությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածը ճանաչում է ամրագրում է յուրաքանչյուրի ծերության, հաշմանդանության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում **սոցիալական ապահովության իրավունքը**: Նույն հոդվածը պարտավորեցնում է նաեւ օրենքով սահմանել սոցիալական ապահովության ծավալն ու ձեւերը: Ակնհայտ է, որ սոցիալական ապահովության խնդիրներին տարբերակված լուծում պետք է տրվի, եւ դրանք չեն կարող տարրալուծվել սոցիալական ապահովագրության ու սոցիալական աջակցության խնդիրներում:

Անառարկելի է նաեւ, որ սոցիալական ապահովության համակարգը պետք է խորությամբ հաշվի առնի տվյալ սոցիալական հանրության առջեւ կանգնած խնդիրների ու դրանց լուծման մոտեցումների ու հնարավորությունների առանձնահատկությունները: Այսուհանդերձ, կան հարցեր, որոնք միջազգային պրակտիկայում ընդհանրական լուծում են ստացել եւ այդ հարցերում սեփական սխալի ուղղման ճանապարհով ընթանալը ճիշտ մոտեցումը չէ: Մասնավորապես, ամբողջ աշխարհում սոցիալական ապահովության ձեւերի թվում առաջնահերթ տեղ են զբաղեցնում կենսաթոշակները: Իսկ, օրինակ, համաեվրոպական պրակտիկան այնպիսին է, որ եթե անգամ կենսաթոշակային անհատական հաշիվներ են բացվում՝ կամավոր կամ պարտադիր, ապա դրանց փոխանցումները կատարվում են սոցիալական ապահովության վճարներից: **Կայուն սոցիալական վճարների վրա խարսխված սոցիալական ապահովության համակարգն առավել հուսալի է եւ մարդկանց սոցիալական ապաստիլքների տեսակետից՝ ավելի ապահով**: Այս մոդելն առավել բնորոշ է սոցիալական ուղղվածություն ունեցող շուկայական տնտեսական հարաբերություններին, ինչպես նաեւ **սահմանադրորեն իրենց որպես սոցիալական հոչակած պետություններին**: Ի տարբերություն **սոցիալական-իրավական պետությունների**, որոշ մեթոդաբանական առանձնահատկություններ են առկա **ազատական-իրավական պետության** մոդելն ընտրած երկրներում: Եվրոպական միությունը, մասնավորապես, լիսաբոնյան համաձայնագրի շրջանակներում որդեգրեց սոցիալական շուկայական տնտեսության հայեցակարգը, եւ պատահական չէ, որ Եվրամիության անդամ երկրների համար տիպական է սոցիալական ապահովության վճարների հաշվին թե՛ բաշխողական եւ թե՛ կուտակային կենսաթոշակային համատեղ ու փոխլրացնող համակարգերի ներդրումը:

Հետետությունն այն է, որ սոցիալական ապահովության համար կատարած վճարն ի սկզբան» նպատակային բնույթ ունի, եւ այն օրենքով սահմանելը սոցիալական հեռանկարը դարձնում է առավել կանխատես-

սելի: Որոշակի են նաև այդ վճարը կատարելու պարտավորությամբ օժտված սուբյեկտները՝ գործատուն եւ ինքը՝ աշխատողը: Պետության պարտավորությունն է՝ օրենսդրական կանոնակարգման ճանապարհով այդ հարաբերություններին կայուն եւ երաշխավորված բնույթ հաղորդել, միջոցներ ձեռնարկել սոցիալական ապահովության խնդիրների արդյունավետ ու նպատակային լուծման համար: Այդ առանձնահատկությունից ելնելով է, որ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանվել էր, որ «Սոցիալական վճարներն ապահովադիրների կողմից պարտադիր կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող միջոցներ են»: Իսկ ահա եկամտային հարկի դեպքում թե՛ «Եկամտահարկի մասին» նախկին օրենքով, թե՛ «Եկամտային հարկի մասին» գործող օրենքով /հոդվածներ 2/ այն համարվում է «...հարկ վճարողների կողմից ... պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ», այսինքն՝ պետության կողմից անմիջականորեն հարկ վճարողի եկամտից գանձվող հարկ: Հարկ վճարողների կողմից վճարվող ուղղակի հարկը եւ ապահովադիրների կողմից կատարվող սոցիալական ապահովության վճարը թե՛ իրավական բնույթի ու բովանդակության եւ թե՛ հետապնդվող նպատակների առումով նույնական չեն:

Այս հարցում կարելու է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության հստակ իրացման պահանջը: Համապետական խնդիրների լուծման, ինչպես նաև մարդկանց սոցիալական ապահովության նյութական երաշխիքներ ստեղծելու նպատակով Սահմանադրության հիշյալ հոդվածով սահմանված է, որ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով եւ չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»: Այդ նպատակն էին հետապնդում «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» եւ «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված իրավակարգավորումները, որոնք, ինչպես նշվեց, միատեղվեցին 2010թ. դեկտեմբերին ընդունված «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի իրավական բովանդակության բացահայտման շրջանակներում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել 2008թ. մայիսի 13-ի ՄԴՈ-753 որոշման մեջ, որին անդրադարձել է նաև դիմող կողմը: Սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ «...հիշյալ հոդվածում

նշված հարկերը եւ տուրքերը եւս պարտադիր վճարումներ են, եւ, հետեւաբար, հիշյալ հոդվածում նշված պարտադիր այլ վճարումները, հարկերից եւ տուրքերից տարբերվելով հանդերձ, վերջիններիս հետ պետք է ունենան ընդհանուր հատկանիշներ»:

Հարկային օրենսդրության վերլուծության արդյունքների հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Սահմանադրության 45-րդ հոդվածում մատնանշված պարտադիր վճարները.

ա/ կրում են հանրային իրավական բնույթ, այսինքն՝ սահմանվում եւ վճարվում են հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում,

բ/ նախատեսված են պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվելու համար»:

Այս ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ եթե պարտադիր կուտակային վճարները հանդես գային որպես սոցիալական վճարներ, խելամիտ հարաբերակցության մեջ դրվեին ոչ սոցիալական ապահովության նպատակ հետապնդող հարկային այլ վճարների հետ, **փոխանցվեին պետական բյուջեի հատուկ հաշվին եւ պայմանագրային հիմունքներով կամ օրենքով նախատեսված հստակ երաշխիքներով ու պետության պատասխանատվությամբ տրվեին կառավարման, ապա.**

ա/ համակարգը, բյուջետային վերահսկողության շրջանակներում, կհայտնվեր նաեւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ուղղակի վերահսկողության դաշտում, ինչը կնեծացներ միջոցների խելամիտ կառավարման եւ վերադարձնելիության երաշխավորման հուսալիությունը,

բ/ առարկայական կլիներ Հայաստանի Հանրապետության կառավարության պարտավորությունը՝ արդյունավետ վերահսկողության եւ հանրային-իրավական պատասխանատվության առումով,

գ/ զգալի չափով կնեծանար հանրային վստահությունը համակարգի հուսալիության նկատմամբ,

դ/ նման համակարգը հնարավորություն կտար օրենքով խրախուսման լրացուցիչ մեխանիզմներ նախատեսել նաեւ կամավոր կուտակային բաղադրիչի մասնակիցների համար:

10. Հայաստանի Հանրապետությունում ներդրված պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին բնորոշ է եւ այն, որ աշխատողն աշխատավարձից նախ վճարում է եկամտային հարկ, այնուհետեւ անվանական /այլ ոչ թե փաստացի/ աշխատավարձից վճարում է կուտակային վճար: Գործնականում վճարված հարկից նույնպես պարտա-

դիր կուտակային վճար է հաշվարկվում: Միջազգային պրակտիկայում առավել տարածված է այն մոտեցումը, որ կուտակային վճարներն ազատվում են բոլոր տեսակի հարկերից:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ ընդհուպ եկամտային հարկը հաշվարկելիս հարկ վճարողի պարտադիր կուտակային վճարները եկամտային հարկի հարկման բազայից չեն նվազեցվում: Հատկանշական է, որ նույն 6-րդ հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերով համապատասխանաբար նվազեցվող եկամուտներ են համարվում՝ կամավոր կուտակային կենսաթոշակային վճարումները եւ պարտադիր կուտակային կենսաթոշակի շրջանակներում՝ միայն պետության կողմից հարկ վճարողի համար կատարված կուտակային վճարները: Մույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն իրավասու չէ գնահատել նաեւ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների սահմանադրականությունը, սակայն գտնում է, որ նման իրավակարգավորումը խնդրահարույց կարող է լինել:

Կարելի է նաեւ կուտակային ֆոնդեր կատարվող վճարումների տուկոսադրույքի ընտրության խնդիրը, ինչն ինքնանպատակ չի կարող լինել: Այն առաջին հերթին պետք է համապատասխանի իրավական համաչափության սկզբունքին: Տվյալ պարագայում խնդիրը հանգում է **անձի ընթացիկ եւ հեռանկարային կենսաապահովման միջեւ խելամիտ հարաբերակցության սահմանմանը**: Որպես դրա հավասարակշռման կարելի գործոն կարող է հանդես գալ գործատուի համարժեք մասնակցությունը: Ուստի, դարձյալ միջազգային փորձը վկայում է, առավել հավասարակշռված լուծում կարող է գտնվել աշխատողի, պետություն գործատուի եւ ոչ պետական ձեռնարկություն-կազմակերպություն գործատուների համատեղ մասնակցությամբ սոցիալական ապահովության այնպիսի հնարավորությունների ստեղծման ճանապարհով, երբ, մի կողմից, կենսաթոշակային, այդ թվում՝ կուտակային, ֆոնդերի ձեւավորման հարցում աշխատողը մասնակցում է սոցիալական ապահովության այնպիսի վճարներով, ինչը ներդաշնակեցված է թե՛ ժամանակի մեջ իր կենսաապահովման եւ թե՛ հարկային ծանրաբեռնվածության հետ, մյուս կողմից՝ ոչ թե պետական բյուջեն, այլ բոլոր գործատուներն են հանդես գալիս համարժեք ֆոնդերի ձեւավորման մասնակիցն ու դրանց նպատակային օգտագործման երաշխավորը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իրավասու չէ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին կամ

Հայաստանի Հանրապետության կառավարությանը կենսաթոշակային ֆոնդերի ձեւավորման քանակական հարաբերակցության կոնկրետ լուծումներ առաջարկել, ինչը նրանց հայեցողության սահմաններում է: Սակայն միջազգային փորձը եւ մեր երկրի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական եւ այլ առանձնահատկությունները վկայում են, որ հնարավոր է սոցիալական ապահովության համակարգի բարեփոխումների գործընթացին օրենքով սահմանված կարգով ու շրջանակներում մասնակից դարձնելով բոլոր գործատուներին՝ գտնել այդ հարաբերակցությունը՝ թեթեւացնելով աշխատողների անհատական մասնակցության բեռը:

11. Պարտադիր կուտակային բաղադրիչի մասով առկա օրենսդրական կարգավորումները հստակ չեն լուծում առանցքային կարելություն այն խնդիրը, թե ինչպես վարվել նվազագույն աշխատավարձ ստացողների պարագայում, ինչը կարելի է սահմանադրական խնդիր է: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նախատեսված է Սահմանադրության 32-րդ հոդվածով, օրենքով սահմանվում է նվազագույն աշխատավարձի չափը: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով՝ ամսական հարկվող եկամտի չափը մինչեւ 120000 դրամ լինելու դեպքում, եկամտային հարկի գումարը կազմում է դրա 24.4 տոկոսը: Որեւէ ներքին սահման առանձնացված չէ: «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել է 45000 դրամ: Նույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված է, որ «Նվազագույն ամսական աշխատավարձի չափի մեջ չեն ներառվում աշխատավարձից վճարվող հարկերը, հավելումները, հավելավճարները, պարգևատրումները եւ խրախուսման այլ վճարները»: Նման ձեւակերպումը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Մի կողմից, հարկերը չեն ներառվում նվազագույն ամսական աշխատավարձի չափի մեջ, մյուս կողմից՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, առանց ներքին սահման դնելու, նախատեսված է, որ մինչեւ 120000 դրամ եկամտի դեպքում հարկի գումարը կազմում է 24.4 տոկոս: Դրանից միայն կարելի է ենթադրել, որ նշված բոլոր վճարները կատարվում են գործատուի հաշվին կամ նման հարկեր չեն գանձվում: Սակայն օրենքը ցանկացած պարտավորություն պետք է հստակ սահմանի եւ բացառի հայեցողական մոտեցում այս հարցում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշա-

կիրության սկզբունքին համապատասխան եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ նվազագույն աշխատավարձի դեպքում պարտադիր կուտակային կենսաթոշակի վճարման խնդիրն օրենսդրական համարժեք լուծում չի ստացել: Հաշվի չի առնվել նաեւ «Կենսաապահովման նվազագույն զանբյուրի եւ կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, որի 4-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ կենսաապահովման նվազագույն զանբյուրի եւ կենսաապահովման նվազագույն բյուջեի սահմանումը նպատակ ունի, մասնավորապես, հիմնավորել սահմանվող նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաեւ նպաստների եւ սոցիալական այլ վճարների չափերը, **որոշել չհարկվող եկամտի չափը:** Սակայն վերջինս, ինչպես փաստվեց, համաձայն «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ այլեւս գոյություն չունի:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի եւ օրենքով սահմանված **նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունք:** «Նվազագույն աշխատավարձ» սահմանադրական եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է, որ **աշխատողի փաստացի աշխատավարձն օրենքով նախատեսված նվազագույնից պակաս լինել չի կարող,** որովհետեւ դա պետք է կենսական նվազագույն որոշակի խնդիրների լուծում ապահովի: «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանադրաիրավական այս մոտեցումը չի դրել տվյալ հիմնախնդրի օրենսդրական կանոնակարգման հիմքում եւ փաստացի իրավակարգավորումը ներդաշնակ չէ Սահմանադրության 32-րդ հոդվածի պահանջներին:

12. Նկատի ունենալով կենսաթոշակային ոլորտի համակարգային բարդությունները եւ ժամանակի գործոնի ազդեցությունը, գրեթե բոլոր երկրներում բարեփոխումների հաջողության գրավական է դիտվել հանրային վստահությունն այդ համակարգի ու իրականացվող քայլերի նկատմամբ: Այդ վստահությունը վերացական լինել չի կարող: **Այն ձեւավորվում է համակարգի գործառութային ու կառուցակարգային գործունակության երաշխիքներով, վերահսկողական համակարգի հուսալիությամբ, թափանցիկությամբ, մարդկանց սպասելիքների կանխատեսելիության աստիճանով:** Առաջին հերթին օրենսդրական կանոնակար-

գումը պետք է նման երաշխիքներ ամրագրի եւ այս հարցում նախատեսի նաեւ խորհրդարանական ու այլ վերահսկողական լծակների արդյունավետ գործադրում:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այս հիմնախնդրին նույնպես անդրադառնալ սահմանադրական պահանջների եւ դրանց հետեւողական իրացման անհրաժեշտության տեսանկյունից՝ երաշխավորելու համար Սահմանադրության գերակայությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը: Հստակ է, որ սահմանադրական տվյալ դրույթը վերաբերում է անձանց բոլոր իրավունքներին: Դրա հետ մեկտեղ, ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սահմանադրական կարգի հիմունքների 8-րդ հոդվածում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը: Նկատի ունենալով, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սեփականության իրավունքն օրենքով չսահմանափակվող իրավունք է, ուստի **առավել եւս դրա պաշտպանության պայմաններն ու կարգը միմիայն օրենքով կարող են սահմանվել:**

Քննության առարկա օրենքով պահպանված չէ այս տրամաբանությունը: Մասնավորապես, օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով կենսաթոշակային ֆոնդերի փայերը համարվում են մասնակցի անձնական սեփականությունը: Դրա պաշտպանության հիմնական երաշխիքը համարժեք ֆոնդի տնօրինման կարգով ու պայմաններով է պայմանավորված: Առկա է անձանց իրավունքների իրականացման ու պաշտպանության պայմանների ու կարգի սահմանման խնդիր: Սահմանադրական պահանջ է, որ այն պետք է դառնա օրենքի կանոնակարգման առարկա: Այնինչ քննության առարկա օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով եւ 44-րդ հոդվածով այդ իրավասությունը՝ քանակային եւ արժույթային սահմանափակումների սահմանման շրջանակներում, ինչպես նաեւ երաշխիքային ֆոնդի տնօրինման եւ կառավարման կարգի ու պայմանների սահմանման մասով վերապահվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Այստեղ ուշադրության է արժանի եւ այն, որ կառավարությունը սահմանում է նաեւ այդ ֆոնդի **տնօրինման** պայմանները: Տնօրինումը ենթադրում է նաեւ իրավական կարգավիճակի

կամ գույքի ճակատագրի որոշման իրավունք: Ֆոնդի միջոցները քաղաքացիների սեփականություն է ճանաչվել օրենքով, սակայն սեփականության տնօրինման պայմանները ոչ թե օրենքով են սահմանվում, այլ սահմանում է կառավարությունը: Նման կանոնակարգումը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի եւ 89-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից:

Միջազգային պրակտիկայում կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ներդրման սահմանափակումները նույնպես, որպես այդ միջոցների ապահովման ու պաշտպանության երաշխիք, սահմանվում են օրենքով /օրինակ, Բուլղարիա՝ «Մոցիալական ապահովության օրենսգիրք», գլուխ 25, Ռումինիա՝ «Մասնավոր կենսաթոշակների մասին» օրենք, գլուխ 4, Լեհաստան՝ «Կենսաթոշակային հիմնադրամների կազմակերպման եւ գործունեության մասին» օրենք, գլուխ 15, Մակեդոնիա՝ «Պարտադիր ֆինանսավորվող կենսաթոշակային ապահովության մասին» օրենք, գլուխ 13: Համանման ակտեր են գործում նաեւ Հունգարիայում, Խորվաթիայում, Սլովակիայում եւ այլ երկրներում /:

Այս հարցն առանցքային նշանակություն ունի ֆոնդի միջոցների արդյունավետ կառավարման, ռիսկայնության փոքրացման, վերադարձներիության երաշխավորման եւ համակարգի նկատմամբ վստահության ամրապնդման տեսանկյունից: «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է, թե ինչ ոլորտներում չեն կարող ներդրվել կենսաթոշակային ֆոնդի ակտիվները: Ամրագրվել են նաեւ բավականին վերացական բնույթի պարտավորություններ ֆոնդի կառավարչի համար: Սակայն տվյալ իրավահարաբերություններում առանցքային է այդ սահմանափակումների քանակային ու արժույթային շրջանակների օրենսդրական հստակեցումը՝ այն չափով, որպեսզի գործադիր իշխանության հայեցողությունը բացարձակ չլինի: Դա է հուշում նաեւ միջազգային փորձը: Օրինակ, Բուլղարիայում նախատեսված է, որ պարտադիր կուտակային ֆոնդերի ներդրումների առնվազն 50 տոկոսը պետք է ներդրվի կառավարության կողմից թողարկված եւ երաշխավորված արժեթղթերի գնման միջոցով: Նման պահանջ է դրված նաեւ Խորվաթիայում եւ մի շարք այլ երկրներում: Իսկ Ռումինիայում սահմանված է, որ կուտակային ֆոնդերի կողմից ներդրումների մինչեւ 70 տոկոսը կարող է իրականացվել Ռումինիայի, Եվրամիության անդամ երկրների եւ Եվրոպական տնտեսական տարածքի անդամ պետությունների կողմից թողարկված արժեթղթերում: Օրենքով հստակ սահմանափակվում են նաեւ արտասահմանում կատարվող ներդրումների, ինչպես նաեւ դրամական շուկայի գործիքներում,

չգրանցված արժեթղթերում, անշարժ գույքի հետ կապված գործարքներում եւ մի շարք այլ ոլորտներում կատարվելիք ներդրումների չափաքանակները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1685-Ն որոշմամբ նույնպես նախատեսել է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակային եւ արժույթային սահմանափակումներ: Մասնավորապես, նախատեսվել է, որ բանկային ավանդներում եւ հաշիվներում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել ֆոնդի ակտիվների 40 տոկոսը: Իսկ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, արտասահմանյան պետության կամ այդ պետության կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերում կատարվող ներդրումների ծավալը չի կարող գերազանցել ֆոնդի ակտիվների 60 տոկոսը: Սահմանվել են նաեւ այլ բնույթի սահմանափակումներ: Սակայն խնդիրը միայն այն չէ, թե դրանք որքանով են հիմնավոր՝ կառավարության ընթացիկ քաղաքականության եւ մեծ հեռանկարի հաշվով համակարգի հուսալիության երաշխավորման տեսանկյունից: Էական է եւ այն, թե ենթաօրենսդրական ակտով նման կանոնակարգումը որքանով է տնտեսական ու սոցիալական հարաբերությունների համար կայուն, վերահսկելի ու հուսալի նախադրյալներ ստեղծում: Միաժամանակ, զուտ իրավական խնդրի իմաստն այն է, թե կառավարությունը որքանով է իրավասու այս ճանապարհով կառավարել ոչ պետական սեփականություն հանդիսացող, օրենքով նախատեսված՝ փայամասնակցության կարգով կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներին պատկանող միջոցները: Դարձյալ օրակարգի հարց է դառնում կառավարության հայեցողության սահմանների՝ օրենքով հստակեցման խնդիրը:

13. Համակարգի հուսալիության կարելորագույն երաշխիքներից մեկն էլ ռիսկերի կառավարումն է: Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ֆոնդի ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները եւս օրենքով չեն սահմանվել, այլ վերապահվել են բացառապես Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հայեցողությամբ: «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով սահմանված է. «Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով»: Բացի դրանից, նույն օրենքի 25-րդ հոդվածը, որը վերնագրված է «Կենսաթոշակա-

յին ֆոնդի կառավարիչների նկատմամբ պահանջներն ու սահմանափակումները», սահմանում է, որ «Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ գործում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ներդրումային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ սահմանված պահանջներն ու սահմանափակումները, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենքով»: «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլուխն է /հոդվածներ 35-37/ նվիրված տվյալ իրավահարաբերություններին, որում օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ. «Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանում է Կենտրոնական բանկը»: Բացի դրանից, տվյալ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ «Սույն օրենքի 40-րդ հոդվածով նախատեսված թույլատրելի գործիքներում ֆոնդի ակտիվների ներդրման սահմանափակումները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013թ. դեկտեմբերի 27-ի թիվ 324-ն որոշմամբ սահմանվել է «Ներդրումային ֆոնդի կառավարչի ներքին հսկողության եւ ռիսկերի կառավարման համակարգի նկատմամբ նվազագույն պահանջները» /կանոնակարգ 10/16/: Անկախ այն հանգամանքից, որ օրենքով նախատեսված «**պահանջները**» ենթաօրենսդրական ակտով սահմանափակվել են «**նվազագույն պահանջներին**» շրջանակով, բովանդակային առումով նույնպես փաստաթուղթը հեռու է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, մասնավորապես՝ դրա 45-րդ հոդվածի պահանջներից, կառուցված է «պետք է», «անհրաժեշտ է» դարձվածքներից բխող ցանկությունների վրա եւ համակարգի հուսալիության ապահովման կոնկրետ երաշխիքներ չի բովանդակում:

Ի դեպ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի **հիմնական խնդիրը** Հայաստանի Հանրապետությունում **զների կայունության ապահովումն է**: Ավելին, «Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «Եթե Կենտրոնական բանկի մյուս խնդիրները հակասում են իր հիմնական խնդրին, Կենտրոնական բանկն առաջնություն է տալիս հիմնական խնդրին եւ ղեկավարվում է դրա իրագործման անհրաժեշտությամբ»: Առավել եւս նման իրավակարգավորման պայմաններում կարելի է կենսաթոշակային ֆոնդերի ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջների, հիմնական սկզբունքների,

ինչպես նաև կուտակային ֆոնդի ակտիվների ներդրման սահմանափակումների հիմնական շրջանակի օրենքով կանոնակարգումը:

Պակաս կարելու չէ նաև այն հանգամանքը, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին վերապահելով նորմաստեղծ, վերահսկողական եւ կազմակերպական լայն լիազորություններ, չի նախատեսել համակարգի բնականոն գործունեության երաշխավորման համար կենտրոնական բանկի համարժեք հանրային-իրավական պատասխանատվության որեւէ միջոց:

Օրենքով հստակեցված չեն նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի այն գործառույթի իրականացման կարգն ու պայմանները, համաձայն որի վերջինս՝ «...մշակում եւ ապահովում է կուտակային կենսաթոշակային բաղադրիչի միասնական քաղաքականությունը» /հոդվ. 17, մաս 1, կետ 3/:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ ելնելով քննության առարկա իրավահարաբերությունների բնույթից ու առանձնահատկություններից, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ պահանջներն ու սահմանափակումները՝ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան, նույնպես պետք է քննության առարկա օրենքի կանոնակարգման առարկա լինեն: Ուստի վերանայման անհրաժեշտություն ունի նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածը:

14. Կենսաթոշակային ֆոնդերի համար սկզբունքային նշանակություն ունի ֆոնդում առկա փայերի ինդեքսավորման կամ տարեկան գնաճով ճշգրտման խնդիրը: Միջազգային պրակտիկայում ի սկզբանե թոշակային համակարգի առանցքային խնդիր է համարվել այն, որ **կենսաթոշակները չպետք է կորցնեն իրենց գնողունակությունը:** Հարցն այն է, որ կենսաթոշակի համար անհրաժեշտ միջոցի ձեւավորման եւ սոցիալական ապահովության իրավունքի իրացման միջեւ առկա է ժամանակի գործոնի ազդեցությունը: Այն հաշվի չառնելու դեպքում անհնարին կլինի համարժեք միջոցներ կուտակել եւ երաշխավորել մարդկանց սոցիալական ապահովության իրավունքի իրացումը: Բացի դրանից, **կուտակային վճարների ամբողջ գումարի տարեկան գնաճով ճշգրտումն այդ գումարներն ամբողջությամբ հետ ստանալու իրավունքի պաշտպանության նպատակ է հետապնդում եւ օրենքի կարգավորման առարկա է:**

Միաժամանակ, այս հարցում օրենքով նախատեսված երաշխիքների առկայությունը համակարգի հուսալիության կարևորագույն գրավականներից է: «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը գրեթե շրջանցել է այս հիմնախնդիրը՝ օրենքով իրավական համարժեք երաշխիքներ չնախատեսելով կուտակային վճարների գումարի տարեկան գնաճով ճշգրտումն ապահովելու համար: Դրա փոխարեն լուծված է կառավարությանը որոշակի /այս դեպքում՝ նույնպես բացարձակ/ հայեցողություն վերապահելու խնդիր: Օրինակ, օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով պարզապես սահմանվել է, որ «...կուտակային վճարների գումարի՝ տարեկան գնաճով ճշգրտման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: Օրենսդիրը ոչ միայն անուշադրության է մատնել վճարների գումարի՝ տարեկան գնաճով ճշգրտման՝ **օրենքով նախատեսված երաշխիքների ամրագրման եւ տարբեր օրենսդրական ակտերում /մասնավորապես՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում/ ամրագրված իրավակարգավորումների հետ դրանց ներդաշնակեցման անհրաժեշտությունը՝** որպես սոցիալական ապահովության իրավունքի իրացման երաշխիք, այլև որեւէ չափով այս հարցում չի հստակեցրել գործադիր իշխանության հայեցողության սահմանները:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը չի համապատասխանում նաեւ իրավական որոշակիության սկզբունքին: **Իրավական որոշակիության, իրավական անվտանգության եւ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը:** Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձեւակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել եւս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:** Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից

մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Խնդրի հրատապությունն այն է, որ տարբեր երկրներում, որտեղ առաջին փորձերն արվեցին կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ուղղությամբ, գնաճով պայմանավորված կուտակային վճարների վերահաշվարկի օրենսդրական ոչ հստակ կարգավորումները լուրջ խնդիրների հանգեցրին:

15. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքների եւ պարտականությունների համաչափության սկզբունքի տեսանկյունից պետք է դիտարկել նաև քննության առարկա օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասը: Դրանով նախատեսվում է, որ «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գումարի վերադարձելիությունը գումարի 20 տոկոսով երաշխավորում է սույն օրենքի հիման վրա ստեղծված Երաշխիքային ֆոնդը, իսկ մնացած 80 տոկոսով՝ Հայաստանի Հանրապետությունը»: Տարբեր երկրներում նաև ֆոնդի կառավարիչներն են իրենց սեփական միջոցներով մասնակցում երաշխիքային ֆոնդերի ձևավորմանը, եւ այդ մասնակցությունը ծանրակշիռ է լինում: Օրինակ՝ Խորվաթիայում, եթե կենսաթոշակային ֆոնդը չի կարողանում ապահովել վերադարձվելիք գումարի նվազագույն չափը, ապա դա տեղի է ունենում նրա պահուստային ֆոնդի հաշվին: Եթե այդ միջոցները եւս անբավարար են, օգտագործվում է կենսաթոշակային ֆոնդի կառավարումն իրականացնող կազմակերպության սեփական կապիտալի 20 տոկոսը: Եթե երկու հիշյալ աղբյուրներն էլ անբավարար են, ապա պետությունը պարտավոր է ապահովել մնացած մասի վճարումը:

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունը, ֆոնդի կառավարիչներին տալով տվյալ գործունեությամբ զբաղվելու իրավասություն, նրանց հետ՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, **չմտնելով հստակ իրավապայմանագրային հարաբերությունների մեջ կամ օրենքով համարժեք պատասխանատվություն ենթադրող հստակ պայման չառաջադրելով**, ստանձնում է նրանց հնարավոր ձախողման դեպքում գումարի վերադարձնելիության հիմնական պատասխանատվությունը /80 տոկոսի չափով/, ինչն էապես մեծացնում է ֆոնդի միջոցների կառավարման ռիսկայնությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքների եւ

պարտականությունների հավասարակշռումը, պարտականությունների հարցում թերացման համար համարժեք պատասխանատվության սահմանումն իրավակարգավորման եւ օրինաստեղծ գործունեության կարեւորագույն պայմաններից են եւ հետեւողական իրացում են պահանջում:

16. Նկատի ունենալով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորվող իրավահարաբերությունների առանձնահատուկ բնույթն ու բարդության աստիճանը, հաշվի առնելով միայն տասնամյակների ընթացքում վերջնական արդյունքների ամբողջական գնահատման հնարավորությունը՝ մարդկանց սահմանադրական իրավունքների պաշտպանության համապատասխան երաշխիքներ ապահովելու առումով, անհրաժեշտ էր նախատեսել սույն օրենքի իրավակարգավորումներին բնորոշ իրավախախտումների համար իրավական պատասխանատվության /քրեական, քաղաքացիական, վարչական/ կոնկրետ եւ տարբերակված մոտեցումներ: Միջազգային պրակտիկան վկայում է, որ ընդհանրապես մասնավոր թոշակային ֆոնդերի հանդեպ հանրային վստահության աստիճանը ցածր է: Եվրոպական միության առանձին երկրներում հանրային հարցումները վկայում են, որ այդ վստահության աստիճանը 5-8 տոկոսի սահմաններում է: Նման վիճակը թելադրում է հատկապես իրավասու սուբյեկտների պատասխանատվության իրավական երաշխիքների ամրապնդման անհրաժեշտություն:

Քննության առարկա օրենքն այս հարցերին գլխավորապես անդրադարձել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերահսկողական լիազորությունների ապահովման շրջանակներում /հոդվածներ 77-84/: Սակայն օրենքի կիրարկման հետ մեկտեղ համարժեք փոփոխություններ չեն կատարվել նաեւ իրավական պատասխանատվություն նախատեսող այլ իրավական ակտերում: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քրեական եւ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը գործնականում շրջանցել են այդ հիմնախնդիրը: Իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 968.9-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, որ «Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներին պատճառած վնասները հատուցվում են օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով»՝ ավելի շատ ունի վերացական բնույթ: Այնինչ այս ոլորտում պատասխանատվության հստակ կանոնակարգումը համակարգի նկատմամբ վստահության կարեւոր երաշխիք կարող էր հանդիսանալ: Այս խնդրին նույնպես մեծ կարեւորություն է տրվում միջազգային պրակտի-

կայում: Մասնավորապես, ուշադրության են արժանի Սլովենիայի եւ Ռուսինիայի օրինակները: Իսկ ԱՄՆ-ում թոշակային ֆոնդերի հետ կապված ֆինանսական իրավախախտումներն օրենքով համարվում են **առանձնապես ծանր հանցանք** եւ ազատագրկման ձեռով պատիժ է սահմանվում 20 տարի եւ ավելի:

Պետք է նկատի ունենալ նաեւ, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասով ուղղակի սահմանված է, որ «Նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր ...որոնց չկատարման համար իրավական հետեւանքներ նախատեսված չեն»:

17. Բազմաթիվ երկրներում լուրջ խնդիրներ է առաջացնում նաեւ ոչ լեգալ, ստվերային աշխատանքային գործունեությունը, երբ գործատուները փաստացի աշխատողների համար պատշաճ չձեւակերպված վճարներ են կատարում՝ հարկերը եւ սոցիալական ապահովության վճարները թաքցնելու համար: Այս երեւոյթն զգալի տարածում է գտել նաեւ մեզանում եւ ծավալման միտում ունի: Հատկապես կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում այս հարցում նույնպես օրենսդրական համարժեք լուծումները, տվյալ իրավախախտումների հնարավոր բացառումը հրատապ օրակարգային խնդիրներ են:

Միջազգային փորձը վկայում է նաեւ, որ կուտակային կենսաթոշակային համակարգերի համար լուրջ խնդիրներ են բարդ վարչարարությունը եւ վարչական մեծ ծախսերի անհրաժեշտությունը: Բնակչության ցածր կենսամակարդակի, գործազրկության մեծ տոկոսի, տնտեսության ստվերայնության բարձր աստիճանի պայմաններում կուտակային կենսաթոշակների նպատակային օգտագործումը, համակարգի հուսալիության ապահովումը պահանջում են առավել գործուն իրավական երաշխիքներ՝ համակարգում ներգրավված իրավասուբյեկտների պատշաճ պատասխանատվությունն ապահովելու եւ մարդկանց սահմանադրական իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու համար: Մասնավորապես, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Ծառայությունների համար վճարները» վերտառությամբ 9-րդ գլուխը կանոնակարգում է այդ իրավահարաբերությունները: Սակայն կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված ծախսերի առավելագույն չափի սահմանումը վերապահված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին /հոդվ. 45, մաս 1/: Առանձին երկրներում կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված ծախսերի առավելագույն չափը նույնպես սահմանվում է օրեն-

քով: Հայաստանի Հանրապետությունում նույնպես այն կարող է սահմանվել օրենքով, կամ դառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ կենսաթոշակային ֆոնդի միջեւ պայմանագրային պարտավորությունների շրջանակներում կանոնակարգման առարկա:

Օրենքով առնվազն պետք է հստակ չափանիշներ սահմանվեն նաեւ կենսաթոշակային ֆոնդի գործունեության գնահատման համար, իսկ գնահատման արդյունքները պետք է լինեն թափանցիկ ու մատչելի հանրության համար:

Վերոշարադրյալ խնդիրների, մասնավորապես՝ միջազգային պրակտիկայում կուտակային կենսաթոշակային համակարգի զարգացման առանձնահատկությունների ու առկա միտումների վերաբերյալ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության /OECD/ փորձագետների կողմից 2013 թվականին ծավալուն զեկույց հրապարակվեց: Վերջինիս ուսումնասիրությունը վկայում է, որ բոլոր այն երկրներում, որտեղ բացթողումներ են եղել հատկապես գնաճով պայմանավորված կուտակային վճարների վերահաշվարկի իրավական կարգավորման, ֆոնդերի կառավարման գործընթացի ու վարչական ծախսերի վերահսկման գործուն կառուցակարգերի ներդրման, համակարգի հուսալիության ու թափանցիկության երաշխավորման, օրենքով պատասխանատվության համարժեք միջոցների սահմանման եւ մի շարք այլ հարցերում, անխուսափելիորեն հանգեցրել են լուրջ բացասական հետեւանքների:

18. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը սույն գործը քննության ընդունելուց հետո, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներից ելնելով, 2014թ. հունվարի 24-ի ՍԳԱՌ-3 որոշմամբ՝ որպես դիմումի ապահովման միջոց, մինչեւ գործի դատաքննության ավարտը կասեցրեց քննության առարկա օրենքի 76-րդ հոդվածի եւ 86-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եւ պետական կառավարման տարբեր մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման տարաբնույթ մեկնաբանության փորձերը որոշ չափով նվազեցրին դիմումի ապահովման միջոցի արդյունավետությունը: Նկատի ունենալով, որ գործը դատաքննության նախապատրաստման փուլում էր եւ օրենքով սահմանադրական դատարանի որոշումների պարզաբանման ինստիտուտ նախատեսված չէ, սահմանադրական դատարանը 2014թ. փետրվարի 11-ի ՍԳԱՌ-6 աշխատակարգային որոշմամբ

արձանագրեց գործի դատաքննության շրջանակներում ստեղծված վիճակին անդրադառնալու անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության հարցերը չեն կարող ենթադասվել տեխնիկական ու կազմակերպչական ցանկացած բնույթի հանգամանքների, այլ այդ հարցերում իրավակիրառ պրակտիկական պետք է առաջնորդվի սահմանադրական նորմերի անմիջական գործողության եւ, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներով:

Գործի դատաքննության ընթացքում փաստեց, որ ս.թ. հունվար-մարտ ամիսների հաշվարկային տվյալներով Հայաստանի Հանրապետության 5337 քաղաքացիներ իրենց դիմումի հիման վրա ընտրել են կենսաթոշակային ֆոնդեր եւ ֆոնդերի կառավարիչներ: Շուրջ 10000 մարդ իր ընտրությունը վստահել է համակարգչին: 2014թ. մարտի 27-ի դրությամբ 127007 անձի համար գործատուի կողմից փոխանցում է կատարվել, նրանց համար բացվել են անհատական հաշիվներ, սակայն մասնակիցների համար դեռեւս չի կատարվել ֆոնդի եւ կառավարչի ընտրություն համակարգչային մոդուլի միջոցով, քանի որ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշիվները բացելուց հետո մասնակիցներն իրավունք ունեն 30 օրվա ընթացքում ֆոնդի ընտրությունն իրենք կատարել:

Առկա իրավիճակից ելնելով եւ գործընթացները սույն որոշման պահանջներին եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ իրենց իրավասության շրջանակներում, համապատասխան իրավակարգավորումներ իրականացնեն՝ պաշտպանելու համար մարդկանց սեփականության իրավունքը, այն կախվածության մեջ չդնելով տարաբնույթ տեխնիկական պայմաններից, թույլ չտալով գործող օրենքի հետադարձ ուժով կիրառում, իրականացվող քայլերի հիմքում ունենալով իրավունքի գերակայության սկզբունքի անվերապահ պահպանումն ու վերջինիս վերաբերյալ Հայաստանի Հանրապետության միջազգային իրավական պարտավորությունները:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաեւ, որ «Սահմանադրական դատարանի մասին» 2006թ. հունիսի 14-ի ՀՕ-58 Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասն իմպերատիվ պահանջ է առաջադրում սահմանադ-

րական դատարանի որոշման եզրափակիչ մասի վերաբերյալ: Դրա էությունը կայանում է նրանում, որ օրենքի կամ դրա առանձին դրույթների սահմանադրականության հարցով գործի դատաքննության արդյունքում սահմանադրական դատարանն **իրավասու է միայն ընդունել որոշում՝**

1) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

2) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

3) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ /վիճարկվող նորմերի շրջանակներում/ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված իրավասությունների եւ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրված դատավարական նորմերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշում ընդունելուց հետո այդ որոշման պահանջների հաշվառմամբ **քննության առարկա օրենքի հետագա համարժեք փոփոխությունների ու նաեւ կիրարկման հետ կապված բոլոր հարցերի լուծումը գտնվում է օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում:**

Միաժամանակ, հաշվի առնելով նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով», անհրաժեշտ է, որպեսզի սույն որոշման պահանջներից ու սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից բխող նոր իրավակարգավորումները սահմանադրական հիշյալ դրույթի շրջանակներում տարածվեն քննության առարկա օրենքին առնչվող իրավահարաբերություններին մասնակից բոլոր սուբյեկտների վրա՝ առանց ժամկետային սահմանափակման:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետու-

թյան օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 1-ին եւ 11-րդ մասերի, դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ այն մասով, որով չեն ապահովում յուրաքանչյուր անձի հայեցողությամբ իր սեփականություն հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավունքը եւ հանգեցնում են մարդու կամաարտահայտությունից անկախ նրա սեփականության իրավունքի սահմանափակման, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31 եւ 43-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Իրավունքի գերակայության եւ իրավական որոշակիության սկզբունքների պահանջներին համարժեք իրավունքների պաշտպանության կոնկրետ երաշխիքներ չամրագրելու եւ տվյալ իրավահարաբերություններում գործադիր իշխանության հայեցողության սահմանները չհստակեցնելու հանգամանքից ելնելով՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի, 3-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող եւ անվավեր:

3. Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «...որի տնօրինման ... կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» դրույթը եւ 44-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող եւ անվավեր:

4. Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող եւ անվավեր:

5. Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխ-

կապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքի արգելանքի միջոցով վարչական ակտի հիման վրա սեփականության իրավունքը սահմանափակող դրույթը՝ գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման սահմանափակման միջոցով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31 եւ 43-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր՝ հաշվի առնելով նաեւ, որ տվյալ դրույթին առնչվող իրավահարաբերությունները չեն վերաբերում քննության առարկա օրենքի իմաստով պարտադիր կուտակային վճար կատարողի /հարկային գործակալի/ անմիջական հարկային պարտավորությունների կատարմանը:

6. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-10-րդ մասերի, 8, 37, 38, 45-րդ հոդվածների, 49-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 86-րդ հոդվածի վեճի առարկա դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ այն սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ դրանցով նախատեսված իրավակարգավորումները **չեն կարող հիմքում ունենալ, մեկնաբանվել եւ կիրառվել մարդկանց հայեցողությունից անկախ նրանց սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող իրավակարգավորման համատեքստում, իսկ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների իրավունքները պետք է իրացվեն միայն համարժեք պարտավորություններով հավասարակշռման սկզբունքին համապատասխան:**

7. Հաշվի առնելով, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, մասնավորապես՝ սույն որոշման եզրափակիչ մասի 1-5 կետերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթները համակարգային առումով փոխկապակցված են Հայաստանի Հանրապետության շուրջ 50 օրենքներով եւ ութ տասնյակից ավելի այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված իրավակարգավորումների հետ, որոնց շատ դրույթներ սույն որոշման հիման վրա օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, ինչպես նաեւ նկատի ունենալով օրենքի պահանջը՝ համակարգային առումով իրավական անվտանգությունը չխաթարելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ

մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2014 թվականի սեպտեմբերի 30-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին եւ Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

Սույն որոշման պահանջներից բխող նոր իրավակարգավորումներից ելնելով եւ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ վերահաշվարկման են ենթակա մինչ այդ կատարված կուտակային վճարները:

8. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**2 ապրիլի 2014 թվականի
ՍԳՈ-1142**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱՎ ԱՐԶԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀՀ ՕՐԵՆՍՊԻՔԻ 37-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՍԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Ա. Վարդեանյանի, նույն վարչության մասնագետ Ս. Տերզիկյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 22.11.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը ՀՍՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին եւ ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Վարչական տույժ նշանակելու ժամկետները» վերտառությամբ 37-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող եւ տեւող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Հիշյալ հոդվածում ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել 18.08.93 ՀՕ-73, 23.06.97 ՀՕ-133, 13.06.06 ՀՕ-138-Ն, 11.05.11 ՀՕ-155-Ն, 09.02.12 ՀՕ-11-Ն, 05.12.13 ՀՕ-143-Ն ՀՀ օրենքներով:

2. Դիմողն իր դիրքորոշումը փաստարկում է նրանով, որ օրենսգրքի վիճարկվող նորմը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, քանզի չի սահմանում, թե որն է տեւող կամ շարունակվող իրավախախտումը: Ըստ դիմողի՝ ՀՀ օրենսդրությամբ եւս բացահայտված չէ «տեւող եւ շարունակվող իրավախախտում» եզրույթների բովանդակությունը: Նման պայմաններում, ըստ դիմողի, հստակ օրենսդրական սահմանումների, որոշակի պարտադիր չափանիշների եւ/կամ հիմքերի բացակայությունը (որոնց վրա կհիմնվեր վարչական մարմինը՝ զանցանքը տեւող կամ շարունակվող որակելու համար) արգելափակում է անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, քանի որ չկան մեխանիզմներ նշված որոշումների դեմ հակափաստարկներ ներկայացնելու համար:

Ընդ որում, սահմանադրական դատարան ներկայացրած գրավոր

բացատրություններում հստակեցնելով իր փաստարկները, արձանագրելով այն փաստը, որ տեւող եւ շարունակվող իրավախախտումների վերաբերյալ առկա են դոկտրինալ աղբյուրներ, դիմողն ընդունում է, որ «տեւող եւ շարունակվող իրավախախտում» եզրույթների բովանդակությունը **պետք է սահմանվի ՀՀ օրենսդրությամբ** եւ իր հետագա փաստարկներում չի հիմնավորում վերը նշված եզրույթների բովանդակությունը **հենց օրենսգրքի վիճարկվող նորմում** սահմանելու անհրաժեշտությունը:

Դիմողը գտնում է նաեւ, որ օրենսգրքի վիճարկվող նորմի՝ իրավական որոշակիության սկզբունքին հակասելու պայմաններում կարող է խախտվել նաեւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված՝ միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելու արգելքի սկզբունքը եւ նույն օրենքի 5-րդ հոդվածը, քանի որ վերջին դեպքում վարչական մարմինների լիազորությունները՝ զանցանքը տեւող կամ շարունակվող որակելու տեսանկյունից, հստակ չեն:

Ըստ դիմողի՝ նման պայմաններում իրավակիրառը կարող է պարզ իրավախախտումը եւս որակել որպէս տեւող կամ շարունակվող իրավախախտում եւ անձին ցանկացած դեպքում ենթարկել վարչական պատասխանատվության՝ արարքը բացահայտելու օրվանից երկու ամսվա ընթացքում՝ չկիրառելով օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակային սահմանափակումը:

3. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «տեւող իրավախախտում» եւ «շարունակվող իրավախախտում» հասկացությունների բովանդակության օրենսդրորեն բացահայտված չլինելը բավարար չէ այդ նորմը հակասահմանադրական դիտարկելու համար:

Իր դիրքորոշումը պատասխանողը հիմնավորում է նրանով, որ ինչպէս լեզվաբանական, այնպէս էլ օրենսդրական իմաստի տեսանկյունից «տեւող» եւ «շարունակվող» եզրույթները բավականին պարզ եւ հիմնականում միատեսակ ընկալելի են: Պատասխանողը, որպէս փաստարկ, վկայակոչում է համապատասխան բացատրական բառարանը, ինչպէս նաեւ համապատասխան մասնագիտական գրականությունը, որոնցում սահմանված են «տեւող» եւ «շարունակվող» եզրույթների լեզվաբանական եւ իրավաբանական իմաստները: Ըստ պատասխանողի՝ համապատասխան դոկտրինալ մեկնաբանությունների առկայության պայմաններ

րում դիտարկվող հասկացությունների օրենսդրական ամրագրումը չէր փոխի օրենսդրական կարգավորման էությունը, քանի որ յուրաքանչյուր կոնկրետ վարչական իրավախախտման կապակցությամբ որոշում կայացնելիս իրավակիրառն ստիպված է լինելու որոշում կայացնել այն մասին, թե արդյոք նշված իրավախախտումը տեղավորվում է համապատասխան հասկացությունների ներքո, թե՛ ոչ: Պատասխանողի կարծիքով, խնդիրը տվյալ դեպքում ոչ այնքան դիտարկվող հասկացությունների օրենսդրական ամրագրման մեջ է, որքան վարչական յուրաքանչյուր իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմի դիսպոզիցիայում դրա բնույթի ամրագրման մեջ:

Միաժամանակ, պատասխանողն արձանագրում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմի հետ կապված դատական պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանություններ չկան, իսկ դրանց առկայության դեպքում իր էական դերակատարությունը կարող է ունենալ ՀՀ վճռաբեկ դատարանը՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր առաքելությամբ:

Ամփոփելով՝ պատասխանողը գտնում է, որ, մի կողմից, առկա կարգավորումները հնարավորություն են տալիս ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը, մյուս կողմից՝ ղոկտրինալ մոտեցումները, իրավունքի աղբյուր լինելով, կարող են ոչ իմպերատիվ բնույթի, սակայն էական կողմնորոշող ազդեցություն ունենալ իրավակիրառողի իրավագիտակցության վրա՝ համապատասխան նորմերի ընկալման եւ կիրառման հարցում:

Պատասխանողը նաեւ կարծիք է հայտնում հետագա օրենսդրական բարեփոխումների շրջանակներում տեւող կամ շարունակվող իրավախախտումների չափանիշների եւ հատկանիշների օրենսդրորեն ամրագրման նպատակահարմարության հարցը քննարկելի դարձնելու հնարավորության մասին՝ ելնելով պրակտիկայի թելադրած առաջնահերթություններից:

4. Համադրելով կողմերի դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացված հիմնախնդիրը գլխավորապես հանգում է նրան, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի առկա կարգավորումների պայմաններում «...վարչական պատասխանատվության ենթարկված անձը վարչական մարմնի կողմից իրավախախտման տեւող կամ շարունակվող որակելու հանգամանքին հակադարձելու հնարավորություն չի ունենա, որովհետեւ հստակ չի կարող ընկալել թե կոնկրետ, որ դեպքում իր կողմից կատարված իրա-

վախախտումը ինչու է վարչական վարույթն իրականացնող մարմնի կողմից որակվել տեղող կամ շարունակվող»:

Փաստ է նաև, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում տրված չեն «տեղող եւ շարունակվող իրավախախտում» եզրույթների սահմանումները: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ. «Եթե նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահմանումները»:

Գործի նյութերից ակնհայտ է նաև, որ ապարդյուն են անցել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի փորձերը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի ու դրա կիրառման հարցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եւ ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանումներ ստանալու առումով: Տվյալ դրույթի առնչությամբ պաշտոնական պարզաբանում տալու հարցով հիշյալ մարմիններն իրենց չեն համարել որպես լիազոր մարմին:

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից սահմանադրական դատարան ներկայացված 27.03.2014թ. թիվ ԴԴ-1 Ե-1703 տեղեկանքի համաձայն՝ վեճի առարկա իրավադրույթների վերաբերյալ դատական պրակտիկա ձեւավորված չէ, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տվյալ հարցի առնչությամբ նախադեպային նշանակության որեւէ որոշում չի կայացվել:

5. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ. «... Հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը»: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող դրույթը պարունակող հոդվածը կրում է «Վարչական տույժ նշանակելու ժամկետները» վերտառությունը: Համապատասխան հոդվածի վերլուծությունից բխում է, որ վերջինս կոչված չէ սահմանելու վարչական իրավախախտումների տեսակների հասկացությունները: Միջազգային փորձի ուսումնասիրությունը եւս վկայում է այն մասին, որ նույնիսկ տեղող եւ շարունակվող վարչական իրավախախտումների հասկացությունների օրենսդրական ամրագրման պայմաններում վերջիններս եւ վարչական իրավախախտումների համար վարչական տույժեր նշանակելու ժամկետները սահմանվում են համապատասխան ակտի տարբեր հոդված-

ներում: Ուստի, վիճարկվող հողվածում տվյալ հասկացությունների բացակայությունն ինքնին չի հակասում իրավական որոշակիության սկզբունքին:

6. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ դիմողի կողմից բարձրացված հիմնախնդիրը պայմանավորված է ոչ թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավակարգավորումներով, այլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում **ընդհանրապես** «տեւող» եւ «շարունակվող» իրավախախտումների հասկացությունների բացակայությամբ:

Նման պայմաններում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել օրենսդրական բացի եւ իրավական եզրույթների սահմանումների օրենսդրական ամրագրման բացակայության հարաբերակցությունը: Նշվածի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ օրենսդրական բացը չի կարող մեխանիկորեն նույնացվել սոսկ այս կամ այն եզրույթի օրենսդրորեն ամրագրված սահմանման բացակայության հետ: Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետեւանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական եւ բնականոն իրագործումը: Մինչդեռ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի տեքստում տեւող եւ շարունակվող իրավախախտումների սահմանումների բացակայությունն իրավական հասկացության **օրենսդրական կանոնակարգման բացակայություն** է:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք, մասնավորապես՝ ՄԴՈ-864, ՄԴՈ-914 եւ ՄԴՈ-933 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումը հանդիսանում է օրենսդիր իշխանության իրավասությունը: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների՝ իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարել արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլոր-

տում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա հիմնախնդիրը պայմանավորված է ոչ թե վեճի առարկա նորմի տարակերպ մեկնաբանություններով, այլ պարզապես օրենսդրի կողմից օրենքում կիրառված հասկացությունները հստակեցված չեն: Առկա վիճակն իրավակարգավորման բաց է, որը պետք է հաղթահարվի ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**8 ապրիլի 2014 թվականի
ՍԳՈ-1143**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԼԵՎՈՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ
4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ
ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղ. Երևան

15 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող՝ քաղաքացի Լ. Պողոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դմբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Լեւոն Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Լ. Պողոսյանի՝ 2013 թվականի

նույնքերի 20-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաեւ հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական եւ անհիմն որոշումների եւ գործողությունների բողոքարկումը դատարան» վերառությամբ 290-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 4-րդ մասը սահմանում է.

«4. Բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին եւ վարույթն իրականացնող մարմնին: Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը: Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմինը եւ դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն»:

2. Գործի համառոտ դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին.

Լեւոն Պողոսյանը բողոք է ներկայացրել Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու մասին 09.12.2011թ. որոշումը: Դատարանի 08.02.2012թ. որոշմամբ բողոքը մերժվել է, ինչը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որն էլ 15.03.2012թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է: Նշված որոշման դեմ Լ. Պողոսյանի վճռաբեկ բողոքի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը 17.05.2012թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում:

Հիմք ընդունելով թիվ 16541106 տեսաձայնագրային փորձագիտական եզրակացությունը՝ Լեւոն Պողոսյանը 01.11.2012թ. դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ միջնորդելով հիշյալ եզրակացությունը դիտել որպես նոր երեւան եկած հանգամանք եւ վարույթ հարուցել: Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Ս. Սինանյանի կողմից 13.11.2012թ. որոշում է կայացվել նոր երեւան եկած հանգամանքների հետեւանքով վարույթի հարուցումը մերժելու մասին, քանի որ Լ. Պողոսյանի կողմից նշված եզրակացությունն առկա է քրեական գործում, որը քննիչի կողմից ներկայացվել է դատարան եւ այն ուսումնասիրվել է: Նշված որոշումը բողոքարկվել է, ինչի արդյունքում Երեւան քաղաքի դատախազի պաշտոնակատար Ս. Խաչատրյանի կողմից 06.12.2012թ. բողոքը մերժելու մասին որոշում է կայացվել:

Լեւոն Պողոսյանը բողոք է ներկայացրել Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով վերացնել Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Ս. Սինանյանի կողմից 13.11.2012թ. կայացված՝ նոր երեւան եկած հանգամանքների հետեւանքով վարույթի հարուցումը մերժելու մասին ու Երեւան քաղաքի դատախազի պաշտոնակատար Ս. Խաչատրյանի կողմից 06.12.2012թ. կայացված՝ բողոքը մերժելու մասին որոշումները: Դատարանը 29.01.2013թ. «Բողոքը քննության առնելու մասին» որոշմամբ Լ. Պողոսյանի բողոքը մերժել է: Նշված որոշման դեմ Լ. Պողոսյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 15.03.2013թ. որոշմամբ մերժվել է՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2013թ. որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Լ. Պողոսյանը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել, որի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը 14.05.2013թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում:

3. Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ դրանք լիարժեք չեն ապահովում անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումը, արդար ու անաչառ դատաքննությունը՝ հակասելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ եւ 91-րդ հոդվածներին:

Դիմողի կարծիքով, ըստ վիճարկվող նորմի՝ վարույթն իրականացնող մարմինն ինքն է որոշում ինչ նյութեր տրամադրել դատարանին եւ

ինչ նյութեր թաքցնել դատարանից: Այս հանգամանքն ստեղծում է արդարադատության իրականացման եւ օրինականության համար ծանր վիճակ, չարաշահումների հող, քանի որ վարույթն իրականացնող մարմինը տրամադրում է դատարանին միայն այն նյութերը, որոնք չեն ժխտում իր որոշումը եւ չեն բացահայտում քննչական մարմնի կողմից արված կոպիտ խախտումները: Այս դեպքում դատարանը զրկված է լինում լրիվ, օբյեկտիվ եւ բազմակողմանի տեղեկությունից:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ եւ 91-րդ հոդվածներին:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող նորմն իր առաքելությամբ, կարգավորումներով եւ գործող խմբագրությամբ չի կարող դիտվել հակասահմանադրական, քանի որ հստակ եւ միանշանակ ամրագրում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական հսկողություն իրականացնելու հնարավորությունն ու դեպքերը: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ վիճարկվում են նախաքննության փուլում գտնվող քրեական գործի վերաբերյալ համապատասխան մարմինների եւ/կամ անձանց գործողությունները կամ որոշումները, ապա այս պարագայում նախաքննության գաղտնիությունը, իհարկե, պետք է պահպանել, եւ համապատասխան սուբյեկտներն իրավունք ունեն չներկայացնելու գործում առկա որոշ նյութեր: Շեշտվել է նաեւ, որ օրենսդիրը նախատեսում է «...ոչ թե քրեական գործի ողջ նյութերի ներկայացումը դատարան, ...այլ միայն այն նյութերը, որոնք անմիջականորեն առնչվում են դատարան ներկայացված բողոքի առարկային»:

5. Սույն գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմողի կողմից վիճարկվող իրավակարգավորումները, ըստ էության, առնչվում են սույն գործով սահմանադրական դատարան ներկայացված՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 08.02.2012թ., ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 15.03.2012թ. եւ ՀՀ վճռաբեկ դատարանի 17.05.2012թ. որոշումներին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «... դիմումները կարող են սահմանադրական դատարան ներկայացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից իր հանդեպ կիրառված դատական ակտի վիճարկման հնարավորություն-

ները սպառելու պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո»: Իսկ, ինչպես արդեն վերը նշվել է, սույն գործով դիմումը սահմանադրական դատարան մուտքագրվել է 2013 թվականի նոյեմբերի 20-ին: Հետեւաբար, Լ. Պողոսյանը սույն գործով սահմանադրական դատարան վերոհիշյալ դատական ակտերով դիմելու համար օրենքով սահմանված ժամկետը չի պահպանել:

Ինչ վերաբերում է Լ. Պողոսյանի կողմից սույն գործով սահմանադրական դատարան ներկայացված՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2013թ., ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 15.03.2013թ. եւ ՀՀ վճռաբեկ դատարանի 14.05.2013թ. որոշումներին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ դատական ակտերում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը դիմողի նկատմամբ չի կիրառվել:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում՝ օրենքի դրույթի կիրառման պայմանը:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԳԱՌ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «օրենքի դրույթի կիրառում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը սահմանադրական դատարանը բացահայտել է իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԳՌ-747 որոշման մեջ, մասնավորապես, արտահայտելով հետեւյալ իրավական

դիրքորոշումը. «... ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...եւ չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

Դիմողի կողմից սահմանադրական դատարան ներկայացված դատական ակտերում սույն գործով վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի վերաբերյալ որեւէ ուղղակի հիշատակում չկա, կիրառում առկա չէ:

Բացի դրանից, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը ձեւականորեն վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի սահմանադրականությունը՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության եւ կիրառման արդյունքում ընդունված դատական ակտերի օրինականության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՄԴԱՌ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32, 60, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Քաղաքացի Լեւոն Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**15 ապրիլի 2014 թվականի
ՍԳՈ-1144**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՍԼՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 45.6-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ
1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (գեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ /գրավոր ընթացակարգի շրջանակներում/
դիմող Գ. Սլոյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

հրավիրված՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարի պաշտոնակատար Ա. Աշոտյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գեորգ Սլոյանի դիմումի հիման վրա՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գետրգ Սլոյանի՝ 14.10.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, լսելով ՀՀ կրթության եւ գիտության նախարարի պաշտոնակատարի պարզաբանումները, հետազոտելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2005 թվականի հունվարի 13-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունվարի 22-ին:

Օրենքի՝ «Փաստաբանական դպրոցի ունկնդրի կարգավիճակը» վերտառությամբ 45.6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Փաստաբանական դպրոցի ունկնդիր կարող է լինել այն գործունակ ֆիզիկական անձը, որն ունի իրավաբանական կրթության բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան, բացառությամբ, եթե նա դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, եւ նրա դատվածությունը մարված կամ հանված չէ»:

Վերոնշյալ դրույթը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում լրացվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-339-Ն ՀՀ օրենքով, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2011 թվականի դեկտեմբերի 8-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2011 թվականի դեկտեմբերի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 19-ին:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. 23.06.2012թ. դիմողը դիմում է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամ՝ ընդունելության քննություններին մասնակցելու նպատակով:

17.07.2012թ. դիմողն ստացել է փաստաբանական դպրոցի ընդունելության հանձնաժողովի նախագահի 09.07.2012թ. որոշումը «Հավակնորդ Գետրգ Սլոյանի կարգավիճակից զրկելու եւ քննությանը թույլ չտալու մասին»:

Դիմողը վերոնշյալ որոշումը բողոքարկել է «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի հոգաբարձուների

խորհուրդ, որն իր՝ 26.07.2012թ. որոշմամբ դիմողի դիմում-բողոքը մերժել է:

Դիմողը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի՝ խնդրելով դատարանին պարտավորեցնել պատասխանողին հաստատել դիմողի հավակնորդի իր կարգավիճակը եւ թույլ տալ մասնակցել ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննություններին:

Երեսան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱԶԴ/2103/02/12 քաղաքացիական գործով 27.02.2013թ. կայացրած վճռով դիմողի հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 29.05.2013թ. որոշմամբ մերժել է դիմողի վերաքննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Երեսան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 31.07.2013թ. որոշմամբ վերադարձրել է դիմողի վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 14.1, 32 եւ 39-րդ հոդվածներին:

Օրենքի վիճարկվող դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ դիմողի փաստարկները հանգում են հետևյալին. վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանների մի շարք դատական ակտեր՝ դիմողը գտնում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդրի կարգավիճակ ձեռք բերելու համար սահմանելով Հայաստանի Հանրապետությունում սահմանված բարձրագույն կրթության որակավորման երեք աստիճաններից երկուսից մեկի /բակալավր կամ դիպլոմավորված մասնագետ/ առկայության պահանջը, առանց որեւէ օբյեկտիվ եւ ողջամիտ արդարացման սահմանել է խտրական վերաբերմունք իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան ունեցող անձանց նկատմամբ, եւ եթե նույնիսկ այդպիսի խտրականությունն ունի օբյեկտիվ եւ ողջամիտ արդարացում, ապա օրենքով կիրառվող միջոցները (տարբերակման, խտրականության) համարժեք չեն հետապնդվող նպատակներին, եւ կիրառվող միջոցի եւ հետապնդվող նպատակի միջեւ չկա համամասնության ողջամիտ հարաբերակցություն:

Օրենքի վիճարկվող դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ դիմողի փաստարկները հանգում են հետևյալին. ներկայացնելով ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածում ամրագրված՝ աշխատանքի ընտրության ազատության բովանդակության մեկնաբանությունը, դիմողը ներկայացնում է հետևյալ տեսակետը. «...դիմումատուն իր ունեցած որակավորմամբ համարվում է բարձրագույն իրավագիտական կրթություն ունեցող անձ, ինչը նշանակում է, որ նա ազատորեն կարող է ընտրել զբաղմունքի (գործունեության) տեսակ: Տվյալ պարագայում դիմումատուն, լինելով բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձ, ցանկանում է զբաղվել փաստաբանական գործունեությամբ, իսկ մասնագիտություն (դրա շրջանակներում՝ մասնագիտացում) եւ որոշակի տեսակի աշխատանքի ընտրության ազատությունը բացառապես տվյալ անձի իրավունքն է: Մինչդեռ դիմումատուի նկատմամբ կիրառված օրենքը սահմանափակում է նրա իրավունքը՝ զբաղվել փաստաբանական գործունեությամբ, հետևապես՝ օրենքի այդ նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 32 հոդվածին, այնքանով որքանով արգելափակում է փաստաբանի աշխատանքն ազատորեն ընտրելու դիմումատուի իրավունքը»:

Միաժամանակ, վկայակոչելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի նախորդ խմբագրությամբ տեքստը եւ արձանագրելով, որ ի տարբերություն գործող իրավակարգավորման՝ նախկինում փաստաբանի արտոնագիր ձեռք բերելու համար նախատեսված էր բարձրագույն իրավաբանական կրթության, ներառյալ՝ իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճանի առկայությունը, դիմողը գտնում է նաեւ, որ գործող իրավակարգավորման հետեւանքով խաթարվել են իր լեզիտիմ ակնկալիքներն այնքանով, որքանով ինքը, ստանալով բարձրագույն իրավաբանական կրթություն, ի թիվս այլնի, ակնկալել է նաեւ փաստաբանական գործունեության ազատ ընտրության հնարավորությունը:

Օրենքի վիճարկվող դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ դիմողի փաստարկները հանգում են հետևյալին. հղում կատարելով «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքին, արձանագրելով, որ տվյալ օրենքի համաձայն՝ եւ՝ իրավագիտության բակալավրի, եւ՝ իրավագիտության մագիստրոսի, եւ՝ իրավագիտության դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք համարվում են բարձրագույն իրավագիտական կրթություն ունեցող անձինք, վկայակոչելով նաեւ նույն օրենքի՝ լրացուցիչ կրթության եւ դրա արդյունքում ավարտական փաստաթուղթ ստանալու վերաբերյալ համապատասխան դրույթները՝ դիմողը հանգում

է այն եզրակացութեանը, որ վիճարկվող նորմերի գոյության հետեւանքով ինքը զրկվում է լրացուցիչ մասնագիտական կրթություն ստանալու եւ համապատասխան ավարտական փաստաթուղթ ստանալու իր իրավունքներից, քանզի նրա նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմով դրսեւորվում է չհիմնավորված խտրականություն /տարբերակում, ինչը չունի ողջամիտ եւ արդարացի հիմնավորում:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 14.1, 32 եւ 39-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը «Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ կրթական ծրագրի վերաբերյալ դրույթների, նույն հոդվածի 17.1, 20, 21 եւ 22-րդ կետերի, «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ եւ 5-րդ մասերի դրույթների վերլուծության հիման վրա ներկայացնում է այն չափանիշները, որոնք հիմք են տալիս միմյանցից տարանջատել 1-ին եւ 2-րդ մակարդակի բարձրագույն կրթության որակավորման համակարգերը, այն է՝ այն հենքը, որի հիման վրա պետք է շարունակվի բարձրագույն մասնագիտական կրթությունը, այն ժամանակահատվածը, որի ընթացքում պետք է անձն ստանա համապատասխան կրթական համակարգին համապատասխանող ուսուցում, եւ այն կրթական ծրագիրը, որի հիման վրա իրականացվում է համապատասխան մակարդակի կրթության կազմակերպումը:

Վերը նշված չափանիշների հիման վրա պատասխանողը գտնում է, որ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրերով ուսումնառությունը բարձրագույն կրթության տարբեր ձեւերի համատեքստում կարող է դիտվել որպէս «հիմնական» կամ «բազային» մասնագիտական կրթություն, որի հիման վրա անձը հետագայում կարող է շարունակել իր կրթությունը մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար, որից հետո՝ նաեւ հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում:

Վկայակոչելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որոնք բացահայտում են փաստաբանական գործունեության բովանդակությունը, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններում արտահայտված այն դոկտրինալ դիրքորոշումը, համաձայն որի՝ պետությունը երաշխավորում է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, պատասխանատու է դրա պատշաճ որակի համար եւ այդ առումով պարտավոր է սահմանել փաստաբաննե-

րին ներկայացվող մասնագիտական եւ բարոյական պահանջներն ու չափանիշները, արձանագրելով, որ փաստաբանական դպրոցի կողմից չի իրականացվում սկզբնական մասնագիտական գիտելիքների փոխանցում եւ առաջնային մասնագիտական կրթության կազմակերպում, պատասխանող կողմը բնական է համարում, որ փաստաբանական գործունեության իրականացման համար պահանջվի ոչ թե տվյալ ոլորտի բարձրագույն մասնագիտական կրթության առավել բարձր որակավորման աստիճանի առկայություն, օրինակ՝ մագիստրոսի կամ համապատասխան բնագավառի գիտությունների թեկնածուի կամ գիտությունների դոկտորի գիտական աստիճանի առկայություն, այլ համապատասխան ոլորտի բարձրագույն մասնագիտական «բազային» կրթության առկայություն:

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ յուրաքանչյուր իրավունքի իրականացման համար օրենքով կարող են եւ պետք է սահմանված լինեն որոշակի նախադրյալներ, չափանիշներ եւ պահանջներ, եւ որ իրավունքները եւ ազատությունները չեն կարող լինել բացարձակ եւ անվերապահ: Այս առումով պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ օրենքի վիճարկվող դրույթները չեն նախատեսում խտրականություն, չեն խախտում անձի՝ կրթության եւ աշխատանքի ազատ ընտրության իրավունքները:

5. Հաշվի առնելով դիմողի փաստարկները՝ սույն գործի քննության շրջանակներում հարկ է նախ բացահայտել ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական կրթություն պահանջող պաշտոնների հավակնորդներին ներկայացվող պահանջները:

Հիմք ընդունելով ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ կետը, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությունը, «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ պարբերությունը եւ դրանք համադրելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմի հետ՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը դատավորի, դատախազի, քննիչի պաշտոնների հավակնորդներին կամ որպես նոտար կամ փաստաբան աշխատելու համար անձին ներկայացնում է միասնական կրթական չափանիշ, այն է՝ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճանի առկայությունը: Դա ինքնանպատակ չէ, քանի որ

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ «բակալավր», «դիպլոմավորված մասնագետ», «մագիստրոս» հասկացությունների բովանդակությունը սահմանող՝ համապատասխանաբար 20, 21 եւ 22-րդ կետերի դրույթների, «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ «բարձրագույն մասնագիտական կրթություն» հասկացության բովանդակությունը սահմանող 3-րդ հոդվածի եւ բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան որակավորման համակարգ սահմանող 9-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ ցանկացած բուհական մասնագիտության շրջանակներում մագիստրատուրան հանդես է գալիս **որպես տվյալ մասնագիտության** խորացման համակարգ: Մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրված Բոլոնյան կրթական համակարգը թույլ է տալիս այլ մասնագիտություն ունեցող բակալավրին կամ դիպլոմավորված մասնագետին ընդունվել մեկ այլ մասնագիտության մագիստրատուրա: Սակայն օրենքը նախատեսում է, որ տվյալ մասնագիտացման գծով ուսուցումը չի դիտվում որպես երկրորդ բարձրագույն կրթություն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Բոլոնյան գործընթացի արդյունքում ներդրված կրեդիտային համակարգը որոշակի կրթական ծրագրով համապատասխան մասնագիտական որակավորում ստանալու համար պահանջում է համապատասխան քանակությամբ կրեդիտների կուտակում: Ուստի եւ մագիստրոսի որակավորման աստիճանը պետք է համարել տվյալ մասնագիտությամբ առավել բարձր կրթական աստիճան միայն այն պարագայում, երբ առկա է այդ մասնագիտության համար նախատեսված անհրաժեշտ կրեդիտների կուտակումը: Միայն տվյալ պարագայում անձը կարող է համարվել համապատասխան կրթական ծրագրով **տվյալ մասնագիտությամբ երկրորդ աստիճանի մագիստրոսի որակավորման կրող:**

Սակայն այս հիմնախնդիրը հստակ կանոնակարգված չէ ՀՀ օրենսդրությամբ, ինչը լայն հայեցողական մոտեցումների եւ մարդկանց իրավունքների խախտման մեծ ռիսկ է բովանդակում: Մասնավորապես՝ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունից բխում է, որ «Բարձրագույն կրթության տարբեր աստիճանների կրթական ծրագրերով առաջին անգամ կրթություն ստանալը չի դիտվում որպես երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն»: Մյուս կողմից՝ հիշյալ օրենքներում եւ տարբեր ենթաօրենսդրական ակտերում /հատկապես կրթության ընդհանուր չափորոշիչների հաստատման, կրեդիտային համակարգի ներդրման, կրթության որակավորումների

ազգային շրջանակը հաստատելու վերաբերյալ ՀՀ կառավարության՝ համապատասխանաբար 2001թ. հունվարի 16-ի թիվ 24, 2005թ. դեկտեմբերի 22-ի թիվ 2307-Ն, 2011թ. մարտի 31-ի թիվ 332-Ն որոշումներում, ինչպես նաև ՀՀ կրթության եւ գիտության նախարարի կողմից ընդունված համապատասխան գերատեսչական ակտերում/ առկա չէ հստակ մոտեցում կրթության տարբեր աստիճանների իրավական բովանդակության, կրթության շարունակականության, կրեդիտային կուտակային համակարգի եւ համարժեք որակավորման ներդաշնակման, այս ոլորտում միասնական չափորոշիչների հաստատման վերաբերյալ: Նման պայմաններում մագիստրոսական կրթություն իրականացնող տարբեր հաստատություններում յուրովի մեկնաբանելով ՀՀ օրենսդրությունը՝ իրենց իսկ շահերից ու նպատակներից ելնելով, տարատեսակ կարգեր են սահմանել թե՛ մագիստրատուրայի ընդունելության եւ թե՛ մագիստրոսների որակավորման հարցերում: Նման պայմաններում անձն ընդհուպ պետական կրթական հաստատություններում նաև վճարովի կրթություն ստանալուց հետո անգամ տվյալ մասնագիտությամբ աշխատելու, ինչպես նաև հետագա մասնագիտական ուսուցման իրավունք չի ստանում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական անհատակությունները հանգեցրել են նրան, երբ, մի կողմից, անձն իրավաչափ ակնկալիքներով հանձնում է սահմանված քննությունները, ուսանում է մագիստրատուրայում, ստանում է պետական նմուշի դիպլոմ, սակայն հետագայում պարզվում է, որ տարբեր իրավական ակտերով նախատեսված սահմանափակումներով ինքը տվյալ մասնագիտությամբ աշխատել չի կարող, մյուս կողմից՝ նա մեկ կամ երկու տարում կարող է մագիստրատուրայի բարձրագույն մասնագիտական ծրագրով այլ մասնագիտություն ձեռք բերել, ստանալ պետության կողմից սահմանված նմուշի համապատասխան դիպլոմ՝ առանց անհրաժեշտ կրեդիտների կուտակման: Նման վիճակը պահանջում է համակարգային ու հետևողական օրենսդրական հստակեցումներ՝ առաջին հերթին «Կրթության մասին» եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների մակարդակում՝ բարձրագույն մասնագիտական որակավորման աստիճանները ներդաշնակելով տվյալ մասնագիտության համար պետության կողմից սահմանված կրեդիտներին:

Սահմանադրական դատարանն ի գիտություն ընդունեց ՀՀ կրթության եւ գիտության նախարարի պաշտոնակատար Ա. Աշոտյանի պարզաբանումն առ այն, որ մինչեւ 2014թ. վերջը վերոհիշյալ հարցերի

վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները կհատակեցվեն եւ կնախաձեռնվեն համապատասխան իրավական կարգավորումներ:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների եւ իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Փաստն այն է, որ վեճի առարկա իրավահարաբերությունների շրջանակում խախտվում է անձի օրինական ակնկալիքների իրավունքը: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասում՝ ընդհուպ անհրաժեշտ կրեդիտների առկայության պարագայում, իրավակիրառ պրակտիկայի կողմից տրվող մեկնաբանությամբ, գործնականում արգելափակվում է ավելի բարձր աստիճանի մասնագիտական որակավորում ունեցող անձի /մագիստրոսի/՝ փաստաբանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը: Նման իրավիճակը հիմնականում պայմանավորված է բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում առկա՝ վերոշարադրյալ իրավական թերի ու համակարգային առումով անկատար լուծումներով: Դրա հետեւանքով, մասնավորապես, պետական միասնական չափորոշիչների տեսանկյունից չի որոշակիացվել կապը բարձրագույն մասնագիտական համարժեք որակավորման ու դրա իրավական փաստը վկայող պետական նմուշի հավաստագրի /դիպլոմի/ միջեւ: Նման վիճակը, իր հերթին, հանգեցրել է նրան, որ, ինչպես նշվեց, վեճի առարկա իրավադրույթը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց է, չի համապատասխանում իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքին, ինչպես նաեւ չի ապահովում իրավունքի էության անձեռնմխելիության սահմանադրաիրավական երաշխիքի իրացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասը՝ այն մասով ու մեկնաբանությամբ, որով արգելափակվում է ավելի բարձր աստիճանի մասնագիտական համարժեք որակավորում ունեցող անձի՝ փաստաբանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 43-րդ /2-րդ մաս/ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 ապրիլի 2014 թվականի
ՍԳՈ-1148**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՍԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 224-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ՝
«ԱՆԿԱԽ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ»
ԴՐՈՒՅԹԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 հունիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 68 եւ 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ 27.12.2013 թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ մաքսային օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. ՀՀ մաքսային օրենսգիրքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 06.07.2000 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 09.08.2000 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.2001 թվականից: ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածը փոփոխվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-25-Ն օրենքով, որն ԱԺ կողմից ընդունվել է 22.12.2010 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 15.01.2011 թվականին, ուժի մեջ է մտել 05.02.2011 թվականին, եւ «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-125-Ն օրենքով, որն ԱԺ կողմից ընդունվել է 11.12.2013 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 27.12.2013 թվականին եւ ուժի մեջ է մտել 07.01.2014 թվականին:

Դիմողի կողմից ՀՀ սահմանադրական դատարանում վիճարկվում է ՀՀ մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Մաքսային օրենսգիրք) 224-րդ հոդվածը՝ ԱԺ կողմից 22.12.2010 թվականին ընդունված՝ «ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-25-Ն օրենքով նախատեսված խմբագրությամբ:

Մաքսային օրենսգրքի վիճարկվող խմբագրությամբ 224-րդ հոդվածը սահմանում է. «Անձը, որից սույն օրենսգրքի 212-րդ հոդվածով սահմանված կարգով կամ տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով վերցվել են ապրանքներ՝ անկախ սեփականության պատկանելությունից, կարող է դրանք ստանալ տուգանքի վճարումից, մաքսային վճարների եւ պարտավորությունների կատարումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ին մատակարարված արտադրանքը մաքսային պահեստում 2010 թվականի հունիսի 1-ին զննության է ենթարկվել, ինչի արդյունքում հայտնաբերվել է, որ արտադրանքը սխալ է հայտարարագրվել «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի լիազոր ներկայացուցիչ՝ «ԱՍԲՍ» ՍՊԸ-ի տնօրեն Կամո Պետրոսյանի կողմից: Փաստի առթիվ Կամո Պետրոսյանի նկատ-

մամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հատկանիշների ուժով կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, իսկ ներմուծված արտադրանքը վերցվել է ի պահ է հանձնվել «Տրանս Ալյանս» ՍՊԸ-ի մաքսային պահեստ: ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության պետի 12.08.2010թ. որոշմամբ Կամո Պետրոսյանը ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված մաքսային կանոնների խախտման մեջ եւ տուգանվել:

«Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ն 09.02.2012 թվականին դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ վերցված արտադրանքի բացթողումը թույլատրելու խնդրանքով: Ի պատասխան հայցվորի դիմումի՝ գրությամբ վերջինիս հայտնվել է, որ «...տուգանքի գանձումն ապահովելու նպատակով վերցված ապրանքները՝ անկախ սեփականության պատկանելությունից, ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն, կարող են վերադարձվել տուգանքի վճարումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում»:

«Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ն դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ վերոնշյալ վարչական ակտն անվավեր ճանաչելու եւ բեռի բացթողումն ապահովելու պահանջով: ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային մարմնի զանգատարկման հանձնաժողովի որոշմամբ բողոքը թողնվել է առանց քննության, իսկ բողոքարկված վարչական ակտը՝ անփոփոխ:

Վարչական դատարանը տվյալ գործով ներկայացված հայցը մերժել է՝ հայցի մերժման հիմքում դնելով Մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածը:

Ներկայումս «ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վարույթում է գտնվում թիվ ՎԴ/6421/05/12 վարչական գործն ըստ հայցի «Դանդի Փրիշս Սեթալս Կապան» (հայցը հարուցելիս «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի») ՓԲ ընկերության ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 17.02.2012թ. թիվ 13-2/1350-12 վարչական ակտը՝ «Միաժամանակ հայտնում եմ, որ տուգանքի գանձումն ապահովելու նպատակով վերցված ապրանքներն անկախ սեփականության պատկանելությունից, ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն կարող են վերադարձվել տուգանքի վճարումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում» մասով, անվավեր ճանաչելու եւ այդ մասը «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ին թույլատրել Մեծ Բրիտանիայից ՀՀ ներմուծված 8584կգ ընդհանուր քաշով FLEXADUX PLASTICS մեծքրիտանական ընկերության արտադրության օդափոխության խողովակների բացթողումը» մասով փոփոխելու պահանջների մասին»:

Վերաքննիչ վարչական դատարանը 23.12.2013 թվականին որոշել է

կասեցնել տվյալ գործով վարույթը եւ դիմել ՀՀ սահմանադրական դատարան ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

3. Դիմողը գտնում է, որ քննության առարկա հոդվածի վիճարկվող՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 8 եւ 31-րդ հոդվածներին, քանի որ պարտավորություն չունեցող սեփականատիրոջը, սեփականությունից օգտվելու խոչընդոտներ ստեղծելով, սահմանադրաիրավական առումով զրկում է սեփականությունից՝ առանց օրենքով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության մաքսային քաղաքականության հետապնդվող նպատակներին հասնելու հնարավորության: Դիմողը գտնում է նաեւ, որ վիճարկվող դրույթն առաջացնում է իրավական անորոշություն: Համաձայն դիմողի դիրքորոշման՝ ըստ մեղքի պատասխանատվության եւ անձնական պատասխանատվության սկզբունքների, ինչպես նաեւ վարչական տույժի նպատակի համատեքստում տուգանքը պետք է վճարվի բացառապէս իրավախախտում կատարած անձի սեփականությունը համարվող գույքի հաշվին, մինչդեռ վիճարկվող դրույթի ուժով, որպէս տուգանքի վճարման, մաքսային վճարների եւ պարտավորությունների կատարման ապահովում, սահմանափակվում է այն գույքի բացթողումը, որը Մաքսային օրենսգրքի 212-րդ հոդվածով սահմանված կարգով վերցվել է անգամ պարտավորություն չունեցող սուբյեկտներից:

Դիմողը նաեւ նշում է, որ տվյալ դեպքում սեփականության իրավունքին միջամտությունն օրենքով ՀՀ մաքսային քաղաքականության հետապնդվող նպատակներին հասնելու պիտանի եւ անհրաժեշտ միջոց չի կարող դիտարկվել, քանի որ սեփականության իրավունքին միջամտությամբ սեփականատիրոջից այդ նպատակներին հասնելու համար որեւէ վարքագիծ չի պահանջվում, իրավունքի սահմանափակման վերացման նախապայման է սահմանվել ինքնուրույն սուբյեկտ հանդիսացող երրորդ անձի կողմից տուգանքի վճարումը:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ քննարկվող կանոնակարգումը «իր ձեւի մեջ սանկցիայի կատարումն ապահովող միջոց է, որի ուժով բացի զանցառու անձին անձնական պատասխանատվության ենթարկելուց, վերջինիս ապօրինի գործողությունների բացասական հետեւանքների ազդեցությանն է ենթարկվում այն ընկերությունը, որի կողմից լիազորված է տվյալ սուբյեկ-

տր»։ Ըստ պատասխանող կողմի՝ «...այն իրավիճակում, երբ ընկերության կողմից լիազորված անձի ապօրինի գործողությունների հետևանքով իրավասու մարմինների կողմից նշանակվել է տուգանք, որը պետք է վճարի անձանք իրավախախտում թույլ տված անձը, իսկ ընկերությունը, կատարելով համապատասխան ձեռակերպումները, հնարավորություն կունենա անարգել իրականացնելու իր սեփականության իրավունքը, ապա վերջինս ոչ միայն չի նպաստի իր ներկայացուցչի կողմից տուգանքի վճարմանը, այդ պահին միջոցներ չի ձեռնարկի ապահովելու սանկցիայի կատարումը, այլև հետագայում միջոցներ չի ձեռնարկի նման իրավիճակներից խուսափելու համար։ Այնինչ գործող իրավակարգավորումների պարագայում ներմուծող ընկերությունը, որպես սեփականատեր, շահագրգռված է ապահովելու տուգանքի վճարումը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող ապրանքը լիովին տնօրինելու իրավունքի վերականգնման համար»։

Անդրադառնալով սեփականության իրավունքից զրկման վերաբերյալ դիմողի ներկայացրած փաստարկներին՝ պատասխանող կողմը նշում է, որ «...սեփականատիրոջ իրավազորությունների իրականացման հնարավորությունների սահմանափակումը, այնուամենայնիվ պետք է տարբերակել իրավաբանորեն սեփականության իրավունքից զրկելուց, հաշվի առնելով դրանցից բխող իրավական հետևանքների տարբերությունները...»։

5. Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը պարզելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող կանոնակարգումը դիտարկել դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Մաքսային օրենսգրքի վերաբերելի դրույթների հետ համադրության լույսի ներքո՝ բացահայտելու համար.

- որքանով է ապահովված վիճարկվող կանոնակարգման իրացման օրենսդրական կառուցակարգերի ամբողջականությունը,
- ինչումն է կայանում «սեփականության իրավունքից զրկում» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը,
- որքանով է վիճարկվող դրույթով նախատեսված իրավակարգավորումը ներառվում ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով նախատեսված՝ «սեփականության իրավունքից զրկելու» ինստիտուտի բովանդակային շրջանակներում,
- արդյո՞ք վիճարկվող դրույթն առաջացնում է սեփականության իրավունքի սահմանափակում, արդյո՞ք այն հետապնդում է իրավաչափ

- նպատակ, համաչափ է եւ անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում իրավաչափ նպատակին հասնելու համար,
- արդյո՞ք ՀՀ օրենսդրությամբ սահմանված են անհրաժեշտ եւ բավարար երաշխիքներ սույն կանոնակարգման կիրառության շրջանակներում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխավորման համար:

6. Վիճարկվող կանոնակարգման՝ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Մաքսային օրենսգրքի համապատասխան դրույթների հետ համադրված վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մաքսային վարույթի ընթացքում ապրանքներ վերցնելու ինստիտուտն ամրագրված է Մաքսային օրենսգրքի 38-րդ գլխում, որի 212-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ համարվող ապրանքները, մաքսային սահմանով դրանց տեղափոխման համար օգտագործվող տրանսպորտային միջոցները, ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման նպատակով պատրաստված գաղտնարանները, ինչպես նաեւ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը ենթակա են վերցման:

Նշված կանոնակարգումից բխում է, որ օրենսդիրը լիազորել է մաքսային մարմնին վերցնել բացառապես հետեւյալ առարկաները՝

- մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ համարվող ապրանքները,
- մաքսային սահմանով դրանց տեղափոխման համար օգտագործվող տրանսպորտային միջոցները,
- ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման նպատակով պատրաստված գաղտնարանները,
- մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Նույն հոդվածով օրենսդիրը սահմանել է այդ առարկաները վերցնելու ընթացակարգը, որը տվյալ գործընթացում ապահովում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ պետական մարմնի առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը: Մաքսային օրենսգրքի ուսումնասիրության արդյունքում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ վերը նշված իրավակարգավորումը միակն է Մաքսային օրենսգրքում, որը սահմանում է այն առարկաների ցանկը, որոնք կարող են վերցվել մաքսային մարմնի կող-

մից, եւ դրանք վերցնելու կարգը: Որեւէ այլ նորմով սահմանված չէ, որ նույն կամ այլ ընթացակարգով կարող են վերցվել նաեւ այլ առարկաներ:

Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապրանքներ վերցնելու ինստիտուտը կոչված է ապահովելու մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթի արդյունավետութունը, որը հնարավորություն է ընձեռում մաքսային մարմնին հայտնաբերելու եւ կանխելու մաքսային իրավախախտումները: Իսկ վերջինն այն հանրային շահն է, որն արդարացնում է ապրանքներ տեղափոխող անձանց իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը: Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող կանոնակարգումն ամրագրված է «Վերցված ապրանքները վերադարձնելու ժամկետը» վերտառությամբ հողվածում, արձանագրում է, որ այս հողվածի ենթադրյալ նպատակը պետք է ուղղված լիներ ապահովելու Մաքսային օրենսգրքով նախատեսված ապրանքների վերցման ինստիտուտի իրացման տրամաբանական զարգացումը՝ ապրանքները վերադարձնելու ժամկետներ սահմանելու միջոցով: Նման հետեւությունը բխում է թե՛ վերաբերելի նորմերի համադրված վերլուծությունից, թե՛ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կանոնակարգման պահանջից, համաձայն որի՝ «...հողվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հողվածների բովանդակությանը...»: Այստեղից հետեւում է, որ քննարկվող հողվածի շրջանակներում տեղ են գտել ոչ միայն Մաքսային օրենսգրքի 212-րդ հոդվածով նախատեսված կանոնակարգման կիրառման արդյունքում ապրանքներ վերցնելու պարագայում դրանց վերադարձման ժամկետները, այլ նաեւ մեկ այլ ինստիտուտ՝ **տուգանքների, մաքսային վճարների կատարման ապահովման համար ապրանքների վերցման ինստիտուտը**, մինչդեռ որեւէ այլ նորմ Մաքսային օրենսգրքում չի կանոնակարգում ո՛չ մաքսային մարմնի համապատասխան լիազորությունը, ո՛չ էլ այդ լիազորության իրացման ընթացակարգը: Արդյունքում՝ որոշակի կոնկրետ իրավահարաբերության կանոնակարգմանը նվիրված ընթացակարգային նորմ պարունակող հողվածում տեղ է գտել մեկ այլ իրավահարաբերության կարգավորման ընթացակարգային նորմ՝ համապատասխան իրավահարաբերության նյութաիրավական կանոնակարգման բացակայության պայմաններում, ինչի հետեւանքով, մի կողմից, առաջ է եկել անձի սեփականության իրավունքին միջամտության իրավիճակ՝ առանց մաքսային մարմնի համապատասխան լիազորության, մյուս կողմից՝ այն իրացվում է անհրաժեշտ կառուցակարգերի բացակայության պայմաններում: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ

նման պայմաններում անձն իր սեփականության իրավունքին միջամտության գործընթացում զրկվում է իր իրավունքն արդյունավետ պաշտպանելու հնարավորությունից:

7. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը»: ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ...»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-903 որոշման մեջ սահմանել է, որ. «ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման միմյանցից տարանջատվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականագրկում (31-րդ հոդվ. 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության եւ պետության կարիքների համար (31-րդ հոդվ. 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց համար...»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է նաեւ իրավական դիրքորոշումներ «սեփականությունից զրկելու» ինստիտուտի առնչությամբ (ՄԴՈ-903, ՄԴՈ-1073, ՄԴՈ-1142): Մասնավորապես, իր՝ 13 հուլիսի 2010 թվականի ՄԴՈ-903 որոշման մեջ սահմանադրական դատարանը, անդրադառնալով «սեփականությունից զրկելու» բնութագրիչ տարրերին, մասնավորապես արձանագրել է. «... սահմանադրական դատարանը գտնում է, որ սեփականությունից զրկե-

լու ինստիտուտին բնորոշ են հետեւյալ հիմնական պարտադիր տարրերը.

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին եւ համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի անհատույց դադարեցում,
- սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց,
- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման եւ օգտագործման իրավագործությունների միաժամանակյա եւ լիակատար դադարում՝ առանց շարունակականության երաշխավորման»:

Սեփականությունից զրկելու տեսանկյունից վիճարկվող դրույթի գնահատման համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթն ուսումնասիրել դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ դրույթների հետ, այդ թվում բացահայտել վիճարկվող դրույթը ներառող իրավանորմի հետապնդած նպատակը: Այսպես, Մաքսային օրենսգրքի՝ վիճարկվող խմբագրությամբ 224-րդ հոդվածը սահմանում է՝ անձը, որից սույն օրենսգրքի 212-րդ հոդվածով սահմանված կարգով կամ տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով վերցվել են ապրանքներ՝ **անկախ սեփականության պատկանելությունից**, կարող է դրանք ստանալ տուգանքի վճարումից, մաքսային վճարների եւ պարտավորությունների կատարումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Վիճարկվող կանոնակարգման համատեքստում ապրանքների վերցման նպատակն ուղղակիորեն բխում է նույն այդ կանոնակարգումից, մասնավորապես՝ **ապրանքները վերցվում են տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով**: Նշված բնորոշումից ակնհայտ է, որ այն հանդես չի գալիս որպես պատասխանատվության միջոց, չնայած որ իրականացվում է անձի կամքին հակառակ՝ որպես հարկադիր գործողություն (այսինքն՝ պետության կողմից կիրառվող հարկադրանքի միջոց է), քանզի տարբեր են սեփականությունից զրկելու եւ քննարկվող ինստիտուտի նպատակները: Սեփականությունից զրկելը դիտվում է որպես պատասխանատվության միջոց, որն առաջացնում է անբարենպաստ հետեւանքներ սեփականատեր անձի համար օրենքի պահանջներին չհամապատասխանող վարքագիծ դրսևորելու պարագայում, իսկ խնդրո առարկա իրավակարգավորումը պատասխանատվության միջոց չէ, այլ միտված է ապահովելու

անձի կողմից օրենքով նախատեսված պարտավորության կատարումը: Բացի դրանից, այն հանգամանքը, որ ապրանքների վերցնումն իրականացվում է պարտավորության կատարումն ապահովելու նպատակով, վկայում է, որ պարտավորության կատարման արդյունքում սեփականության իրավունքի սահմանափակումները վերանալու են, այսինքն՝ ապրանքների վերցման պարագայում երաշխավորվում է տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնումը, մինչդեռ սեփականությունից զրկելն անվերապահ է: Այս մասին է վկայում նաև Մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածում ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ «...կարող է դրանք ստանալ տուգանքի վճարումից, մաքսային վճարների եւ պարտավորությունների կատարումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում»:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքին՝ խնդրո առարկա միջամտությունն իր բնույթով չի հանդիսանում սեփականությունից զրկում ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի իմաստով:

8. ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԳՈ-1073 որոշմամբ, քննության առնելով անձի սեփականության իրավունքի սահմանափակման հիմնահարցը, նշել է, որ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը միանշանակ սահմանում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Շեշտադրվում է նաև, որ նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս զանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար: Եվրոպական դատարանը, իր հերթին, Սպորոնգը եւ Լոնրոթն ընդդեմ Շվեդիայի գործով (CASE OF SPORRONG AND LÖNNROTH v. SWEDEN, Application no. 7151/75; 7152/75) սահմանել է, որ «...արձանագրության առաջին հոդվածը բաղկացած է երեք կանոններից՝ առաջին կանոնը, որը ընդհանուր բնույթի է, նախատեսում է սեփականությունից անարգել օգտվելու իրավունքը, դա նշված է առաջին պարբերության առաջին նախադասությունում: Երկ-

րորդ կանոնը նախատեսում է սեփականությունից զրկելը եւ որոշակի պայմաններ վերջինիս համար: Երրորդը ամրագրում է պետության իրավունքը վերահսկելու սեփականության օգտագործումը ընդհանուր հետաքրքրությանը համապատասխան, այնպիսի օրենքներ կիրառելու միջոցով, որոնք անհրաժեշտ են երկրորդ պարբերության մեջ նշված նպատակների համար»:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեւեւ վիճարկվող դրույթի ուժով սեփականության զրկում տեղի չի ունենում, այնուհանդերձ, ի հայտ է գալիս անձի սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող իրավագործություններից օգտվելու հնարավորությունների բացակայություն, քանի որ ակնհայտ է, որ վերցման ենթարկված գույքը, որոշակի ժամանակահատվածում որպես սեփականություն հանդիսացող օբյեկտ, սեփականատիրոջ կողմից տնօրինվել, օգտագործվել կամ կառավարվել չի կարող: Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել քննության առարկա կանոնակարգումը ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սեփականության իրավունքը շրջակա միջավայրի պաշտպանության, այլ անձանց, հանրության, պետության իրավունքների եւ օրինական շահերի հետ ներդաշնակ իրականացնելու սահմանադրաիրավական սկզբունքի տրամաբանության լույսի ներքո: Ինչպես նշվեց, վիճարկվող կանոնակարգումը նպատակ է հետապնդում ապահովել մաքսային իրավահարաբերությունների շրջանակներում տուգանքի, մաքսային վճարների գանձումը, այսինքն՝ կոչված է ապահովելու համապատասխանաբար տուգանք վճարելու, մաքսային վճար կատարելու համար պատասխանատու անձի կողմից իր պարտավորության կատարումը: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-1073 որոշմամբ, քննության առնելով հարկային իրավահարաբերությունների շրջանակներում կիրառվող արգելանքի ինստիտուտը, որը կոչված է ապահովելու անձի կողմից իր հարկային պարտավորությունների կատարումը, որոշակի իրավապայմանների առկայության պայմաններում իրավաչափ է համարել սեփականության իրավունքի սահմանափակումը՝ ի կատարումն ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված՝ անձի պարտավորության: Այդուհանդերձ, սույն գործով վիճարկվող դրույթը, նախատեսելով սեփականության իրավունքի սահմանափակում՝ առանց վերոնշյալ որոշման մեջ արձանագրված իրավապայմանների, միաժամանակ տարբերակում չի դնում իրավախախտում կատարած սուբյեկտի եւ այլ սուբյեկտների սեփականության հարցում: Եթե ՍԳՈ-1073 որոշմամբ քննության առնված սեփականության իրավունքի սահմանափա-

կումն իրացվում է ի ապահովումն անձի կողմից իր պարտավորությունների կատարման՝ իր իսկ գույքի հաշվին, այն էլ ոչ ամբողջ, այլ միայն չկատարված պարտավորության չափով, ապա Մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածով նախատեսված կանոնակարգման պայմաններում ոչ միշտ է, որ անձի մեղքով օրենքի խախտման հետեւանքով իր սեփականության իրավունքն է սահմանափակվում՝ որպես երաշխիք ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների կատարման: Քննարկվող կանոնակարգման պայմաններում հնարավոր է երկու իրավիճակ՝ առաջինը, երբ անձը ՀՀ մաքսային սահմանով տեղափոխում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, երկրորդ դեպքում՝ այլ անձի կամ անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքը: Մասնավորապես, նման իրավիճակ է առաջանում, երբ ապրանք տեղափոխողն օգտվում է մաքսային բրոքերի (միջնորդ) ծառայություններից՝ քաղաքացիաիրավական պարտավորությունների շրջանակներում: Եթե առաջին դեպքում սեփականության իրավունքին միջամտությունը կարող է իրավաչափ համարվել, քանզի անձն իր իսկ մեղքով թույլ տրված խախտման համար ենթարկվում է վարչական տույժի, եւ որպես դրա կատարման երաշխիք՝ իր գույքի նկատմամբ նրա սեփականության իրավունքն է սահմանափակվում, ապա երկրորդ դեպքում անձը կրում է բացասական հետեւանքներ՝ անկախ իր մեղքից, մեկ այլ անձի վարքագծի (գործողությունների կամ անգործության)՝ այսինքն, վերջինիս կողմից ստանձնված քաղաքացիաիրավական պարտականությունների ոչ պատշաճ կատարման պատճառով:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԳՈ-920 որոշման մեջ արձանագրել է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9, 32 եւ 279-րդ հոդվածների համադրված ուսումնասիրությունը վկայում է, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Այդ սկզբունքն է ընկած նաեւ մաքսային կանոնների խախտման համար պատասխանատվության հիմքում: Մասնավորապես, ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական եւ պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության: Հետեւաբար՝ մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր,

հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը: Նշված սկզբունքը սերտորեն ամնչվում է նաեւ վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավախախտման համար...»:

Ջարգացնելով ՄԴՈ-920 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, քանի որ պատասխանատվության սուբյեկտ է համարվում անձը, ով թույլ է տվել օրենքի խախտումը, հետեւապես՝ պարտավորության կատարումն ապահովելու միջոցները պետք է իրացվեն բացառապես իրավախախտում թույլ տված եւ պատասխանատվության ենթարկված անձի գույքի հաշվին: Սահմանադրական դատարանը նաեւ գտնում է, որ եթե ապրանքների վերցման նպատակը տուգանքի վճարման, մաքսային վճարների կատարման պարտավորության ապահովումն է, ապա այն չի կարող իրացվել՝ անկախ վերցման ենթակա ապրանքի սեփականության պատկանելությունից, քանի որ իրավախախտը համապատասխան պարտավորությունը պատշաճ կատարելու շահագրգռվածություն կարող է ունենալ իր սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու եւ սեփական գույքի հանդեպ բացասական հետեւանքներ կրելուց խուսափելու հեռանկարի պարագայում, մինչդեռ վիճարկվող կանոնակարգումը չի ապահովում պարտավորության կատարման շահագրգռվածության եւ սեփականության իրավունքի սահմանափակման՝ որպես նպատակի եւ միջոցի հարաբերակցության տրամաբանական փոխապայմանավորվածությունը: Ավելին, հիշյալ իրավակարգավորմամբ գործնականում խախտվում են իրավական պատասխանատվության ինստիտուտի կիրառման հանրային-իրավական սկզբունքները (անհատականացում, մեղքի առկայություն եւ այլն), որի արդյունքում այն չի կարող արդյունավետորեն ծառայել դրանցով հետապնդվող նպատակներին:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ այլ անձի ոչ իրավաչափ վարքագծով (գործողությունով կամ անգործությամբ) պայմանավորված անձի սեփականության իրավունքի սահմանափակումը՝ ապահովելու համար խախտումը թույլ տված անձի կողմից իր պարտավորության կատարումը, հանդես է գալիս որպես ոչ իրավաչափ միջամտություն իրավախախտում թույլ չտված անձի սեփականության իրավունքի նկատմամբ եւ աղերսներ չունի մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ վարույթի բնականոն ընթացքի երաշխավորման անհրաժեշտության հետ:

9. Անդրադառնալով վիճարկվող կանոնակարգման կիրառման համար անհրաժեշտ օրենսդրական երաշխիքների հիմնահարցին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Մաքսային օրենսգրքում բացակայում են այն երաշխիքները, որոնց համադրության լույսի ներքո է բացառապես ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչել սեփականության իրավունքի իրացման հնարավորության սահմանափակումը՝ որպես ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված պարտավորության իրացման ապահովմանն ուղղված՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սեփականության իրավունքի իրացման սահմանադրաիրավական սկզբունքի դրսևորման ձեռնարկ: ՄԳՈ-1073 որոշմամբ մատնանշված երաշխիքներն առավելապես հանգում են նրան, որ պարտավորությունների կատարումն ապահովելու համար գույքի նկատմամբ արգելանք/վերցնում կարող է կիրառվել պարտավորությունների կատարումն այլ միջոցներով ապահովելու բոլոր հնարավորություններն սպառելուց հետո: Մինչդեռ սույն գործով քննության առարկա իրավիճակում գույքը վերցվում է անմիջապես՝ անկախ սեփականության պատկանելությունից, հետևաբար՝ ոչ իրավաչափ եղանակով: Բացի դրանից, Մաքսային օրենսգրքում չկան գույքի վերցման այլընտրանքային կառուցակարգեր, մինչդեռ հարկային իրավահարաբերությունների շրջանակներում արգելանքի ինստիտուտի սահմանադրականության հարցը քննելիս սահմանադրական դատարանն այդպիսիների առկայությունը դիտարկել է որպես գործուն կառուցակարգ անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու հարցում: Մաքսային օրենսգրքում բացակայում է նաև գույքի այն տեսակների ցանկը, որոնց պահումն արգելվում է: Մինչդեռ նման կանոնակարգման առկայությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքում եւս ՄԳՈ-1073 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է որպես արգելանքի իրացման ընթացքում կարեւոր երաշխիք:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ Մաքսային օրենսգրքի վիճարկվող դրույթից պարզ չի դառնում, թե տուգանք նշանակելու պարագայում գույքի սեփականատերը կարող է վճարել տուգանքն իրավախախտում կատարած սուբյեկտի փոխարեն, թե՛ ոչ: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման հնարավորության բացակայության պայմաններում մեծանում է անձի իրավունքների խախտման ռիսկը, քանի որ անձի սեփականության իրավունքի սահմանափակման վերացումը պայմանավորվում է մեկ այլ անձի վարքագծով, եւ գույքի սեփականատերը իրավախախտում կատա-

րած սուբյեկտի կողմից երկարատեւ ժամանակահատվածում տուգանքը չվճարելու պարագայում կարող է կրել լուրջ ֆինանսական եւ այլ կորուստներ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ թեւ սեփականության իրավունքի իրացումը կարող է ժամանակավորապես կասեցվել տուգանքների, մաքսային վճարների կատարման ապահովման նպատակով, սակայն այս հիմքով սեփականության իրավունքին միջամտության օրենսդրական կանոնակարգումը պետք է հնարավորություն ընձեռի անձին պաշտպանելու իր իրավունքը: Անձի սեփականության իրավունքին միջամտությունը պետք է բխի տվյալ անձի կողմից տուգանքի եւ մաքսային վճարի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից, պետք է լինի բավարար եւ անհրաժեշտ այդ նպատակին հասնելու համար, իրավասու մարմնի լիազորությունը եւ այդ լիազորության ընթացակարգը պետք է որոշակիորեն ամրագրված լինեն օրենսդրական մակարդակում՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտացոլված՝ սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներ ամրագրելու անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը հանգում է հետեւյալին.

Ուսխ՝ վեճի առարկա իրավակարգավորումը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի /մասնավորապես՝ 41-րդ հոդվածի 1-ին մաս, 36-րդ հոդվածի 4-րդ մաս/ պահանջներին,

Երկրորդ՝ Մաքսային օրենսգրքով սահմանված չէ մաքսային տուգանքների եւ պարտավորությունների կատարման նպատակով ապրանքներ վերցնելու ընթացակարգ, իսկ 224-րդ հոդվածում «վերցնել» եզրույթը, ի տարբերություն 212-րդ հոդվածով նախատեսված՝ մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտների առնչությամբ գործողության, վերաբերում է ոչ թե մաքսային իրավախախտումների բացահայտմանն ու կանխարգելմանը, այլ տուգանքի, մաքսային վճարների եւ պարտավորությունների կատարման ապահովմանը,

Երրորդ՝ վեճի առարկա իրավադրույթի կիրառման պայմաններում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ վերցված ապրանքը հետագայում չի կարող դառնալ բռնագանձման առարկա, որի պարագայում այդ ապրանքը վերցնելը չի կարող նպատակ ունենալ ապահովելու մաքսային տուգանքների եւ վճարների կատարման պարտականությունը,

չորրորդ՝ վիճարկվող դրույթն այնքանով, որքանով տարբերակում չի դնում տարբեր սեփականատերերի գույքի միջեւ եւ առաջացնում է անբարենպաստ իրավական հետեւանքներ այն սուբյեկտների համար, որոնց վարքագծով պայմանավորված չէ իրավախախտման փաստը,

հանգեցնում է վերջիններիս սեփականության իրավունքի իրացման ոչ իրավաչափ միջամտության:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 8-րդ եւ 31-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**3 հունիսի 2014 թվականի
ՍԳՈ-1153**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 16-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 3-ՐԳ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 1996
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԳՐՈՒՅՔԱԶՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 604 ՈՐՈՇՄԱՆ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 հունիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետի տեղակալ Ա. Մարգարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ վարչապետի պաշտոնական ներկայացուցիչ, ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի, ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության եւ Հայաստանի Հանրապետության վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2014 թվականի հունվարի 30-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի փետրվարի 25-ի ՍԴԱՌ-7 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության, որոշվել է գործը քննել գրավոր ընթացակարգով՝ որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավելով «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի մասով՝ նշված օրենքն ընդունած մարմնին՝ ՀՀ Ազգային ժողովին, իսկ ՀՀ վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման մասով՝ ՀՀ վարչապետին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքը, ՀՀ վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 604 որոշումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Ց**.

1. «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՕ-380-Ն օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002 թվականի հուլիսի 3-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի հուլիսի 18-ին եւ ուժի մեջ է մտել 2002 թվականի հուլիսի 20-ին:

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 24.12.2004թ. ՀՕ-59-Ն

օրենքով փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել օրենքի 16-րդ հոդվածում, որոնք, սակայն, չեն վերաբերել օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությանը:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը սահմանում է.

«Ձինվորական պաշտոնը համարվում է հավասար, եթե նախկին եւ նոր հաստիքային պաշտոններին համապատասխանում են նույն զինվորական կոչումն ու պաշտոնային դրույքը»:

ՀՀ վարչապետի՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշումն (այսուհետ՝ Որոշում) ընդունվել է 1996 թվականի նոյեմբերի 4-ին եւ ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 1-ից:

Որոշման թիվ 1 հավելվածով սահմանվում են ՀՀ բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, որտեղ նաեւ առանձին սանդղակներում նախատեսված են ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատի աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, ինչպես նաեւ ՀՀ պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության նախարարության եւ արտակարգ իրավիճակների վարչության զինվորական միավորումների եւ ստորաբաժանումների աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, իսկ թիվ 2 հավելվածով սահմանվում են զինծառայողների զինվորական կոչումների դրույքաչափերը, ՀՀ դատախազության, արդարադատության նախարարության, դատավորների, պետական նոտարիատների եւ հարկային տեսչության աշխատողներին շնորհված դասային եւ հատուկ կոչումների, որակավորման դասերի համար հավելումները:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թեպետ դիմողը վիճարկում է Որոշումն ամբողջությամբ, այդուհանդերձ, դիմումում բերվող հիմնավորումները վերաբերում են բացառապես Որոշման թիվ 1 հավելվածով սահմանված՝ ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատի աշխատողների եւ ՀՀ պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության նախարարության եւ արտակարգ իրավիճակների վարչության զինվորական միավորումների ու ստորաբաժանումների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սանդղակներում հնարավոր օրենսդրական բացի սահմանադրականությանը:

2. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, դիմելով ՀՀ սահմանադրական դատարան, գտնում է, որ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը եւ ՀՀ վարչապետի՝ վեճի առարկա որոշումը հակասում են ՀՀ Սահմանադրության 37-րդ եւ 43-րդ հոդվածների պահանջներին:

Վիճարկվող նորմատիվ ակտերի առնչությամբ դիմողի դիրքորոշումը հանգում է հետեւյալին. ԱՊՀ մասնակից պետությունների կողմից 1992 թվականի մայիսի 15-ին Տաշքենդում ստորագրված «Զինվորականների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության եւ պետական ապահովագրության մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 1-ին հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունների կողմից սահմանվող զինժառանգողների եւ նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության մակարդակը չի կարող ԽՍՀՄ-ի կողմից նախկինում սահմանված օրենսդրական եւ այլ նորմատիվ ակտերի համեմատ ավելի ցածր մակարդակի լինել:

Դիմողը Համաձայնագրի 1-ին հոդվածի եւ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համակարգային վերլուծության արդյունքում եզրահանգում է, որ Համաձայնագրի պահանջների պատշաճ կատարման համար հարկավոր է, որ այն հստակ եւ կանխատեսելի արտացոլում ստանա ՀՀ օրենսդրության մեջ, օրինակ՝ նախատեսելով ԽՍՀՄ ժամանակաշրջանում գործող զինվորական պաշտոնների սպառիչ եւ/կամ համապարփակ ցանկ:

Դիմողը միաժամանակ գտնում է, որ ՀՀ օրենսդրության ներկայիս կարգավորումները համահունչ չեն տվյալ Համաձայնագրով սահմանված կարգին եւ խնդրահարույց են նաեւ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջների համատեքստում:

Իր տեսակետը հիմնավորելու համար դիմողն իրավացիորեն արձանագրում է, որ «...օրենքով եւ իրավական այլ ակտերով չեն կարող բացառվել միջազգային որեւէ պայմանագրով նախատեսված իրավունքներ ու ազատություններ (այդ թվում՝ արտոնություններ) կամ սահմանափակվել այդպիսիք»:

Անդրադառնալով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ եւ 24-րդ հոդվածներին՝ դիմողը գտնում է, որ զինժառանգողին կենսաթոշակ նշանակելիս նրա դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդունվող պաշտոնային դրույքաչափերը, դրամական բավարարման մեջ հաշվառվող վճարումների տեսակների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը: Սակայն տվյալ դեպքում գործընթացի կարգավորման հիմքը ՀՀ վարչապետի թիվ 604 որոշումն է եւ ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 6 հրամանը, այլ ոչ թե ՀՀ կառավարության որոշումը:

Գիմողը նաեւ անդրադարձ է կատարում ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված հավելված 16-ին, նշելով, որ հավելվածում ներառված չեն զինվորական այն բոլոր պաշտոնները, որոնք եղել են նախկին ԽՍՀՄ ժամանակաշրջանում: Գիմողի կարծիքով, դրանով իսկ ՀՀ կառավարությունը չի կատարել թե՛ ՀՀ օրենսդրությամբ եւ թե՛ Համաձայնագրով իր վրա դրված պարտականությունը:

Գիմողը գտնում է նաեւ, որ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Համաձայնագրի 1-ին հոդվածով նախատեսված պայմանը չի կարող լիարժեք պահպանվել, եթե համաձայն օրենքի վիճարկվող դրույթի՝ նախկին եւ նոր հաստիքային պաշտոնների համապատասխանության համար անհրաժեշտ է միայն զինվորական կոչման ու պաշտոնային դրույթի համընկնումը: Միաժամանակ, դիմողը գտնում է, որ զինվորական կենսաթոշակ նշանակելիս պետք է հաշվի առնվի նաեւ զինծառայողի զբաղեցրած պաշտոնը:

3. «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի մասով՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչը սույն գործով վիճարկվող օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության առնչությամբ գտնում է, որ «...օրենքի վիճարկվող նորմն ուղղակիորեն չի մասնակցում զինծառայողներին կենսաթոշակ նշանակելու հետ կապված հարաբերությունների կարգավորմանը», ինչպես նաեւ շեշտում է, որ «...զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային իրավունքների հետ կապված հարաբերությունները վիճարկվող նորմը պարունակող օրենքի կարգավորման առարկայում ընդգրկված չեն»: Ըստ պատասխանողի՝ նշված հարաբերությունները կարգավորվում են առավելապես «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, որի 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են զինվորական կենսաթոշակի տեսակները, ինչպես նաեւ որոշակի կարգավորում է նախատեսված նաեւ «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով:

Պատասխանող կողմը՝ ՀՀ Ազգային ժողովը, գտնում է, որ օրենքի վիճարկվող նորմն այն ձեւակերպմամբ, որն այժմ առկա է, որեւէ հակասության մեջ չի մտնում ՀՀ Սահմանադրության դրույթների հետ, քանի որ այն անուղղակի կերպով կոչված է ապահովելու օրենքով նախատեսված դեպքերում սոցիալական ապահովության՝ յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքի իրականացման որոշակի նախադրյալներ:

4. ՀՀ վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման մասով գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ վարչապետի պաշտոնական ներկայացուցիչը սույն գործով վիճարկվող նորմատիվ ակտերի դրույթների առնչությամբ առարկելով դիմողի այն մեկնաբանություններին, համաձայն որոնց՝ Որոշմամբ են սահմանվել կենսաթոշակառուների սոցիալական ապահովության ծավալները կամ ձեւերը, գտնում է, որ դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ այդ ժամանակահատվածում ՀՀ քաղաքացիների սոցիալական ապահովության ծավալը եւ ձեւերը սահմանված են եղել օրենքներով («Քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» եւ «Ջինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ նախկին օրենքներով, իսկ ներկայումս դրանք կարգավորվում են «Պետական կենսաթոշակների մասին» եւ «Ջինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ գործող օրենքներով):

Ըստ պատասխանողի՝ կենսաթոշակ նշանակելիս դրամական բավարարման չափը որոշելու համար հիմք հանդիսացող պաշտոնային դրույքաչափի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ: Միաժամանակ, պատասխանողի կարծիքով՝ ՀՀ կառավարությունը չի ստանձնել ԽՍՀՄ ժամանակաշրջանում եղած բոլոր զինվորական պաշտոնների ներառմամբ ցանկ սահմանելու միջազգային պարտավորություն, այլ միայն պարտավորվել է նախկին ԽՍՀՄ զինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մակարդակը սահմանել ոչ ցածր, քան սահմանված է եղել նախկին ԽՍՀՄ օրենսդրությամբ:

Ռուսաստանի Դաշնության գործող օրենսդրությամբ ավելի բարձր գործակից սահմանելու հանգամանքը, ըստ պատասխանողի՝ չի վկայում այն մասին, որ ՀՀ օրենսդրությունը մինչեւ 1992 թվականի փետրվարի 14-ը գորացրված զինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների համար ավելի ցածր սոցիալական ապահովության մակարդակ է սահմանում: Վերջում, վկայակոչելով ՍԴՈ-864 եւ ՍԴՈ-914 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, պատասխանողը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության

մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, կամ համապատասխան իրավական երաշխիքների առկայության դեպքում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա:

Պատասխանողը գտնում է, որ դիմումում հստակ արտահայտված չեն ՀՀ Սահմանադրության 37 եւ 43-րդ հոդվածներին Որոշման անհամապատասխանության փաստարկները:

5. Դիմումի, դրան կից ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաեւ դիմումում վկայակոչված միջազգային համաձայնագրի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ դիմողը, ըստ էության, վիճարկվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության խնդիրը պայմանավորում է հետեւյալ դիրքորոշումներով.

ա) զինժառանգողների եւ նրանց ընտանիքների անդամների՝ նախկին ԽՍՀՄ օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակները վերահաշվարկելու ներկայիս օրենսդրական կարգավորումները համահունչ չեն Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորություններին,

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամբողջությամբ չեն համապատասխանեցվել ԽՍՀՄ զինվորական այն պաշտոնները, որոնք նախկինում գոյություն են ունեցել, սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո վերացել են,

գ) զինվորական կոչումն ու պաշտոնային դրույթը՝ որպես համապատասխանության չափանիշներ, լիարժեք չեն արտացոլում նախկին եւ նոր զինվորական պաշտոնների հավասարությունը,

դ) զինժառանգողին կենսաթոշակ նշանակելիս նրա դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդունվող պաշտոնային դրույթաչափերի հետ կապված հարցերը չեն կարող կարգավորվել Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումով:

Առաջադրված հիմնախնդիրների առնչությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականությունը գնահատել.

- միջազգային իրավական նորմերի կիրառելիության սահմանադրաիրավական երաշխավորման տեսանկյունից,
- անձանց սոցիալական ապահովության իրավունքը (այդ թվում՝ արտոնությունները) իրականացնելու եւ պաշտպանելու պայմանների ու կարգի օրենսդրական երաշխավորման տեսանկյունից,
- միջազգային պայմանագրերի եւ օրենքների հիման վրա եւ դրանց կատարումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում

ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից որոշումներ ընդունելու վերաբերյալ սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:

6. Սույն գործի առարկայի շրջանակներում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների՝ նախկին ԽՍՀՄ օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակների մակարդակի հետ կապված հարցերի, ինչպես նաև դրանց վերահաշվարկման հետ կապված հարաբերությունների միջազգային իրավական կարգավորումն իրականացվում է Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների «Ջինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական երաշխիքների մասին» 1992 թվականի փետրվարի 14-ի և «Ջինվորականների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության մասին» 1992 թվականի մայիսի 15-ի համաձայնագրերով (Հայաստանի Հանրապետության համար դրանք ուժի մեջ են մտել ստորագրման պահից):

Ընդ որում, այդ համաձայնագրերի համադրված վերլուծությունը վկայում է, մասնավորապես, հետևյալը՝

ա) ԽՍՀՄ նախկին զինված ուժերի զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է այն պետության օրենսդրությամբ սահմանված կամ սահմանվող պայմաններով, նորմերով և կարգով, որի տարածքում բնակվում են նշված զինծառայողները և նրանց ընտանիքները,

բ) զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության մակարդակը հաստատվում է մասնակից պետությունների օրենսդրությամբ, որը չի կարող ավելի ցածր լինել, քան ԽՍՀՄ օրենսդրությամբ և այլ նորմատիվ ակտերով ավելի վաղ հաստատված մակարդակը («Ջինվորականների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության մասին» 1992 թվականի մայիսի 15-ի համաձայնագրի 1-ին հոդված):

ՀՀ սահմանադրական դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է միջազգային պայմանագրերի՝ որպես Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասի կարևորության և դրանց՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անվերապահ կատարման անհրաժեշտությանը (ՄԴՈ-966, ՄԴՈ-1050 և այլն):

Վեճի առարկա իրավահարաբերությունների առնչությամբ օրենսդիրը, հաշվի առնելով նաեւ միջազգային վերոհիշյալ համաձայնագրերով ստանձնված պարտավորությունների կատարման պահանջը, «Չինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ ամրագրել է զինվորական պաշտոնների հավասարության պայմանները, որպիսիք են հանդիսանում զինվորական կոչումն ու պաշտոնային դրույքը:

Չնայած այն հանգամանքին, որ դիմողը նախկին եւ նոր զինվորական պաշտոնների համապատասխանության չափանիշների ոչ լիարժեքության վերաբերյալ արտահայտված դիրքորոշման մասով որեւէ հիմնավորում չի ներկայացնում, իսկ նման լիազորություն վերապահված է բացառապես ՀՀ Ազգային ժողովին, այնուամենայնիվ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիշատակված համաձայնագրերով Հայաստանի Հանրապետությունը չի ստանձնել նախկին եւ նոր զինվորական պաշտոնների համապարփակ ցանկ սահմանելու եւ դրանք համապատասխանեցնելու պարտավորությունը: Ստանձնած պարտավորությունը վերաբերում է համարժեք սոցիալական երաշխիքների ապահովմանը: Միաժամանակ, հաշվի առնելով զինվորական պաշտոնների բազմազանությունը եւ ժամանակի ընթացքում դրանց հաճախակի փոփոխելիությունը՝ ՀՀ կառավարությունն իր՝ 1993 թվականի ապրիլի 19-ի թիվ 170 եւ հաջորդող այլ որոշումներով սահմանել է նաեւ ԽՍՀՄ նախկին օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակների վերահաշվարկման կարգը, պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները եւ դրույքները, որոնք կոնկրետացվել են այդ որոշումների հիման վրա ընդունված ՀՀ պաշտպանության նախարարի հրամաններով:

Բացի դրանից, սոցիալական ապահովության ծավալներն ու ձեւերը Համաձայնագրի մասնակից երկրներում տարբեր են, հետեւաբար, ենթադրվում է, որ տարբեր կարող են լինել նաեւ նախկին ԽՍՀՄ զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության մակարդակները: Ուստի Համագործակցության մյուս որեւէ պետության օրենսդրությամբ ավելի բարձր գործակից սահմանելու հանգամանքը չի վկայում այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում՝ զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների համար՝ նախկին օրենսդրությամբ նշանակված եւ 1992 թվականի փետրվարի 1-ից հետո կատարված վերահաշվարկով կենսաթոշակային ապահովության մակարդակն ավելի ցածր է, քան ԽՍՀՄ օրենսդրությամբ եւ այլ նորմատիվ ակտերով ավելի վաղ հաստատված մակարդակը:

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, ըստ որի՝ զինվորական կենսաթոշակ նշանակելիս պետք է հաշվի առնվի նաև զինծառայողի զբաղեցրած պաշտոնը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ՝ թե՛ նախկին, թե՛ ներկա օրենսդրական կարգավորումների շրջանակում զինվորական վերջին պաշտոնի համար սահմանված ամսական դրամական բավարարման գումարի չափը դիտարկվում է որպես ելակետային ցուցանիշ՝ կենսաթոշակի չափը հաշվարկելու կամ վերահաշվարկելու համար: Այդ սկզբունքը գործել է նաև նախկին՝ ԽՍՀՄ սոցիալական ապահովության օրենսդրությամբ:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ զինվորական կենսաթոշակի հաշվարկման համար հիմք է ընդունվում ոչ թե զինվորական պաշտոնը, այլ յուրաքանչյուր պաշտոնին համապատասխան դրամական բավարարման գումարի չափը, որը ձեւավորվում է պաշտոնային դրույքաչափից ու ամսական հավելավճարներից:

Վերոհիշյալ նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ նախկին եւ նոր զինվորական պաշտոնների լիարժեք ու ամբողջական համադրության համար վեճի առարկա հողվածում սպառիչ ցանկի բացակայությունը, ինչպես նաև այդ պաշտոնների համապատասխանության չափանիշների ենթադրյալ ոչ լիարժեք լինելու հանգամանքը չեն կարող դիտարկվել որպես օրենքի տվյալ նորմի իրավակարգավորման շրջանակներում առկա բաց, ինչը կարող էր խոչընդոտ հանդիսանալ անձի իրավունքին առնչվող սոցիալական ու իրավական երաշխիքների իրականացմանը: Դիմողի կողմից բարձրացված հիմնախնդիրը պայմանավորված չէ օրենքի՝ իր կողմից վիճարկվող դրույթի իրավական բովանդակությամբ կամ իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից ելնելով՝ դրա հնարավոր անհստակությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2014 թվականի ապրիլի 8-ի ՍԴՈ-1143 որոշմամբ միմյանցից հստակ սահմանազատել է օրենսդրական կարգավորումների ոչ լիարժեք լինելու այն դեպքերը, որոնք կարող են քննվել սահմանադրական դատարանի կողմից, այն դեպքերից, որոնց լուծումը վերապահված է բացառապես օրենսդիր մարմնին:

Նշված որոշման 6-րդ կետում ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է հետեւյալ սկզբունքային իրավական դիրքորոշումները, որ՝ ա) «...Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետեւանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական եւ բնականոն իրագործումը»,

բ) «...իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում ... բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է»:

Հաշվի առնելով այս դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի կողմից բարձրացված իրավական վեճը չի առնչվում «Ձինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության սահմանադրաիրավական բովանդակությանը, ինչն ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում:

7. Ըստ դիմողի՝ ներկայիս օրենսդրական կարգավորումների շրջանակներում խախտվում է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածում ամրագրված՝ սոցիալական ապահովության ծավալի ու ձեւերի՝ միայն օրենքով սահմանվելու իմպերատիվ պահանջը: Այդ կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը 2008 թվականի հունվարի 29-ի ՍԳՈ-731 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ ՀՀ Ազգային ժողովին է պատկանում կենսաթոշակների ծավալները եւ ձեւերը, դրանց նշանակման պայմանները եւ կարգը սահմանելու լիազորությունը՝ հաշվի առնելով միջազգային պայմանագրերով նախատեսված դրույթները եւ/կամ նորմերը:

ՀՀ օրենսդրության (մասնավորապես «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի) ներկայիս կարգավորումների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում այն, որ օրենսդիրը հստակ սահմանել է պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ նշանակելու, հաշվարկելու (վերահաշվարկելու) եւ վճարելու պայմաններն ու կարգը:

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 5-րդ կետի ուժով ՀՀ կառավարությունը, ի թիվս այլ գործառույթների, իրականացնում է նաեւ պետական քաղաքականությունը սոցիալական ապահովության բնագավառում:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի, «Ձինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի եւ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողին կենսաթոշակ նշանակելիս նրա դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդուն-

վող պաշտոնային դրույքաչափերը, դրամական բավարարման մեջ հաշվառվող վճարումների տեսակների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ օրենսդիր մարմինը, օրենքով սահմանելով կենսաթոշակների ծավալներն ու ձեւերը, միաժամանակ ՀՀ կառավարությանն է պատվիրակել սահմանելու զինծառայողին կենսաթոշակ նշանակելիս նրա դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդունվող պաշտոնային դրույքաչափերը, դրամական բավարարման մեջ հաշվառվող վճարումների տեսակների ցանկը: Հետեւաբար, գործող օրենսդրությամբ հիշյալ դրույքաչափերի հետ կապված հարցերը պետք է կարգավորվեն առնչված ՀՀ կառավարության, այլ ոչ թե ՀՀ վարչապետի որոշմամբ:

8. Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ սույն գործով վիճարկվող «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» 1996 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 604 որոշման վերաբերյալ դիմումի ուսումնասիրությունից բխում է հետեւյալը.

ա) դիմողի կողմից բերված փաստարկների եւ տվյալ որոշման վերլուծականը հիմնականում վերաբերում է ինչպես իրավակիրառող մարմնի՝ ՀՀ պաշտպանության նախարարության գործողությունների իրավաչափության պարզաբանմանը, այնպես էլ այդ որոշման՝ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասին հակասելու հիմնավորումների արտահայտմանը,

բ) ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջի առկայության պայմաններում, դիմողը, ըստ էության, սահմանադրական դատարանում վիճարկում է տվյալ որոշման ոչ թե սահմանադրականության հարցը՝ ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխի նորմերին համապատասխանության շրջանակում, այլև օրինականության հարցը՝ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված բացառապես օրենքով կարգավորման սահմանադրական պահանջի կատարման տեսանկյունից:

Վերոհիշյալի կապակցությամբ, հաշվի առնելով նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի ՍԳՈ-1136 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ներկայացված վեճի համատեքստում ՀՀ վարչապետի որոշման իրավաչափության հարցն օրենքի պահանջներին դրա համապատասխանության

շրջանակներում է եւ ընդդատյա է ՀՀ վարչական դատարանի քննությանը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածով սահմանված են վարչական դատարանին ընդդատյա պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ գործերը, իսկ նույն օրենսգրքի 192-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ նույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել նաեւ Մարդու իրավունքների պաշտպանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման մասով գործի վարույթը կարճել:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 հունիսի 2014 թվականի
ՍԳՈ-1154**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՄԱԳԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊԻՔԻ (28.11.2007թ.)
139-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 140-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-3-ՐԳ
ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 հուլիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչներ Ա. Ջեյնալյանի, Ա. Ղազարյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեանյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Մագդա Եղիազարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (28.11.2007թ.) 139-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Մագդա Եղիազարյանի՝ 08.01.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք), ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին, ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից եւ ուժը կորցրել է 2014 թվականի հունվարի 7-ից:

Գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին եւ ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի՝ «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատական ակտ կայացնելու առանձնահատկությունները» վերտառությամբ 139-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր. «Ստուգումից հետո պարզելով վիճարկվող ակտի անհամապատասխանությունն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտին՝ վարչական դատարանն այն անվավեր է ճանաչում այդ հիմքով՝ անկախ հայցվորի պահանջից»:

Օրենսգրքի՝ «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի որոշումների բնույթը եւ իրավական հետեւանքները» վերտառությամբ 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերը սահմանում էին. «1. Նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի որոշումները պաշտոնական հրապարակման պահից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում պարտադիր են բոլորի համար:

2. Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտերն իրենց իրավաբանական ուժը կորցնում են դրանք անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի որոշման պաշտոնական հրապարակման պահից (ex nunc), բացառությամբ սույն հոդվածի 5-րդ եւ 9-րդ մասերով նախատեսված դեպքերի:

3. Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտերի վրա հիմնված՝ վարչական դատարանի որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը վերանայման ենթակա չեն, սակայն վարչական դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից այլեւս չեն կարող կիրառվել: ...»:

2. Գործի համառոտ դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմողը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահի՝ 12.11.1997թ. «Ատենախոսությունների փորձաքննության կարգը հաստատելու մասին» թիվ 150 հրամանի առջին լինելու կամ այն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Դատարանն իր՝ 12 փետրվարի 2013 թվականի որոշմամբ որոշել է մերժել հայցադիմումը՝ հրամանն առջին ճանաչելու մասով, այն պատճառաբանությամբ, որ. «...ՀՀ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության կարգով ճանաչել է միայն վարչական ակտ առ ոչինչ ճանաչելու կանոնը՝ միաժամանակ բացառելով այլ բնույթի իրավական ակտերն առ ոչինչ ճանաչելու հնարավորությունը»:

Ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասով էլ դատարանը վերադարձրել է հայցադիմումը՝ արձանագրելով բողոքարկման եռամսյա ժամկետի պահանջի խախտում: Դատարանը նաեւ արձանագրել է, որ հայցվորը չի ներկայացրել միջնորդություն բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ:

Դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ վարչական դատարանն իր 11.04.2013 թվականի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը եւ ուժի մեջ թողել վարչական դատարանի որոշումը: Վերաքննիչ վարչական դատարանն արձանագրել է, որ «...իրավական ակտերի իրավաչափությունը որոշելու գործերով օրենսդիրը վարչական դատարանին վերապահել է միայն տվյալ վիճարկվող իրավական ակտը՝ դրա ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտին անհամապատասխանությունը պարզելու դեպքում, անվավեր ճանաչելու լիազորությունը, իսկ նորմատիվ իրավական ակտը առ ոչինչ հաստատելու լիազորություն վարչական դատարանին չի վերապահել»: Որպես վերաքննիչ բողոքը մերժելու հիմք վերաքննիչ վարչական դատարանն ամբարգրել է դիմողի կողմից դատավարական ժամկետի խախտման փաստը:

Դիմողը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարան-

նի 19.06.2013 թվականի որոշմամբ վերադարձվել է: Վճռաբեկ դատարանն իր որոշման հիմքում դրել է վերաքննիչ վարչական դատարանի որոշման վերոհիշյալ իրավական դիրքորոշումները:

3. Դիմողը, վիճարկելով օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի՝ «անվավեր ճանաչելու» դրույթները, պնդում է, որ «Սույն դիմումով վիճարկվող ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 139, 140-րդ հոդվածների բովանդակությունից (կամ դատարանների կողմից դրանց հաղորդած իմաստից) բխում է, որ անձը հայց հարուցելու իրավունք չունի՝ ենթաօրենսդրական կամ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը կամ դրանց դրույթներն առաջին ճանաչելու (առաջին լինելը հաստատելու) պահանջով»: Դիմողը գտնում է, որ նորմատիվ իրավական ակտերի առաջին լինելու նյութաիրավական հիմքերը շարադրված են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում, սակայն, ի տարբերություն վարչական ակտերի, նորմատիվ իրավական ակտերի առաջին ճանաչելու պահանջով վարչական դատարան դիմելու իրավունք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով չի նախատեսվել: Ըստ այդմ՝ դիմողը գտնում է, որ օրենսդրի կողմից դատական վերահսկողությունից դուրս է դրվել մի ողջ իմաստիտուտ, որով խաթարվում է արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի էությունը: Դիմողը գտնում է, որ օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ, 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթները՝ «անվավեր ճանաչելու» մասով, հակասում են ՀՀ Սահմանադրությանը՝ կա՛մ օրենսդրի կողմից տրված բովանդակության, կա՛մ անորոշ ձեւակերպված լինելու, կա՛մ դատարանների կողմից հաղորդած բովանդակության պատճառով:

4. Պատասխանողի կարծիքով՝ դիմողի կողմից վիճարկվող նորմերն ընդգրկված են 28.11.2007թ. ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում, որն ուժը կորցրել է 07.01.2014թ. նոր վարչական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո: Ըստ պատասխանողի՝ ակնհայտ է, որ այստեղ առնչվում ենք մի իրավական ակտի, որը, որպես այդպիսին, այլևս գոյություն չունի, եւ դրա դրույթները՝ անկախ ՀՀ Սահմանադրության հետ համապատասխանության փաստից, այլևս որեւէ իրավական հետեւանք չեն առաջացնում:

Պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ. «...խոսքը ոչ այնքան վիճարկվող նորմերի հակասահմանադրականության մեջ է, հատկապես, որ դրանք որեւէ կերպ անհամապատասխանության մեջ չեն մտնում ՀՀ

Սահմանադրության հետ, այլ առավելապես իրավակարգավորման բաց է, որն անհրաժեշտության դեպքում կարող է սահմանված կարգով լրացվել եւ ապահովել իրավակարգավորման ամբողջականությունը»:

5. Դիմումի եւ վերաբերելի դատական ակտերի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված է ոչ թե օրենսգրքի վիճարկվող դրույթների հակասահմանադրականությամբ, այլ դիմողի կողմից օրենսգրքով սահմանված բողոքարկման ժամկետների բացթողումով, եւ այդ ժամկետները վերականգնելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելով: Այսինքն՝ դիմողը չի օգտվել օրենսդրությամբ իրեն ընձեռված իրավական պաշտպանության հնարավորություններից եւ ըստ էության դիմումով բարձրացնում է վերացական սահմանադրական վերահսկողությանը բնորոշ հարցադրում՝ օրենսգրքի վիճարկվող նորմերի հակասահմանադրականությունն անուղղակիորեն փաստարկելով նրանով, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու հետեւանքները կարող էին բացառվել նորմատիվ իրավական ակտն առչինչ ճանաչելու օրենսդրական հնարավորության դեպքում, եթե օրենսգիրքը պարունակեր նորմատիվ իրավական ակտն առչինչ ճանաչելու ինստիտուտ:

6. Սույն գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի՝ քաղաքացի Մ. Եղիազարյանի կողմից սույն գործով սահմանադրական դատարան ներկայացված՝ ՀՀ վարչական դատարանի՝ 12.02.2013թ., ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ 11.04.2013թ. եւ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 19.06.2013թ. որոշումներում եւ մյուս իրավական ակտերում նշված վիճարկվող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթները նրա նկատմամբ չեն կիրառվել, չնայած դրանցում անդրադարձ է կատարվել հիշյալ չկիրառված դրույթների իրավական բովանդակությանը:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ

օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում՝ օրենքի դրույթի կիրառման պայմանը:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԳԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմումներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «օրենքի դրույթի կիրառում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը սահմանադրական դատարանը բացահայտել է իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԳՈ-747 որոշման մեջ, մասնավորապես, արտահայտելով հետեւյալ իրավական դիրքորոշումը. «... ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...եւ չի կիրառվել բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը ձեւականորեն վիճարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթների սահմանադրականությունը՝ ըստ էության բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության եւ կիրառման արդյունքում ընդունված դատական ակտերի օրինականության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԳԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն

վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացի Մազդա Եղիազարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (28.11.2007թ.) 139-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**3 հուլիսի 2014 թվականի
ՍԳՈ-1157**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԳԱՅԱՆԵ ԱՇՈՒՂՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426²-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ ԵՎ 426⁴-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող՝ քաղաքացի Գ. Աշուղյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գայանե Աշուղյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակետի եւ 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Աշուղյանի՝ 2014 թվականի ապրիլի 4-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաեւ հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածում կատարվել են մի շարք լրացումներ եւ փոփոխություններ (28.11.07 ՀՕ-270-Ն, 26.12.08 ՀՕ-237-Ն, 20.05.10 ՀՕ-96-Ն), որոնցից վերջինը՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-96-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2010 թվականի մայիսի 20-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2010 թվականի հունիսի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2010 թվականի հուլիսի 3-ից: Իսկ դիմողի կողմից վիճարկվող մյուս՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածում կատարվել են մի շարք լրացումներ եւ փոփոխություններ (28.11.07 ՀՕ-270-Ն, 26.12.08 ՀՕ-237-Ն, 20.05.10 ՀՕ-96-Ն, 26.10.11 ՀՕ-270-Ն, 21.06.14 ՀՕ-87-Ն), որոնցից վերջինը՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՕ-87-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2014 թվականի հունիսի 21-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2014 թվականի հուլիսի 17-ին եւ ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 2-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք» վերտառությամբ 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակետը սահմանում է.

«Նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեն՝

...

4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը եւ նրա տեղակալները»:

Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետեւանքով» վերտառությամբ 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար բողոք կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Աշուղյանն ընդդեմ Հայաստանի» (գործի համարը՝ 33268/03) գործով 17.07.2008թ. վճիռն օրինական ուժի մեջ է մտել 01.12.2008թ. եւ 13.10.2010թ. հրապարակվել է ՀՀ պաշտոնական տեղեկագրի թիվ 50(784) համարում: Գայանե Աշուղյանը 11.01.2011թ. Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 07.04.2003թ. եւ 09.04.2003թ. «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումները նոր հանգամանքի հիմքով վերանայելու պահանջով դատարան դիմելու պահանջի մասին դիմում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին: Ի պատասխան նշված դիմումի՝ ՀՀ գլխավոր դատախազությունից ստացվել է 21.02.2011թ. թիվ 15-16-11 գրությունը: Դիմողի ներկայացուցիչները 07.03.2011թ. բողոք են ներկայացրել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով դատարանին, ի թիվս այլնի, պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազին դիմել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.04.2003թ. եւ 09.04.2003թ. «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումների վերանայման վարույթ հարուցելու պահանջով: Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 07.04.2011թ. որոշմամբ բողոքը մերժել է, գտնելով, որ. «... Գ. Աշուղյանի իրավունքներն ու ազատությունները ՀՀ գլխավոր դատախազի եւ դատախազության կողմից չեն խախտվել» եւ «... դիմողը ... լիարժեք հնարավորություն ու ժամանակ ունեւ պաշտպանելու իր իրավունքները: Սակայն, ..., ՄԻԵԴ-ի վճիռը ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում վերջինս դատարան չի դիմել, չի օգտվել իր իրավունքներից, իսկ բողոքարկման բաց թողած ժամկետը հարգելի համարելու հարցը սույն քննարկման արդյունքում լուծվել չի կարող: Նման պահանջ չի ներկայացվել»: Դատարանը նշել է նաեւ, որ. «ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 491 գլուխը ... նոր հանգամանքներով ՀՀ գլխավոր դատախազի վրա դատական ակտը բողոքարկելու պարտականություն չի դրել: ... իսկ այլ պաշտոնատար անձ, այդ թվում գլխավոր դատախազը նրա փոխարեն, նրա իրավունքների պաշտպանության լիազորությամբ օժտված չէ եւ նման պարտականություն օրենսդիրը նրա վրա չի դրել» եւ որպես նշվածի եզրահանգում՝ դատարանը գտել է. « ... նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելը ՀՀ գլխավոր դատախազի եւ նրա տեղակալների հայեցողական իրավունքն է՝ ոչ թե պարտականությունը»:

Նշված որոշման դեմ դիմողի ներկայացուցիչները 22.04.2011թ. ներկայացրել են վերաքննիչ բողոք, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 28.04.2011թ. ԵԿԳ/0025/11/11 որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառով: Նշված որոշման դեմ դիմողի ներկայացուցիչները ներկայացրել են վճռաբեկ բողոք, որը վճռաբեկ դատարանի՝ 24.05.2011թ. ԵԿԳ/0025/11/11 որոշմամբ վերադարձվել է: Դիմողի ներկայացուցիչները Երեսան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վերը նշված որոշման դեմ ներկայացրել են վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 08.07.2011թ. ԵԿԳ/0033/15/11 որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը: Նշված որոշման դեմ դիմողի ներկայացուցիչները ներկայացրել են վճռաբեկ բողոք, որը վճռաբեկ դատարանի 22.08.2011թ. ԵԿԳ/0033/15/11 որոշմամբ վերադարձվել է:

Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի սահմանադրականությունը՝ Գայանե Աշուղյանը դիմում է ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան, որի արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը 2012թ. հոկտեմբերի 16-ին կայացրել է ՍԳՈ-1052 որոշումը: 14.01.2013թ. դիմողի ներկայացուցիչները, մատնանշելով ՀՀ սահմանադրական դատարանի հիշյալ որոշումը՝ որպես նոր հանգամանք, ներկայացրել են վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 18.04.2013թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է, որոշվել է վերանայել նույն դատարանի 24.05.2011թ. եւ 22.08.2011թ. որոշումները, բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 28.04.2011թ., ինչպես նաեւ 08.07.2011թ. որոշումները եւ գործն ուղարկել նոր քննության:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 16.07.2013թ. գործ թիվ ԵԿԳ/0025/11/12 ԵԿԳ/0033/15/11 որոշմամբ մերժել է 22.04.2011թ. վերաքննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Երեսան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության

դատարանի 07.04.2011թ. որոշումը՝ վերահաստատելով այն դիրքորոշումը, որ «... նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելը ՀՀ գլխավոր դատախազի եւ նրա տեղակալների հայեցողական իրավունքն է՝ ոչ թե պարտականությունը»:

Գայանե Աշուղյանի անունից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 16.07.2013թ. թիվ ԵԿԳ/0025/11/12 ԵԿԳ/0033/15/11 որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը 03.10.2013թ. ընդունել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում:

3. Դիմողը, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ եւ 103-րդ հոդվածները, գտնում է, որ անհատական դիմումով վիճարկվող դրույթները ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կոնվենցիոն իրավունքի խախտման փաստը ճանաչելու դեպքում անձանց՝ իրենց խախտված իրավունքները վերականգնելու՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով երաշխավորված իրավունքն ապահովելու նպատակով «...դատավարական օրենքներով պետք է երաշխավորվեն դատական ակտերի վերանայման ընթացակարգեր, այդ ընթացակարգերը պետք է իրական եւ կոնկրետ մարդկանց համար շոշափելի եւ օգտակար արդյունքներ տան», այլապես տեսական եւ ոչ իրական կլինեն անձի՝ ՀՀ սահմանադրական դատարան կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու՝ ՀՀ Սահմանադրության 101-րդ եւ 18-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները:

Դիմողը կարծում է, որ «... անձին պետք է դատավարական օրենքով տրամադրել կրկին դատարան դիմելու իրավունք՝ առանց ժամկետային սահմանափակման կամ դատախազին օժտել նման դիմումով դատարան դիմելու ոչ թե հայեցողական, այլ պոզիտիվ պարտականությամբ: Հակառակը պնդելը կնշանակի, որ պետությունը, տեղյակ լինելով քաղաքացու իրավունքներին ոչ իրավաչափ միջամտած լինելու, քրեական հետապնդում իրականացրած եւ դատապարտած լինելու եւ այդ հիմքով դատարանի իրավունքի մասին, բանեցնելով իր հայեցողությունը՝ ցուցաբերում է անգործություն»:

Վերլուծելով վիճարկվող նորմը՝ դիմողը եկել է այն եզրահանգման, որ դատախազի համար իրավախախտումից տուժողի իրավունքները վերականգնելու հայեցողական լիազորություն սահմանելը հանգեցնում է անձի՝ ՀՀ սահմանադրական դատարան կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու իրավունքի խախտման եւ այդ իրավունքը ապահովելու՝ պետության պոզիտիվ պարտականությունը սահմանող սահմանադրական դրույթների խախտման:

Վերոնշյալի վերլուծության արդյունքում դիմողը համոզմունք է հայտնում, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակետը եւ 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության 3, 18, 19, 20, 21, 22, 101 եւ 103-րդ հոդվածներին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ օրենսդրությամբ ներպետական դատական ատյաններում գործի վերանայման միջոցներ ձեռնարկելու համար որոշակի ժամկետի սահմանումը լիովին արդարացված է: Սա, ըստ պատասխանողի, նպատակ է հետապնդում անձի մոտ ձեւավորելու իր իրավունքների պաշտպանության նկատմամբ հետետողական եւ պատասխանատու վերաբերմունք: Բացի դրանից, պատասխանող կողմը կարծում է, որ իրավունքների դատական պաշտպանության վերաբերյալ սահմանադրական սկզբունքի ապահովումը չի ենթադրում ընդհանրապես դատավարական ժամկետների բացառում եւ ժամանակի ու տարածության մեջ իրավունքների պաշտպանության բացարձակ հնարավորության ապահովում:

Անդրադառնալով ՀՀ գլխավոր դատախազի եւ նրա տեղակալների համար նոր կամ նոր երեսան եկած հանգամանքների հիմքով գործի վերանայման համար դատարան դիմելու հայեցողական լիազորություն նախատեսելու հանգամանքին՝ պատասխանողը գտնում է, որ նման կարգավորումն «արդարացված է այնքանով, որքանով նման կառուցակարգի առկայությունը խախտված իրավունքների վերականգնման ոչ թե հիմնական միջոցն է, այլ հավելյալ երաշխիք այն դեպքերի համար, երբ անձը ինքնուրույն չի իրականացնում խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված գործողություններ»:

Ամփոփելով իր դիրքորոշումները վիճարկվող դրույթների վերաբերյալ՝ պատասխանող կողմը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակետը եւ 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

5. Սույն գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի՝ քաղաքացի Գ. Աշուղյանի կողմից սույն գործով սահմանադրական դատարան ներկայացված՝ Երեսան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 07.04.2011թ., ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 16.07.2013թ. եւ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 03.10.2013թ. որոշումներում վիճարկվող՝ **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակե-**

տի եւ 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները նրա նկատմամբ չեն կիրառվել, չնայած դրանցում անդրադարձ է կատարվել հիշյալ չկիրառված կարգավորումների իրավական բովանդակությանը:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է **այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը**»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած կոնկրետ սահմանադրական վերահսկողության տրամաբանությանը համահունչ՝ սահմանել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում օրենքի դրույթի՝ դիմողի նկատմամբ **կիրառված լինելու պայմանը**:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «օրենքի դրույթի կիրառում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը սահմանադրական դատարանը բացահայտել է իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ, մասնավորապես արտահայտելով հետեւյալ իրավական դիրքորոշումը. «... ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...եւ չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի նուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

Սահմանադրական դատարանն իր՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ «... «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատա-

կան դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատելով ՍԳՈ-751, ՍԳՈ-758, ՍԳՈ-767, ՍԳՈ-833, ՍԳՈ-935, ՍԳՈ-984, ՍԳՈ-1049, ՍԳՈ-1089 եւ ՍԳՈ-1114 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները նոր հանգամանքներով պայմանավորված դատական ակտը վերանայելու ինստիտուտի վերաբերյալ, միաժամանակ անհրաժեշտ է համարում փաստել, որ դիմողը կարող էր եւ ներկայումս նույնպես կարող է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնել դատարան՝ ներկայացնելով բաց թողնված եռամսյա ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32, 60, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացի Գայանե Աշուղյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակետի եւ 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**16 սեպտեմբերի 2014 թվականի
ՍԳՈ-1163**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 հոկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կ. Անդրեասյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝

2014 թվականի մայիսի 13-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաեւ հետազոտելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2010 թվականի դեկտեմբերի 30-ին եւ ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ «Չվճարված կենսաթոշակի գումարը վճարելը» վերտառությամբ 36-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 3-րդ մասի 2-րդ պարբերությունը սահմանում է.

«Այդ գումարը վճարվում է, եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման, եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում»:

Վիճարկվող դրույթը գործող խմբագրությամբ ամրագրվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2012 թվականի մարտի 19-ի ՀՕ-100-Ն օրենքով:

2. Վիճարկելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության դրույթի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ հիշյալ դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 31-րդ եւ 37-րդ հոդվածներին, ինչպես նաեւ 42-րդ հոդվածի 3-րդ մասին:

Դիմողը գտնում է, որ չվճարված կենսաթոշակի գումարի ժառանգման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ի տարբերություն վիճարկվող դրույթի, նախատեսում է այլ կանոնակարգումներ: Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնակարգումներից կարելի է եզրակացնել, որ թեւ ժառանգության ընդունման համար վեցամսյա

Ժամկետ է նախատեսվում, այնուամենայնիվ, նաև սահմանվում է, որ ժառանգությունն առանց դատարան դիմելու կարող է ընդունվել նաև այն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը, ինչպես նաև ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողման պատճառները հարգելի համարելու նպատակով դատարան դիմելու հնարավորություն: Իսկ վիճարկվող դրույթը, իր կանոնակարգմամբ, սահմանափակում է անձի՝ կենսաթոշակառուի մահվան դեպքում չվճարված կենսաթոշակի գումարն ստանալու իրավունքը եւ համապատասխանաբար նաև հակասություն առաջացնում ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնակարգումների, այլև ՀՀ Սահմանադրության դրույթների հետ:

Դիմողը փաստում է, որ թեև նախկին՝ 2002 թվականի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով սահմանվում էր վեցամսյա ժամկետ, սակայն դա չէր վերաբերում չվճարված գումարների ժառանգմանը, ինչից ակնհայտ էր, որ ժառանգման դեպքում արդեն իրավահարաբերությունը կարգավորվում էր ՀՀ քաղաքացիական օրենսգրքով՝ ժառանգության իրավահարաբերություններին վերաբերող ընդհանուր կարգավորումներով: Իսկ 2010 թվականի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթի նոր կանոնակարգումը հանգեցնում է անձի իրավական վիճակի վատթարացման եւ դրանով իսկ հակասության նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների հետ:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումը խոչընդոտում է անձի սեփականության իրավունքի արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև չի բխում իրավունքի գերակայության սկզբունքի պահանջներից եւ առաջացնում է թե՛ սահմանադրականության, թե՛ ՀՀ միջազգային պարտավորություններին հակասության խնդիր:

3. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 31-րդ եւ 37-րդ հոդվածների, 42-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթը նշված գումարների ժառանգման համար սահմանում է պայման, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված չէ, այն է՝ համապատասխան գումարն ստանալու համար կենսաթոշակ նշանակող ստորաբաժանմանը գրավոր դի-

մելը, ինչը դուրս է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկայից:

Պատասխանող կողմը գտնում է, որ բարձրացված հիմնախնդիրը հակասություն է առաջացնում ոչ թե ՀՀ Սահմանադրության հետ, այլ առկա է հակասություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի միջեւ: Բացի դրանից, ըստ պատասխանողի՝ այդ հիմնախնդիրն առաջացնում է ոչ միատեսակ իրավակիրառ պրակտիկա, որը պետք է շտկվի վիճարկվող դրույթի եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի միջեւ առկա հակասությունը վերացնելով, որին ուղղված օրենսդրական փոփոխության նախագիծն արդեն իսկ դրվել է շրջանառության մեջ:

Ըստ պատասխանողի՝ այնքանով, որքանով վիճարկվող դրույթն ըստ էության հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգավորումներին՝ օրենքի եւ օրենսգրքի հարաբերակցության առումով, եւ ոչ թե ՀՀ Սահմանադրությանը, ապա դրա հետադարձ ուժի վերաբերյալ դատողությունները պետք է դիտարկել հենց այդ համատեքստում:

4. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում արձանագրելով, որ վիճարկվող իրավակարգավորումը վերաբերում է կենսաթոշակառուի մահվան դեպքում չվճարված կենսաթոշակի գումարի ժառանգման հետ կապված իրավահարաբերություններին, հաշվի առնելով նաեւ սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձեւ է՝ նաեւ ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի», սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտել՝ հատկապես հաշվի առնելով.

ա) սեփականության իրավունքի, դրա իրականացման, սահմանափակման եւ պաշտպանության սահմանադրական դրույթները, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները,

բ) իրավունքի գերակայության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանության, լեզվաբանական ակնկալիքների ապահովման կոնկրետ երաշխիքների առկայությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության, մասնավորապես, 31 եւ 43-րդ հոդվածներով:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին-3-րդ մասերի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում ամրագրված է, որ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»: Մասնավորապես, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք», իսկ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 17-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի իր սեփականությունից»:

Սեփականության իրավունքի, դրա իրականացման, սահմանափակման եւ պաշտպանության հիմնախնդիրներին ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է իր բազմաթիվ որոշումներում: Մասնավորապես, 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630, 2008 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-741, 2010 թվականի հուլիսի 13-ի ՍԴՈ-903, 2012 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաեւ սույն գործով:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն

օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը, մինչև ՀՀ 2012 թվականի մարտի 19-ի ՀՕ-100-Ն օրենքով գործող խմբագրությունը, սահմանում էր.

«Այդ գումարը վճարվում է, եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Այդ ժամկետում դիմում չներկայացնելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման»: Հիշյալ՝ նախկին իրավակարգավորումից բխում էր, որ ժառանգման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Ի դեպ, հարկ է նշել, որ համանման կանոնակարգում նախատեսում էր նաեւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519-Ն օրենքի 64-րդ հոդվածի 7-րդ մասը:

Ի փոփոխումն վերոհիշյալ նախկին կանոնակարգման, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2012 թվականի մարտի 19-ի ՀՕ-100-Ն օրենքով 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրվել է նոր խմբագրությամբ, համաձայն որի՝ «Այդ գումարը վճարվում է, եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման, **եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում**»:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կարգավորում է կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարի վճարման, այդ գումարի ժառանգման իրավունքի, ինչպես նաեւ այդ իրավունքի իրականացման հետ կապված իրավահարաբերությունները:

Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 2010 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-917 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «... ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պետությունը ճանաչում է նաեւ ժառանգման իրավունքը, որը ներառում է ոչ միայն ժառանգություն տալու, այլ նաեւ ժառանգություն ստանալու իրավունքները:

Ժառանգական իրավունքն ապահովում է սեփականատիրոջ իրա-

վունքների պաշտպանությունը նաև նրա մահից հետո՝ հնարավոր դարձնելով նրա սեփականատիրական իրավագործությունների հաջորդայնությունը: Միեւնույն ժամանակ, այն ժառանգի համար առաջացնում է ժառանգատուի սեփականության հանդեպ իրավահաջորդության սահմանադրորեն պաշտպանված հնարավորություն»:

Ինչ վերաբերում է սույն գործով վիճարկվող իրավադրույթով կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարի ժառանգման իրավունքի իրականացման իրավակարգավորմանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը 19.03.2012թ. ՀՕ-100-Ն օրենքով սահմանում է նոր իրավապայման, որով ժառանգման իրավունքի իրականացումը պայմանավորվում է կենսաթոշակառուի մահվանից հետո՝ **տասներկու ամսվա ընթացքում** դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելով: Իսկ ցանկացած, հատկապես՝ նոր, իրավապայման պետք է ունենա առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ, որը չպետք է իրացվի ի հաշիվ սահմանադրաիրավական որեւէ նորմի ու սկզբունքի անտեսման: Տվյալ իրավակարգավորման պարագայում նոր՝ տասներկու ամսվա ժամկետային սահմանափակման, իրավապայմանը բացառում է այդ ժամկետը հարգելի պատճառով բաց թողնելու դեպքում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարն ստանալը: Օրենսդիրը նոր իրավապայման սահմանելով չի ամրագրում տասներկու ամսվա ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հնարավորություն, այդ թվում՝ դատական կարգով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ **նման իրավակարգավորման բացակայությունը խոչընդոտում է սեփականության սահմանադրական իրավունքի լիարժեք իրականացմանը, մասնավորապես, այդ իրավունքի՝ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված պաշտպանությանը՝ ժառանգության ընդունման ժամկետի հետ կապված հարաբերություններում:**

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով սեփականության իրավունքի, նրա սահմանափակման, իրականացման եւ պաշտպանության վերաբերյալ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև հաշվի առնելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի գրավոր բացատրության ուսումնասիրության արդյունքները, սահմանադրական դատարանը գտնում է, որ **վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված տասներկու ամսվա ժամկետային սահմանափակումը չի պայմանավորվում**

հանրային արժեքների պահպանման պահանջով եւ արդյունքում նպատակաուղղված չէ սեփականատիրոջ եւ այլոց իրավունքների ու հանրային շահերի միջեւ ողջամիտ հավասարակշռության ապահովմանը: Նման սահմանափակման հիմնավորում կարող է լինել ժառանգության զանգվածի ճակատագրի հստակեցումը, որի իրավական կարգավորումը, սակայն, նախատեսվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

6. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վիճարկվող իրավակարգավորման եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ժառանգման հետ կապված իրավակարգավորումների հարաբերակցության հարցին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ժառանգությունը կարգավորվում է սույն օրենսգրքով, իսկ դրանով նախատեսված դեպքերում՝ նաեւ այլ օրենքներով»: Վերլուծությունները ցույց են տալիս, որ չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգրքը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով որեւէ կանոնակարգում նախատեսելու դրույթ չի պարունակում, այնուամենայնիվ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի, մասնավորապես սույն գործով վիճարկվող իրավադրույթը նախատեսում է իրավակարգավորումներ, որոնք համահունչ չեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումներին: Աշխատավարձի, թոշակների, նպաստների եւ վնասի հատուցման վճարների չմուծված գումարների ժառանգությանը նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1249-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մահացածին չվճարված գումարները սույն հոդվածի 1-ին կետի հիմքով ստանալու իրավունք ունեցող անձանց բացակայության կամ նրանց կողմից այդ գումարները սահմանված ժամկետում վճարելու պահանջ չներկայացնելու դեպքում համապատասխան գումարները ներառվում են ժառանգության զանգվածի մեջ եւ ժառանգվում են սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր հիմունքներով»: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հատուկ ընթացակարգը չպահպանելու դեպքում կիրառվում են ժառանգման ընդհանուր կանոնները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի եւ 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով: Սակայն այդ ժամկետը բացարձակ չէ, եւ ժառանգը կարող է ընդունել ժառանգությունն առանց որեւէ ժամկետային սահմանափակ-

ման որոշակի վավերապայմանների բավարարման պարագայում: Այսպես, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Ժառանգը կարող է առանց դատարան դիմելու ժառանգությունն ընդունել այն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը»: Օրենսդիրը որեւէ ժամկետային սահմանափակում չի նախատեսում այս իրավունքի իրականացման համար: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր եւ պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան»: Այստեղ նույնպես օրենսդիրը որեւէ ժամկետային սահմանափակում չի դնում ժառանգությունն ընդունելու ժամկետը լրանալու եւ այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելու միջեւ ընկած ժամանակահատվածի համար: Այսինքն՝ անկախ նրանից, թե ժառանգությունն ընդունելու ժամկետը լրանալուց հետո որքան ժամանակ է անցել, միեւնույն է, այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո վեց ամսվա ընթացքում դատարան դիմելու դեպքում ժամկետը բաց թողնելու պատճառները կարող են հարգելի համարվել, իսկ ժառանգությունը՝ ժառանգի կողմից ընդունվել:

Ժառանգության ընդունման հաջորդ եղանակը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասով, ըստ որի՝ «Եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու եւ այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները»:

Վերոհիշյալ իրավադրույթը ժառանգության ընդունումը չի պայմանավորում նոտարին որեւէ դիմում ներկայացնելով: Անձը կարող է որեւէ մարմնի չդիմել, պարզապես պետք է սկսի փաստացի տիրապետել կամ

կառավարել ժառանգված գույքը: Այս իրավադրույթի եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունը ցույց է տալիս, որ փաստացի տիրապետման ուժով համարվում է, որ ժառանգն ընդունել է նաեւ կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը:

Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավադրույթն անտեսում է ոչ միայն ժառանգության ընդունման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված եղանակները, հնարավորություն չտալով ժառանգին փաստացի տիրապետման ուժով ստանալ նաեւ կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը, այլ նաեւ նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման ժամկետային սահմանափակում, որը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ժամկետներին:

Սույն գործով քննության առարկա հիմնախնդրի վերաբերյալ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարի ժառանգման իրավահարաբերություններում իրավակիրառ վարչական մարմինները, ըստ էության, առաջնորդվում են վիճարկվող իրավադրույթով:

Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը, համաձայն որի՝ «Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին», ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ «Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին», գտնում է, որ վիճարկվող իրավադրույթը կարող է կիրառվել այնքանով, որքանով այն չի հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումներին: Իրավաչափ իրավակիրառ պրակտիկա ապահովելու նպատակով սահմանադրական դատարանը կարելոքում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում ժառանգության հետ կապված հարաբերությունների՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հետ ներդաշնակ իրավակարգավորումների ապահովման անհրաժեշտությունը, ինչն օրենսդիր մարմնի իրավասության տիրույթում է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կե-

տով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության՝ «եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19 եւ 31-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**14 հոկտեմբերի 2014 թվականի
ՍԳՈ-1167**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 315-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ
ԵՎ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 309-ՐԴ
ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 նոյեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ, փաստաբան Ա. Չաքարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արման Այվազյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Այվազյանի՝ 05.06.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական օրենսգիրքը և ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. ՀՀ քրեական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2003 թվականի ապրիլի 18-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի ապրիլի 29-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ից:

ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ՋՕ) 315-րդ հոդվածի՝ վիճարկվող 1-ին մասը սահմանում է. «Պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզուգույթյամբ էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ՋրԴՕ)՝ «Դատական քննության սահմանները» վերտառությամբ 309-րդ հոդվածը սահմանում է.

«1. Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել:

2. Դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Մեղադրանքը խստացման առումով փոխելը թույլատրվում է միայն սույն օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում»:

ՀՀ ՔրԴՕ-ի 309-րդ հոդվածը՝ վերոնշյալ խմբագրությամբ, ամրագրվել է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-270-Ն ՀՀ օրենքով, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 18-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի դեկտեմբերի 27-ին:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. 2012 թվականի սեպտեմբերի 19-ին Արման Այվազյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ ՔՕ 308-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը): Առաջին ատյանի դատարանում ՀՀ ՔՕ 308-րդ հոդվածի 1-ին մասով Ա.Այվազյանին առաջադրված մեղադրանքը չի հաստատվել, և նա առաջադրված մեղադրանքով արդարացվել է: Դրա փոխարեն դատարանն իր՝ 2013 թվականի հունիսի 27-ի դատավճռով գտել է, որ Ա. Այվազյանի արարքը ՀՀ ՔՕ 308-րդ հոդվածի 1-ին մասից պետք է վերատրակել ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով, և նրան մեղավոր է ճանաչել ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական անփութություն):

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 2013 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ գտել է, որ առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի պատճառաբանությունները հիմնավոր չեն, և առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 2013 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 16-ի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարանին խնդրում է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները:

ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների առնչությամբ իր փաստարկները դիմողը հիմնավորում է նրանով, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունը երաշխավորում է անձի ազատությունը «հակասահմանադրական կամ չափից դուրս պետական հարկադրանքից»: Անօրինական հարկադրանքից ազատ լինելը ներառում է նաև անձի իրավունքը՝ անարդարացի կերպով չներքաշվելու քրեական դատավարության մեջ և չհետապնդվելու առանց մեղքի:

Ըստ դիմողի՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասության նկատմամբ պետության միջամտությունը, այն է՝ ընդհանուր ազատության իրավունքի սահմանափակումը, թույլատրելի է միայն օրենքով, ընդ որում՝ միայն այնպիսի օրենքով, որը ցանկացած տեսանկյունից համապատասխանում է Սահմանադրությանը (սահմանափակման սահմանափակման սկզբունք): Օրենսդիրը սահմանափակել է ընդհանուր ազատության իրավունքը ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Ըստ այս սկզբունքի՝ քաղաքացին պետք է կարողանա հասկանալ, թե իր վարքագիծն ինչ իրավական հետևանքներ կարող է առաջացնել: Քաղաքացու գործողություններին պետության արձագանքը պետք է կանխատեսելի լինի, այլապես քաղաքացին կդառնա պետության կամայականության զոհ: Իրավական որոշակիության սկզբունքի առանձնահատուկ ձևակերպում է առկա ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 4-րդ մասում, որը պահանջում է արարքի պատժելիությունը սահմանել օրենքով (*nullum crimen/ nulla poena sine lege*): Ըստ հիշյալ սկզբունքի՝ քրեաիրավական նորմի փաստակազմը պետք է այնքան կոնկրետ ու հստակ ձևակերպված լինի, որ յուրաքանչյուրի համար առանց որևէ կասկածի պարզ լինի, թե որ արարքն է թույլատրված և որ արարքն է արգելված:

Դիմողը գտնում է նաև, որ, ի տարբերություն գույքային վնասի, ոչ գույքային վնասի դեպքում օրենսդիրը չի սահմանել էական վնասը ոչ էականից տարբերակելու որևէ չափանիշ: Ավելին՝ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեղադրական դատավճիռ կայացնելու համար դատարանները բավարար են համարում միայն ոչ գույքային վնասի առկայությունը՝ անկախ դրա էական կամ ոչ էական լինելու հանգամանքից:

ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների առնչությամբ դիմողը կարծիք է հայտնում, որ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է արդար, այն է՝ Սահմանադրության նվազագույն պահանջները բավարարող դատավարություն, և պահանջում է, որ գործը քննվի հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, գործը պետք է քննի անկախ և անկողմնակալ (չեզոք) դատարանը՝ հրապարակավ:

ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների առնչությամբ իր փաստարկները դիմողը հիմնավորում է նրանով, որ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի լույսի ներքո (արժանապատվության

իրավունք) ամբաստանյալը չպետք է լինի դատավարության օբյեկտ, այլ, հակառակը, իբրև դատավարության մասնակից՝ նա իր նյութական իրավունքների պահպանման համար պետք է բավարար ազդեցություն ունենա դատավարության ընթացքի վրա: Արդար դատաքննության իրավունքը խախտվում է, երբ ամբաստանյալը հնարավորություն չի ունենում իր դիրքորոշումը հայտնելու դատավճռի հիմքում ընկած փաստերի ու ապացույցների վերաբերյալ, կամ երբ դատարանն ակնհայտորեն հաշվի չի առել նրա դիրքորոշումը: Օրենսդիրը, ՀՀ ՔրԴ-Օ 309-րդ հոդվածի 2-րդ մասով թույլատրելով դատարանին իր նախաձեռնությամբ, ինքնուրույն վերաորակել ամբաստանյալին մեղսագրվող արարքը, խախտել է դատարանի չեզոքության սկզբունքն ամբաստանյալի՝ հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ դատավարության իրավունքը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ ՔրԴ-Օ 309-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 19, 22 և 42-րդ հոդվածների պահանջներին:

ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ վկայակոչելով սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, որոնցում ամբարգրված են իրավական որոշակիության սկզբունքի և դրա բովանդակության վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պատասխանողն անհիմն է համարում ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 4-րդ մասին ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի չհամապատասխանելու վերաբերյալ դիմողի պնդումը:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան՝ հանցակազմի հատկանիշները, շարադրված է բավարար հստակ, որպեսզի քաղաքացին կարողանա հասկանալ, որ իր վարքագիծը հանգեցնում է քրեական պատասխանատվության, և օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից անհնար է ավելի լայն բացահայտել հանցակազմի հատկանիշները:

ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասում գույքային վնասը սահմանված չլինելու վերաբերյալ դիմողի դատողությունների առնչությամբ պատասխանողը՝ ներկայացնելով մի շարք եվրոպական երկրների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածները, արձանագրում է, որ այդ եվրոպական երկրների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդ-

վածներում ոչ գույքային վնասը նույնպես սահմանված չէ: Դրա հիմքում դրված է այն հանգամանքը, որ, ինչպես կարծում է պատասխանողը, օրենսդրորեն անհնար է սահմանել ոչ գույքային վնասի հասկացությունը, և վերջինս որոշելիս պետք է, ի թիվս այլնի, հիմք ընդունվեն դատական պրակտիկայում առկա չափորոշիչները՝ հիմք ընդունելով քաղաքացիներին, հասարակությանը և պետությանը հասցված բարոյական վնասի ծանրությունը, տուժած անձանց թվաքանակը, ոտնահարված իրավունքների ու ազատությունների կարևորությունը, դրանց ոտնահարման աստիճանը:

ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ վերլուծելով ամբաստանյալի վիճակի վատթարացման և ամբաստանյալի պաշտպանության իրավունքի ոտնահարման անթույլատրելիության սկզբունքների բովանդակությունը և ներկայացնելով այն դեպքերը, որոնց պարագայում միայն կարող է վատթարանալ ամբաստանյալի վիճակը կամ ոտնահարվել ամբաստանյալի պաշտպանության իրավունքը՝ պատասխանողն արձանագրում է, որ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից բխում է, որ դատարանը դատավճիռ կայացնելիս կարող է փոխել մեղադրյալին ներկայացված և դատական քննության ընթացքում դատախազի կողմից պաշտպանվող մեղադրանքը, եթե նոր մեղադրանքն ավելի խիստ չէ, քան սկզբնական մեղադրանքը, և դրա հիմքում չեն լրացվել նոր փաստական հանգամանքներ՝ ի տարբերություն նախորդ մեղադրանքի, կամ չեն փոփոխվել վերջինիս հիմքում դրված փաստական հանգամանքները:

Հղում կատարելով ԵԱԶԳ 0171/01/09 քրեական գործով կայացված դատավճռին, որով ՀՀ ՔՕ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը դատարանը փոխել է ՀՀ ՔՕ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, պատասխանողը գտնում է, որ եթե դատարանը նման լիազորությամբ օժտված չլիներ, ապա նա ստիպված կլիներ կայացնել արդարացման դատավճիռ, ինչը պատասխանողը համարում է անթույլատրելի: Դրա հիման վրա պատասխանողը գտնում է, որ գործող քրեադատավարական օրենքով սահմանված՝ դատարանի կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքը սեփական նախաձեռնությամբ փոփոխելու կանոնները լիովին բավարար են դատարանին «մեղադրական թեքումից» ձերբազատելու և մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար:

5. Ինչպես նշվեց, դիմողը ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ բարձրացնում է դրանում ամրագրված «Էական վնաս» եզրույթի սահմանադրականության հարցը՝ իրավական որոշակիության սկզբունքին հակասելու հիմնավորմամբ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Էական վնասը հանդիսանում է ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի, այն է՝ պաշտոնեական անփութության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ: Այնուամենայնիվ, միայն վնասի առկայությունը դեռևս բավարար չէ խոսել ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի հանցակազմի առկայության մասին: Այս առումով պարտադիր է, որպեսզի վնասը լինի էական:

Մինչույն ժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ վնասի էական լինելու հատկանիշը նույն կերպ չի դրսևորվում տարբեր իրավիճակներում: Այն ենթակա է գնահատման, որը պետք է իրականացնի իրավակիրառողը՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից: Ընդ որում, գույքային վնասի դեպքում օրենսդիրն արդեն իսկ ուրվագծել է էական գույքային վնասի սահմանները: Մասնավորապես, համաձայն ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայի՝ գույքային վնասի դեպքում էական վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարի կամ դրա արժեքի չափով հասցված գույքային վնասը, այսինքն՝ գույքային վնասի դեպքում օրենսդիրը հստակ սահմանել է նվազագույն այն գումարը կամ արժեքը, որն ընկած է վնասը որպես էական գնահատելու հիմքում:

Այլ է խնդիրը ոչ գույքային վնասի դեպքում, երբ վնասի էական լինելու հանգամանքի գնահատումը դժվարանում է այն առումով, որ օրենսդրորեն ուրվագծված չեն էական ոչ գույքային վնասի սահմանները: Մինչդեռ, հաշվի առնելով այն հանգամանքները, որ էական վնասը հանդիսանում է ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի, այն է՝ պաշտոնեական անփութության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, և որ օրենսդրի գնահատմամբ՝ պաշտոնեական անփութության դեպքում ոչ միայն գույքային, այլ նաև ոչ գույքային վնաս կարող է պատճառվել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության՝ վերջինիս կողմից պաշտպանության ենթակա շահերին, կարևորվում է հասցված ոչ գույքային վնասի էական լինելու հանգամանքի գնահատման համար անհրաժեշտ նախադրյալների առկայությունը, քանի որ դրանից է կախված ամբաստանյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Այս կապակցությամբ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը, անհրաժեշտ համարելով վկայակոչել իր՝ 05.04.2011թ. թիվ ՄԴՈ-947 որոշման 8-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ դրանք կիրառելի են նաև սույն գործով ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրականության հարցի առնչությամբ: Մասնավորապես, սահմանադրական դատարանն իր 05.04.2011թ. թիվ ՄԴՈ-947 որոշման 8-րդ կետում ամրագրել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի հարցադրումների առնչությամբ սահմանադրական դատարանը, վերահասարակելով իր՝ ՄԴՈ-747 և ՄԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգրագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստիճան գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պրակտիկան է կոչված որոշակիացնելու այն չափորոշիչները, որոնցով գնահատվում է վնասի էական կամ ոչ էական լինելը: Դրա վերաբերյալ առկա են նաև ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները (մասնավորապես՝ 2013թ. հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 որոշումը): Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներում իրավական անորոշության վերաբերյալ դիմողի փաստարկները:

6. Անդրադառնալով ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասում ամրագրված դրույթին՝ սահմանադրական դատարանը նշում է, որ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի թե՛ առաջին և թե՛ երկրորդ նախադասություններով սահմանվում է մեղադրանքը փոփոխելու հնարավորություն՝ մեղադրանքը փոփոխելու կարգի սահմանումը վերապահելով օրենսդրին:

Ինչ վերաբերում է ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին և երկրորդ նախադասությունների տարբերությանը, ապա նշված տարբերությունն այն է, որ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը, նախ, վերաբերում է մեղադրանքի փոփոխության հնարավորությանը՝ խստացման առումով, երկրորդ՝ **ուղղակիորեն** սահմանում է խստացման առումով մեղադրանքը փոփոխելու կարգը և դեպքերն օրենսգրքով սահմանելու հնարավորություն: Այս առումով սահ-

մանադրական դատարանն արձանագրում է, որ մեղադրանքը փոփոխելու կարգը, սահմանները, դեպքերը սահմանված են ՀՀ ՔրԴՕ մեկ այլ՝ 309.1-րդ հոդվածում:

Միաժամանակ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության մեջ ամրագրված՝ *եթե դրանով չի վարժարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը* դրույթը, իր հերթին, հանդիսանում է մեղադրանքի փոփոխության կարգի բաղադրատարր: Ընդ որում, ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության մեջ ամրագրված՝ *եթե դրանով չի վարժարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը*՝ ենթադրում է երկու պայմանների միաժամանակյա առկայություն. առաջին՝ մեղադրանքի փոփոխությամբ չպետք է վատթարանա ամբաստանյալի վիճակը, որը հնարավոր կլինի գնահատել միայն կոնկրետ գործի շրջանակներում, և երկրորդ՝ մեղադրանքի փոփոխությամբ չի խախտվի ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում մեղադրանքի փոփոխության ընդհանուր կարգը չի կարող կիրառվել:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության մեջ ամրագրված՝ *եթե դրանով չի վարժարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը*՝ անհրաժեշտ օրենսդրական երաշխիք է հանդիսանում մեղադրանքի փոփոխության պարագայում ամբաստանյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով սահմանադրական դատարանի՝ 2010թ. ապրիլի 2-ի ՍԴՈ-872 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ դիմողի փաստարկները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4 նոյեմբերի 2014 թվականի

ՍԳՈ-1174



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐՊԵՅ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 95-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ
ԵՎ 96-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլում-
յանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հով-
հաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող Ս. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժո-
ղովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշ-
խատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և
գլխավոր մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի,
«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդ-
վածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սեր-
գեյ Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ
հոդվածի 1-ին մասի և 96-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրա-
պետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Սերգեյ Գրիգորյանի՝ 2014 թվականի հունիսի 30-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ մաքսային օրենսգիրքը և գործում առկա նյութ փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000 թվականի հուլիսի 6-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2000 թվականի օգոստոսի 9-ին, ուժի մեջ է մտել 2001 թվականի հունվարի 1-ից: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2012 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունված և 2013 թվականի հունվարի 6-ին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-224-Ն ՀՀ օրենքով ՀՀ մաքսային օրենսգրքի վիճարկվող խմբագրությամբ 95-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած է ճանաչվել, իսկ 96-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվել են լրացումներ:

ՀՀ սահմանադրական դատարանը քննության է ընդունել ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի և 96-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթների սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործը:

Մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի՝ սույն գործով վիճարկվող դրույթը սահմանում էր. «Ապրանքներ տեղափոխող անձի գրավոր դիմումի հիման վրա, հինգ օրվա ընթացքում, մաքսային մարմինները պարտավոր են գրավոր տեղեկացնել մաքսային արժեքի չափի և դրա որոշման եղանակի մասին»:

ՀՀ մաքսային օրենսգրքի վիճարկվող 96-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ մաքսային մարմինների անհամաձայնության դեպքում վերջիններս, հայտարարագրի ներկայացման օրը կազմում և հայտարարատուին են տրամադրում վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով մերժման եզրակացություն, որտեղ հիմնավորվում է հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափը կամ որոշման եղանակը չընդունելու պատճառները, և նշվում է այն վերադաս մաքսային մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, ում կարող է բողոքարկման համար դիմել հայտարարատուն»:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. քաղաքացի Սերգեյ Գրիգորյանը (այսուհետ՝ դիմող) 19.05.2012թ. ճապոնիայում ձեռք է բերել 2004թ. արտադրության ավտոմեքենա (այսուհետ՝ գույք): Ըստ դիմողի՝ գործարքը փաստաթղթավորվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով նախատեսված պահանջներին համապատասխան՝ հաշիվ-ապրանքագրի տեսքով: Այնուհետև, դիմողի կողմից գույքի տեղափոխման և ՀՀ մաքսային սահման հասցնելու ընթացքում գույքի վրա կատարված բոլոր ծախսերը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են մաքսային մարմիններին:

20.07.2012թ. գույքի մաքսազերծումն իրականացնելու նպատակով դիմողը ներկայացել է մաքսային ձևակերպումների բաժին, որտեղ փաստաթղթերը ներկայացնելուց հետո, ըստ դիմողի՝ տեղեկացել է, որ գույքի մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդի կիրառման պրակտիկան մաքսային մարմիններում բացառվում է:

Նույն օրը դիմողը դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 91-րդ հոդվածով նախատեսված կարգով, ներկայացնելով գույքի փաստաթղթերը և կատարելով ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդով կատարված գույքի մաքսային արժեքի հաշվարկը, և խնդրել է կիրառել օրենքով սահմանված հաշվարկը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն 25.07.2012թ. թիվ 23001/8-1 գրությամբ մերժել է դիմողի դիմումը՝ որպես մերժման պատճառաբանություն նշելով, որ «ներկայացված փաստաթղթերում բացակայում է Վրաստանի Փոթի նավահանգստում կատարված ավտոմեքենայի բեռնաթափման և մինչև ՀՀ մաքսային սահման Ձեր կողմից ավտոմեքենայի տեղափոխման համար կատարված հիմնավոր ծախսերը»:

Դիմողը նշված գրությունը բողոքարկել է ՀՀ վարչական դատարան՝ որպես վարչական ակտ, դատարանին խնդրելով անվավեր ճանաչել հիշյալ վարչական ակտը:

15.03.2013թ. վճռով ՀՀ վարչական դատարանը հայցը մերժել է այն պատճառաբանությամբ, որ դիմողի կողմից մաքսային մարմիններին ներկայացված փաստաթղթերում բացակայել են գույքի բեռնման և բեռնաթափման, ինչպես նաև ձեռք բերված վառելանյութի ծախսերը հավաստող փաստաթղթերը: Վարչական դատարանի եզրահանգումը հիմնվել է նաև այն հանգամանքի վրա, որ դիմողի կողմից մաքսային

մարմիններին չէր ներկայացվել հայտարարագիր, հետևաբար՝ մաքսային մարմինների կողմից չէր կարող մերժված լինել նման հայտարարագիրը:

Դիմողը վերը նշված վճիռը բողոքարկել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, որը 24.09.2013թ. որոշմամբ բողոքը բավարարել է մասնակի՝ անվավեր է ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 25.07.2012թ. թիվ 23001/8-1 գրությունը և վերջինիս պարտավորեցրել է գույքի մաքսային արժեքի հաշվարկման նպատակով կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված գործարքի գնի մեթոդը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 26.12.2013թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկանելով վարչական վերաքննիչ դատարանի 24.09.2013թ. որոշումը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 25.07.2012թ. թիվ 23001/8-1 գրությունն անվավեր ճանաչելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին գույքի մաքսային արժեքի հաշվարկման նպատակով ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված գործարքի գնի մեթոդը կիրառելուն պարտավորեցնելու մասով և կարճելով վարչական գործի վարույթը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 25.07.2012թ. թիվ 23001/8-1 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով՝ ուժի մեջ բողոքելով ՀՀ վարչական դատարանի որոշումը:

3. Դիմողը գտնում է, որ սույն գործով իր նկատմամբ կիրառված նորմերն ակնհայտորեն չեն բավարարել իրավական որոշակիության պահանջները, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրության 8 և 31-րդ հոդվածներով սահմանված՝ իր սեփականության իրավունքը, որի իրացումը շարունակաբար խոչընդոտվում է գույքն օրենքով սահմանված կարգով մաքսագերծելու անհնարինության պատճառով:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումը, ըստ որի՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված պատասխանը չի կարող դիտվել որպես վարչական ակտ, չի բխել ոչ օրենքի տեքստի նշանակությունից, ոչ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված իմաստից:

Այն, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումի պատասխանը հանդիսացել է վարչական ակտ, ըստ

դիմողի՝ փաստվում է նախ նրանով, որ միայն այդպիսի վարչական ակտերով է հնարավոր ստանալ ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված գործարքի գնի եղանակով գույքի մաքսագերծման թույլտվություն (սույն հարցին իր որոշման մեջ անդրադարձել է նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը): Բացի դրանից, ըստ դիմողի՝ «հենց ՊԵԿ 20/07/2012թ.-ի գրությունն ինքնին փաստում է առ այն, որ իրավաչափորեն պրակտիկա է եղել նման դիմումներով մաքսագերծման մեթոդի ընտրությունը կատարելը, և, որ ՊԵԿ ուղղված դիմումի պատասխանը, միաժամանակ, եղել է նաև ցուցում հենց մաքսատան պետին...»:

Ինչ վերաբերում է մաքսագերծման մեթոդի ընտրության հարցում 86-րդ հոդվածին, 128-րդ հոդվածի առաջին մասին, 134-րդ հոդվածին, 96-րդ հոդվածի 2-րդ մասին, դիմողի կարծիքով՝ այդ նորմերով նախատեսված մաքսագերծման համար ներկայացվող հայտարարագրի ներկայացումը հանդիսանում է 95-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումի պատասխանին հաջորդող փուլը, այլ ոչ՝ գործարքի գնի մեթոդի ընտրության համար անհրաժեշտ պայման: Ըստ դիմողի՝ ավելին, ոչ միայն վարչական պրակտիկայում, այլ նաև հենց մաքսային օրենսգրքի ամբողջ տեքստից չի բխում, որ մաքսագերծման մեթոդի ընտրության հարցում հայտարարագրի ներկայացումը պարտադիր պայման է: Դա հնարավոր չէ պատկերացնել նաև գործնականում, քանի որ առանց ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված դրական պատասխանի հնարավոր չէ գույքը մաքսագերծել մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված մեթոդով:

Դիմողը գտնում է, որ նման անորոշության մեկ այլ ապացույց են հանդիսանում նաև այս հարցի վերաբերյալ դատարանների իրարամերժ դիրքորոշումները: Ըստ դիմողի՝ Ազգային ժողովի 05.12.2012թ. «ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-224-Ն օրենքի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվել է նրանով, որ իրավական որոշակիություն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով հարկավոր է դադարեցնել 95-րդ հոդվածի 1-ին մասի գործողությունը, որով և օրենսդրի կողմից փաստվել է, որ դրա գործողությունը ստեղծում է իրավական անորոշություն:

Դիմողը նաև ուշադրություն է հրավիրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված՝ սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության հիմնական սկզբունքների ու չափորոշիչների վրա:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ քննարկվող նորմերով սահմանված կարգավորումների համատեղ ամրագրումը մաքսային օրենսգրքով և կիրառումը մաքսային իրավահարաբերություններում չի հակասում իրավական որոշակիության սկզբունքին և չի խախտում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 82, 128, 134 և 96-րդ հոդվածների վերլուծության արդյունքում պատասխանողը գտնում է, որ օրենսգիրքը հստակ սահմանել է ապրանքի մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով որոշելու որոշակի ընթացակարգ, այն է՝ հայտարարագիր ներկայացնելու և այն մաքսային մարմնի կողմից ընդունելու ձևը: Այդ դեպքում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը հայտարարագրում է ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը, որից հետո մաքսային մարմինների կողմից որոշվում է գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքն ընդունելու հարցը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության արդյունքում պատասխանողը եզրակացնում է, որ մաքսային մարմինների կողմից տրված գրավոր եզրակացությունը որևէ կերպ չի կարող հանդիսանալ վարչական ակտ, այդ թվում՝ նաև միջամտող վարչական ակտ: Նշված տեղեկությունն ունի բացառապես խորհրդատվական նշանակություն, դրանով անձի իրավունքները որևէ կերպ չեն սահմանափակվում, նրա համար որևէ պարտականություն չի առաջանում: Նշված տեղեկատվությունն անձի կողմից կարող է օգտագործվել բացառապես օրենսգրքի 73-րդ հոդվածում նշված նպատակներով:

5. Սահմանադրական դատարանն անդրադառնալով օրենսգրքի՝ դիմողի կողմից սույն գործով վիճարկվող 95-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցին, հարկ է համարում արձանագրել, որ օրենսգրքի՝ դիմողի մասնակցությամբ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ տեքստի 86 և 87-րդ հոդվածների, 88-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, 95-րդ հոդվածի 5-րդ մասի, 96-րդ հոդվածի 1-ին մասի, 128-134-րդ հոդվածների վերլուծությունից բխում է, որ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխողը պարտավոր էր հայտարարագրել մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը, և **առկա չէր որևէ խոչընդոտ, որպեսզի վերջինս մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը հաշվարկեր գործարքի գնի մեթոդով կամ ինքնուրույնաբար ընտրեր մաք-**

սային արժեքի որոշման եղանակը՝ առանց ՀՀ մաքսային օրենսգրքի նախորդ խմբագրությամբ տեքստի 95-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ մաքսային արժեքի չափի և դրա որոշման եղանակի մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ մաքսային մարմիններին դիմում ներկայացնելու:

Այլ խնդիր է հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ մաքսային մարմիններին հնարավոր անհամաձայնությունը, որպիսի իրավահարաբերությունը կարգավորված էր և ներկա պահին կարգավորվում է ՀՀ մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով:

Ավելին, ավտոմեքենան երբևէ հայտարարագրված չլինելու և դիմողի՝ 20.07.2012 թվականի դիմումը ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 95-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված լինելու հանգամանքն ընդունել է նաև դիմողը, ինչը հաստատված է դիմողի գործով ընդունված վերջնական դատական ակտով, այն է՝ ՀՀ վճարելի դատարանի՝ 26.12.2013 թվականի թիվ ՎԳ-5445/05/12 վարչական գործով կայացրած որոշմամբ:

Վերոգրյալը համադրելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի, 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 69-րդ հոդվածի 7-րդ մասի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԳԱՌ-21 աշխատակարգային որոշման մեջ անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումների հետ, սահմանադրական դատարանն ակնհայտ անհիմն է համարում օրենսգրքի նախորդ խմբագրությամբ տեքստի՝ դիմողի կողմից վիճարկվող 95-րդ հոդվածի 1-ին մասի հակասահմանադրականության վերաբերյալ փաստարկները:

Միաժամանակ, վերլուծելով միջազգային իրավական ակտերով, մասնավորապես, «Առևտրի և սակագների մասին» 1994թ. Գլխավոր համաձայնագրով (VII գլուխ), ՄԱԿ-ի 1973 թվականի «Մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման մասին» կոնվենցիայով և այլ փաստաթղթերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների համատեքստում վիճարկվող նորմերի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված նորմերի սահմանադրաիրավական ընդհանուր բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապրանքների ու տրանսպորտային միջոցների մաքսային սահմանով տեղափոխման կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի

մեթոդն **ընդհանուր կանոն է**, իսկ մաքսային արժեքի որոշման մյուս այլ մեթոդները՝ **բացառություն ընդհանուր կանոնից**:

Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, մաքսային իրավակարգավորումների նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից:

Վերոգրյալի հիման վրա և միջազգային իրավական ակտերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների համատեքստում սահմանադրական դատարանը գտնում է, որ մաքսային արժեքի որոշման **ընդհանուր կանոնին** համապատասխան՝ գործարքի գնի մեթոդի կիրառման ժամանակ անհրաժեշտ է ղեկավարվել այն տրամաբանությամբ, որ այդ գործարքի իրականացման ժամանակ վճարային փաստաթղթերով ներկայացված տեղեկությունները հավաստի են ու արժանահավատ, եթե մաքսային մարմինը չի ապացուցել դրանց անարժանահավատ կամ ոչ հավաստի լինելը:

6. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում կարևորում է նաև վեճի առարկա հողվածների և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ մաքսային օրենսգրքի այլ հողվածների համադրված վերլուծության անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով նաև դրանց հաճախակի փոփոխման հանգամանքը: Ի դեպ, ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում առավել հաճախակի փոփոխվող օրենքներից են հատկապես մաքսային և հարկային իրավահարաբերությունները կարգավորող օրենքները: Այսպես, օրինակ, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը 06.07.1998 թվականից մինչև 05.12.2013 թվականը փոփոխվել կամ լրացվել է 43 անգամ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը 19.06.1998 թվականից մինչև 21.06.2014 թվականը՝ 152 անգամ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը 08.09.1997 թվականից մինչև 21.06.2014 թվականը՝ 70 անգամ և այլն: Սույն գործի շրջանակներում վիճարկման առարկա դարձած ՀՀ մաքսային օրենսգիրքը 26.12.2000 թվականից մինչև 21.06.2014 թվականը փոփոխվել և լրացվել է 40 տարբեր օրենքներով:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրությունն ստատիկ երևույթ չէ, այն կարող է և պետք է ենթարկվի դինամիկ փոփոխության՝ մշտապես կատարելագործվելով տնտեսական զարգացմանը, տեղի ունեցող միջազգային ինտեգրման գործընթացներին, հասարակական հարաբերությունների վերափոխ-

մանն ու մի շարք այլ գործոններին համահունչ: Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանը կարևորում է օրենսդրական փոփոխությունների գործընթացի կայունությունն ու ներդաշնակությունը, օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին իր վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին՝ թույլ չտալով իրավակիրառ մարմինների կողմից ցուցաբերված սուբյեկտիվիզմի դրսևորում և հայեցողության ընդլայնում: Մասնավորապես, սահմանադրական դատարանը կարևորում է սույն գործի շրջանակներում վիճարկվող դրույթների փոփոխության, լրացման համատեքստում օրենսդրական նորմերի հստակության ու որոշակիության ապահովումը՝ հայտարարատուի կողմից մաքսային արժեքի հայտարարագրման համար ներկայացվող հայտարարագրի, մաքսային մարմիններից խորհրդատվական բնույթի տեղեկատվության ստացման, մաքսային մարմինների կայացրած ակտերի բողոքարկելիության դեպքերի, հիմքերի և կարգի կանոնակարգման հարցում:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի հոդված 96-ի առնչությամբ դիմողի կողմից բարձրացված հարցադրումների տեսանկյունից նշված հոդվածի նախկին և առկա իրավակարգավորումներն էականորեն չեն տարբերվում: Միաժամանակ, առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ում և հոդված 68-ի 9-րդ մասում համապատասխանաբար ամրագրված՝ գործի հանգամանքների ի պաշտոնե պարզման և վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականության գնահատման վերաբերյալ դրույթներով՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ օրենսգրքի գործող խմբագրությամբ 96-րդ հոդվածի 2-րդ, 2.1-րդ և 3-րդ մասերով կանոնակարգվող իրավահարաբերությունների ներքին փոխհարաբերակցության և ներդաշնակության հիմնահարցերին: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է հատկապես իրավակիրառական պրակտիկայում տեղ գտած այնպիսի իրավիճակի հաղթահարման անհրաժեշտությամբ, երբ ապրանքի մաքսային արժեքի որոշման՝ օրենքով նախատեսված հիմնական կանոնը փաստացի դառնում է բացառություն, իսկ բացառությունը՝ հիմնական կանոն:

Այսպես, օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ տարածքային (տարածաշրջանային, մասնա-

գիտացված կամ սահմանային) մաքսային մարմինների անհամաձայնության դեպքում վերջիններս, սույն օրենսգրքով սահմանված ժամկետում կազմում և հայտարարատուին են տրամադրում վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով **մերժման եզրակացություն**, որտեղ հիմնավորվում է հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափը կամ որոշման եղանակը չընդունելու պատճառները, և նշվում է այն վերադաս մաքսային մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, ում կարող է բողոքարկման համար դիմել հայտարարատուն: **Մերժման եզրակացության** հետ միասին տարածքային մաքսային մարմինները հայտարարատուին ներկայացնում են մաքսային արժեքի չափը և որոշման եղանակը՝ հիմնավորելով նաև սույն օրենսգրքի 94 հոդվածով նախատեսված հերթականությամբ մաքսային արժեքի որոշման մեթոդներով ապրանքների մաքսային արժեքը որոշելու անհնարինությունը»:

«ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 05.12.2012 թվականի ՀՕ-224-Ն ՀՀ օրենքով օրենսգրքի 96-րդ հոդվածը լրացվեց 2.1 մասով, որով սահմանվեց «Տարածաշրջանային, մասնագիտացված կամ սահմանային մաքսային մարմինները մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու մերժման վերաբերյալ **մինչև վերջնական որոշում ընդունելը**, բայց ոչ ուշ, քան սույն օրենսգրքի 87 հոդվածով սահմանված փաստաթղթերը հայտարարատուի կողմից ներկայացվելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտարարատուին գրավոր ներկայացնում են գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքները և առաջարկում են հայտարարատուին հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, որոնց քննության արդյունքում, նշյալ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները ներկայացվելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, կայացնում են **որոշում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ** կամ ընդունում են հայտարարատուի կողմից ներկայացված մաքսային արժեքը»:

Օրենսգրքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Մաքսային մարմինների կողմից մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ անհամաձայնության դեպքում հայտարարատուն, **մերժման եզրակացություն** ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կարող է բողոքարկել **վերադաս մաքսային մարմին** կամ **դատարան**: Վերադաս մաքսային մարմինը պարտավոր է 30-օրյա ժամկետում կայացնել հա-

մապատասխան որոշում և տեղյակ պահել հայտարարատուին: Բողոքարկումը չի ազատում հայտարարատուին սահմանված ժամկետներում բողոքարկման առարկայի հետ կապված պարտավորությունների կատարումից»:

Անդրադառնալով նշված դրույթներում առկա իրավակարգավորումներին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննարկվող հոդվածի 2-րդ, 2.1-րդ և 3-րդ մասերի համադրված վերլուծությունից պարզ չի դառնում հայտարարատուին վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով մերժման եզրակացության տրամադրման, և մինչև վերջնական որոշում ընդունելը հայտարարատուին գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքների վերաբերյալ գրավոր տեղեկացման հերթականության և հոդվածի համապատասխան մասերում գործածվող «մերժման եզրակացություն» և «վերջնական որոշում» հասկացությունների փոխհարաբերակցության հարցը: Նման վիճակը կարող է վարչական մարմինների հայեցողության սահմանների ոչ իրավաչափ ընդլայնման և մարդու իրավունքների խախտման վտանգ ստեղծել:

Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քննարկվող հոդվածի 2.1-րդ մասում առկա կանոնակարգումը, այն է՝ մինչև վերջնական որոշում ընդունելը գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքների վերաբերյալ հայտարարատուին տեղեկացնելը և վերջինիս լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ գրավոր ներկայացնելու առաջարկը պետք է նախորդեն հոդվածի 2-րդ մասում սահմանված մերժման եզրակացության կայացմանը:

Ինչ վերաբերում է օրենսգրքի քննարկվող հոդվածում «**վերջնական որոշում**», «**որոշում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ**» և «**մերժման եզրակացություն**» հասկացությունների գործող օրենսդրական կանոնակարգումներին, ապա դրանցից պարզ չի դառնում, թե տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ձևով և բովանդակությամբ միևնույն, թե տարբեր ակտերին: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության:

Նշված կարգավորումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նախքան 2012 թվականի ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելը 96-րդ հոդվածով սահմանված էր միայն

«**մերժման եզրակացություն**» հասկացությունը, իսկ 2.1-րդ մասով նշյալ հասկացությունը չի հիշատակվում, այլ գործածվում են «**վերջնական որոշում**» և «**որոշում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ**» հասկացությունները: Վերոնշյալ կարգավորումների համաձայն՝ նշված երկու ակտերն ընդունվում են տարածքային մաքսային մարմինների կողմից: Միաժամանակ 96-րդ հոդվածի 3-րդ մասը չի նախատեսում նույն հոդվածի 2.1-րդ մասով սահմանված տարածքային մարմինների կողմից ընդունված որոշումների բողոքարկման հնարավորություն՝ նախատեսելով միայն մերժման եզրակացության բողոքարկումը: Օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ, 2.1-րդ և 3-րդ մասերում սահմանված ոչ հստակ կարգավորումները կարող են հանգեցնել հայտարարատուների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացման արգելափակմանը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը չպետք է որևիցե կերպ ոտնահարվի օրենսդրական տեխնիկայի նման թերությունների և բացթողումների պատճառով: Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ վերադատության կամ դատական կարգով պետք է բողոքարկելի լինեն և «**մերժման եզրակացությունը**» (նման դատական բողոքարկման հնարավորություն նախատեսված է օրենսգրքի քննարկվող հոդվածի 3-րդ մասում), և «**վերջնական որոշումը**» կամ «**մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ որոշումը**», որոնք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 53-ի համաձայն՝ դիտվում են որպես վարչական ակտեր: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և 19-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքները:

Սահմանադրական դատարանը միաժամանակ փաստում է, որ, առաջնորդվելով իրավունքի գերակայության սկզբունքով, մաքսային մարմինը, հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ կապված անհամաձայնության դեպքում, պարտավոր է օրենսգրքով սահմանված ժամկետներում դրա վերաբերյալ կայացնել պատճառաբանված եզրակացություն և/կամ որոշում, և **անկախ հայտարարատուի գրավոր կամ բանավոր պահանջից՝** պետք է հայտարարատուին տրամադրի նշյալ եզրակացությունը և/կամ որոշումը՝ վերջինիս կողմից Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքների պաշտպանության ուղղությամբ համարժեք միջոցներ ձեռնարկելու համար: **Իրավակիրառական պրակտիկան պետք է**

առաջնորդվի սահմանադրաիրավական առումով իրավաչափ նման մոտեցմամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19, 32, 60, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացի Սերգեյ Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի և 96-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի մասով կարճել:

2. ՀՀ մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**2 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԳՈ-1176**

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒՆ

ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ	3
ՍԳԱՈ-5. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2014Թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ	50
ՍԳՈ-1135. ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՎ ՌՈՒԲԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՍՏԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	51
ՍԳՈ-1136. ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ, 15-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ «ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՍԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ, 14-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 597-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՍՏԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	59
ՍԳՈ-1137. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 30-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 5-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՍՏԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	74
ՍԳՈ-1139. ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 23-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 170 ³ -ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՍՏԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	88
ՍԳՈ-1140. ԲԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 67-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՍՏԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ	103
ՍԳՈ-1141. ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 75-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՍՏԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	114
ՍԳՈ-1142. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՍՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԿՈՒՏԱԿԱՑԻՆ ԿԵՆՍԱԾՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 5, 7, 8, 37, 38, 45, 49 ԵՎ 86-ՐԴ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	122
ՍԳՈ-1143. ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 37-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՍՏԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	177
ՍԳՈ-1144. ԲԱՂԱՔԱՑԻ ԼԵՎՈՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՍՏԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ	184
ՍԴՈ-1148. ԶԱՂԱՔԱՅԻ ԳԵՎՈՐԳ ՍԼՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 45.6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	191
ՍԴՈ-1153. ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 224-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ «ԱՆԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ» ԴՐՈՒՅԹԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	201
ՍԴՈ-1154. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 1996 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՎՈՒՄԻ ՄԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 604 ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	217
ՍԴՈ-1157. ԶԱՂԱՔԱՅԻ ՄԱԳՂԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ (28.11.2007թ.) 139-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 140-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-3-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	230
ՍԴՈ-1163. ԶԱՂԱՔԱՅԻ ԳԱՅԱՆԵ ԱՇՈՒՂՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ ԵՎ 426-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	237
ՍԴՈ-1167. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.....	245
ՍԴՈ-1174. ԶԱՂԱՔԱՅԻ ԱՐՄԱՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 315-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 309-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	256
ՍԴՈ-1176. ԶԱՂԱՔԱՅԻ ՍԵՐԳԵՅ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 95-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 96-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	266